









205  
U-35



1441

205  
Ա-35

1354-64%


# Դ' Ա. Ա.

ՅԱՎԵԳՄ ՀԱՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ

ԸՆԴ ԿԱՄԱՑՆ ԱՍՏՈՒ-ԾՈՅՑ

Դ Գրուածոց Հօր Ավանասոսի  
 Ուօտրիկվեցի ՚ի Ծովեան կարգէ,  
 նորոդ թարգմանութեամբ  
 ուրոյն տպագրեալ:

Ըստ ջերմեռանդն յորդորանաց  
 ուրումն բարեպաշտի:



Դ Վ Ե Ն Ե Տ Ի Կ


Դ Վ Ա Խ Ս Ր Բ Ո Յ Ե Ղ Ա Զ Ա Ր Ա Ւ



20  
20  
20  
20  
20  
20

2004







Եղիշեն կամք քո :

# ԹԱՐԳՄԱՆԵԴՅԻՆ

Առ բարեպաշտ Ռուսեցող :

Յառաջ ժամանակաւ, յամին  
1742, աշխատասիրութեք բարեյիշու  
տակ Հիմնարկուի Ո՞նչաբանութես  
Ո՞նչիթարայ Աքքայի՝ ի տիս ար-  
ձանացան հատընտիր Շառք ինչ  
յարդիւնական գրուածոց Հօրն  
Ալփոնսոսի Ուոտրիկվէցի՝ ի Հյտեան  
կարգէ. որոց պիտանութի ոչ միայն  
առ հրաժարեալս յաշխարհէ՝ այլ  
առ համօրէն բարեկրօն հաւատա-  
ցեալս՝ վկայեալ է՝ ի բազմապատիկ  
արդեանց քրիստոնէական բարե-  
պաշտութե, զոր յայնց ժամանա-  
կաց և այսր պտղաբերեցին յանձինս  
բարեսէր ընթերցօղք :

՚Ն համար այնց հոգեւոր արդեանց՝  
արդար վարկանիմ դասել և զայժ-  
մու իմնդիր ուրումն բարեպաշտի.  
որոյ անձամբ ճաշակեալ զոգեշահ  
ներգործութիս այնը ճառի՝ որ մա-  
կագրեալն է, Յաղագո Համակերպու-

ԱԵ ընդ կամացն Ապուծոյ, և տեսեալ  
ևս՝ հրչափ կարեոր իցէ առն քրիս  
տոնեի ստէպ ստէպ 'ի միտ առնուլ  
զայն վարդապետութի, թախանձա-  
նօք եղ մեր առաջի՝ զայն ճառ յա-  
տուկնորոգ թարգմանելըստ յստակ  
հայկաբանութե, և մատուցանել'ի  
վայելումն հասարակաց :

Վտագիւր յանձն առեալ զարժա-  
նահայց խնդիրն, վերստին թարգմա-  
նեցաք զայն ճառ ուրոյն՝ 'ի բուն յի-  
տալական բնագրէ անտի տպագրել-  
յամին 1711. յորմէ արարեալ էր և  
առաջին թարգմանութին հայկական:  
Վ ամս զի կայ և այլ բնագիր իտա-  
լական՝ յետոյ ուրեմն տպագրել յա-  
մին 1779, առաջնորդուք մեծի առն  
զիտնականի՝ Ֆլամինիո Բունարի  
վենետիկեան Պատրիկի. որոյ կամե-  
ցեալ զբովանդակ գործ Հեղինակին  
պատշաճեցուցանել յօդուտ հասա-  
րակաց կարգի ամենայն հաւատա-  
ցելոց, արար փոփոխութիս ինչ ճա-  
ռիցն և գլխակարգութեց, յարմա-  
րելով ուրեք ուրեք և զիտալական  
շարագրութին : Այլ քանզի ըստ

7

նախկին բնագրին ծանօթ են յազդի  
մերում բանք հեղինակին, անտի և  
ոչ՝ ի յետին տպագրելոյն՝ զերկըորդ  
թարգմանութիւնս առնել՝ ի դեպ  
վարկաք :

Կամակար մերում աշխատութեա՝  
զոյդ յուսամք տեսանել և զփոյթ  
բարեպաշտ ընթերցողաց, ոչ այնչափ  
ընթերցողս լինել գրեցելոցն, քան  
թէ վկայօղս բանիցն ձշմարտութեա,  
և նախանձաւորս՝ ի կատարումն ասա  
ցելոցն : Ա կայէ աշխարհ ըստ ամե-  
նայն դարուց իւրոց . վկայեն ազգք  
իւրաքանչիւր յամենայն լեզուս .  
վկայէ զանազանեալ վիճակ մարդ-  
կային կենցաղոյս . միով բանիւ .  
վկայէ այր իւրաքանչիւր անձամք՝ ի  
փորձ անցեալ . և վկայեն զի՞նչ .  
Ա կայեն ասեմ՝ ամենեքին ընդ մի  
բերան, թէ կեանք մարդկան յաշ-  
խարհի աստեն տեսարան բիւրազգի  
թշուառուեց, տառապանաց, փոր-  
ձանաց, ցաւոց, վտանգաց, որ հոգ-  
ւոյ և որ մարմնոյ, որ կամայ, և որ  
շատ ևս ակամայ, որ ՚ի մարդկանե,  
և որ յայլ պատճառաց : Կակ արդ՝

յայսոսիկ շուրջ ըմբռնեալ մարդոց  
 'ի ծփանս անդադաբս, ուստի ար  
 դեօք, զիա՞րդ զիսաղաղութի մար  
 թասցի գտանել զոգւոյ, և'ս առա  
 ւել ին զյաւիտենական զիւր փըր  
 կուի զնել յապահովի, թէ ոչ յան-  
 սասանելի խարիսխ անդը Աճային  
 կամացն բուռն հարեալ կախիցի  
 անմեկնելի :

Այս էր համօրէն ածասիրաց  
 վէմ ապաստանի . սոյն՝ հանապա-  
 զորդ նոցին աղերս ըստ Դաւթայ,  
 Ուստինձ առնել զկամն քո. այս և  
 կնիք ածապաշտից՝ իրը անուն սահ-  
 մանիչ յորոշումն մարմնապաշտից՝  
 առ 'ի յայ վերակօչեալ բանիւ Խ-  
 սայեայ . կը . կ. \* Քեզ անուն կո-  
 չեսցին կամք իմ: || Եւ որ միանդամ  
 արդեամքք գործոց Ճշմարտեսցէ  
 յանձն զայս անուն՝ լինելով կամա-  
 բար Աստուծոյ, գոչեսցէ նա ցնծու-  
 թեսամք և զմիւմն անուն յաւիտե-  
 նական, թէ Դու փա՛ռք իմ:

# Ճ Ա Ռ

ՅԱԼԱԳԻ ՀԱՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ  
ԸՆԴ ԿԱՄԱՑՆ ԱՍՏՈՒՑՈՅ

---

## Գ Լ Ա Խ Խ Ա :

Ա յ ա ջ ա ր ի ո ւ ն ե ր ի ո ւ ց գ լ մ ա տ ո ր հ ե մ ա ն ց :

Ո ւ ս ո ր պ է ս ե ս հ ա մ ի մ , ա յ լ ո ր պ է ս դ ո ւ ս :  
Մ ա տ մ ժ . ի ն լ . 3 9 :

Բ ա տ ե ր կ ո ւ ց պ ա տ մ ա ռ ա յ ց՝ ա ս ե ն ս ո ւ ր ը  
վ ա ր դ ա պ ե տ ո ք ի ջ ե ա լ յ ե ր կ ն ի ց Ո ր դ ւ ո յ ն Ա յ ,  
և զ զ ե ց ե ա լ զ մ ե ր մ ա ր մ ի ն ս , լ ի ն ե լ ո վ մ ա ր դ  
ճ շ մ ա ր ի տ : Մ ի ՞ ա ռ ՚ ի փ ր կ ե լ ո յ զ մ ե զ ի ւ ր ո ւ մ ն  
պ ա տ ո ւ ա կ ա ն ա ր ե ա մ բ : Ե ւ մ ի ւ ս՝ ո ւ ս ո ւ  
ց ա ն ե լ մ ե ղ ի ւ ր ո վ վ ա ր դ ա պ ե տ ո ւ մ թ բ զ մ ա ն ա  
պ ա ր հ ե ր կ ն ի ց , և վ ա ր ժ ե լ զ մ ե զ օ ր ի ն ա կ ա ւ  
ի ւ ր ո վ : Վ ա ս ն զ ի ո ր պ է ս ո չ օ գ ո ւ տ ի ն չ է ր  
մ ե ղ զ ի ս տ ե լ զ մ ա ն ա պ ա ր հ ե թ է կ ա պ ե ա լ  
մ ն ա յ ա ք ՚ ի բ ա ն տ ի , ն ո յ ն ա պ է ս՝ ը ս տ ա ս ե լ ո յ  
ս ը յ ն բ ե ռ ն ա ր դ ո ս ի , ո չ օ գ ո ւ տ ի ն չ ե լ ա ն ե լ  
՚ ի բ ա ն տ է ն ՚ թ է ո չ զ մ ա ն ա պ ա ր հ ն զ ի ս է ա ք :  
Ե ւ զ ի ա ն ե ր ե ո յ ժ է ր Ա ծ , ա ռ ՚ ի կ ա ր օ լ

լինելոյ մեղ տեսանել զնա , դհետ երթաւ  
 և նմանել՝ պիտոյ էր զի երևելի լինիցի ,  
 զյեցեալ զմեր մարդկութիւն՝ այնպէս որ-  
 պէս հովիւ զմորթ արկանէ զանձամբ՝ ըդ-  
 հանգերձ ովարի , զի դհետ երթայցեն  
 նմա ովսարքն , տեսանելով զիւրեանց նմա-  
 նութի : Ասէ նր լեռն պապն . \* Զի եթէ  
 չէր Ած ճշմարիտ , ոչ արդեօք մատուցեալ  
 էր զդարման . և եթէ մարդ ճշմարիտ ոչ  
 էր , ոչ տայր օրինակ : || Կատարեաց նա  
 զերկոսին զայս լի բովանդակ՝ դերահրաշ  
 սիրովն զոր ունէր առ մարդիկ . և որպէս  
 փրկութին եղեւ բաղմաղեղ , ըս այնմ \* Բա-  
 զում'ի նմանէ փրկուի || (Մաղմ. Ճիթ. 7.)  
 նոյնպէս և վարդապետելն եղեւ յորդառատ ,  
 ոչ բանիւք եթ աւանդեալ այլ առաւելիս  
 յորդագոյնս օրինակաւ գործոց : \* Սկսաւ  
 Յ՛ առնել և ուսուցանել , || ասէ աւե-  
 տարանիչ նբն Ղուկաս . (Գործ. ա. 1 : )  
 Առաջին գործել սկսաւ , և զայն՝ յամենայն  
 կեանս իւր , և յետ այնր քարոզել զվերջին  
 երիս ամսն , կամ երկու ամեւ կէս :

Արդ՝ յայնմ ամենայնի զոր ուսոյց մեղ  
 փրկիչ մեր Ք՛ , մի է յառաւել զլիսաւո-  
 րացն՝ ունել մեղ յամենայնի զմիաբանուի  
 ընդ կամացն Այ . զոր ոչ բանիւ միայն ու-  
 սոյց՝ յորժամ զաղօթելն օրինադրելով ա-  
 սաց , մի ՚ի հայցելեացն յերկնաւոր հօրէ  
 ձերմէ լինել , \* Եղիցին կամք քո որպէս  
 յերկինս և յերկրի . || (Մատ . կ . 10 . )  
 ոյլի ուսոյց մեղ , և պնդագոյնս հաստա-

տեաց զայս վարդապետուի լուքով օրինաւ-  
կաւ . զի յայդ իսկ ասէ՝ իջեալ յերկնից  
յերկիր : \* Իջև ես յերկնից՝ ոչ զի զկամն  
իմ արարից , այլ զկամն այնորիկ որ առա-  
քեացն զիս : || ( Յովհ . Ղ . 38 : ) Եւ 'ի կա-  
տարել անդ գործոյ փրկութես մերոյ 'ի մե-  
ծի հինդշաբաթուն , յորժամ'ի պարտիղին  
աղօթէր , թէպէտ և մարմինն և ախոր-  
ժակն զգայական խորշէին 'ի մահուանէ ,  
մինչեւ առ 'ի ցոյց Ճշմարիտ մարդն լինելոյ  
ասաց . \* Հայր իմ , եթէ հնար է՝ անցցէ  
բաժակս այս յինէն , || ( Մատ . իՂ . 39 : )  
սակայն կամք նորա դիւրապատրաստ էին  
և բազմաբազմիկ առ 'ի յարըումն բաժա-  
կին հրամայելոյ 'ի հօրէ իւրմէ . նմին իրի  
անդէն 'ի վերայ բերէ . ոչ որպէս ես կամին  
այլ որպէս դու կամիս :

Բայց զի յարմատոց անտի ձեռն ար-  
կանիցեմք յայս առաջարկուի , և հաստա-  
տիցիմք պնդապէս 'ի համակամութեանս  
յայսմ , պիտոյ է դնել երկու հիմունս՝ հա-  
մառօտս , բայց կարեռս յոյժ , յորս իբրև  
յերկու ծիննիս ունի ամրանալ և շրջիլ այս  
առաջարկութի : Առաջինն է , զի յառա-  
ջադիմութի մեր և կատարելութի եղեալ  
կայ յայս միաբանութի ընդ կամացն Այ .  
և որչափ սա մեծադոյն իցէ և առաւել կա-  
տարեալ , նոյնչափ մեծադոյն լինիցի և յա-  
ռաջադիմութին : Դիւրաւ 'ի միտ առնումք  
զայս հիմն , այնու զի հաւաստի իրք են՝ թէ  
կատարելութին տիրապէս եղեալ կայ 'ի

սէրն Այ. և այնչափ ոք կատարելագոյն  
է, որչափ առաւել սիրիցէ զած։ Ա է վար-  
դապետութեամբս Աւետարանն ոք . լի  
են թուղթք սըն Փօղոսի . լի են մատեամք  
Արբոց : \* Այս է մեծն և առաջին պա-  
տուիրան : (Մատ. իբ. 22:) Աէր է զօդ  
կատարման : (Կողոս. հ. 14.) Եւ մեծ  
քան զառսա սէր է : || (ա. Կոր. ժ. 15:) Արդ՝  
մծսիրութեն մասն՝ առաւել վսեմ  
և յատակադոյն, և իրը պարարտութի նո-  
րա, է միաբանիլ յամենայնի ընդ կամա  
Այ, և ունել զնոյն կամիլ և գչկամիլ ընդ  
մեծվայելզութեն նորայամ իրս : \* Զնոյնո  
կամիլ, և զնոյնս չկամիլ այս է բարեկա-  
մութի հաստատուն, || ասէ սըն Ճերոնիմոս.  
զոր և տոնու յիմաստասիրէն Կիկերոնէ :  
Ապա ուրեմն որքան առաւել համակերպ  
իցէ ոք և առաւել միացեալ՚ի կամս Այ,  
նոյնքան լաւագոյն եղիցի և առաւել կա-  
տարեալ : Եւ դարձեալ, յայտ իսկ է՝ զի  
շիք ինչ առաւելլաւ, և ոչ առաւել կատա-  
րեալ ինչքան զկամս Այ : Ապա որչափ ոք  
առաւել միաբանիցի յարեալ՚ի կամս Այ,  
նովին չափովլինիցի լաւագոյն և կատարե-  
լագոյն : Իմաստնաբար զմտաւ ածէր իմաս-  
տասէր ոմն, թէ Ած գոլով ամենակատար  
յէքս, ըստ նմին որչափ ինչ ՚ի նմանութի  
այ հպագոյն իցէ, նոյնչափ կատարեալ և  
լինիցի :

Երկրորդ հիմն այն է, թէ չկայ ինչ յաշ-  
խաբէի զիակուած կամ անցք՝ որ չեցէ ՚ի

կամաց ԱՅ և 'ի նորին հրամանէ . զոր իւ  
 մանալ արժան է բաց 'ի յանցուածոց և 'ի  
 մեղաց . զի այսմ ոչ պատճառ է ած , և ոչ  
 դտող , նաև լինել կարէ իսկ ոչ : Եւ զոր  
 օրինակ հրոյ բնութե հակառակ է ցրտա-  
 ցուցանել , և ջրոյ՝ ջեռուցանել , և արեու-  
 նսեմացուցանել , նոյնպէս զլխովին հակա-  
 ռակ է անշափ բարութե ԱՅ սիրել զանի  
 բաւութի : Վասն որոյ ասէր Ամբակում  
 մարգարէ . (ա . 13 .) \* Սուրբ է ակն քո  
 'ի տեսանելոյ զլարիս : || Որպէս ասել սո-  
 վոր ենք , թէ ոչ կարէ տեսանել զնա՝ յոր-  
 ժամ յայտնել կամիսք զատելութի ուրուք  
 առ այլ , սոյնպէս ասէ մարգարէն՝ թէ ոչ  
 կարէ տեսանել ԱՃ զանօրէնութիս մարդ-  
 կան՝ յաղաղս զգուանացն և ատելութեն  
 մեծի՝ զոր ունի յայնս : \* Ո՛չ թէ դու ած-  
 կամիս զանօրէնութի , || ասէ Դաւիթ . և  
 թէ \* Սիրեցեր զարդարութի , և ատեցեր  
 զանիրաւութի : || (Սաղմ. Ե . 5. խէ . 8:) Յաճախս ասեն գիրք նըք՝ թէ որչափ ատե-  
 ցող մեղաց է ԱՃ . վասն որոյ անհնար է  
 նմա լինել պատճառ այնմ , և կամ դտիչ:  
 Իսկ բաց 'ի մեղաց , այլ իրք բովանդակ ,  
 ամենայն տառապանք , և ամենայն պատ-  
 ժաւորութիք զան 'ի կամաց և 'ի հրամա-  
 նէն այ : Կարի հաւաստի է և այս հիմն :  
 Ո՛չ դոյ յաշխարհի բաղդ , որպէս մոլորու-  
 թի հեթանոսացն դնէր . բարիք՝ զոր բաղ-  
 դի կոչէ աշխարհ , ոչ եթէ 'ի բաղդէ տու-  
 եալ ինչ են , որ և չէ իսկ բնաւ , այլ յԱՅ

միայն տուրք են . որպէս և հոդին նք առէ՝  
բերանով խմաստնոյն , \* Կեանք և մահ ,  
բարի և չար , մեծութիւն և աղքատութիւն ա-  
ռաջի Այ հաւասար են : || ( Սիր . ժա . 14 . )  
յայտ արարեալթէ միօրինակ յայ են որ-  
պէս կեանք և բարի և մեծութիւն , նոյնպէս  
մահ և չար և աղքատութիւն :

Թէպէտ իրք այդպիսիք յառաջ դայցեն  
՚ի ձեռն այլոց երկրորդ պատճառաց , բայց  
է ստոյգ՝ թէ ոչ մի ինչ լինի ՚ի տիեզերքս  
առանց կամաց և հրամանի գերադոյն հրա-  
մանատուին՝ որ վարէ զտիեղերս . ոչ գոյ  
ինչ դիպուածով առաջի Այ , այլ ամենայն  
ինչ կարդեալ և ՚ի գլուխ ելեալ ձեռամբ նո-  
րա : Ունի նա զհամար ամ ոսկերաց մար-  
մնոյ քոյ , և զհամայն հերաց գլխոյդ . և  
ոչ մի յայնցանէ ՚ի քէն խլեսցի առանց հրա-  
մանի և կամաց նորա : Եւ զի՞նչ ասեմ ըզ-  
մարդկայնոցս , ուր և ոչ ձնձղուկ մի ան-  
կանի յորոգայթ առանց տնտեսութեն և  
կամաց Այ , ասէ փրկին մեր Քն , ըստ  
որում յաւետարանի ընթեռնումք , \* Այն  
ապաքէն երկու ձնձղուկք դանկի միոջվա-  
ճառին , և մի ՚ի նոցանէ յերկիր ոչ անկցի  
առանց հօր ձերոյ : || ( Մատ . ժ . 29 : )  
Այլև ոչ տերև ծառոյ առանց նորա կա-  
մացն շարժեացի . և եթէ վիճակք հանեալ  
լինին յարկեղէ կամ յամանոյ իմեքէ , մի  
կարծիցես թէ դիպուածով ելանեն . քանզի  
ելանեն ըստ կարդելոյ ածային նախախնա-  
մութեանն , որ այնպէս կամի , և այնպէս

տնօրինէ. \* Եւ ել վիճակն մատաթեայ. ||  
(Գործ. ա. 26.) Ո՛չըստ բաղդի անկաւ  
վիճակն 'ի մատաթիաս, այլ ըստ վճռոյ  
և ըստ տեսչութե՛ն Այ, որ կամեցաւ ըն-  
տրել զնա յիւր առաքեալ այնու օրինա-  
կաւ:

Այսմարտութե՛ն հասու եղեն ողջա-  
միաքն 'ի փելիսովիայից անտի բնական լու-  
սով, ասելով [թէ բաղըւմ ինչ առ երկրորդ  
պատճառն Են արդարև պատահումն, իսկ  
ոչ այնպէս առ պատճառն առաջին, այլ  
կարգաւորեալք քաջադէպ և խորհրդով.  
յոր առնուն գորինակս, [թէ տէր ոք առա-  
քիցէ ուրեք զմի 'ի ծառայիցն վասն գործոյ  
ինչ, և ընդ այլ ճանապարհ առաքիցէ  
միւս ևս ծառայ 'ի նոյն տեղի սակս այլ  
գործոյ, առանց գիտելոյ նոցա զմբեանց,  
բայց գիտելով տեսպնն՝ [թէ 'ի մի տեղի  
գտանիցին նոքա. ահա հանդիպել երկուց  
ծառայիցն 'ի միասին՝ դիպուած է առ նո-  
սա, բայց առ տէրն որ կարգեաց զնոյն,  
չէ դիպուած, այլ խորհրդածեալ և քաջա-  
դիպութե՛ն կարգաւորեալ: Սոյնպէս և յա-  
ռաջիկայս, [թէպէտ և ինչ ինչ դիպուա-  
ծով առ մարդիկ հանդիպին, իբրև զի ին-  
քեանք ոչ զայնս կարգեալ էին, և ընդ միտս  
անգամ ոչ ածէին, բայց առ ած ոչ ըստ  
դիպաց անցանեն, այլ խորհրդով և կա-  
մօք նորա. զի այնպէս կարգեալ է վասն  
գաղտնածածուկ պատճառաց՝ զոր նա ինքն  
գիտէ:

Արդ՝ զոր քաղել ունիմք յերկուց հիմանց աստի, է եղակացութին կամ ընաբանն՝ զոր առաջի եղաք. այս է, զի որովհետեւ ամենայն որ ընդ մեզ անցանեն՝ զանի ձեռանէ Այ, և բովանդակ մեր կատարելութի եղեալ կայ 'ի միաբանել զմեզ ընդ կամացն Այ, պիտոյ է ընդունել զամենայն իբր եկեալ 'ի ձեռանէ այ, և 'ի նոյնս միաբանել զմեզ ընդ ածային ամենասր կամացն: Ոչ արժան է քեզ ընդունել ինչ իբր դիպմամբ իմն եկեալ, կամ 'ի ձարտարութէ և 'ի դործոյից մարդկան. վասն զի այս է որ ներգործէ 'ի մեզ անձկութիւն մեծ և ցաւս: Մի խորհիր թէ այս ինչ կամայն դիպաւ քեզ, վասն զի այն ոք գործեաց. և եթէ չէր լեալ յայս կամ յայն պատճառէ, այլազգաբար դիպէին իբքն: Ոչ անկէ քեզ յայդ հայել, այլ առնուլ զամենայն ինչ իբրեւ 'ի ձեռանէ այ եկեալ ընդ որ ձանապարհ և զայցեն. վասն զի նու է որ առաքէ զնոյնս այնու միշնորդովք: Ասել սովոր էր միոմն յերևելի հարց անապատաւորաց, թէ ոչ կարօղ է մարդ ունել յաստի կեանս զհանդիստ ձմարիտ և զստոյդ անդորրութի, բայց եղեալ 'ի մոիթէ Ած միայն և ինքն կայ յաշխարհի: (Այս է բան հօրն Ալոնիոսի. 'ի վարսհրց. եր. 255:) Եւ նքն Դորոթէոս ասէ, նախնի Հարքն մեծապէս կրթէին զանձինս՝ իբրեւ 'ի ձեռանէ այ ընդունել զամենայն ինչ ևս և զիոքունս, և զհանդի-

պեալս ո՞ր և է օրինակաւ . և այսու կային  
մնային՝ ի բաղում խաղաղութե և հան-  
դարտութե , երկնային կենօք քաղաքավա-  
րեալք :

## Գ Լ Ո Ւ Խ Բ .

Առաջայացած երերորդ հիմ :

Այնչափ հաստատեալ է յածային դիրու-  
ժշմարտութին՝ թէ վիշտը ամենայն և պատ-  
ժաւորութիք գան՝ ի ձեռանէն այ , մինչ  
զի ոչ պիտոյ էր յերկար ցուցանել զայդ  
եթէ ոչ ջանայր սատանայ մթագնել զայն  
խորամանկութն : Վասն զի առ միւս ճըշ-  
մարտութին՝ զոր հաւաստի ասացաք , թէ  
Ած չէ պատճառ և գտիչ մեղաց , ի վերայ  
ածէ զհետեռութի սուտ և պատրողական ,  
հաւանեցուցեալ զոմանս՝ թէ արդարե  
չարին հասեալք մեղ յերկրորդ պատճառ-  
ոաց և յանմտաւոր արարածոց , որպէս հիւ-  
ւանդութի , սովլ , անզաւակութի , ի ձե-  
ռանէն այ գան . զի անտանօր չիք մեղք , և  
անմարթ է լինել յայնպիսի սոեղծուածն՝  
անընդունակս մեղաց : Ասկայն չարն և  
վիշտ եկեալ մեղ՝ ի յանցմանէ մարդոյ՝ որ  
վիրաւորեացն , կամ գողացաւ , կամ անար-  
գեաց զոք , ոչ դայ՝ ի ձեռանէ այ , և չէ  
տնօրինեալ՝ ի նորին հրամանէն և ՚ի տես-  
չութէ , այլ՝ ի չարութէ մարդոյն հասանէ



և 'ի խոտորնակ կամացն։ Բարւոք իմն ասէ  
նըն Դորոթէոս, յանդիմանեալ զայս մոտա-  
ծովթի, և զայնոսիկ որք ոչ յայ ձեռանէն  
ընդունին եկեալ զամ ինչ։ \* Սեք 'ի լսել  
անդ բան ինչ խօսեցեալ ընդդէմ մեզ՝ շանց  
նմանիմք. զի եթէ քար ոք ձգեսցէ 'ի նոսա,  
թողեալ նոցա զքարաձիգն, զքարն խածա-  
տեն։ Սոյնպէս թողեալ մեր զած՝ որ զնե-  
ղութին տնտեսէ 'ի մաքրութի մեղաց մե-  
րոց, առ քարն՝ առ ընկերն յարձակիմք։ ||  
Են ոմանք՝ որոց յորժամբան ինչ հակա-  
ռակ ասէ ոք, կամ զայլ ինչ առնիցէ, մո-  
ռացեալ նոցա զած, զամենայն ցասումն  
դարձուցանեն առ ընկերն, ըստ նմանուե-  
շանց՝ որք զքարն խածատեն, ոչ հայեցեալք  
և ոչ համարեալք ինչ դեռն քարաձող։

Առ. 'ի վարել՝ 'ի բաց զայս մօլորութիւն,  
և կալ հաստահիմն յուղղափառ ճշմար-  
տութե՛, ծանուցանեն ածաբանկ՝ թէ եր-  
կու. ինչընթացակից են 'ի մեղքն զոր գոր-  
ծէ մարդ։ Մի՛ շարժումն և ներդօրծութի՛  
արտաքին, և միւս՝ անկարդութի կամաց  
որով լինի օտարանալ յայ պատուիրանէն։  
Առաջնոյն պատճառ՝ Ած է, իսկ երկրոր-  
դին՝ մարդն։ Զօր օրինակ, եթէ ոք կըու-  
ուիցի ընդ այլում, և սպանանիցէ զնա, առ  
'ի սպանումն՝ ձգեաց զձեռն 'ի սուր անդը,  
վերացոյց զայն, շարժեաց զբազուկն, ետ  
պհաբուածն, և արար զայլ ևս շարժմունս  
բնականս, զորս մարթ է կշռադատել յին-  
քեանս՝ զատ յանկարդութէ կամաց մար-

դոյն՝ որ զնոյնս գործեաց առ. 'ի սպանանեւ-  
 լոյ զմիւմն։ Այսոցիկ շարժմանց ամենայ-  
 նի մտածեալ յինքեանս՝ պատճառ է Ած,  
 նա առնէ զնոյնս, որպէս առնէ զայլ ամե-  
 նայն գործս անբան ստեղծուածոց։ վասն  
 զի որպէս չկարեն նոքա շարժել և գործել  
 առանց Այ, նոյնպէս չէր կարթղ մարդն  
 առանց այ ՚ի կիր առնուլ զբաղուկն, և  
 ձգել զձեռն ՚ի սուր։ 'Ի վերայ այսր, այն  
 ներգործութիք բնականք ոչ են ինքնին չար։  
 զի եթէ մարդ առնէր զնոյնս ՚ի կարեսը  
 պաշտպանուի անձինն, կամ յարդար պա-  
 տերազմի, կամ իբրև պաշտօնեայ արդա-  
 րութե, և սպանանէր զօք, ոչ արդեօք մե-  
 ղանչէր։ Աակայն արատոյն այնմ որ է պա-  
 կասութիւն և անկարգութիւն կամացն՝ որով  
 այր չարագործ անիրաւի, և խոտորմանն  
 և թիւրելոյն յուղիղ բանէ՝ ոչ է Ած պատ-  
 ճառ, թէ և թոյլ տայ այնմ. զի կարօղ դո-  
 լով արգելուլ, ոչ արգելու ըստ արդար դա-  
 տաստանաց իւրոց։ Զայս բացայայտեն  
 նմանութես . եթէ վէրս առնուցու ոք  
 յոտն, և գնայցէ կազալով, ապաքէն  
 ոտնփոխ լինելոյն պատճառ է շարժիչ զօ-  
 րութիւն և ազդումն հոգւոյն. բայց կազա-  
 լոյն պատճառ ոչ զօրութիւն հոգւոյն է, այլ  
 վէրքն։ Սոյնպէս ՚ի գործն՝ զօր առնէ ոք  
 մեղանչելով, Ած է պատճառ գործոյն,  
 բայց սխալումն և մեղանչելն ՚ի գործել  
 անդ՝ ազատ անձնիշխանութեն մարդոյն է։  
 Այլ արդ՝ թէպէտ չէ Ած, և չկարէ

իսկ լինել պատճառ կամ գոյիչ մեղաց, բայց  
և այն աներկբայելի է՝ թէ ամ չար պատ-  
ճոց կամ պատուհասք՝ եթէ՝ ի բնական  
պատճառաց գայցեն և յանբան արարա-  
ծոց, և եթէ՝ ի բանաւորաց անտի՝ որ և  
իցէ ձանապարհաւ, և որովհօրինակաւ լի-  
նիցին, բովանդակ գան՝ ի ձեռանէն այ, և  
նորին տնտեսութե՛ և յառաջատեսութե՛ :  
Կա ինքն Ած է՝ որ շարժեաց զձեռնն որ  
եհարն դքեղ, զլեզուն՝ որ նախատեացն  
զքեղ: \* Եթէ իցեն չարիք՝ ի քաղաքի, և տն  
չիցէ արարեալ. || ասէ Ամովս մարդարէ .  
( դ. 6 : ) և յաճախ են բանք նը գրոց յա-  
ղագս այսր ճշմարտութեան, վերագրելով  
Այ զքարն զոր մարդ առնէ այլում, և  
ասել՝ ած է որ զայն արար :

Յերկրորդ դիրս թագաւորութեանց  
( ժբ. 11. ) 'ի պատուհասել Այ շդաւիթ-  
ձեռամբ որդւոյ նը աբեսաղոմայ՝ յաղագս  
մեղացն շնութե՛ և սպանութե՛ զոր դոր-  
ծեսան էր, ասէ Ած թէ ինքնին առնելոց  
է զայն: \* Ահա ես յարուցից՝ ի վերայ քո  
չարիս՝ ի տաննէ քումմէ, և առից զկանայս  
քո առաջի աչաց քոց, և տաց ընկերի քում.  
զի դու արարեր զայդ՝ ի ծածուկ, և ես  
արարից զքանդ զայդ յանդիման ամենայն  
իսրայէլի, և առաջի արեդականս այսո-  
րիկ: || Սորին վասն՝ նաև թագաւորք ամ-  
բարիշոք որբ իւրեանց գոռողութեամբն և  
անդիթուք պատուհասս դժնդակս ածէին  
'ի վերայ ժօղովրդեանն այ, կոչին՝ ի զբոց

գործօնեայը ածային արդարունքն : \* Վայ  
ասորեատանեալցն , գաւաղան բարկութե  
և սրտմտութե խմոյ ՚ի ձեռս նոցա , || ասի  
Եսայ . Ժ . 5 : Եւ վասն կիւրոսի պարսից  
արքայի՝ յոյր ձեռն պատուհասելոց էր Ած  
քքաղդեացիս , ասէ . ( Եսայ . խե . 1 . )

\* Զորոյ կալայ զաջոյ ձեռանէ նորա : || ՚ի  
դէպ այսմ գեղեցիկ խօսի նըն Օգոստինոս .  
( ՚ի վերայ սաղմ . է . ) \* Ամբարշտութի  
նոցա եղեւ տապար Այ . եղեն նոքա գործի  
ցասուցելոյն Այ , և ոչ թագաւորութիւն  
հաշաեցելոյն : Զի զայն ինչ գործէ Ած ,  
զոր և մարդն առնէ յոլովակի : Այր բար-  
կացեալ ՚ի ձեռն առնու երբեմն զդաւա-  
զան ընկեցեալ ՚ի գետնի , կամ նաև զոստ  
անպիտան , և հարկանէ զորդի իւր , և ա-  
պա զոստն ՚ի հուր ընկենու , իակ որդւոյն  
պահէ զժառանգութին : Այսպէս խրատէ  
Ած երբեմն զբարիս ՚ի ձեռն չարաց : ||

Յեկեղեցական պատմուխ ընթեռնումք  
թէ յաւերման երուսաղէմի Տիտոս զօ-  
բավար հռովմայեցւոց իրբե շուրջ եկեալ  
զքաղաքաւն՝ ետես զփոսս լցեալս զլխուք  
մեռելոց և զիակամքք , և զերկիրն ամե-  
նայն շուրջ ապականեալ ՚ի գարշահոտու-  
թենէ , հայեցեալ յերկինս՝ բարձրաձայն  
վկայ կոչէր զած , թէ ոչ ինքն է պատճառ  
գործելոյ այնպիսի անհնարին կոտորածի :  
Եւ յորժամ բարբարոսն այն Ալարիկոս  
Դիմեալ երթայր յաւարի առնուլ և քան-  
դել զնուովմ , ելնմ ը առաջ յարդոյ միանձն

գք, և ասէր՝ մի լինիր պատճառ անհամար շարեացն՝ որք գործիցին յայնմ աւուր . իսկ նա ետ պատասխանի . ոչ ես ինքն իմով կամաւ գնամ 'ի հռովմ, այլ կայ ոք՝ որ հանապազօր դրգուէ զիս և բռնադատէ ասելով . երթ 'ի հռովմ, և աւերեա՛ զքաղաքն։ Այսպէս ահա ամենայն ինչ գայ 'ի ձեռանէն այ, նորա հրամանաւ և կամօք : Որպէս և արքայ մարդարէն Դաւիթ՝ յանիծաննել զնա սեմեայ սաստիկս, և ընկենուլքարինս և փոշի, ասաց որոց վրէժս լուծաննել կամէին . \* Տէր ասաց նմա անիծաննել զդաւիթ . և ով ասացէ թէ ընդէր արարեր այդպէս : || ( բ. Թաղ. ժկ. 10 : ) Թաղը տուք նմա, զի տէր հրամայեաց անիծաննել, գործի արարեալ զնա առ 'ի տառապեցուցաննել զիս և պատուհասել :

Բայց զինչ մեծ է՝ զմարդիկ համարել գործիս ածային արդարութեն և նախախնամութեն, ուր նոյնպէս գործի են նոքին դեք յամառեալքն և խստացեալք 'ի չարութեն, և մերում կործանմանն ցանկացողք: Զայս իմաստնաբար յայտ առնել նըն Գրիգոր յայն ասացեալն գրոյն, ( ա. Թաղ. ժկ. 14.) \* Խեղդէր զնա այս չար 'ի տեառնէ : || Կոյն այս կամ ողի կոչի տեառն, և ողի չար . չար ըստ ցանկութեն չարասէր կամացն, և տեառն՝ ցուցաննել թէ յայ առաքեալ էր առ 'ի տանջելոյ զսաւուղ, և ած գործէր 'ի ձեռն նորա, զոր և բնաբան գրոյն ծանուցանէ : Վասն սմին պատճառի

ըստ ասելոյ նորին Արբոյ, դեք տանջիչք և  
հալածիչք արդարոց՝ կոչին 'ի դրոց աւա-  
ղակք այ . աւազակք՝ վասն չարակամու-  
թեն 'ի վասել մեզ, և այ , ցուցանել թէ  
զիշանութի վասելոյ ունին յայ :

Ըստ այսմ կարի վայելչաբար խորհր-  
դածէ նբն Օգոստինոս ('ի վր սաղմ. լա .)  
թէ ոչ ասաց յոր, Տէր ետ, և սատանայ ե-  
բարձ, այլ զամենայն ինչ վերաբերեալ առ  
Ած, ասաց . Տէր ետ, և Տէր էառ . (ա. 21 .)  
գիտելով քաջ թէ ոչ կարէ դեն առնել  
վասս առաւել քան զթոյլ տուեալն յայ :  
Եւ յառաջ երթեալ ասէ նբ վարդապետն .  
\*Առ ած քո վերածեած զլիսովին դշարուածս  
քո . զի և ոչ սատանայ արասցէ ինչ քեղ՝  
բայց 'ի ներելն այնմ որ 'ի վերուստն ունի  
իշխանութի : || Մէ ոք ասիցէ, դեն արտօ<sup>ր</sup>  
ինձ զչարս զայս . այլ առ յայ համարեած  
զիշտ քո և զշարուածդ . զի ոչ կարէ ինչ  
առնել դեն, և ոչ հպել անզամ 'ի մազ  
հանդերձիդ, թէ ոչ յայ թոյլ տուեալ  
իցէ նմա : 'Սաւ ոչ 'ի խոզեանն դերդե-  
սացւոց մտանել կարացին դեք՝ թէ ոչ  
նախ հրաման ընկալեալք 'ի փրկչէ մերմէ,  
որպէս պատմէ աւետարանն սբ . (Մատթ.  
Ը. 21 : ) Եւ զիարդ ապա մերձենայցեն  
առ քեղ, կամ փորձել զքեզ կարիցեն ա-  
ռանց թոյլ տալոյն Այ : Որ 'ի խոզն  
ոչ կարաց մերձենալ, յորդիօն որպէս մեր-  
ձենայցէ :

Գ. Լ. ՈՒ Խ. Գ.

Յաղագս մեծամեծ բարեաց և շահեց՝  
որտ գանձեալ կան 'ի համահամութե  
ընդ Աստուծոյ :

**Ա**ռուրբն բարսեղ Երանելի ասէ, թէ ծայր  
սրբութե և կատարելութե քրիստոնէաւ  
կան վարուց՝ հաստատեալ կայ յընծայել  
Այ պատճառս ամենայն իրաց՝ մեծաց և  
փոքրունց, և 'ի նոյնս կալ միարան ընդ ա-  
մենասբ կամաց նորա : Այլ զի լաւ ևս  
ճանաչել կարիցենիք զկատարելութիւն և ըդ-  
յարդ սորա, և առաւել 'ի նոյն ըղձանայ-  
ցեմք, և մեծաջան պարտպեցիմք 'ի նմին,  
բացայայտեացուք առանձինն զբարիան և  
զօդուտս մեծամեծս՝ որք կան փակեալ 'ի  
միարանութե ընդ կամացն Այ :

Նախ առաջին, սա է նուիրումն այն  
Ճշմարիստ և կատարեալ, զոր մեծապէս դու-  
վասանեն Սբք, և վարդապետք հոգեոր վա-  
րուց, ասելով թէ սկիզբն է և արմատ ամե-  
նայն խաղաղութե և հանգստեան մերոյ :  
Վասն զի ներքոյ արկանէ զմարդ, և ըն-  
կենու 'ի ձեռս Այ, իբր սակաւ ինչ կաւ  
'ի ձեռս բրտի, որպէս զի առնիցէ զայն  
զինչ և կամի . ոչ ես կամելովլինելիւրում  
անձինն, ոչ վասն իւր կեալ, ոչ ճաշակել,  
ոչ ննջել, ոչ վաստակել վասն իւր, այլ դա-

մենայն առնել վասն Այ: Արդ՝ զայս ներ-  
դործէ համակամութին, որովոք յամեն-  
նայնի և ամենայնիւ դրաւի՝ ի կամն այ .  
մինչ զի ոչ այլ խմլք ցանկայ , և ոչ զայլ հո-  
գայ՝ բայց միայն զի կամք այ կատարեսցին  
յանձն իւր բովանդակապէս , եթէ յայնս  
զոր ինքն մարդն ունի գործել , և եթէ որ  
ի պատահմանէ գան , թէ ի յաջողականս  
և սփոփականս , և եթէ ի ձախողակս և ի  
դժնդակս : Այնչափ հաճի ընդ այս Ած ,  
մինչև վասն այսր կոչել զարքայն Դաւիթ՝  
այր ըստ սրտի իւրում . \* Գտի զդաւիթ  
զորդի յեսսեայ՝ այր ըստ սրտի իմում , որ  
արասցէ զամենայն զկամն իմ: || ( Գործ .  
Ժկ . 22 : ) Վասն զի ունէր զիւրն սիրտ  
նուիրեալ և գրաւեալ՝ ի սիրտ տն , այն  
պէս պատրաստական և կազմ յամենայն  
ինչ զոր ած կամէր տպաւորել՝ ի նմա՝ եթէ  
վշտալի , և եթէ զուարճալի , որպէս կաւ  
կակուզ առ ՚ի ընդունելոյ զօր և իցէ ձե  
կամ դրոշմ , զոր կալիցի ոք տալ՝ ի նմա .  
Եւ ահա սորին վասն ասէր նա միանդամ  
և երկիցս . \* Պատրաստ է սիրտ իմ , Ած ,  
պատրաստ է սիրտ իմ: || ( Սաղմ . ծկ . 8 .  
Ճէ . 1 : )

Երկրորդ , որոք ունիցի զայս անթերի և  
զկատարեալ համակամուի ընդ այ , ստա-  
ցեալ ունիցի և զանթերի զկատարեալ մե-  
ուուցումն ամ ախտից իւրոց և չար հակա-  
միտութեանցն : Գիտեմք արդարեւ որչափ  
կարեոր է այս մեռուցումն , և որչափ դո-

վեն ղայն և օրինադրեն մեղ Աբքն , և գիրք  
սրբագանք : Արդ՝ այս մեռուցումն է միջոց  
հարկաւ պահանջեալ առ ՚ի ստանալոյ ըդ  
միաբանութիւն ընդ կամացն այ : Սա է  
վախճան , և մեռուցումն՝ միջոց առ հասա-  
նելոյ այնմ . և վախճանն դլիսաւոր՝ միշտ է  
վսեմադոյն և կատարելադոյն քան զմիջոցն:  
Եւ թէ մեռուցումն իցէ միջոց կարեւոր ՚ի  
ստացումն միաւորուեն և յարելոյ ՚ի կամս  
այ , քաջայայտ է : Վասն զի խափանիչն  
այսմ միաւորութե՞ն է մեր կամքն սեպհա-  
կան , և անկարդ յօժարութին . ուստի որ  
չափ ուրանայ ոք և մեռուցանէ զիւր կամս  
և զյօժարութի , այնչափ դիւրաւ միանայ  
և համակից լինի ընդ այ կամացն : Առ ՚ի  
կցելոյ և յարմարելոյ զիայտ ինչ խոշոր ընդ  
այլում գործեցելոյ և յղկադունի , պիտոյ  
է գործել նախ և տաշել ղայն . ապա թէ  
ոչ չկարէ յօդիլ ՚ի միւսն պատշաճարար :  
Եւ ահա զայս առնէ մեռուցումն , տաշէ  
զմեղ , ողորկէ , և յարմարէ , զի միանալ  
կարիցենք և յօդիլընդ ած , միաբանելով  
զմեղ յամենայնի ընդ ածային կամացն .  
և որչափ զարդանայ ոք ՚ի մեռուցման ,  
նոյնչափ առաւելու ՚ի միանալ և յարիլ ՚ի  
կամս այ . և որչափ կատարելապէս մե-  
ռեալ իցէ , ըստ նմին ժամանեացէ ՚ի կա-  
տարելութի միաւորութիւն և համակա-  
մութե՞ն :

Այսմ զհետ դայ այլ ինչ ևս , որ և եր-  
բորդն համարեացի . և է , զի այն նուիրումն

և անթերի համակամութիւնդի ընդ ԱՅ է  
դերադոյն և առաւել ընդունելի և հա-  
ճոյական պատարագ՝ զօր կարօղ է մարդ  
ընծայել ԱՅ յիւրմէ : Քանիզի յայլ պա-  
տարագս մատուցանէ զիւր իրս, իսկ յայսմ  
մատուցանէ զանձն իւր : Յայլ պատա-  
րագս և 'ի մեռուցմունս՝ անձնն մեռանի  
մասամբ ևելթ, զքը օրինակ 'ի ժուժկալու-  
թն, կամ 'ի համեստութն, կամ 'ի լուու-  
թն, կամ 'ի Ճնշման ինչ՝ մատուցանէ այ  
դմասն ինչ անձինն . բայց այս՝ ողջակեզ է,  
որով ոք մատուցանի այ բոլորանուեր . որ  
պէս զի արասցէ ընդ նա Ած զօր ինչ կամի,  
որպէս կամի, և յորժամկամի, առանց խո-  
րելց կամպահելց ինչ անձինն : Ապա որ-  
շափ զանազանութիւն է բոլորին 'ի մասնէ,  
նոյն խտիր է ընդ այս պատարագ, և ընդ  
այլ պատարագս և ընդ մեռուցմունս :

Այնշափ մեծ համարեալ է այս առաջի  
այ, մինչ զի զայս միայն կամի և պահանջէ  
'ի մէնջ, ասելով \* Տուր ցիս որդեակ զսիրտ  
քո: || ( Առակ. իգ. 26: ) Զո՞ր օրինակ  
բաղէ թագաւորի ոչ այլիւիք՝ բայց սրտիւք  
կերակրի, նոյնպէս Ած ոչ զայլ ինչ՝ բայց  
զսիրտն միայն արդոյ համարի . և եթէ ոչ  
զայս տայցես նմա, այլ ոչ միով իւիք կա-  
րես համել զնա և հանդուցանել: Եւ ոչ  
'ի ինդրելնորա զայս՝ մեծ ինչ պահանջէ .  
վասն զի եթէ բովանդակ արարեալքն յայ  
չեն բաւական 'ի համել և յագեցուցանել  
զմեզ՝ որք սակաւ մի հող եմք և մոխիր, և

դուզնաքեայ մեր սիրտս ոչ շատանայ՝ բայց  
 ավ ևեթ, զիա՞րդ կարծիցես դու համել  
 զած բաւականութե, ոչ տալով նմա և ոչ  
 զսիրտդ բոլոր, այլ զմասն ինչ նորա, և  
 զայլն պահելով քեղ: Խարէութիւն մեծ է  
 այդ քեղ. զի սիրտ քո չէ բաժանելի այդ  
 պիսի օրինակաւ: \* Վասն զի անձուկ են  
 անկողինքն, և միոյն մնայ անկանիլ. և վե-  
 րարկու կարճ ոչ կարէ ծածկել զերկոսին: ||  
 Սիրտն՝ անկողին փոքր է և նեղ, ասէ մար-  
 գարէն եսայի. ի՞ը. 20. (ըստ լատ. թարգ.)  
 և չկարէ տանել յինքեան՝ բայց զած միայն.  
 և վասն այն՝ Հարսնն կոչէ զայն՝ անկողնակ.  
 \* Յանկողնի խոռում՝ ի գիշերի խնդրեցի զոր  
 սիրեաց անձնիմ. || (Երգ. հ. 1:) Վասն զի  
 սիրտ նորա այնպէս անձուկ էր, զի զիւր  
 փեսայն ևեթ տանել կարօղ էր. և որոք  
 լայնել կամիցի և ընդարձակել զսիրտ իւր  
 առ'ի և զայլոք ընդունելոյ, հալածէ ան-  
 տի զած, ի որ տրտնջէ նա բերանով եսայ-  
 եայ. (ծէ. 8.) \* Լայնեցեր զանկողինս  
 քո, և տարածեցեր զքեղ առ նորօք... և  
 բազմացուցեր զպոռնկութիս քո: || Յան-  
 կողին սրտի քո մուծանելով զայլ ոք բաց 'ի  
 քումմէ փեսայէդ, շնութիւն գործեցեր. և  
 առ'ի ծածկել զայն՝ 'ի բաց հաներ զած:  
 Եթէ հազարս ունէաք սրտից, պարտ էր  
 մեղ զբովանդակն նուիրել Այ, և զայն ևս  
 փոքր համարիլ՝ առ այնու զոր պարտապան  
 եմք առնել առ այնպիսի Տէր բարձրեալ:  
 Զորրորդ, որպէս ասացաք յառաջին

դլիսի, որոք ստացեալ ունիցի զայս համա-  
 կամութի, ունիցի և զկատարեալ սէրն նոյ.  
 և որչափ առաւելուցու յայսմ, նոյնչափի և  
 յածսիրութեն յառաջեսցէ, ըստ նմին և  
 'ի կատարելութե՝ որ եղեալ կայ յայսմ  
 ածսիրութե։ Եւ զայս բաց յասացելոցս  
 ցայս վայր՝ քաջ ևս 'ի միտ առնուլէ յորոց  
 ասելոցն եմք։ Վասն զի սէրն ԱՅ ոչ հաս-  
 տատի բանիւք, այլ արդեամբք։ \* Հաւաս-  
 տիք սիրոյ՝ են ցոյցք գործոց, || ասէ նըն  
 Գրիգոր. և որչափ դժուարին են դործք և  
 բազմավաստակիք, նոյնչափ առաւելապէս  
 յայտնեն զսէրն. ուստի նը առաքեալն և  
 աւետարանիշն Յովհաննէս յայտնել կա-  
 մեցեալ զմեծութի սիրոյն՝ եթէ զայն առ  
 աշխարհ, և եթէ զբնի փրկչն մերոյ առ  
 հայրն յաւիտենական, յաղագս առաջ  
 նոյն ասաց. \* Այնպէս սիրեաց ԱԾ զաշ-  
 խարհ, մինչև զորդին իւր միածին ետ։ ||  
 (Յոհ. գ. 16.) Ետ ասէ՝ զիւր որդի միա-  
 ծին՝ զի չարչարեսցի և մեոցի վասն մեր։  
 Իսկ վասն երկրորդին ասաց ինքն Ք՛ն.  
 \* Զի ծանիցէ աշխարհ եթէ սիրեմզհայր,  
 և որպէս պատուիրեաց ինձ հայր, այն-  
 պէս առնեմ. օն, արիք գնասցնք աստի։ ||  
 (Յովհ. ժդ. 31.) Իսկ գործն զոր առնել  
 երթայր, էր մեռանել'ի խաչի. և յայսմ  
 եցոյց և վկայեաց աշխարհի սիրել զհայրն,  
 'ի կատարումն ածելով զպատուիրան նորա  
 զլաստամբեր։ Այսպէս ահա 'ի գործս անդ  
 ցուցանի սէրն. և այնչափ առաւել, որ

շափ մեծամեծք իցեն և կարի տարժանեւ  
լիք :

Աբդ՝ համակամութին ընդ Այ, որպէս  
ասացաք, է պատարագն մեծ անձին մերոյ՝  
զոր առնել կարեմք նմա . վասն զի յառաջէ  
՚ի նմա ամենակատար մեռուցումն և նուիւ  
րումն, որով ընծայի ոք այ, և դնի բովան  
դակ ՚ի ձեռս այ, առնել ընդ նա զինչ և  
կամիցի : Ուստի չինչ որով առաւել  
երևեսցի սէր ուրուք առ ած՝ որպէս յայսմ.  
վասն զի ընծայատրէ այ զամզոր ունի, և  
զոր կարէր ունել և ցանկալ. և աւելի  
ելքէ ունէր ինչ և կարէր, տուեալ էր  
սրդեօք և զայն :

### Գ Լ Ո Ւ Խ Դ .

Առաջարկեալ համակամութին ընդ Ասպուա-  
ծոյ՝ է միահ երջանիւն յերէիցի ասո :

**Ո**ր միանգամստանայցէ զկատարեալ հա-  
մակամութին ընդ այ, ընկալեալ զամզ զպա-  
տահմունս իբրե, ՚ի ձեռանէ այ, այնպիսին  
ունիցի յերկրի ասո զերջանկութիւն ինչ  
երանաւէտ . վասն զի վայելեսցէ ՚ի խաղա-  
ղութեն և յանդորրու մեծի, կրելով հանա-  
պաղ յոդւոջիւրում զինդութին և զուար-  
թութին յարակայ . որ է այն ինքն երանա-  
կանն երջանկութին վայելեալ ՚ի մեծամեծ-  
ատայիցն այ ՚ի կեանս յայս : Ապաքէն

ըստ ասելոյ առաքելոյն, \* Ո՛չէ արքայու-  
 թին այ կերակուր և ըմպելի, այլ արդա-  
 րութի, և խաղաղութի և խնդութիւն 'ի  
 հոգին նը: || (Հռովմ. ժկ. 17:) Աստի կե-  
 նացս երանութի ոչ հաստատի յուտել և  
 յըմպել, 'ի դատարկութի պարապել և 'ի  
 հաճոյս զդայականս, այլ յարդարութեն և  
 'ի խաղաղութեն և 'ի խնդութեն որ ՚ի հոգ-  
 ւոյն սը: Այս է արքայութի երկնից յեր-  
 կրի, և դրախտն փափկութեց՝ ուր վայե-  
 լել կարօղ եմք: Եւ յիրաւի երանութիւն  
 կոչի սա. վասն զի առնէ զմեղիւիք նմանս  
 Երանելեացն: Քանզի որպէս չիք յերկինս  
 փոփոխմունք և երթեւեկք, այլ կան երա-  
 նեալքն հաստատունք և մշտատեակք յիւ-  
 րեանցն վիճակի՝ զուարձացեալք յԱծ,  
 սոյնպէս յերկրի՝ ստացօղքն կատարեալ  
 համակամունք, որոց ամենայն իղձ և հա-  
 ճուի մի է ընդ ածայնոյն, ոչ տաղնապին,  
 ոչ խռովին 'ի կենցաղոյս փոփոխմանց և 'ի  
 պէսպէս պատահից . զի կամք նոցա և սիրո  
 այնպէս միարանեալ են յածային կամն,  
 մինչ զի գիտելն թէ ամենայն ինչ դայ ՚ի  
 նորա ձեռանէն, և յամենայն 'ի նոսա կա-  
 տարին կամք և հաճոյք Այ, տայ փոխար-  
 կել և զվիշտոս անդամ'ի զուարթութիւնն.  
 իբր զի առաւել հաճեալ են և սիրեն ըլ-  
 կամն սիրեցելոյն իւրեանց՝ քան զինքեանցն.  
 ուստի չկայ ինչ որ զայսպիսիսն խռովել  
 կարիցէ: Զի եթէ նեղացուցիչ իրքն և  
 որտմականք, որպիսի են վիշտք, ձախոր-

դութիք, արհամարհութիք, առ նոսա համարեալ են՝ ի սփոփանս, և պարդեք առանձին յաղագս լինելոյ նոցա՝ ի ձեռանէն այ, և զի այն են կամքն ածային, չմայ այլինչ որ կարիցէ անհանդիստ առնել զնոսա, և պղորել զնոցայն խաղաղութի և զանդորրամսութի :

Այս պատճառ էր խաղաղութեան և մշտակայ զուարթութեն՝ յորում հանապաղ վայելեալս ընթեռնումք զԱռւրբան զառաջնս, զնբն Անտոնիոս, զնբն Դոմինիկոս, զնբն Ֆրանչիսկոս, և զայլս նմանեալս : Զնոյն ընթեռնումք և վասն նբՀօրն Իգնատիոսի, և տեսանեմք յոլովակի յերեելի ծառայսն ԱՅ: Միթէ պակասէին վիշտք Արքն այնոցիկ . ոչ կրէին արդեք փորձութիս և հիւանդութիս իբրև զմեղ . եթէ ոչ անցանէին ընդ նոսա զիպուածք ազդի ազդի : Այս արդարե, և առաւել դժուարակիրքքան զմերսն . այնուզի գերագոյնքն ՝ ի սուրբս առաւելապէս փորձին և կրթին այսպիսեօք առ ՚ի յայ :

Եւ զիա՞րդ ապա կային անփոփոխք ՚ի նոյն վիճակ, ՚ի նոյն կերպարանս, նովին անխոռովութք և զուարթութք ներքոյ և արտաքոյ, մինչև երեել նոցա միշտ ՚ի զատկական տօնս : Պատճառն այն խոկ է՝ զոր ասեմքն . իբր զի հասեալ էր նոցա ՚ի կատարեալ համակամուի ընդ այ, և ՚ի լրումն նորա եղեալ էին զամենայն զիւրեանց ախորժանս, որովամենայն ինչ դառնայր նոր:

ցա 'ի հաճութիւն : \* Որոց սիրենն զանձ , յա-  
մենայնի գործակից լինի 'ի բարիս : ||  
(Հռովմ . ը . 28 : ) Եւ դարձեալ . \* Ու  
տրտմեցուացէ զարդարն որ ինչ և գիպիցի . ||  
(Առակ . ժք . 23 . ըստ լատ . թարգ : ) 'Սէ-  
ղութիք , և փորձութիք , և մեռուցունն  
այս ամենայն դառնայր նոցայուրախութի ,  
գիտելովթէ այն էլին կամք այ , և այս էր  
նոցա սրտի դիւր : Եւ ահա ըմբռնեալ ու-  
նէին զերանութին՝ զոր 'ի կենցաղս յայս  
մարթէ ստանալ , որով կային իբր այն թէ  
'ի փառս իցեն : 'Ի դէպ այսմ բարւոք ասէ  
սրբուհին կատարինէ սենացի , թէ ար-  
դարքն են իբրև զՔ՛ փրկիչ մեր , որ 'ի կիրս  
բաղմապատիկ ցաւոցն և տանջանաց ոչ  
կորոյս բնաւ զերանութի հոգւոյն : Այն-  
պէս արդարքն ոչ երբէք կորուսանեն զե-  
րանութին՝ զհաստատեալն 'ի միաբանու-  
թէ կամացն այ , թէպէտե բաղմաց ձախո-  
ղակաց հանդիպեսցին . վասն զի կայ մնայ  
'ի նոսա ուրախութին և հաճութի կամացն  
այ , որ կատարի յայնմ ամենայնի :

Այն այս է կատարելութիւն բարձր և  
վսեմական , զօրմէ ասէ նը առաքեալն Պօ-  
ղոս՝ գերազանցել քան զամենայն միտս :  
\* Եւ խաղաղութիւնն այ՝ որ 'ի վեր է քան  
զամենայն միտս , պահեսցէ զահրտս ձեր և  
զիմտս 'ի քն յն : || ( Փիլիպ . դ . 7 : ) Այս  
խաղաղութի ասէ՝ անցանէ քան զամենայն  
միտս , գոլովպարգև Այ այնշափ բարձր և  
'ի վեր քան զբնութի , զի միտք մարդկեղէն \*

ոչ կարէ ինքնին բովանդակել, թէ զիամրդ  
հսար իցէ սրտի մարմնեղինի կալ հանդար-  
տիկ, անդորրական և մխիթարեալ՝ի խոռո-  
վութեց միջի, 'ի մրրկաց, 'ի փորձութեց,  
և տառապանաց այսց կենաց : Այս ըդ-  
նմանութիւն բերէ պահնչելեաց մորենւոյն,  
զոր տեսանէր մովսէս՝ զի վառէր, և ոչ այ-  
րէր . (Ելք. դ. 2.) այլև հրաշից երից ման-  
կանցն, որք 'ի հնոցին բարելոնի կացեալք  
'ի մեջ հրոյն՝ պահեցան կենդանիք և անա-  
բատք՝ գովելով դանձ : Այս է զոր և Յովք  
երանելի ասէր առ Ած . \* Աքանչելապէս  
շարչարես զիս : || (Ժ. 16. ըստ լատ. [ժարդ:] )  
յայտ արարեալ զիթշտոն և զցաւս դժն-  
դակա՝ զոր կրէր 'ի միոջէ կողմանէ, և 'ի  
միւսմէն՝ դմեծ հաճութիւն և զդիւր 'ի կրեն,  
վասն լինելոյն ըստ կամաց և հաճոյից այ :

Պատմէ կասիանոս, թէ ոմն 'ի ծերոցն  
սրբոց յաղեքսանդրիա՝ շուրջ պաշարեալ՝ ի  
բազում անհաւատից՝ որք նախատակոծ  
առնէին զնա, կայր ինքն 'ի միջի անդիբրե-  
դառն՝ համբերելով լոիկ և անդորրասիրտ  
Ծաղք առնէին զնա, հարկանէին, մղէին  
այսր անդր, և զայլ ևս ծանր ծանր անար-  
դանս առնէին . և յաւելին ասել կատա-  
կանօք. զմք պահնչելիս գործեաց յսքն : Ետ-  
նա պատասխանի . պահնչելիքն առ 'ի Քնէ  
գործեցեալք՝ այս են, զի մինչ դեռ կրեմն  
զանարդանսն՝ դոր ինձն առնէք, կամ 'ի  
պատրաստի կրել զայլես մեծազոյնս . և զե-  
ռչ զայրանայցեմ լնդդէմ ձեղ . և մի կրիւք

իւիք աղմլիցիս: Այս են սքանչելիք մեծ,  
և առաւել գերազանց կատարելութիւն:

Ասեն հնապատումքն յաղագս լերինն  
մակեդոնիոյ Ոլիմպոս կոչեցեալ, զոր և  
բաղում ուրեք յիշատակէ նըն Օդոստի-  
նոս, թէ այնչափ ունի բարձրութիւն, զի  
՚ի դադախան նորա ոչ հողմք անկանին,  
ոչ անձրե, ոչ ձիւն: յորմէ առակն, Զամա-  
պովք գերակայէ Ոլիմպոս: Այլև թռչունք  
չկարեն ունել անդ դադար: զի վերադոյն  
գոլովքան զառաջն դաւառ օդոյ, հասա-  
նէ յերկրորդն: և օդ տեղւոյն այնչափ ան-  
խառն է և նուրբ, զի անմարթ է անտա-  
նօր դոյանալ կամ զուեղի առնուլ ամպոց,  
որք թանձրագունի օդոյ պէտս ունին: և  
սորին աղագաւ չկարեն անդ ապրել թռո-  
չունք, և ոչ մարդկան կեալ հնար է: զի  
կարի նուրբ և անօար գոլով օդոցն, ոչ բա-  
ւական են ՚ի տուրեառ շնչոց: Զայսոցիկ  
տեղեկութիւն ետուն ոմանք, որք ելանէին  
անդր ամի ամի՝ մատուցանել պատարադս.  
և ունէին սոքա ըստեամս սպունգս թա-  
ցեալս, զորս կալեալ յըռնդունս՝ թանձրա-  
ցուցանէին զօղն առ ՚ի կարելս շունչ առ-  
նուլ: Գրէին նոքա ՚ի վեր անդր ՚ի դետնի  
նշանագիրս ինչ, զորս և գտանէին ՚ի յա-  
ջորդ ամին բարեձես և անեղծս՝ որպէս և  
թողեալն էին: որում անմարթ էր լինել,  
եթէ հասանէր անդր հողմ և անձրե: Աբդ  
այս է սահման կատարելութեն՝ յոր ե-  
լեալ ժամանեն ստացօղքն անթերի համա-

կամութե՛ ընդ այ : Զամալովք դերակայէ  
Ոլիմպոս , և գագաթունքն զլսաղաղութիւն  
ունին : Ա երացեալ և բարձրացեալ են սո-  
քա , և ժառանգեալ ունին զլսաղաղութիւն  
զայն զմեծ , ուրանօր ոչ ամպք հասանեն ,  
ոչ հողմք , ոչ անձրեք . ոչ են անդ թռչունք  
յափշտակից , որք յարձակեսցին և ամըո-  
խեցեն զլսաղաղութիւն և զուրախութիւն  
սրտից նոյա :

Ասէ նբն Օդոստինոս 'ի վերայ բանիցն ,  
\* Երանի խաղաղաբարաց , զի նոքա որդիք  
ԱՅ կոչեսցին . || յայն սակս Գն փրկեւ  
մեր զլսաղաղաբարացն կոչէ երանելիս և որ-  
դիս այ , վասն զի չկը ինչ 'ի նոսա՝ որ հա-  
կառակիցի կամացն այ , այլ յամենայնի  
միաբան են այնմիբը որդիք բարեբարք ,  
որք ջանան յամենայն իրս լինել համա-  
նման հօրիւրեանց , ոչ ունելով զայլ կամիլ  
և զշկամիլ բայց զրք հայրն կամի , կամ ոչ  
կամի :

Մի է այս՝ յառաւել հոգեորական և  
'ի զլսաւոր մասանց առաքինի վարուց :  
Որ ոք յանձին կալցի զամենայն զպատահ-  
մունս մեծամեծս և փոքրունս իբրև եկեալս  
'ի ձեռանէ այ , և 'ի նոսա միաբան կայցէ  
ածային կամացն , հաճութիւն իւր ունե-  
լով զնյին , և զլբումն ամենանք կամաց նո-  
րա , այնպիսին արդարե գտեալ է զդրախտն  
'ի յերկրի . \* Եղեւ խաղաղութիւն տեղի նո-  
րա , և բնակութիւն նորա սիոնին : || (Սաղմ.  
հե . 3 : ) Այնպիսին՝ ըստ ասելոյ սբէյն

բեռնարդոսի, կարօղ է համարձակ և վլա-  
տահասիրտ երգել զասացեալն խմաստնոյն.  
\* Հաստատեցայ ՚ի մէջ իսրայէլի, ՚ի վլճակ  
ժառանգութե՛ այ : || (Սիրաք. ին . 17 : )  
Վ ասն զի եղիտ նա զհանգիստն ճշմարիտ,  
և զլիապատար խնդութին՝ զոր ոչ ոք հա-  
նել կարօղ է, ըստ ան բանին : \* Զի ու-  
րախութիւնն ձեր լցեալ իցէ , և ոչ ոք հա-  
նիցէ ՚ի ձէնջ . || (Յովհ. ժկ. 22. 24 : )

ՈՎ թէ յանձն առնուաք միանգամ  
հաստատել զամենայն զմեր հաճութի ՚ի  
կատարման կամացն այ , և լինէր մեր  
կամքս՝ նորայն , և մեր ախորժումն՝ նո-  
րայն : Երանի թէ ոչ ունէի՛ Տէր , զայլ  
կամիլ և զէկամիլ , բայց զոր դու կամիս ,  
կամոչ կամիս . և այս լինէր ինձ միսիթա-  
րութիւնյամենայնի : \* Ինձ մերձենալ առ  
ած բարի է , և դնել առ տոր զյոյս իմ : ||  
(Սաղմ. հք . 28 : ) Քանի՞ լաւ էր հոգւոյ  
իմոյ միանալ այսու օրինակաւ ընդ ած :  
Քանի երանելիք էաք , եթէ այնպէս միա-  
ցեալ կայյաք ՚ի նա հանապաղ , զի զորինչ  
և առնիցեմք կամ կրիցեմք, ոչ զայլինչ հայի-  
ցիմք յայնմ , բայց թէ զկամմն այ կատա-  
րեմք , և այս լինէր մեր հաճութի և սփո-  
փումն : Կա որ զամենայն ինչ մի համարի ,  
և զամենայն վերաբերէ ՚ի մի ինչ , և զամ-  
նայն ՚ի միումտեսանէ , այնպիսին կարօղ է  
անշարժ ունել զսիրտն , և կալ միշտ ան-  
դորրացեալ յԱՃ :

Գ Լ Ո Ւ Խ Ե .

Հանգիստ որո՞ւ յլո՞ւ մայն գուանի , և  
որո՞ւ ցայլերս ենդրիցէ զայն , չե՞ իս-  
բոշունել զհանգիստ ճշմարիս :

**Ա**ռքա որք զիւրեանց հաճութիւն դնեն  
յԱծ , և յածային կամս , վայելեն 'ի մըշ-  
տակայ հաճութեն և յուրախութեն . վասն  
զի յեցեալ նոցա յանշարժելի սիւն կա-  
մացն այ , լինին հաղորդք անփոփոխութեն  
ածեղին կամացն . որով կան միշտ հաստա-  
տունք և անշարժք 'ի նոյն 'ի միում վլամ-  
կի : Բայց որք յարեալքն են յիրս աշխար-  
հի , և 'ի նոսին եդեալ ունին զսիրտ և զա-  
խորժանս իւրեանց , ոչ կարեն ունել հա-  
ճութիւն ճշմարիս և տևական . վասն զի  
դնան ընդ իրացն , և 'ի նոսին կախեալ  
կան , որով նեղքոյ անկանին փոփոխմանց  
նոցա : Գերահոչակեալ ոքն Օդոստինոս  
գեղեցկապէս բայցայտէ զայս 'ի բանսն  
մարդարկին Դիւթի . ( Սաղմ . Է . 15 : )

\* Յղացաւ զցաւս , և ծնաւ զանօրէնու-  
թի . || և ասէ . \* Ո՛չ բնաւ վախճան առ-  
նոյր աշխատութիւն , եթէ ոչ զայն ինչ սի-  
րեսցէ ոք , զոր անհնար իցէ բառնալ 'ի  
նմանէ ակամայ : || Դիր 'ի մոխ հաւաս-  
տեաւ , զի եթէ ոչ հաստատես զքո ախոր-  
ժակ յիրս անշորթելիս 'ի քէն առանց քո

կամացդ , յար ՚ի հոդս կայցես և ՚ի տաղ-  
նապի :

Ընթեռնումք յաղագս հօրն մերոյ ֆրան-  
չակոսի Պօրձիա , թէ իբրև հասեալ ՚ի  
Վրանաթա ընդ մարմնոյ կայսրուհւոյն՝ ՚ի  
վերայ կայր աւանդել զայն , բացին զտա-  
պանն կապարեայ՝ ուր զետեղեալ կայր . և  
՚ի մերկանալ երեսացն՝ տեսաւ այնպիսի այ-  
լափոխեալ , տղեղացեալ և եղծեալ , որ  
զարհուրանս բերէր տեսողացն : Անձին  
զգացեալ ֆրանչիսկոսի ՚ի տեսլենէ աստի ,  
և Այ բաղիսելով ՚ի սիրո նոր այնպիսի մեծ-  
երեսութիւ ունայնութե աշխարհի , արար  
հաստատուն կամն այսպէս : Քեզ միայն  
նուիրիմ , Ած իմ , ոչ ևս ծառայել տեառն՝  
որ մահուամք բառնայցի յինէն :

Արդ՝ տրասցուք և մեք զայս ընտրութիւն ,  
որ կարի բարւոք է : Այս են իմ կամք ,  
Տէք , ոչ ևս այսուհետե դնել զսիրո իմ  
յիրս՝ որ մահուամք բառնին , յիրս որ  
վախճան առնուն , յիրս զոր այլք կարեն  
հանել հակառակ լուց կամաց . ապա թէ  
ոչ զՃմարիստ հաճութիւն ունել անհնար է :  
Վասն զի \* ՚ի սիրելն զայնս՝ զորս կարեմք  
յոշկամաց կորուսանել , հարկ է վաստա-  
կիլ ՚ի նոյնս թշուառուք . || ասէ նբն Օդու-  
տինոս : Եթէ զսէր քո և զախորժ եղեալ  
իցես յայն ինչ՝ որ ընդդէմքո կամաց բառ-  
նալ ՚ի քէն հնար է , յայտ է թէ ՚ի բառ-  
նիլ այնը , ցաւեսցի քել . ընական իրք են  
այս , ոչ անցաւութիւն թողուլ զայն ինչ՝ որ

աիրոնին է ստացեալ, և որչափ մեծ իցէ-  
սէրն , նոյնչափ և ցաւն մեծ լինիցի : Զսոյն  
զայս այլուր ևս հակտատելով նըն Օգոս-  
տինոս՝ ասէ , \* Որ ոք անձամբ խնդալ կա-  
միցին, լինիցի տիսուր : || Եթէ զնես զհա-  
ճութիւն քո յայն ինչ պաշտօն , կամ յայն  
ինչ պարապումն , կամ ունել զայն ինչ տե-  
ղի , կամ յայլ ինչ այնպիսի , այդ քո հա-  
ճութիւն կարէ խափանիլ 'ի մեծաւորէն ,  
և այնպէս ոչ բնաւ կեցցես ըս հաճոյից :

Եթէ յայն իրս ձգես զախորժ քո՝ որ քեզ  
ըստ կամի են , կամ 'ի կատարել զքո կամն,  
այնք դիւրաւ առնուն փոփոխումն . և թէ և  
նորին ոչ փոխեացին , դու ինքնդ փոփոխիս .  
զի որ այսօր քեզ հաճելին է . և ախորժա-  
կան , վաղիւ անհաճոյ լինի և չախորժելի :  
Թէ անհաւատանաս այսմ , տես զժողո-  
վուրդն իսրայէլեան , որ զմանանայն ու-  
նելով տաղտկացաւ , և այլում կերակրոյ  
եղե 'ի խնդիր . զաղատութիւն դուեալ նո-  
ցա , վաղվաղակի անդրէն ծառայութեանն  
ցանկացան , յեգիպտոս սրտանալով , 'ի  
խստորսն և 'ի սոխս՝ զոր անդ կերակրէնն ,  
և բազում անդամ յօժարեցան դառնաւ  
անդր : Ու լինիցի քեզ հանդիսատ բնաւ ,  
եթէ յայսպիսիս դնիցես զայն : \* Իսկ որ  
յԱծ խնդալ կամիցի , խնդայցէ միշտ . վասն  
զի Ած մշտնջենաւոր է , || ըստ նորին սէյ :  
Որ 'ի կատարումն ածային կամացն հաս-  
տատեալիցէ զիւրն հաճոյս , կեցցէ նայար  
'ի հաճոյս . զի և ած մշտնջեան է , անփո-

փոխ , յարատեակ 'ի գոլն : Վասն որոյ  
\*Կամիս ունել զմշտակայ խնդուի , յարեաց  
յայն՝ որ մշտնջենաւորն է , || ասէ նոյն նը  
վարդապետ :

Հոգին նը զայս խտիր դնէ ընդ այր յիւ  
մար , և ընդ խմաստուն և նը : \* Անմիտնն  
իբրև լուսին փոփոխի . և այր սուրբ յիւ  
մաստուն մնայ իբրև զարեգակն . || ( Սի-  
րաք . իէ . 12. ը լատ . թարգ : ) Անմիտնն  
լատ օրինակի լուսնոյ փոփոխի , այսօր յա-  
ճել , վաղիւ 'ի պակասել . այսօր զուար-  
թաղէմտեսանի , վաղիւ տիրագին . մերթ  
յայս ինչ կիրս , և մերթ յայլում . վասն զի  
եղեալ ունի զիւր իղձս յաշխարհի իրսն  
փոփոխականս և անցանելիս , և ըստ նոցա  
հնչմանն շարժի , և նոցին ելեցն լինի նմա-  
նակիր : Գնայ ընդ լուսնոյ՝ որպէս ծովն ,  
և է լուսնոտ : Բայց արդարն և սուրբն՝  
կայուն է իբրև զարեգակն . միշտ միօրի-  
նակ , և նոյնադոյ . չի՞ նմա աճել և  
նուազել : Ճշմարիտ ծառայն այ կայ միշտ  
զուարթ և բարեհաճ , զի զհաճութիւն իւր  
եղեալ է յԱծ , և 'ի կատարումն ամենա-  
նը կամաց նորա , որոյ չիք պակասել , և  
զոր ոչ մի ինչ բառնալ կարօղ է :

Ասեն յաղագս սէյ աբբային թէոկո-  
ղայ , թէ գնայր միշտ ծաղը 'ի դէմսն . և  
հարցեալ զվասն էրն , ասէր . ԶՔ՛ ոչ ոք  
յինէն հանել կարօղ է : Ալցի որ զինչ և  
իցէ , գայցէ որ ինչ և հաճոյ իցէ , այլ զած  
ոչ ոք բարձցէ յինէն : Ահա սա գտեալ էր

արդարեւ զհաճութին ճշմարիտ, հաստատեալ զնոյն յայն իրս՝ որ չէ նմա պակասելի, և բառնալ ոք ոչ կարէ: Ապա սոյնպէս արասցուք և մեք. ըստ սաղմ. լք. 1.

\* Ցնծացէք արդարք 'ի Տէ. || յորոյ վերայ ասէ նըն Բարսեղ. միտ դիր՝ զի մարգարէն չասէ թէ ուրախ լերուք 'ի լիութեն իրաց ժամանակէից, ոչ 'ի բաղում կորովամտութին և հանձար ձեր, ոչ 'ի յոլով գալրութիս, ոչ 'ի մեծամեծ ձիրս թէ ունիցիք, մի ուրախ լինիք 'ի քաջողութին ձեր և յուժեղակութին մարմնոյ, մի ընդ բարեհամբաւութիւն առ մարդիկ. այլ թէ ուրախ լերուք 'ի Տէ. եղեալ զամենայն զձեր հաճութին յած, և 'ի կատարումն ամենանը նորա կամացն. զի այս միայն է որ յագեցուցանէ. և այլն բովանդակ չունի տալ մեզ բաւականութին և ճշմարիտ դիւր սրտի:

Սուրբն Բեռնարդոս 'ի ճառն խօսեցեալ յայն բան նըյն Պիտրոսի, \* Ահաւասիկ մեք թողաք զամ. || (Մատ. Ժթ. 27:) բացատրելով և բարւոք ցուցանելով զայս ճշմարտութին ասէ. \* Հոդի բանաւոր՝ կարէ պատաղիլ յայլսն ամենայն, բայց նուլ ամենեին ոչ: || Բաց յայ՝ այլ իբքդ զբաղեցուցանել կարեն զոգի և զսիրտ մարդոյ, այլ ոչ և յագեցուցանել. կարեն զարթուցանել զքաղց, բայց ոչ բառնալ զայն. \* Որ սիրէ զարծաթ, ոչ յագեցի արծաթուլ. || (Ժողով. Ե. 9:) Արծաթասէրն՝ ասէ իմաստունն, ըմբռնեալ 'ի

քաղց ընչից, թէ և ունիցի որչափ և կարօղէ, ոչ յագենայցէ բնաւ . նոյնպէս և յամենայն կենցաղականքս շլթ ինչ որ զմեր հռդի կարիցէ շատացուցանել: Եւ զպատճառն տայ նըն բեռնարտոս, ասելով. զիտիցեն՝ ընդէր մեծութիւնք, և բովանդակի իբք աշխարհի չտան յագուրդ. \* Վասն զի ոչ ընական կերակուր են հոգւոյ: || Զոր օրինակ, օդ և հողմ ոչ են համարնական և պատշաճող կերակուր մարմնոյս մերոյ. և դու ծիծաղէիր արդեօք՝ եթէ տեսանէիր զմարդ սովեալ բերանաբաց կալ յօդս՝ իբրև զգետնառիւծ, կարծելով յագենալ այնու և կաղդուրիլ. և արդարենեղագար համարէիր զայնպիտին: Ո՛չ փոքր խեղագարութին է՝ ասէ նոյն Աբն, կարծել թէ հոգի բանաւոր աննիւթական՝ յադենալ ունիցի իրօք ժամանակաւորօք և ըդգալեօք: \* Ուռնուլ կարէ, յագել ոչ կարէ: || Ուռնուցու իբրև տիկ վիքալից. բայց յադենալ անհնար է, ոչ դոլովնորա կերակուր. Տուր իւրաքանչիւրում զդարման պատշաճող, մարմնոյ՝ կերակուր մարմնեղէն, և հոգւոյ՝ զհոգեորն: \* Վասն զի հաց հոգւոյ՝ արդարութին է, և նրանելք են միայն՝ որք այնմ քաղցիցեն, զի նոքայադին: ||

Երանելին Օդոստինոս առաւել ևս բացատրելով զայս պատճառ յիւր առանձնախօսութիւն. զւ լա, և խօսելով յաղադս բանական հոգւոյ ասէ. \* Արարաւ ըն-

դունական մեծվայելցութե՞քո , որպէս զի  
քե միայն՝ և ոչ այլիւիք ընուլ մարթաս-  
ցի : \* Յորժամակնակապիճն կամ ազոյց  
մատանոյ յօրինեալ իցէ ըստ չափու ա-  
կան իրիք պատուականի , այլաձեւ ինչ ե-  
ղեալ անտանօր՝ ոչ կայ յարմարանոս , և ոչ  
ընու զգատարկ գոգն , բայց միայն ակն այն  
ազնիւ՝ յորոյ ՚ի չափն կաղմեալ է . և եթէ  
ակնակապիճն իցէ եռանկիւնի , այլ ինչ  
բոլորաձեւ չկարէ ընուլ զայն : Արդ՝ հողիս  
մեր հաստեցաւ ՚ի պատկեր և ՚ի նմանու-  
թի ամենանը Երրորդութեանն , և ՚ի նմա-  
ակնակապիճն է սիրտ մեր՝ ընդունակ Այ ,  
և պատշաճեալ առ յինքն ազուցանելց  
զած : Ապա անհնար է այլով իւիք ընուլ  
այսմ զատարկութե՞ն՝ բայց Ա՛ռ ևեթ : Բո-  
վանդակ բոլորակուի տիեզերաց ոչ բաւա-  
կան է ընուլ զայն : \* Արարեր զմեզ Տէր  
վասն քո , և անհանդիստ է սիրտ մեր՝ մին-  
չե հանգչիցի ՚ի քեզ , || ասէ նոյն երանելին  
Օգոստինոս :

Քաջայարմար նմանութի՞ է , և բացա-  
յայտիչ ասացելոցս՝ այն զոր սովորաբար ՚ի  
կիր առնուն ՚ի սլաքէ արեղակնային ժա-  
մացուցին : Բնաւորութի՞ է այնը սլաքի՞  
զի օծեալ միանգամ մագնիսեայ քարիւ ,  
դառնայ և հայի ՚ի հիւսիսակողմն , առ  
յայ ունելով զայն հակումն բնական .  
տեսցես քանի անհանդիստ կայ սլաքն , և  
որչափ շրջան առնու , դարձադարձ առնէ՝  
մինչև ՚ի հիւսիս անդը ուղղեսցի . յոր հա-

սեալ, դադարէ նոյնժամայն։ Արդ՝ ըստ  
տեղծ Ած զմարդ այսպիսի բերմամբ և հայ-  
եցուածով առ նա՝ իբրև առ իւրն հիւսիս,  
և վախճան վերջին . վասն որոյ թէ ոչ յԱծ  
հաստատիցեմք զսիրտ մեր, կայցեմք միշտ  
երերեալ իբրև զալաքն զայն։ Յոր և իցէ  
շարժելի մասն երկնից հայեացի այն սլաք,  
ոչ հանգարտէ. բայց վաղվաղակի իբրև դի-  
տէ ընդ անշարժ կէտ ինչ երկնից, զտեղի  
առեալ մնայ անշարժելի։ Սոյնպէս եթէ  
դնես զաշս և զսիրտ քո յիրս աշխարհի 'ի  
փոփոխելիան և յանցականս, ոչ ունիցիս  
հանգիստ և սրտի դիւր . դիր զայն յԱծ,  
և ահա ունիցիս։

Այսմ արժան էր յառաջամիտս առնել  
զմեղ՝ ի խնդրել զած, թէ ոչ այլ աղաղաւ,  
բայց գոնէ վասն սեպհական մեր շահու .  
վասն զի ամենեքին ցանկամբ ունել զսրտի  
հաճոյս։ Ասէ նբն Օգոստինոս . \* Գի-  
տեմբ Եղբարք, զի ամենայն մարդ ցանկայ  
խնդալ . այլ ոչ ամենեքին խնդրեն զինդու-  
թի անդ՝ ուր խնդրելն պարտ է։ || Գի-  
տեմբ զի ամ մարդ 'ի ընէ ցանկայ սրտի  
հաճութեն և հանգստեան, և այնմ հոգայ  
ըստ կարի . զի չէ կարօղ առանց նորա  
կեալ . բայց ամենայն խորհուրդ մարդ-  
կան՝ ուղիղ կամ պատիր՝ կշռելի է 'ի դնել  
զաշս և զսիրտ 'ի ստոյդ հաճելին, կամ  
յայն՝ որ առերեւոյթ է և սուտ։ Այր ա-  
գահ, և հեշտասէր, ամբարտաւան և վա-  
ռասէր և նախանձու, ամենեքին հաճոյիցն

ցանկան . ոմն հաստատէ զՀաճոյմն 'ի բաղւ  
մացուցանել մեծութիւ , ոմն 'ի պատիւս  
և յաւագութիւ , ոմն յուտել և յարբեւ  
նալ , ոմն յանմաքուր վայելմունս : Առքա  
ոչ ջանացան դնել զՀաճոյս իւրեանց ուր  
դնել արժան էր , ուստի և ոչ գտցեն զայն .  
վասն զի այս ամենայն , և որ ինչ այլ յաշ-  
խարհի՝ ոչ բաւական է 'ի յագեցումն հոդ-  
ւոյ , և 'ի հաճել զնա : Եւ որպէս նբն  
Օգոստինոս ասէ . \* Զի՞ ընդ բաղումն դե-  
ղերիս՝ ովլ մարդ տառապեալ , որոնելով  
զբարիս հոգւոյ քո և զմարմնոյդ . սիրեա  
զմի բարին , յորում ամենայն բարիք են ,  
և բաւական է . ցանկաւ անխառն բարւոյն ,  
որ է ամենայն բարի , և շատ է : || Յագե-  
նալ խնդրես ովլ մարդ դու , զի՞ղձդ հաճել .  
սիրեա զԱՃ՝ յորում ամենայն բարի դան-  
ձեալ կայ , միակ բաւական ՚ի ընուլ զցան-  
կութիւ սրտի քո : \* Օրհնեաւ անձն իմ զՏՌ՝  
ովլ ՚ի բարութենէ զցանկութիւ քո . ||  
( Աղմ . ՃՌ . 5 : ) Եղիցի՞ օրհնաբանեալ ,  
դովեալ և փառաւորեալ յաւիտեանս ,  
ամեն :

Գ. Լ. Ա. Խ. Զ.

Բայայայտի այլով եւս օրինակառ՝ զեարդ  
համաչայնին ընդ էամացն Ասպուծոյ  
գործէ զհաճութիւն սրբի :

**Պ**երապատուեալ նբն Օգոստինո խօսե-  
լով յայն բանս փրկչն , (Յովհ . ժի . 13 )  
\* Զոր ինչ խնդրիցէք յանուն իմ, արարից  
զայն , || ասէ . ոչ է պարտ մարդոյ խնդրել  
զիսաղաղութիւն և զհանդիստ ըստ կամաց  
անձինն և առ ՚ի ստանալ զիւր ախորժե-  
լին . զի ոչ այն է իւրն բարի և վայելչա-  
կան , մանաւանդ գուցէ չար իսկ իցէ  
նմա . այլ սոսկապէս կալ՚ի բարւոջն կամ  
՚ի լաւագունին՝ զոր Ած մատուցանէ նմա :  
\* Վ ասն զի, ասէ, յորժամհաճելի են մեղ  
չարիք , և անհաճոյ՝ բարիքն, պարտ է մեղ  
յաւէտ աղաւել զնծ , զի բարիքն լինիցին  
հաճելիք , քան թէ չարիքն շնորհեսցին : ||  
Եթէ ոչ հանդչու ՚ի լրման կամացն այ՝ որ  
բարին է, այլ քոյդ ախորժակ քարշէ զքեղ  
՚ի կամացդ կատարումն , պարտիս հայցել  
յայ , զի մի տայցէ զոր դուդ կամիս , այլ  
շնորհեսցէ քեղ ախորժ ՚ի կատարումն իւ-  
րոց ածային կամաց , որ է լաւն , և քեղ  
վայելուչ : ՚ի սոյն յարմարութի բերէ նբ  
վարդապետն զպատմեալն ՚ի զիրս թուոց .  
ժա . յորժամ որդիքն իսրայէլի յափրա-  
ցեալք յերկնային մանանայէն՝ զոր առա-

քէր նոցա ԱՃ, ցանկացան և խնդրեցին  
միս : Կատարեաց ած զցանկութիւն նոցա,  
բայց ծանր տուժանօք . քանզի \* մինչդեռ  
կերակուրք 'ի բերանս խրեանց էին, բար-  
կուի յայ ել 'ի վերայ նց, սպան զբազում  
'ի նոցանէ, և զընտիր ընտիրս յիսրայէլ-  
սատակեաց : || (Սաղմ. հէ . 30 : ) Այս  
յայտնի է, զի լաւադոյն էր երկնից մա-  
նանայն ածառաք՝ քան զմիսն ցանկացեալ  
'ի նոցանէ, և քան զսոխս և զլստորս ե-  
գիպտոսի որոց ըղձանային . ուստի ոչ զայ-  
սոսիկ պարտ էր նոցա խնդրել, այլ յաւէտ  
զի բժշկեացէ զքիմն նոցա, ասէ որ վարդա-  
պետն, որպէս զի առնուլին զքաղցր ճաշակ  
երկնատեղաց կերակրոյն, և ոչ այլում  
կերակրոյ ցանկային, ունելով 'ի մանա-  
նայն զհանդերձանս ճաշակաց առ ամե-  
նայն ցանկութի բաւական : (Խմաստ. ժկ. 20 : ) Ըստ այսմօրինակի, յորժամյանձին  
զգաս փորձութի, կամ կիրս, և զախոր-  
ժակ ունիս ապականեալ, որով չառնուօ-  
դհամառաքինութեն և զըարւոյն, այլ իբր  
հիւանդ՝ ցանկաս յոռեգունիցն և վնասա-  
կարաց, ոչ պարտիս վարիլ ըստ քում ա-  
խորժման, և ջանալ զի կատարեացի քոցան-  
կալին . քանզի ոչ այդ օժանդակ է առ 'ի  
զհաճոյսդ ունելոյ, այլ մեծ ևս լիցի քեղ-  
դժուարահաճութի և ամբոխումն : Քեղ  
այն է ցանկալի և առ յայ խնդրելի, զի  
զքիմնդ բժշկեացէ, և քաղցրացուսցէ քեղ-  
դկատարումն ամենանբ կամաց խրոց, որ

բարին է, և քեզ անկաւոր . և այսու օրիւ  
նակաւ յաջողեսցէ քեզ ունել զիսաղա-  
ղութիւն ճշմարիտ, և զշշմարիտն հաճու-  
թիւն :

Զայլ Ճանապարհ կալեալ նբն Դորո-  
թէոս, բացայայտէ զսոյն ասելով, թէ որ  
ոք զիւր կամն միաբանէ յամենայնի ընդ  
ածայնոյն, մինչեւ ոչ այլ ինչ կամիլ և չկա-  
միլ բայց զոր Ած կամիցի կամ չկամիցի,  
այնպիսին առնէ միշտ զկամն անձին իւրոյ,  
և ունիցի հանապաղ բազում խաղաղու-  
թի և հանգիստ : Առաջին արասցուք օրի-  
նակ 'ի հնազանդուէ, որով յայտնի ծա-  
նիցի զոր ասելն կամիմք, և միով բանիւ-  
կրկին շահիցիմք : Ասեմք սովորաբար որոց  
գան 'ի կրօնաւորիւլ և ընթանալ զհնաղան-  
դութեն Ճանապարհ : Տեսէք, զի 'ի կրօնի  
աստ ոչ պարտիք առնել զկամն ձեր յիրս  
ինչ : Իսկ նբն Դորոթէոս ասէ . օն երթայր,  
կարելով կարէք առնել զկամն ձեր . ես ցու-  
ցից ձեղ զեղանակ կատարելոյ դկամն ձեր  
զօրն ողջոյն, և զայս ոչ միայն ըստ օրինի,  
այլև սրբութք և կատարելութք մեծաւ :  
Եւ գիտէք որնկա : \* Որ ոչունի իւր սեպհա-  
կան կամն, նա միշտ առնէ զիւր կամնն : ||  
Կրօնաւոր բարիոք հնաղանդեալ, որում  
չկայ յատուկ կամք, հանապաղ դկամն  
իւր առնէ, վասն զի զայլոյ կամն իւրա-  
ցուցանէ : \* Եւ այսպէս չկամելով կատա-  
րել զսեպհական կամն, յաջողէ կատարել  
զայն միշտ : || Դիր ջան՝ զի քո կամքդ չիցէ

որիշ՝ ՚ի կամաց մեծաւորին, և այնպէս զօր ամենայն պարապեսցիս ՚ի կատարել գքո կամս, և այն առաւել կատարելութք և պտղովք: Վ ասնդի այսու օրինակաւ ննջեմ ես որչափ կամիմ, զի չկամիմ ննջել աւելի քան զկարգեալն ՚ի հնազանդութենէ: Ուտեմ զոր կամիմ, զի ոչ աւելի քան ըստուեալն ինձ ուտեմ: Առնեմ աղօթս, ընթերցումն, և զապաշխարանս զոր կամիմ. զի յայսմ ամենայնի ոչ կամիմ բայց զսահմանեալն ՚ի հնազանդութէ. այսպէս և յայլսն է իմանալ: Ահա կրօնաւոր բարի չկամելով առնել զկամն իւր, միշտ առնէ զայն. վասն այսորիկ ընտիր կրօնաւոլք կան զուարթք և շատացեալք. այն իւրացուցանել նոցա զկամն հնազանդութէ միշտ հաճութե և ուրախութեան նոցա է պատճառ:

Յայսմ հաստատի բովանդակ չափ դիւրութե կամ դժուարութե կրօնաւորական կարդի. և ՚ի սոյն կախի զուարթութի և մտադիւրութի կրօնաւորի: Եթէ սահմանես քեզ թողուլ զքո առանձնային կամս, և ընդ այնը փոխանակել զմեծաւորին կամս, լինիցի քեզ հեշտին և քաղցր կրօնաւորութին, և կեցցես լի հաճութք և զուարթութք: Բայց եթէ ունիցիս կամս այլ ՚ի մեծաւորին կամաց, չկարես կեալ ՚ի կրօնաւորութե. զի երկու կամք այլազանք՝ ոչ են դաշնաւորք ՚ի միում: Ապաքէն մի կամս ևեթ ունելով մեր, այլ զի

կան բաղձանքն զդայական՝ դիմամարտ  
 կամացն և մտաց, հարկ է մեղ անձնապահ  
 լինել յայնմանէ, թէպէտե այն բաղձանք՝  
 ստորակայ են, և ներբոյ անկեալ մերոց  
 կամաց: Եւ զի՞նչ լինէր ապա՝ եթէ եր  
 կուս ունէաք կամ, և իւրաքանչիւր վու  
 թայր լինելիշխանական: \* Ո՛չ ոք կարէ  
 երկուց տերանց ծառայել: || (Մատթ. 7.  
 24: ) Դժուարութի կրօնաւորական կար-  
 դի ոչ այնչափ յիրս անդ է և յաշխատու-  
 թիս՝ քան թէ ՚ի հակառակութեան կա-  
 մաց մերոց, և ՚ի կարծիս երևակայութե-  
 մերոյ. սա է որ զիրսն առնէ ծանունս և  
 դժուարակիրս: Լաւ ևս ծանիցի այս ՚ի  
 տարբերութէ անտի՝ որում զփորձ առ-  
 նումք յորժամ՝ ՚ի փորձութեան իցեմք, և  
 կամ ոչ. քանզի ազատ ՚ի փորձութենէ-  
 կացեալք, տեսանեմք զի դիւրատար նն իրք  
 և թեթեաբեռն. բայց ՚ի լինել փորձութէ,  
 և ՚ի հասանել ՚ի վերայ տրտմութէ ինչ,  
 այնուհետեւ զիւրին քեղ կարծեցեալն՝  
 լինի կարի դժուարին, և թուի քեղ բեռն  
 դժուարակրելի, մինչև առ ՚ի տանելու  
 զայն՝ պիտոյ էր գոզես կցիլ երկնի ընդ  
 երկիր: Ահա ոչ յիրս անդ է դժուարու-  
 թիւնն. վասնզի նոյն է որ ինչ յառաջն.  
 այլ ՚ի քոյում անբարի հանգամանս. զոր  
 օրինակ յորժամ հիւանդն խորշի ՚ի կե-  
 րակրոյ, ոչ եթէ կերակրոյն է վնասն, բա-  
 րի գոլուլ այն՝ և բարւոք համեմեալ, այլ  
 յոռի նիւթոց հիւանդին, որ անբարի կար-

ծեցուցանէ զկերակուրն և դժուարահամ: Այսպէս են իրքն և յառաջնիկայբանս:

Այս շնորհք են յԱյ պարզեեալ այնոցիկ զորս՝ի կրօնաւորութիւն կոչէ, տալնոցագաղցրուի՝ի հետեւիլ կամաց այլոյ: Ձիք են այս կոչմանն՝ որով բարեվիճակս արար զմեղ Տրքան զեղբարս մեր մնացեալս յաշխարհի: Ո՞ւտ քեզ դիւրամտութիւն՝ի թողուլ գքո կամս, և զհետ երթալ կամաց այլոյ: ո՞ւտ սիրտ նոր՝ զզուիլ քեզ՝ի կենցաղական իրաց, և քաղցրանալ յառանձնութե աղօթից և մեռուցման: ապաքէն ոչ այդպէս ծնար դու, այլ մանաւանդ հակառակաւն: \*

Զի միտք մարդկան հաստատեալ են ՚ի խնամս շարի՝ի մանկութենէ իւրմէ: || ( ծննդ. ը. 21: )  
Այս են շնորհք և պարզե հոգւոյն սբյ. նա որպէս մայր խնամոտ՝ արկ ՚ի ստինս աշխարհի զհալուէ դառնահամ, որով՝ի դառնութիւն քեզ լինիցի՝ այն որ յառաջն քաղցր էր, և եղ զմեղը քաղցրաճաշակ՝ի զործս առաքինութե և կրօնաւորութե, զի քեզ համեղ և անուշակ լինիցի՝ որ նախթուէր դառն և ժանտահամ: \* Տէր, դու պահեցեր զիս ՚ի մանկութէ, որ բարձեր յինէն զսէր աշխարհի. || ասէր երանելին Ամբըրոսիոս. ( ՚ի վերայ սաղմ. Ճժ. կ: ) Զսոյն ասէր և այլ ոմն սրբուհի, յաւեւեալ թէ ոչ մեծ ինչ առնեմք մեք ՚ի կրօնաւորիլ մերում, այլ բաղում և կարի մեծ են

Հնորհքն՝ զոր ԱՅ առնէ մեղ ձգելով՝ի կրօնաւորութի, և կերակրելով երկնային մանանայիւ, ուր այլք՝ի ճաշակել դեգերին զիստորս և զսոլս եգիպտոսի:

Մտախորհ լինիմ երբեմն՝ թէ զիարդ աշխարհիկքն՝ի բաց թողեալ զիւրեանց կամս, դրաւին՝ի կամս այլոց՝ լոկ վասն շահու և ակնկալութեց, և այն սկսեալ՝ի մեծէն որ ընթերակաց է արքայի՝ մինչև՝ի սուրհանդակ և՝ի ձիապան։ Ուտեն նոքա, որպէս ասելէ, ըստ քաղցուն այլոց ։ Ննջեն ըստ քնոյ այլոց ։ և են այնպէս վարժեալք՝ի սոյն, և զայլոց կամս յինքեանս ընկալեալք, մինչև քաղցրանալ նոցա յայն տարաղ կենաց, և զբօսանս անձանց համարել։ \* Նոքա զի զեղծանելի պսակն առնուցուն, և մեք զանեղծութենն . || ( ա . կոր . թ . 25 : ) իսկ արդ՝ զինչ մեծ է՝ եթէ քաղցրանայցէ մեղ բարեկարգեալ տարաղ կենաց՝ որպիսի է կրօնաւորականն, և մեր առնիցեմք զկամս մեծաւորին, որ լաւագոյն իսկ է քան զմերն։ Եթէ աշխարհականք վասն փոքր պատուոյ և ժամանակաւոր օգտի՝ այլոց կամաց ծառայեն, մինչև քաղցրանան և զբօսանին՝ի կատարել զայն, և զգիշեր առնեն տիւ, և զտիւ՝ զիշեր, զինչ մեծ իցէ՝ եթէ մեք զնոյն առնիցեմք վասն սիրոյն ԱՅ, և՝ի ժառանգել զկեանս յաւիտենականս։ Համար, յանձն առցուք և մեք զկամս մեծաւորին, որով միշտ զմեր կամս կատարիցեմք, և կեցցուք բարեհաճք

և խրախսառիտք՝ ՚ի կրօնաւորութե՛ն. և այն ուրախութիւն լվացիցի արդարեւ հոգեռական :

Արդ՝ ՚ի մերն դարձ արարեալ դիտաւութութի՛, յանկեսցուք զբանն : Զկամն ԱՅ արացուք մեր սեպհական, ՚ի նոյն համակերպեալք յամենայն իրս, և ոչ ունելով զայլ կամիլ կամ զոչ կամիլ՝ բայց զոր ԱԾ կամի, կամ ոչ կամի. այսու օրինակաւ առնիցեմք միշտ զկամն մեր, և կեցցեմք ՚ի բազում հանդստեան և զուարթուե՛ն: Յայտնի իրք են, զի եթէ դու ոչ կամիս բայց զոր ԱԾ կամիցի, քո կամքդ կատարեսցին՝ յորժամ ԱՅ հաճոյքն կատարին : Զսոյն և Սենեքա ինքնին դիտաց ասելով, այն է գերագոյն ՚ի մարդն՝ և առաւել կատարեալ, դիտել տանել խնդամտաբար տառապանաց և ձախորդութեց, և ժուժկալել ամենայնի որ հանդիպիցին, որպէս եթէ իւրով կամաւ ամենայնն դիպի նմա : Վասն զի պարտապան է մարդ այնպէս կամիլ, դիտելով թէ այն են ածային կամքն : Ո՞ր չափ բարեզգած լինէր կեալս մեր, եթէ փոյթ մեծ յանձին բերէաք դրաւիլ՝ ՚ի կամն ԱՅ, և ոչ բնաւ կամիլ՝ բայց զոր նայն կամի . զի այսպէս ոչ միայն առնէաք զմեր կամն հանապաղ, այլև առաւել ևս՝ տեսեալ զի միշտ կատարին կամք ԱՅ, զոր սիրեմքն մեծապէս : Մինչ զի թէ և ըստ ասացել ցա օրէն է խորհել յայսմ զկատագումն մերոց կամաց, սակայն պարտիմք

Հուսկ յետոյ զկայ առնուլ յերկրորդումն,  
այս է՝ հաստատել զամենայն զմեր հաճուի  
՚ի հաճութեն ԱՅ, և ՚ի լրման ամենանը  
ածային կամացն։ \* Զամենայն զոր ինչ  
կամեցաւ և արար Տիր, յերկինս և յերկրի,  
՚ի ծովս և յամենայն խորս։ || (Սաղմ.  
ՃՂ. 6.) Արար Տիր զամենայն զոր կամե-  
ցաւ, և արասցէ զամենայն զոր կամիցի. և  
այնչափ կարօղ է առնել՝ որչափ և կամիլ.  
ըստ ասելոյ իմաստնոյն . (ԺՇ. 18.)  
\* Մօտ է առ քեղ յորժամ կամիցիս կարօղ  
լինել։ || Եւ չեք ոք որ արգելուլ կարիցէ  
կամընդդէմ դառնալ. \* Դամ տիրես ՚ի վե-  
րայ ամենայնի, և ոչ ոք է որ հակառակ  
կայ քումտէրութեղ։ || (Եսթեր. ԺՂ. 11.)

## Գ Լ Ո Ւ Խ Ե :

Յաղագս այլոց Բարեաց և օգտակարու-  
թեանց՝ որչ չան ՚ի համակամութե-  
լութ Ասպուծոյ։

Ա իւս ևս բարի մեծ և օգուտ բերէ այս  
կրթութի. և այն է՝ զի նուիրումն ՚ի կամն  
ԱՅ է մի ՚ի լաւագոյն և ՚ի զօրաւոր պա-  
տրաստութեց զոր ՚ի մեր կողմանէ պիտոյ  
է ունել՝ առ ՚ի տալոյ մեղ Տն զշնորհս,  
և լնուլ զմեղ բարեօք։ Այսալէս յորժամ  
կամեցաւ Ած առնել զՊօղոս ՚ի հաղած-  
չէ քարոզ և առաքեալ իւր, կանխեաց

եւո նմա զայս պատրաստութիւն : Ծագեաց  
առ նա յերկնից լոյս մեծ , որով յերկիր  
անկեալ յերիվարէն , և բանալով աշաց  
հոդւոյն , ասաց . \* Տէ՛ր , զիս զի՞նչ կամիս  
առնել : || (Գործ . թ . 6 : ) Աւասիկ եմ  
տէր իբր կաւ զոյղն 'ի ձեռս քո , զի առ  
նիցես ը իս զոր հաճիսդ : Եւ արար զնա  
անօթ ընտրեալ , կրել և տարածանել  
զանուն իւր ընդ ամենայն աշխարհ : \* Աւ  
նօթ ընտրութեն է նա ինձ , կրել զանուն  
իմ առաջի հեթանոսաց և թագաւորաց ,  
և որդւոցն իսրայէլի : ( թ . 15 : )

Ընթեռնումք յաղադս սրբոյ կուսին  
Գերդրուտային , թէ ասաց նմա ԱՃ . որոք  
ցանկայ զի եկեալ բնակեմ 'ի նմա համար  
ձակ , յիս պարտի յանձնել զբանալիս կա  
մաց իւրոց , և ոչ ես յետս պահանջել զայնտ  
Վասն այսորիկ հայրն մեր ոք իգնատիոս  
դնէ զայս նուիրումն և զպատրաստակա-  
նութիւն իրը երեելի նպաստ առ ընդու-  
նելոյ մեծամեծ շնորհս յայ : Այլեւ կամի  
զի այսու լիցի մուտն 'ի Արթութիւնս , և  
զայս հիմն առաջի առնէ 'ի սկզբան անդ՝  
զի լինիցիմք աղատք որոշեալք յամենայն  
կենցաղական իրաց , ոչ ցանկալով առա-  
ւել այսմ քան այլում , այլ ցանկալով զի  
յամենայնի կատարեսցի 'ի մեզ կամք  
ԱՅ : Եւ 'ի կանոնսն կամ 'ի իսրասոս ա-  
ւանդեալս անտանօր վասն առաւել զիւ-  
րելոյ վերակացուի կրթութեանն , և որոց  
կը թինն , 'ի հինդերորդումն ասէ : Կարի

մեծ նպաստու լինիցի արարողին զկրթու-  
թիւն՝ ընծայիլ կամակար, և յանձն լի-  
նել բովանդակ 'ի ձեռս Այ, որպէս զի  
առնիցէ ընդ նա և ընդ նորայմն որ առա-  
ւել հաճոյն է նմա: Իսկ թէ ոյր վասն իցէ  
այս նպաստ մեծ և միջնորդ առ ընդունե-  
լոյ շնորհս 'ի տնէ, վասն զի այսու ըստ  
միոյ մասին բառնին 'ի բաց արգելք չար  
յօժարութեց մերոց՝ եթէ կայցեն. և ըստ  
այլ մասին՝ որչափ ոք առաւել ապաւինի  
յած, 'ի նորա ձեռս ընկեցեալ գլխովին, և  
ոչ կամելովինչ բայց զոր նա կամի, նոյն-  
չափ առաւել ստիպէ զած խնամ տանել  
նմա, և մատակարարել զամենայն որ նմա  
պիտոյն է:

Ըստ այլես պատճառի՝ համակամու-  
թին ընդ Այ է ազդոյ նպաստ առ 'ի ստա-  
նալոյ զամենայն առաքինութիս: Վասն  
զի առաքինութիւնք ստացանին մարդիւք  
ներգործութեց նոցա. և այս է ընաւոր  
եղանակն ստանալոյ զունակութիս: Այլ  
և նա ինքն Ած կամի այսու օրինակաւ  
տալ մեղ զառաքինութին. քանոլի զգործս  
շնորհաց կամի ներգործել նմանօրինակ  
գործոց բնութե: Արդ՝ կրթեալ զանձն 'ի  
նուիրման և 'ի միաբանուել ընդ կամս Այ,  
և այսու կրթեացիս յամենայն առաքինու-  
թիս, որով և լինիցիս նոցին ստացօղ:  
Քանոլի մերթ առաջի զայցեն քեղ պատ-  
ճառք խոնարհութե, մերթ հնաղանդու-  
թե, մերթ համբերութե, նոյնպէս այլոց

ևս առաքինութեանց, և որչափ առաւել կըթեսցիս յայսնուիրումն և 'ի համակամութի, և 'ի նմին զարդացեալ կատարելանաս, նոյնչափ յառաջադէմ կատարեսցիս յամենայն առաքինութիս : \* Մերձ լեր 'ի տի, և մի անհաւատար, զի բարձրասցիս 'ի վախճանի . || ասէ իմաստունն Արտաք. բ. 3: Մերձեցիր առ Ած համակամութը, և մի անհամբերութը երկմը տիցիս . որով յառաքինութիս 'ի վեր ելցես : Վասն այսորիկ վերակացուք հոգեոր կենաց խրատեն, և խրատ արդարե սքանչելի, կառուցանել զայս 'ի մի դիմաւոր առաքինութի, որ յինքն փակեալ ունիցի դայը առաքինութիս, և այնմ փոյժ ունել առաւելապէս յաղօթս մեր, և 'ի նոյն ուղղել զբննութի և զամենայն զմեր կըթութիս . քանդի միումիսիք ակն եղեալ, դիւրագոյն է 'ի նմին պարապիլ . և նորաստանալով, այն ամենայն ստացեալ է : Իսկ արդ՝ մի 'ի դիմաւորաց անտի՝ յորս դհայեցուածս մեր կարեմք դնել յաղադս սորին գործոյ, է նուիրումն և անթերի համակամութին ընդ Այ . ուստի յայս արժան է պարապեցուցանել զաղօթս և զբննութի, թէպէտե 'ի նոյն անցուցանիցեմք ամս բաղումն, այլե զիեանս ողջոյն . վասն զի զայս եթէ ստանայցեմք, 'ի ձեռին ունիցիմք զամենայն առաքինութիս :

Աըն բեռնարդոս յայն բան սըյն Պօղոսի, Տը, զիս զի՞նչ կամիս առնել, ասէ .

\* Ո՞ւ բան կարծառօտ, այլ պատարուն, այլ կենդանի, այլ ազդող, այլ ամենայն ընդունելութեն արժանի: || Համառօտ արդարե, բայց զամենայն ինչ բովանդակէ, ոչինչ թողեալ արտաքոյ: Եթէ կամիս ուսումն ինչ հակիրճ և համառօտ՝ ի սուացումն կատարելութեն, ահա քեզ: Ասամիշտ ընդ առաքելոյն Պօղոսի. Տե՛, զի՞նչ կամիս զի արարից . և ընդ մարդարէին Դրաւթի. Պատրաստ է սիրո իմ, յորդուրամիտ յամենայն ինչ դոր յինէն կամիցիս:

Կայ մեզ այլես բարի ինչ և շահեկանութի յայսմ կրթութեն. և է, զի ունի ցիմք այսու զգեղ ազդողական առ ազդինչ փորձութեն՝ որ հասանէ բաղում անգամ: Դեւն հնարի խռովել զմեղ մերթ ընդ մերթ փորձանօք կարծողական մոտածութեց և հարցուածոց, զօր օրինակ, եթէ ոք զայս ինչ ասէր քեզ, զի՞նչ պատասխանէիր. եթէ դիպէր այս ինչ, զի՞նչ առնէիր. յայն ինչ դիպուած զիա՞րդ ընտրէիր: Եւ զի հնարիմաց է դեւն, այնպէս առաջի կացուցանէ մեզ զիրսդ, զի յամենայն կողմանց թուիմք տաղնապեալ, և զելսն անդիտանամք. քանզի անդ լարեալ կայ որոգայթն, և ոչ փոյթ ինչ առնէ դենթէ որովխարելն կամի, իցէ արդեօք ստոյդ ինչ, կամ թէ առերեսոյթ և կեղծեալ. միայն զի յաջողեսցէ նմա իւրն դիտումն արկանել զմարդ՝ ի չար ինչ հաւանութի,

ոչ խտրէ նա առաւել զայս ինչ քան զայն։  
Յայսպիսի փորձուիս ասեն սովորաբար,  
թէ մարդ չէ պարտական պատասխանել  
այո՛, կամ ոչ, այլ լաւ ես է չպատասխա-  
նել ինչ, որ առանձինն անկ է խղճահար  
անձանց։ վասն զի եթէ սկսանիցին ըա-  
նագնաց լինել ընդ դիւին, և մտանել  
'ի հարցումն ե 'ի պատասխանիս, զայս խակ  
կամի նա, զի ոչ պակասի նմա կրկնել։ և  
ոչ 'ի մրցմանց աստի ելանիցեն անվեհեր  
առանց վերս առնլոյ 'ի գլուխն։

Սակայն գոտանեմ ես պատասխանի ինչ  
ըարեղէպ և պիտանի յայսոսիկ փորձու-  
թիս, և զայս առնել լաւագոյն վարկանիմ  
քան թէ չպատասխանել բնաւ։ և է այն  
խակ՝ ղօրմէ խօսիմք աստանօր, այսինքն է,  
առ խրաֆանչեւր յայսոսիկ իրս կարօղ է  
ոք պատասխանել անխոռվաբար։ Եթէ այդ  
են կամք Այ, կամիս և ես. եթէ զայդ  
կամի Ած, և ես. յայսմզայն կամէի ես՝  
զոր և Ած կամէր. թողում զիս յամենայ-  
նի 'ի կամն այ. ես առնէի զայն՝ որում  
պարտապան էի, և Տը տայր ինձ շնորհա-  
առ 'ի չզայրացուցանելոյ զնա, այլ առնել  
զկամն նորա։

Այս է պատասխանի հանրական, որ 'ի  
դէպ դայ յամենայն իրս, և չունի դժուա-  
րութի, այլ դիւրակատար է։ Վասն զի  
եթէ իցէ կամք Այ, բարի է. եթէ կամք  
է Այ, է լաւագոյն. եթէ է կամք Այ,  
այն է ինձ առաւել պատշաճեալ։ Ապա-

քէն կարօղ եմք աներկիւղընկենուլ զմեղ  
՚ի կամն այ , և ասել զայս ամենայն . որով  
ծաղը լինի դեն և ամաչեցեալ , և մէք  
մնամք քաջահաճոյք և արխացեալ յաղթու-  
թըն : Որպէս ՚ի փորձութիս հաւատոյ՝  
յատուկ խրատ է առ խղճահարս՝ մի պա-  
տասխանի տալ միոյ միոյ , այլ ասել հա-  
սարակաբար , ես ընդունիմ և հաւատամ  
զոր ինչ ընդունի և հաւատայ նը մայր  
Եկեղեցի : Սոյնպէս ՚ի նախասացեալ փոր-  
ձութիս՝ դեղ է բարեպատեհ ոչ առնել  
պատասխանի մասնաւորաբար , այլ ա-  
պաստանիլ ՚ի կամն ԱՅ , որ ծայրագոյն  
բարի է և կատարեալ :

## Գ Լ Ո Ւ Խ Ը.

Հասպատե օրէնակօք ինչ՝ ո՛րչափ համոյ  
իցե Ասպուծոյ էր նուալիւնի համակեր-  
պութե համաց նորա , և հապարելութին  
մէծ որ ՚ի նմա :

**Պ**ատմէ կեսարիոս՝ թէ վանականի  
ումեմն շնորհեալ էր առ յայ երեղի պարգև  
սքանչելագործութե , մինչ զի ախտաժէտք  
լինէին բժշկեալ միայն մերձենալով ՚ի  
հանդերձս նորա , կամ ՚ի գօտին : Վանա-  
հայր նորա ուշ եղեալ եղելոցն , բայց և ոչ  
տեսանելով ՚ի վանականն յայն մասնաւոր

ցոյցս իմն սրբակրօնուե՞ , կոչեաց զնա առանձինն , և հարցանէր զպատճառն՝ ոյր վասն գործէր ԱՃ՝ ի ձեռն նորա սքանչելիս բազումն : Ետ պատասխանի , թէ պատճառս ինչ ոչ գիտեմ . քանդի ոչ ծոմապահեմես աւելի քան զայլս . ոչ խարաղանաբախս լինիմ առաւել , ոչ աւելի ձնշեմ , ոչ յերկարագոյն աղօթեմ , ոչ աշխատիմ , ոչ հսկեմ աւելի քան զնոսսա : Զոր ասելն կարեմ զինէն՝ այս է . զի ոչ յաջողութիք զիս ամբառնան , և ոչ ձախորդութիք լքուցանեն . որ զինչ և դիպեսցի , ոչ խռովէ զիս կամ անհանգիստ առնէ . կայ մնայ հոգի իմ՝ ի նոյնօրինակ խաղաղութեն և յանդորըու յամենայն անցս՝ որչափ և այլադէպք իցեն , եթէ անձին առանձին , և եթէ այլոց : Յայնժամ ասէ ցնա վանահայրն . և ոչ արդեօք շփոթեցար փոքր ինչ յանցելումն աւուր , յորժմ Ազնուականն այն մեր թշնամի՝ հրձիդ արար զհամբարանոց մեր : Ասէ , ոչ բնաւ . ոչ դիտացի յանձին պղտորումն ինչ , վասն զի յանձնեցի զամենայն՝ ի ձեռս ԱՃ , որով եթէ աջողակ ինչ իցէ , եթէ ձախողակ , եթէ սակաւ , եթէ բաղում , ընդունիմ միօրինակ դոհութ իբրև ՚ի ձեռանէ այ եկեալ : Յայնժամ ծանեաւ վանահայրն , թէ այն էր պատճառ հրաշագործորութեն :

Պատմէ Պլոսիոս , թէ աղքատ ոմն մուրացիկ՝ այր կատարեալ վարուք՝ հարցաւ յածաբանէ ումեմնէ , թէ իւ եղե նմա

ատանալ դկատարելութիւն : Այսպէս եւս  
պատասխանի . ես ընտրեցի յարիլ միայն  
յածային կամն , և զիմկամն այնպէս միա-  
բանեցի այնմ , զի որչափ կամի Ած , նոյն-  
չափ ես կամիմ : Յորժամ բաղցն զիս տա-  
ռապեցուցանէ , կամ ցուրտն վշտագնէ ,  
դովեմ ես զԱծ : Օդ եթէ պարզ լինիցի ,  
եթէ խիստ և մրրկեալ , նոյնպէս գովեմ  
զԱծ : Որ զինչ և իցէ տուեալ յայ կամ  
թողացուցեալ գալ յիմ վերայ՝ աջողակ  
կամ ներհակ , քաղցր կամ դառն և անա-  
խորժ , առնում զայն 'ի ձեռանէ նորա  
խնդութիւն մեծաւ՝ իբրեւ ամենալաւ իմն ,  
նուիրեալ զանձն իմ նմա խոնարհութիւն :  
Ոչ դոի բնաւ հանգիստ յիրս ինչ ուր ոչ  
դոյր Ած . և ահա դոի զԱծ իմ , յորում  
է իմ հանգիստ և խաղաղութիւն յաւերժա-  
կան :

Կա ինքն Պլոսիոս պատմէ յաղագս սրբա-  
կրօն կուսի միոյ , թէ հարցեալ զիարդ  
սոացեալ էր դկատարելունի , ետ պատաս-  
խանի : Զամենայն վիշտս և զընդդիմակս  
յանձն առի բաղմաւ համակամութեամբ  
առ Ած , իբրեւ 'ի նորա ձեռանէն եկեալս .  
և ամենայն մարդոյ՝ որ անիրաւեցաւ յիս ,  
կամ վիշտս ինչ հասոյց , փոյթ կալայ հա-  
տուցանել առանձին իմն բարերարութիւն .  
ոչ տրտնչեցի առ ոչ սակս իմոց տառապա-  
նաց , այլ առ Ած միայն զիմեցի , յորմէ  
արադ ընկալայ քաջալերութիւն և միմիթա-  
բութիւն :

Պատմէ Տաւշերոս, թէ առ աղախին  
 օմն Այնուիրեալքովանդակ ընդ ձեռամբ  
 նորա, յանձն լինէին բազումք՝ աղօթել  
 վասն գործոց նոցա . և նա պատասխանէր  
 կատարել, բայց մոռանսյր երբեմն . այլ  
 ըստ յանձնարարութեն կատարիւր ան-  
 վրէպ զոր ինչ միանգամինդրեալ էին . որք  
 և դառնային շնորհ ունել աղախնոյն Քնի,  
 իբրև նորին աղօթիւք ընկալեալ զվնդրելին  
 իւրեանց . իսկ նա պատկառեալ ասէր,  
 թէ Այ շնորհ կալցին, զի չէր ինչ արա-  
 րեալիւր : Եւքանզի բազումք ընթանային  
 առ նա այսու պատճառանօք, դանգատ  
 կալաւ նա սիրողաբար առ Ած, իբր զի՞ի  
 դլուխ տանելով այ զամենայն զգործառ-  
 նութիւնսն՝ որոց վասն մարդիկն աղօթս  
 յանձնէին ինքեան, յետոյ գային շնորհա-  
 կալու ինքեան լինէին, ուր ինքն չունէր ա-  
 րարեալ ինչ : Առ որ ետ պատասխանի Տ՛,  
 տես դուստր իմ . յորում աւուր ինձ ետուր  
 զկամն քո, և ես զիմ կամն ետու քեղ . և  
 թէ դու ոչիսնդրիցես ինչ յատուկ, բայց  
 գիտելով իմ թէ այն քեղ հաճոյ է, կատա-  
 րեմ զայն իբրև արդէն աղաշեցեալ 'ի քէն :

'Ի վարս Հարանց պատմի, թէ շինակա-  
 նի ուրումն անդք և այգիք պտղաբերէին  
 բազմարդիւն յոյժ քան զայլոցն . և հար-  
 ցեալ յոմանց 'ի նոցանէ՝ թէ զինչ իցէ  
 պատճառն, ետ պատասխանի . մի ը այդ  
 զարմանայք թէ լաւազոյն են իմ արդիւնք  
 քան զձերդ . վասն զի ունիմ ես զեղանակ

օղոցն որպէս կամիմ։ Ընդ այս առաւել ևս զարմացեալ նոցա, որպէս լինիցի այդ՝ հարցանէին։ Առ որ կրկնեաց . ես ոչ զայլ եղանակ կամիմ՝ բայց զոր Ած կամի. և որպէս ես զայ հաճոյն կամիմ, և նա տայ ինձ զարդիւնս՝ զիարդ ես ախորժեմ։

Պատմէ Սևերոս սուլպիկիոս ՚ի վարս սըյն Մարտինոսի եպիսկոպոսի, թէ զամենայն ժամանակն զոր կեցեալ էր ընդ նմա, ոչ ետես զնա բնաւ զայրացեալ, կամ տրտեալ, այլ միշտ խաղաղական և զըտարժ. և պատճառ այսմ, վասն զի որ զինչ և դիպէր նմա, ընդունէր զայն իբրև ՚ի ձեռանէ Այ եկեալ. որովյամենայնի լինէր այ կամացն համակից, միօրինակ բարեկրութք հոգւոյն և զուարթութք։

### Գ Լ Ո Ւ Խ Թ.

Յաղագս իրաց ինչ որչ հեշտին և ասղոյ գործեն մշղ զիրնութիւն համակէր. պուտեն ընդ համացն լուսուժոյ։

**Ա**ռ դիւրին առնելոյ մեզ և քաղցր զկրթութի համակամութեն ընդ Այ, պիտոյ է զառաջնուն յանդիման աշաց ունել միշտ զիմնն զոր ՚ի սկզբան եղաք (զւա.ք.) թէ ոչ մի ինչ ընդդիմակ կամ վիշտ հասաւ.

նել կարէ մեզ՝ առանց անցանելոյ ընդ  
ձեռն Այ, և որ չիցէ սահմանեալ՚ի կա-  
մաց նորա : Զայս ճշմարտութիւն ուսոյց  
Ք՛ փրկիչ մեր ոչ միայն բանիւ, այլև իւ-  
րով օրինակաւն : Յորժամ՚ի գիշերի շար-  
շարանացն հրամայեաց սբէյն Պետրոսի՝ ար-  
կանել զսուրն՝ ի պատեանս, ած՝ ի վերայ .  
\* Զբաժակն զոր ետ ինձ Հայր, ոչ ըմպիցեմ  
զնա : || ( Յովէ . ժը . 11 : ) Ոչ ասաց, ըլ-  
բաժակն պատրաստեալ ինձ՝ ի յուղայէ,  
կամ՝ ի դպրաց և ՚ի փարիսեցւոց . վասն  
ոիքաջդիտէր՝ թէ նոքա մատուուակք միայն  
էին, որք ծառայէին՝ ի մատուցանել նմա-  
զբաժակ հօրն . և զոր նոքա շարութիւն առ-  
նէին և առ նախանձու, Հայրն յաւիտե-  
նական կարգաւորէր զայն՝ ի դարման  
աղդի մարդկան : Եւ նոյնպէս խօսեցաւ  
յետ այնր առ պիղատոս, յասել նորա թէ  
ունիմիշխանութիւն՝ ի խաչ հանել զբեղ  
կամ արձակել : \* Ոչ ունէիր՝ ասէ, դու  
իշխանութիւն՝ ի վերայ իմ և ոչ մի՝ եթէ ոչ  
էր տուեալ քեղ՝ ՚ի վերուստ : || ( Յովէ .  
ժթ . 11 . ) զոր և բացատրեն վարդապետք,  
թէ յածուստ կարդմանէն և ՚ի սահմանե-  
լոյն լինէր այն . մինչ զի ամենայնն դայր՝ ՚ի  
վերուստ ըստ տնօրինելոյն Այ :

Զսոյն զայս գեղեցկապէս ասացին ժո-  
ղովեալքն ընդ սբէյն Պետրոսի առաքելոյ .  
( Գործ . դ . 26 . ) որք բացատրելով զա-  
սացեալն մարդարէին ( Սաղմ . բ . 1 . )  
\* Զմէ խռովեցան հեթանոսք , և ժո-

դովուրդք խորհեցան 'ի սնոտիս . յանդիւ-  
ման եղեն թագաւորք երկրի, և իշխանք  
ժողովեցան 'ի միասին վասն տն, և վասն  
օծելոյ նորա : || Առ այս 'ի վերայ բերեն .

\* Ժողովեցան արդարե 'ի քաղաքիս յայս-  
միկ 'ի վերայ սէյ որդուոյ քո Յնի զոր օծերն՝  
հերովդէս և պոնտոս պիղատոս ազգօք և  
ժողովրդովք խարայէլի, առնել որչափ ձեռն  
քո և կամք յառաջազոյն սահմանեցին լի-  
նել : || Ո՛չ այլ ինչ առնել կարէին, բայց  
'ի զործ գնել զոր միանգամ'ի խորհրդա-  
րանի ամենանը Երրորդութեն սահմա-  
նեալ էր : Եւ տեսանեմք ահա, զի յոչն կա-  
մել Այ՝ բովանդակ իշխանութի հերովդի  
արքայի ոչքաւական եղեւ բառնալղիեանս  
նորա՝ այն ինչ տղայ գոլով . և թէպէտ ետ  
սպանսանել զամենայն մանկունս մերձա-  
կայ գաւառին յերկեմենից 'ի խոնարհ,  
այլ զոր խնդրէրն՝ ոչ եղեւ կամագիւտ . զի  
ոչ էին կամք յայնժամ մեռանելնմա: Այլեւ  
հրէայք և վարիսեցիք կամեցան բազում'  
անգամ ձեռն արկանել 'ի Ք՛օ, և սպանա-  
նել . և միանգամ հանին զնա 'ի գլուխ լե-  
րինն՝ յորոյ վերայ քաղաքն շինեալ էր՝ գա-  
հավէժ առնել զնա . և ասէ նբ աւետա-  
րանն . \* Եւ նա անցեալ ընդ մէջ նոցա  
գնայր : || (Ղուկ . դ. 30.) Անցանէր ընդ  
մէջ նոցա հանդարտիկ, վասն զի ոչ այնօ-  
րինակ մեռանել ընտրեալ էր . որով և  
չկարէին առնելինչնմա: Յայլումնուագի  
քարկոծել զնա կամեցան, և ամբարձին

իսկ ձեռս քարձիդ լինել . այլ Քո փրկիչ  
մեր կացեալ անվըդով խօսէր ընդ նոսա  
և հարցանէր . \* Բաղում գործս բարիս  
ցուցի ձեղ 'ի հօրէ իմմէ . վասն որոյ գոր  
ծոյ 'ի նոցանէ քարկոծ առնէք զիս : ||  
( Յով . Ժ . 32 : ) Ոչթողացոյց նոցա ար-  
կանել 'ի նա ձեռն , \* զի չե էր հասեալ  
ժամնորա : || ( Անդ . Է . 30 : )

Այլ սակայն իբրև եհաս ժամն յորում  
սահմանեալ էր մեռանել , յայնժամ կա-  
րողացան առնել զոր ինչ Տիրն կրել սահմա-  
նեալ էր , և յայնժամ ետ նոցա թոյլ .  
\* Այս է ձեր ժամ , և իշխանութիւն խա-  
ւարի , || ասաց նոցա յորժամ երթեալ էին  
ըմբռնել զնա : ( Ղուկ . իբ . 55 : ) Յամե-  
նայն աւուր ընդ ձեղ էի 'ի տաճարին , և  
ոչ ըմբռնեցիք զիս . զի չե հասեալ ժամն .  
արդ եկն եհաս , և աւասիկ աստ եմ :  
Ո՞րչափ ինչ արար անդ ուրեմն Սաւուղ՝  
նախաղիծ օրինակ այսոցիկ , քանի ջանս  
'ի կիր արկ , քանի հնարս գործեաց առ 'ի  
ձեռս բերելոյ զդաւիթ : Ծագաւոր ոմն իս-  
րայէլի 'ի խնդիր ելեալ էր մարդոյ սոս-  
կականի իբրև լուոյ միոյ , որպէս Դաւիթ-  
ինքնին ասէ . ( առ թագ . ինը 20 . և ինդ . 15 : )  
Այլ 'ի վերայ ամենայնի այսորիկ ոչ յա-  
ջողեաց նմա . զոր և ածային գիրն յայտնի  
զեկուցանելով տայ զպատճառն . \* Ոչ  
մատնեաց զնա Տիր 'ի ձեռս նորա : || Ահա  
քեղ խնդրելին :

Վասն այսորիկ բարւոք ազդ առնէ նքն

Կիպրիանոս 'ի վերայ ըանին . \* Մի տանկիր  
զմեղ 'ի փորձութի . || թէ զամենայն զմեր  
երկիւղ և զեռանդն և զարթնութիւն 'ի  
փորձութիսն և 'ի տառապանա՝ պարտ է  
դնել յԱծ . վասն զի ոչ դեն , և ոչ այլոք  
կարօղ է շար ինչ առնել մեղ , եթէ ոչ  
նախ տայցէ նմա Ած իշխանութի :

Երկրորդ , թէպէտ և այս Ճշմարտութի  
բարւոք 'ի միտ առեալ , բաւական է և  
աղջոյ առ 'ի կապելոյ զմեղ յամենայնի  
ընդ կամա Այ , բայց ոչ յայսմ դադարել  
պարտ է մեղ , այլ յառաջ անցանել յայլ  
ինչ , որ և հետեւումն է առաջնոյն , և զոր  
ծանուցանեն վարդապետք , և այս է . զի  
'ի գիտելոյն թէ ամենայն ինչ դայ 'ի ձեռա  
նէն այ՝ պարտիմք հաւանել ևս թէ դայ առ  
'ի մեր բարին և յօգուտ : Դատապարտե  
լոցն պատիժք թէ և յայ ձեռանէն դան ,  
բայց ոչ 'ի շահ նոցա և 'ի դարմանս , այլ 'ի  
պատուհաս լոկ : Սակայն պատիժք և տա  
ռապանք առաքեալք յայ առ մարդիկ յաս  
սի կեանս՝ եթէ առ արդարս , և եթէ առ  
մեղաւորս , ըստ որումէ վստահանալ միշտ  
յանչափ բարութի և յողորմութին Այ ,  
առաքին 'ի մեծագոյն բարին մեր , և զի  
այն է առաւել պատշաճեալ առ մեր հո  
գեոր փրկութի : Այսպէս խօսեցաւ երա  
նուհին Յուղիթ առ ժողովուրդ իւր՝ յոր  
ժամկայր 'ի տաղնապի և 'ի մեծ անձկու  
թի պաշարեալ 'ի թշնամեաց . \* Ո՛չ եթէ  
զմեր մեղս ոչ խնդրեսցէ , այլ 'ի խրատել և

ուսուցանել տանջէ մոր զմերձաւորս իւր : ||  
 ( դլ . ը . 25 : ) Ընդ ամենաբարի կամ՝ որ  
 պիսի է Այն , որ և սիրէն զմեղ առաւել  
 լապէս , ունիմք մեք վատահանալ աներկբայ՝  
 թէ ոչ կամի բայց զմեր բարին և ղլաւա-  
 գոյնն , և որ անկազոյն է մեղ . զորմէ ըն-  
 դարձակ ևս յայտ արասցուք 'ի յաջորդ  
 գլուխդ :

Երրորդ . որպէս զի առաւել պտղաբեր  
 լինիցի այս ճշմարտութի , և աղդողագոյն  
 առ 'ի ստանալոյ ղկատարեալ համակա-  
 մութի ընդ Այ , չէ բաւական դիտել և  
 հաւատալ սոսկ տեսութք մոտաց՝ թէ ամե-  
 նայն ինչ գայ 'ի ձեռանէն Այ , և ոչ հա-  
 ւատալ հասարակաբար վեր 'ի վերոյ 'ի իբր  
 զի այնպէս ասեն հաւատք , կամ զի այնպէս  
 ընթերցաք կամ լուաք . այլ պիտոյ է գոր-  
 ծականել և կենդանացուցանել զայս հա-  
 ւատս , զի ծանիցի և յանձին զգայցի գործ-  
 նական օրինակաւ . մինչ զի զամենայն ըդ-  
 հանդիպեալսն ընդունիցիմք իբր այն թէ  
 նա ինքն Քն 'ի լուր ականջաց և 'ի տես  
 աչաց կացեալ ասէր . առընկալ որդեակ՝  
 զոր եսն առաքեմքեղ . իմ կամք են՝ զի գու-  
 առնիցես կամ կը իցես այժմ զայս կամ զայն  
 ինչ : Քանզի սովորն օրինակաւ յոյժ դիւ-  
 րին լինի մեղ և քաղցր միաբանիլ ընդ կամն  
 Այ յամենայնի : Եթէ անձամք երեւեալ  
 քեղ Քնի փրկչին մերոյ ասէր . տես որ-  
 դեակ , ահա այս է զոր 'ի քէն կամիմ ,  
 զայս տառապանս , զայս կիւանդութիւն ,

զոր այժմ կրիցես վասն իմ. յայտմ պաշտա-  
ման կամ 'ի սպասաւորութե կամիմ զի  
ծառայիցես ինձ: Յայտնի իրք են, զի թէ և  
հրամայեալն լինէր կարի դժուարինն յիքս  
աշխարհի, կատարէիր զայն մտադիւր կա-  
մօք զամենայն կեանս քո, և բարերաստիկ  
զանձնդ վարկանէիր, զի հաճեցաւ Ած  
ծառայեցուցանել գքեղ յայն դործ. և զի  
առ 'ի նմանէ քեղ հրամայի, զայն համա-  
րէիր քեղ լաւագոյն, և առաւել դիպաւոր  
քեղ առ յաւիտենից փրկութիքո. և ընդ  
այս ոչ երկբայէիր բնաւ, և ոչ խորհուրդ  
ինչ թարմատար ընդ հակառակն զմուաւ  
քուլ անկանէր:

Չորրորդ. պիտոյ է կրթել զմեղ յա-  
ղօթս, և 'ի գործ վերածել զայս կրթուի,  
փորելով՝ 'ի խորս անդր իբր ամենահարուստ  
հանգս՝ զնախախնամութին զհայրական  
և զառանձնապարդե՝ զոր առ մեղ ունի  
Ած. քանզի այսպէս արարեալ, հասանի-  
ցեմք 'ի գանձ անդր. զոր և 'ի յաջորդ զլու-  
խըդ ունիմք պարզաբանել:

Գ Լ Ո Ւ Խ Ժ :

Յաղագս հայրական և մատուցութեա-  
խախամութե լուսուծոյ առ մեզ,  
և յաղագս որդիական ապաւինութե  
պոք ունել պարբիմք առ նու ։

**Թ** մեծամեծ ձոխութեց անտի և 'ի գան-  
ձուց՝ յորս վայելեմք հաւատացեալքս , մի  
է նախախնամութին այն առանձին և հայրա-  
կան՝ զոր ունի Ած առ մեզ . որով աներկ-  
բայ եմք թէ ոչ մի ինչ կարէ անցանել ընդ  
մեզ՝ թէ ոչ իցէ տնտեսեալ 'ի ձեռանեն այ :  
Սոյնպէս և մարդարէն ասաց Դաւիթ .  
\* **Տէր** , որպէս զինու հաճութք քով պսա-  
կեցեր զմեզ : || ( Սաղմ. Ե . 13 : ) Կամք  
յամենուստ պատսպարեալք 'ի բարի կա-  
մացն այ , մինչ զի չկարէ մտանել 'ի մեզ  
ինչ մի՝ բայց միջնորդաւ նորա : Ուստի  
չկայ մեզ երկնչել ուստեք . զի նա ոչ թո-  
ղու մտանել կամ անցանել ինչ առ մեզ՝  
բայց որ լաւագոյն է մեզ և յօդուտ :  
\* **Ճածկեաց զիս** 'ի խորանի խւրում յա-  
ւուր չարի . ընդ յարկաւ արար զիս 'ի  
ծածկոյթ խորանի խւրում , || ասէ արքայն  
Դաւիթ . ( Սաղմ. իշ. 5 : ) յայտ արա-  
բեալ թէ 'ի նեղքին կողմն խորանի խւրոյ ,  
և 'ի սենեկի խորհրդոցն ծածկեալ ունի

Ամեղ ԱԾ, և պահպանեալ թեռվք իւրովք:  
 Ասէ դարձեալ առաւելքան զսոյն. \* Ամ  
 բացուցեր զնոսսա 'ի ծածկոյթ երեսաց  
 քոց: || (Լ. 21.) այսինքն է. ամրացուցեալ  
 'ի ծածկագոյն մասն երեսաց, որ են աչքն.  
 զոր և այլով բանիւ ասէ. (ԺՂ. 8.) \* Պա-  
 հեա՞ զիս որպէս բիր ական. || իբրև թէ  
 առնել Այ զմեղ բիրս աշաց իւրոց. զի ճըշ  
 մարտեացի և միւս ասացեալն. \* Որ մեր  
 ձենայ 'ի ձեղ, որպէս որ ընդհարկանիցի  
 ընդ բիր ական իմոյ: || (Զաքար. բ. 8: )  
 Եւ ո խորհել կարիցէ մեծահարուստ ինչ  
 քան զայս, առաւել պատուական, առա-  
 ւել մեծազրելի և ցանկալի:

Երանի՞ էր մեղ՝ եթէ քաջ ճանաչէաք և  
 'ի միտ առնուաք զայս. որչափ պաշտպա-  
 նութի և օգնականութի յանձինս զդայաք.  
 քանի՞ բարեյցաք լինէաք և միսիթարեաք 'ի  
 կարիս մեր և 'ի տառապանս: Եթէ որդի  
 ոք յաշխարհի ունիցի հայր բազմահարուստ  
 և հզօր, ընտանի և սիրեցեալ յարբայէ,  
 քանի՞ քաջայոյս և անկասկած լինէր՝ թէ  
 յամենայն գործառնութիւնս պատահեալո  
 չպակախիցի նմա նպաստ և պաշտպանուի  
 հօր իւրոյ: Ապա որչափ իրաւացի ևս է  
 ունել մեղ զայն վատահութիւն, ածեալ  
 զմտաւ թէ Հայր մեղ դնա ունիմք, յորոյ  
 'ի ձեռին կայ իշխանութի երկնի և երկրի.  
 և զի ոչ մի ինչ դիպի մեղ առանց անցա-  
 նելոյ նախ ընդ նորա ձեռոս: Եթէ վատա-  
 հութի զայսպիսի ունի որդի ոք առ իւրն

Հայր, և այնու ննջէ յանհոգս, որչափ առաւելապէս ունելմեղ պարտ է առ նա՝ որ  
 առաւել հայր է քան զամենայն հարս, և  
 առ որ համեմատեալ այլոցն, ոչ իսկ ար-  
 ժանի են հայր անուանակոչութեն, այնու  
 զի չեք դութք սիրոյ՝ որ 'ի համեմատութի՛  
 գայցէ ածայնոյն առ մեղ. որ յանշափս  
 գեր՝ 'ի վերոյ անցանէ քան զամենայն սէր՝  
 թէ յերկրաւոր հարս երբէք լինիցի: Վասն  
 որոյ լիցուք քաջայոյաք և աներկբայելիք  
 յայսպիսի հայր և 'ի տէր, թէ զոր ինչ առա-  
 քէ մեղ, այն յառաւել բարին մեր է և յօ-  
 դուտ: Վասն զի սէրն զոր առ մեղ կը է  
 իւրով միածին որդւովն, ոչ յայլ ինչ ստի-  
 պէ զնա՝ բայց հոգալ զբարին այնմ յորոյ 'ի  
 սէրն մատնեաց զիւր որդին ընդ բոնութք-  
 ցաւոց խաչին: \* Որ յիւր որդին ոչ խնայ-  
 եաց, այլ վասն մեր ամենեցուն մատնեաց  
 զնա, զիարդ ոչ նովաւ հանդերձ զամենայնն  
 շնորհեացէ մեղ, || ասէ նը առաքեալն Պօ-  
 ղոս. (Հռովմ. ը. 32: ) Որ զմիածինն ետ  
 'ի մահ նուիրեալ վասն մեր, զի՞նչ ոչ առ-  
 նիցէ վասն մեր. որ զառաւելն ետ, միթէ-  
 զիոքրն զլանայցէ: Եթէ զայս վատահութի՛  
 ամենեքին ունել պարտին առ Ած, քանի-  
 պատիկ ևս կրօնաւորեալքն, զոր առան-  
 ձինն ինքեան սեպհականեաց Ած, և ետ 'ի  
 նոսա զողի և զսիրտ որդւոց, շնորհեալ  
 նոցաւուրաննալ և լքանել զմարմնաւոր հարս  
 իւրեանց, և զինքն ընտրել 'ի հայր. զոք  
 սիրտ և զսէր հայրական, զոք հողս և զիմնա-

մակալութի առ այնպիսին ոչ ունիցի ԱՃ։  
 \* Հայր իմ և մայր իմ թողին զիս, և տէր  
 ընկալաւ զիս։ || (Սաղմ. իդ. 10։) Զո՞ր  
 հայր բարեխնամքեղ առեր փոխան այնմ  
 զոր թողեր։ Առաւել ևս իրաւամբք և  
 վստահութե կարօղ ես գու ասել. \* Տէր  
 հովուեսցէ զիս, և ինձ ինչ ոչ պակասես-  
 ցի։ || (իդ. 2։) Զհոդս անձին իմոյ՝ և զա-  
 մենայն զիմոցն՝ յինքն ընկալաւ ԱՃ. վասն  
 որոյ ոչ մի ինչ պակասեսցի ինձ։ \* Ես աղ-  
 քատ և տնանկ եմ. ած խորհեա զիս. օդ-  
 նական և պաշտպան իմ։ || (ԼԹ. 18։)  
 ԱՅ խորհելով վասն իմ ըստ ամենայն  
 խնամոց, ո՞ ոչ սփոփեսցի, ո՞ ոչ հալեսցի  
 սիրովնորա։ Դու Տէր, հոդս առեալ ան-  
 ձին իմոյ, այնչափ ինչ խնամ ունիս, որչափ  
 թէ չկայր քեղ յերկինս և յերկրի խնամար-  
 կել զայլ արարած բաց յինէն։ Երանի՞ էր  
 մեզ՝ եթէ խորազգած լինէաք յայս սէր,  
 յայս խնամակալութի և 'ի թեարկութի  
 հայրական և առանձնաւոր՝ զոր առ մեզ  
 ունի ԱՃ։

Յայսմանէ՝ 'ի ճշմարիտ ծառայս այ ծնա-  
 նի մոտերիմ և որդիական ապաւինութիւն  
 ինչ առ նա. որ և այնչափ մեծ է յոմանս,  
 զի ո՞չ գուանել զորդի ոք մարմնական այն-  
 պէս վստահացեալ 'ի խնամակալութի հօր  
 իւրոյ, որպէս նոքա վստահ լինին յայ  
 խնամնն։ Վասն զի դիտեն թէ գութք նո-  
 րա 'ի վերայ իւրեանց՝ առաւել են քան  
 զհայրականն, նաև և առաւելքան զմայրա-

կան, որ սովորաբար դորովական ես է. որպէս և Ած ինքնին ասէ զայս բերանով եսայեայ. ( Խթ. 15. ) \* Միթէ մոռանայցէ կին զմանուկ իւր, կամ թէ ոչ գլխացի, 'ի ծնունդս որովայնի իւրոյ. և եթէ մոռանայցէ զայս կին, սակայն ես ոչ մոռացայց զքեղ: Ահաւասիկ 'ի վերայ ձեռաց իմոց նկարեցի զպարիսպ քո, և առաջի իմ ես դու յամենայն ժամ: || Որպէս թէ ասէր պարզաբար, 'ի վերայ ձեռաց կրեմ զքեղ, և ունիմ միշտ առաջի աշաց առ, 'ի խնամ ածել և պահպանել. զոր և այլով գորովական իմն օրինակաւ բացայացտէ, 'ի ձեռն նորին մարդարէի յասելն. ( Խղ. 3. ) \* Ընտրեալքդ յորովայնէ, և խրատեալք, 'ի մանկութէ: || Ո՛չ իբրև յօտարածինս հայիմ, 'ի ձեղ՝ ասէ, այլ իբրև, 'ի հարազատս՝ յարդանդէ ընտրեալս, և տղայաբար մնուցեալս յիմ ձեռն, որպէս մայր ծնող՝ լինելով ձեղ տուն և բազմոց և պարիսպ՝ յամենայն պէտս դարմանիչ: Վասն այսր պատճառի ծառայքն այ այն պէս մեծայուսութեամբ կեան, և այնչափ նպաստս և օգնականութիւն գտանեն յամենայնի, զի ոչ խոռովին կամ անհանդիստ լինին 'ի պէսպէս պատահմանց կենացս. և որպէս երեխաս ասէ ( ԺԷ. 8. ) \* Յամէ երաշտութեն մի երկիցէ: || Սիրտ արդարոց ոչ կը է ամբոխումն, ոչ կորուսանէ զհանգիստ իւր և զանդորրութիւն ըստ զանազան դիպուածոց. վասն զի գիտեն թէ ոչ խմբ

մարթ է դիպիլ առանց կամաց հօրն իւրեանց. և մնան բարեհաճք և վստահասիրտք ՚ի սէր և ՚ի բարութիւն նորա՝ թէ զամենայնն առնիցէ յառաւելագոյն բարի իւրեանց. և թէ զոր ինչ միանգամ բառնայ ՚ի նոցանէ ըստ միոյ մասին, փոխատրէ նոցաըստ այլ մասին՝ յայնպիսի իրս որ առաւել ՚ի պէտս է նոցա :

Յընտանի և յորդիական վստահութէ աստի արդարոց առ ԱՃ՝ ծնանի յոգւոջ նոցա խաղաղութին և հանգարտութի և աներկիւղուին մեծ՝ զոր ունին, ըստ որում ընթեռնուլ է յեսայի (լբ. 18.) \* Եւ բնակեցէ ժողովուրդ իմ ՚ի քաղաքին խաղաղուն, և բնակեցէ յուսով, և հանդիցեն մեծութ: || Վայելքաբար Ծորդէ մարդարէն զխաղաղութի ընդյուսոյ, գոլով միոյն ընթացակից առ միւսն. վասն զի յուսոյն զհետ գայ խաղաղութին, և որ յած մեծայոյս է, չունի երկնչել ուստեք, կամ խռովիլ իւիք. զի օդնական իւր ունի զԱՃ, և իւր ապաւէն նա է. վասն որոյ ասէր մարդարէն. \* Խաղաղութիք յայս և ՚ի սոյն ննջեսցուք և զարթիցուք. զի դու տէր միայն առանձին յուսովքո բնակեցուցեր զմեղ: || (Սաղմ. հ. 9. 10:) Արդարև խաղաղութիք կամք ասէ ՚ի քուն և յարթնութեան. վասն զի յուսով ողորմութէ քո յապահովեցեր զկեանս մեր:

Եւ ոչ միայն զխաղաղութիւն մեծ ներգործէ այս որդիական ապաւէնութիւն,

այլև մեծի խնդութե՞ է արարօղ և զուար-  
թութե՞ , ըստ ասացելոյ Առաքելոյն առ-  
չոռվմ . ժե՞ . 13 . \* Այլ ած յուսոյ լի  
արասցէ զձեղ ամենայն խնդութե՞ և խա-  
ղաղութե՞ , առաւելու ձեղ յուսով , զօ-  
րութե՞ հոգւոյն սի՞ : || Հաւատալն մեր՝  
թէ դիտէ Ած զոր միանդամ առնէ , և թէ  
առ ՚ի մեր բարի զայն առնէ , տայ մեղ  
անծուփս լինել ՚ի շփոթմանց անտի , յանձ-  
կութեցն և ՚ի յուղմանց՝ զորս կրեն կշռա-  
դատօղքն զիրս ըստ մարմնոյ աշաց . մանա-  
ւանդ թէ տայ մեղ կալ խնդութե՞ մեծաւ  
յամենայն դիպուածս . և որչափ առաւե-  
լուցու ոք յայսմ վստահութե՞ , նոյնչափ  
և ՚ի հոգեսորական խնդուեն առատանայ .  
իբր զի առաւել վստահանալով և սիրելով,  
առաւել ևս հանդարտիկ և անկասկած է՝  
թէ ամենայն խնդառնալ ունի իւր ՚ի բա-  
րիս . և ոչ այլազդ ինչ կարօղ է հաւատալ  
և յուսալ յանբաւ բարութե՞ն և ՚ի սի-  
րոյն Այ :

Այս է որ յանդորրու պահէր զսուրբսն  
և աներկիւզս ՚ի մէջ վշտաց և վտանգաց .  
որք ոչ ՚ի մարդկանէ երկնչէին , և ոչ ՚ի դի-  
ւաց , ոչ ՚ի գաղանաց , և ոչ յայլ անզգայ  
արարածոց . զի դիտէին թէ առանց թոյլ  
տալոյ և կամաց այ ոչ կարէին մերձենալ  
առ նոսա : Որպէս նըն Աթանաս պատոմէ  
յաղագս երանելոյ հօրն Անտոնի , թէ  
երեւեցան նմա երբեմն դեք ՚ի կերպս կերպս  
ոլակուցանօղս , և ՚ի կերպարանս ամեհի

կենդանեաց՝ առիւծուց, վագերց, ցլուց, օձից և կարճաց, շուրջպատեալք զնովաւ, և սպառնալով ճիրանօք և ատամամբք, մոնշելով և շեղով ահադինս, իբր այն թէ անդէն կլանել զնա կամիցին։ Իսկ սուրբն ծաղը արարեալ զնոսա ասէր. Եթէ էր 'ի ձեղ կարողութի, մինդ 'ի ձէնջբաւական էր յարձակիլ 'ի վերայ մարդոյ միոյ. այլ զի տկարք էք, այ բառնալով 'ի ձէնջ զգօրութի, Հնարիք բազմաժողով խուժանաւ զիս ահաբեկել։ Արդ՝ Եթէ 'ի տնէ տուել է ձեղ իշխանութի յիմ վերայ, աւասիկ եմ, ծախեցէք զիս. ապա թէ իշխանութի ոչ ունիք կամ հրաման յայ, զի՞ աշխատիք տարապարտուց։ Ահա բարւոք տեսանել է յայսմ զխաղաղութին և զարիութին մեծ՝ զոր 'ի նը հայրն Անտօն ներգործէր դիտելն թէ առանց այ կամացն առնել ինչ ոչ կարէին, և ինքն յայն կամս միաբան կայր։ Այսպիսի օրինակս բաղումս ունիմք յեկեղեցական պատմութիս, որպէս և յաղագս նը հօրն իգնատիոսի պատմի, թէ 'ի նաւել նորա երբեմն 'ի հոռվմ, յարեաւ մրրիկ սաստիկ՝ մինչև խորտակիլ կայմին 'ի հողմոցն բռնութէ, և կտրատիլ բազում պարանաց. և ամենեցուն յահի ըմբռնեալ պատրաստէին առ 'ի մահ, իբր զժամ օր հասին մերձ տեսանելով։ Յայնմ բազմավունդ վայրի՝ ուր ամենեքին 'ի դողման կային առ մահուն տագնապի, նը հայրն աներկիւղ կայր, մի ևեթ խիղճ զայն ու

նելով, զի թուէր նմա՝ ոչ ըստ արժանուոյն ծառայեալ Այ, որչափ պարտն էր . իսկ յայլում ամենայնի ոչ ունէր երկիւղի պատճառ . \* Զի հողմք և ծով հնազանդին սմա : || (Մատթ . ը . 27:) Առանց այ հրամանի և կամացն ոչ ամբառնան ալիք, ոչ փոթորիկք, և շկարեն հեղձուցանել զգք :

Արդ՝ յայս մտերիմ և որդիական վստահութիւն առ Ած, և յայս անդորրութիւն և աներկիւղութիւն ժամանել շնորհօքն այ՝ փութալի է մեղ, կրթութե համակամութեն ընդ Այ, 'ի խօրս անդր իջանելով աղօթիւք, և մոտածութե ամենառատ խնամակալութեն այ առ մեղ՝ հայրականին և առանձնաւորին : Հաւաստեալ զիստեմ ես՝ զի ոչ մի ինչ կարէ պատահել, և ոչինչ ընաւ զօրեն առնել ինձ մարդիկ, կամ դեք, կամ այլ ինչ արարած, առաւելքան զոր ած կամիցի, կամ թողացուցէնոցա . հապա, լիցի յիս այդ վաղլաղակի, ոչ հրաժարեմ, և ոչ զայլ ինչ կամիմ բայց զկամ Այ:

Ընթեռնումք յաղագս սրբուհւոյն Գելտրուտայի, թէ զհաստատութիւննորա և զանվեհեր վստահութին՝ զոր ունէր յամենախնամողորմութին Այ, ոչ երբէքնուազնցուցանել կարացին՝ ոչ վտանգք, ոչ նեղութիք, ոչ կորուստ ընչից, ոչ այլ խափանարարք, այլև ոչ մեղք և սկակասութիք իւր . քանզի վստահացեալ էր աներկբայա-

պէս՝ թէ ամենայն ինչ յաջողակ կամընդ  
դիմակ դառնային՝ ինորա բարին յանձային  
տեսչութէն։ Աւ Տքն ասաց միանդամ առ  
այս նը կուսան։ անկասկած ապաւինու  
թէն՝ զոր ունի մարդ առիս, հաւատալուլ  
թէ խակապէս կարօղ եմ, դիտեմ և կամիմ  
անվրէպ օգնել նմա յամենայնի, ընդ սիրո  
իմ հարկանի, և այնպէս բուռն առնէ  
խուման գթութե, մինչ զի ըստ իրաց ինչ  
կասիմ առնել նմա շնորհս՝ սակա ախորժ  
մանցն զոր յանձին զգամ 'ի տեսանելն զնա  
կախեալ զինէն, և զի առաւելուցուն վաս  
տակը նորա. բայց և չկարեմ անտես առ  
նել՝ ի շնորհաց իմոց, և ոչ հատուցանել  
որպէս եսս կամիմ, և ըստ մեծի սիրոյն  
զոր ունիմ առ նա։ Խօսի ած ըստ մերում  
եղանակի, որպէս թէ՝ ի սիրոյ կալանա  
ւորեալ իցէ։

Պատով յաղագս սրբուհւոյն Մեղիլ  
դեայ, թէ ասաց նմա Քն։ Մեծապէս հա  
ճոյ է ինձ տեսանել՝ զի մարդիկ վստահա  
նայցեն՝ ի բարութի իմ, և բարւոյ ակնու  
նիցին. զի որ միանդամ ունիցի առ իս խո  
նարհ ապաւինութիւն, դտանիցէ յինէն  
շնորհս՝ ի կեանս յայս, և 'ի հանդերձելումն  
բարի արարից նմա՝ առաւել քան զար  
ժան իւր։ Որչափ առաւել բարեյոյս լինէն  
ցի ոք առիս, նոյնչափ առաւելադոյն ընդու  
նիցի. զի անհնար է թէ ոչ առնուցու մարդ  
յինէն զայն ինչ զօր արժանապէս հաւա  
տայցէ և յուսասցի ընդունել. որովհետեւ

ես ինքն խոստացեալ եմ զայն : Վասն այսօրիկ օգուտ է մարդոյ՝ զի յուսալով և սպասելով յինէն մեծամեծ բարեաց , յիս վստահացեալ կայցէ : Նա ինքն սրբուհին Մեղիլտա հարցեալ առ Ք՛ն, որ իցէ պատճառ զլսաւոր առ' ի հաւատալոյ յանձառ բարութիւն նորա , լուսաւ պատասխանի . Հաւատան աներկմիտ՝ թէ այնպէս ընկալաց դքեղ յետ մահու քո , որնպահ հայր ընդունի զիւր ամենասիրելի որդեակ . և ոչ գտաւ երբէք հայր այնչափ հաւատարիմ 'ի բաշխել զստացուածս իւր միակ որդւոյն , որպէս ես հաղորդեցից քեղ զըովանդակ զիմբ բարիս , և զիս ինքն : Որոք հաստատութեք և խոնարհ սիրելութեք հաւատայ այսմ յիմմէ բարութէ , երանելի լինիցի :

## Գ Լ Ո Ւ Խ ԺԱ.

Յաղագս աւեղեաց ինչ և օրինահաց նի  
գրոց՝ որովհ օգնիմք սպանալ զայս  
մուշտութեան և զորդիական վագան  
հութեն առ լուծ :

**Կ**յախառաջին արժան է տեսանելզհասարակաց սովորութիւն Նահապետացն առաջնոց , որք ԱՅ ընծայէին զամենայն զպատահմունս՝ ընդ որ ճանապարհ , կամ ընդ որ ձեռն և դային : Պատմէ սրբազն

գիրն, 'ի ծնունդս . զլ. խե . թէ եղբարք  
 Յովսեփու մեկնեալք հանդերձ ցորենովն  
 զոր գնեցին յեղիպտոս, և զի Յովսէփ պա-  
 տուիրեալ էր իւրում հաղարապետին՝  
 դնել՝ ի բերան քրձի իւրաքանչիւր զարծա-  
 թըն՝ զդին ցորենոյն այնպէս կապեալ, որ-  
 պէս և բերեալն էին, 'ի դադարել նոցա  
 յիշաւանի ուրեք, կամէին տալ կերակուր  
 դրաստուցն 'ի ցորենոյ անտի զոր տանէին.  
 և մին 'ի նոցանէ բացեալ նախ զբուրձ իւր՝  
 ետես անդէն զծրար արծաթոյն, և պատ-  
 մեաց այլոցն . որոց և բացեալ զիւրաքան-  
 չիւր քուրձ՝ զտին նոյնպէս զարծաթ իւր-  
 եանց : Ասէ անտանօր գիրն, թէ շիոթեալ  
 նոցա յիրեարս ասէին . \* Զի՞նչ է այս  
 զոր արար ընդ մեղ ԱՃ : || Ե' արդարեւ  
 կշռելոյ արժանի, զի ոչ ասացին . դաւ է  
 այս՝ նիւթեալ մեղ, զբարտութիւն ինչ  
 ծածկեալ կայ աստանօր : Ոչ ասացին, թէ  
 յանհոգութէ հաղարապետին մնացեալ է  
 արծաթն իւրաքանչիւր յիւրում քրձի .  
 ոչ ասացին, թերեւս կամեցաւ ողորմութի-  
 առնել մեղ արծաթովն : Այլ այ ընծայե-  
 լով զգործն՝ ասացին . զի՞նչ կամիցի այս լի-  
 նել՝ զոր արար ընդ մեղ ԱՃ, խոստովա-  
 նեալք թէ քանզի և տերեւ անգամ ծառոյ  
 ոչ շարժի առանց կամաց այ, ապա և այս  
 դործ ոչ է հանդիպեալ բայց ըստ այ կա-  
 մացն :

'ի գնալն Յակոբայ յեղիպտոս, յայց  
 ելեալ նմա Յովսէփ որդւովն իւրովք ,

Եհարց լնա ծերունին, սոքա զի՞նչ են քո: Ետ  
 պատասխանի. \* Որդիք իմեն, զոր ետ ինձ  
 Ած աստ. || ( ԽԸ. 9 : ) Նա ինքն Յակոբ  
 յորժամ ընդառաջ ելեալ եղքօր իւրում  
 Եսաւայ, հարցաւ ինմանէ յաղագս ման-  
 կանցն զոր ածէր, արար պատասխանի.  
 \* Մանկունք իմեն, որովք ողորմեցաւ Ած  
 ծառայի քում: || ( Ըկ. 5 : ) Եւ ի մատու-  
 ցանել նմա պատարագս ինչ, ասաց. \* Առ  
 զօրհնութիւնս իմ զոր մատուցի քեզ. զի  
 ողորմեցաւ ինձ Ած, և է իմ ամենայն ինչ: ||  
 ( Ըկ. 11 : ) Օրհնութի այ կոչէ զընծայսն.  
 զի օրհնելն այ՝ է բարիս առնել. և ասէ  
 թէ տուիչ ամենայն իրաց՝ նա է: Եւ դար-  
 ձեալ, յորժամ Դաւիթ դնայր ծանրա-  
 ցասումն՝ յապականել զտուն Նաբաղայ,  
 կին նորա Աբիգիա աճապարեալ ընդա-  
 ռաջ Դաւիթի պատարագօք հանդերձ առ  
 'ի ցածուցանելոյ զնա, ասաց Դաւիթ.  
 \* Օրհնեալ տր ած խրայէլի, որ առա-  
 քեացն զքեզ այսօր այսր ընդառաջ իմ...  
 շերթալ յարիւն: || ( ա . թագ . իե . 32 : )  
 Իբր ասել կամէր. ոչ եթէ դու եկիր առ  
 իս, այլ ած առաքեաց զքեզ՝ արդելուլ  
 զիս 'ի մեղանչելոյ. նմա եմ պարտապան  
 վասն այսր շնորհաց, և եղիցի նա օրհնեալ:  
 Այս հասարակաց բարբառ էր սրբոցն այ-  
 նոցիկ, և սոյն արժան էր լինել մերս:

Բայց առաւել մօտ եկեալ, սիրալի իմն  
 է առ մերս առաջարկութի պատմութին  
 յաղագս Յովսեփայ նահապետի՝ զոր յիշե-

ցաք . որ 'ի ստրկութիւն վաճառեցաւ ոմանց  
 վաճառականաց եղիպտոսի՝ յիւրոցն եղ .  
 բարց յուզելոց 'ի նախանձուէ , ոչ կամեւ  
 լով զի իշխան հրամանատար լինիցի նոցա  
 ըստ որում ցուցեալ էր յերաղի : Աակայն  
 նոյն ձեռնարկ՝ զոր կալան նոքա 'ի կործա  
 նումն Յովսեփիայ , զի մի իշխանութեն հա-  
 սանիցէ , արբանեկեաց ԱՆԴ առ 'ի վար ար-  
 կանել զխորհուրդս ածային յառաջատե-  
 սութեն , արարեալ զի լինիցի իշխան նո-  
 ցա , և ամենայն երկրին եղիպտացւոց :  
 Այսպէս խօսեցաւ նա ինքն Յովսէփի առ-  
 եղքարս իւր՝ յորժամ յայտնեցաւ նոցա , և  
 նոքա զահի հարեալ խոռվիցան ընդ իրսն :  
 \* Մի ինչ տրտմիք՝ ասէ , և մի խիստ թու-  
 եցի ձեղ զի վաճառեցիք զիս այսր . քանողի  
 'ի փրկութիւն առաքեաց զիս ած առաջի  
 ձեր . . . առ 'ի թողլոյ ձեղ զաւակ յեր-  
 կրի , և կերակրել զձեր մնացորդս մեծա-  
 մեծս : Եւ արդ՝ ոչ եթէ դուք առաքեցէք  
 զիս , այլ ԱԾ : || ( ծննդ . խե . 5 . դ . 8 : )  
 Եւ զինի ասէր դարձեալ . ( ծ . 19 . )  
 \* Դուք խորհեցարուք զինէն 'ի չարութիւն ,  
 և ԱԾ խորհեցաւ վասն իմ 'ի բարութիւն .  
 որպէս եղեւ խկ յաւուրս յայսմիկ , զի  
 կերակրեցի ժողովուրդ բազում : || Արդ՝  
 ո՞ոչ ապաւինեացի յԱԾ օրինակաւս այ-  
 սու . ո՞ երկիցէ 'ի խորհրդոց մարդկան , և  
 'ի փորձանաց աշխարհի , գիտելով զի յար-  
 մարեալք են 'ի բարի , և զան 'ի ձեռանէն  
 այ : Զայն հնարս՝ զոր մարդիկ 'ի ձեռն

առնուն առ 'ի հալածելոյ զմեղ, և չարիս  
հասուցանելոյ, Ած 'ի գործ արկանէ առ  
'ի մեր բարին և յառաջադիմութիւ: \* Ամե-  
նայն խորհուրդը իմ հաստատեսցին. և ամե-  
նայն զոր կամիմ արարից, || ասէ բերանով  
եսայեայ ( խղ. 10 : ) Յածեաց զու յայս-  
կոյս և յայնկոյս. այլ 'ի կատարածին հարկ  
է կատարիլ կամացն այ . նա զամենայն  
զձեռնարկս ուղղեացէ յայս վախճան :

Սբ Ոսկեբերանն յուշ առնէ միւս ևս  
հանգամանս 'ի պատմութեն Յովսեփայ՝  
անկաւոր մերում առաջարկութես . զբոյց  
արկեալ զմատուուակէն փարաւոնի՝ թէ  
զիաքդ յետ հաստատելոյ անդրէն յիշխա-  
նուե իւրում մոռացաւ զ Յովսէփ՝ զմեկ-  
նիչ երազոյն իւրոյ զամն երկուս , թէպէտ  
և խնդրեալ էր կողկողագին յիշել զնա և  
միջնորդել առ փարաւոն : Համարիցիս  
արդեօք , ասէ նը վարդապետն , թէ առ  
դիպուածոյ լեալ իցէ մոռացումնս . ոչ  
դիպուած , այլ խորհուրդ և տնտեսութիւ  
այ էր , որ սպասէր դիպօլ ժամանակի և  
պատեհութե առ 'ի հանելոյ զ Յովսէփ 'ի  
բանտէ անտի մեծաւ պատուով և շրով .  
վասն զի եթէ մատուուակն յիշէր զնա փու-  
թով , թերեւս իւրով իշխանութեն աղա-  
տեալ էր զնա՝ լսիկ մնջիկ , առանց լսելոյ  
և տեսանելոյ զնա փարաւոնի : Բայց զի  
Այ կամք էին՝ ոչ այնպէս ելանել նմա-  
յարդելանէն , այլ մեծաշուք և իշխանա-  
քար , թոյլ ետ մոռանալ զնա մատուա-

կին ամս երկուս . որպէս զի հասանելով  
դէպ ժամանակի երազոցն փարաւոնի , 'ի  
ստիպելոյ իրացն նորին հրամանաւ եղանի-  
ցէ մեծափառութք , որ և եղե իսկ՝ առ . 'ի  
լինելոյ տր բոլանդակ երկրին եղիպտաց-  
ւոց : Քաջ գիտէ ԱՃ , ասէ Ոսկերերան,  
իբրև ամենիմաստ արուեստաւոր՝ քանի  
ժամանակ պիտի 'ի հուր կալ ուկւոյ , և  
Երբ հանել զայն արտաքս :

Ունիմք յառաջին գիրս թագաւորաց  
միւս ևս պատմութի , յորում առաւելա-  
պէս բացափայլէ տեսչուին ԱՅ յիրս մա-  
նունս և դուշնաքեայս : Ասացեալ էր ԱՃ  
առ մարդարէն Սամուէլ , թէ ցուցանե-  
լոց է նմա զայր ոք 'ի լինել թագաւոր իս-  
րայէլի , զոր և օծանիցէ . \* Վաղիւ 'ի սոյն  
ժամ առաքեցից առ քեզ այր յերկրէն բե-  
նիամենի , և օծես զնա իշխան 'ի վերայ ժո-  
ղովրդեան իմոյ իսրայէլի : || ( Գլ . թ . 16: )  
Խակ առաքելոյն եղանակ եղե այսպիսի .  
կորնչին էշք հօրն Սաւուղայ , և ասէ ցորդի  
իւր՝ գնալ 'ի խնդիր իշոցն . առնու սաւուղ  
ընդ իւր զմի 'ի ծառայիցն , և գնան ընդ  
դաշտս և ընդ բլուրս , և ոչ գտանեն ինչ  
նշան : Կամեցաւ Սաւուղ դառնալ յետս ,  
կասկածեալ գուցէ յերկար դեղերելով  
հայր իւր 'ի հոգս լինիցի վասն իւրեանց .  
այլ ծառայն ասէր՝ մի դառնալ 'ի տուն  
առանց իշոցն . և զի կայր յերկրի անդ այր  
ոմն ԱՅ , որ էր Սամուէլ Մարդարէն ,  
առ նա երթիցուք ասէ , և պատմեսցէ մեզ

յաղագս իշոցն։ Այսու պատճառանօք չու-  
քան նոքա դտանել զԱմուէլ . և իբրե-  
մերձ եղեն առ մարդարէն, ասէ ցնա ԱՃ .  
\* Ահաւադիկ է այրն՝ զորմէ ասացի քեզ՝  
եթէ նա իշխեսցէ ժողովրդեան իմում : ||  
(թ. 17 : )

Բարէկ ծածուկ դատաստանաց ԱՅ .  
Հայրն առաքէր զսաւուղ՝ ի խնդիր իշոցն .  
իսկ ԱՃ առաքէ զնա առ Սամուէլ՝ օծա-  
նել ՚ի թագաւոր : Ո՞չափ այլաղան են  
խորհուրդք մարդկան ՚ի խորհրդոց այ .  
քանի օտար էր ՚ի մտաց սաւուղայ և հօր  
նորա՝ երթալ յօծումն թագաւորութե :  
Ո՞վ , ո՞չափ օտարաբար խորհիս բաղում  
անդամ և դու , և հայր քո , և մեծաւոր քո ,  
քան զոր տնտեսէ ԱՃ . որում ոչ այնչափ  
միտ զնես դու , անտի իսկ կազմէ ԱՃ զոր  
ինքն կամի : Ո՞չ առանց այ կամացն կո-  
րեան էշքն . ո՞չ ըստ դիպուածոյ եղև չգոտա-  
նել զնոսին սաւուղայ , կամ խրատ պա-  
տանւոյ ծառային երթալ հարցանել ըդ-  
մարդարէն վասն նոցա . այլ էր ամենայնն  
կարդաւորութի և խորհուրդ ԱՅ , որ ընդ  
այսպիսի ճանապարհ առաքէր զսաւուղ  
առ Սամուէլ առնուլ զօծումն թագաւո-  
րութեն , ըստ որում հրամայեալ իսկ էր  
նմա : Ապաքէն հայր քո խորհեցաւ առա-  
քել զքեղ յուսումն ՚ի Սիմիլիա , կամ ՚ի  
Սալամանքա , որպէս զի քաջ վարդապետա-  
ցեալ , յաջողեսցէ քեղ ելանել ՚ի պաշտօն  
ինչ և կեալ պատուականութք : Բայց

ու այնպէս վճարեցաւ . այլ ԱՅ առաքեաց  
գքեղ անդր ընդունել 'ի տուն իւր , և 'ի  
կրօնաւորուի : Յորժամ Օդոստինոս զնայր  
'ի հռովմայ 'ի միւան , խորհէր ինքն՝ որպէս  
և Ախմաքոս քաղաքապետ որ զնա առաքէր,  
զի երթեալ ուսանիցի զճարտասանութիւն :  
Բայց ու այն էր . այլ առաքէր զնա ԱՅ  
առ նրն Ամբրոսիոս , զի դառնայցէ 'ի մու-  
լորութեցն :

Զմտաւ ածցուք միանգամ զայլեայլ  
եղանակս կոչմանց , և զմանր մանր հանգա-  
մանս՝ երբեմն ըստ կարծելոյ մեր անյար-  
մարս իսկ , որովք ԱՅ 'ի կրօնաւորութիւն  
ձգեաց զայս ոք , և զայն : Հիացումն է ար-  
դարեւ . տեսեալ զի թէ ոչ հանդիպեալ էր  
այս ինչ մանրիկ պարագայ , կամ այն ինչ  
մնոտի իրք , ոչ եղեալ էիր դու կրօնաւոր .  
և սակայն բովանդակն խորհուրդ ԱՅ էր  
և ճարտարուի առ 'ի ձգելոյ գքեղ 'ի կրօ-  
նաւորութիւն : Յուշ լիցի այս իրքեւ 'ի հարեւ-  
անցի՝ առ այնոսիկ , որոց փորձութիւն հա-  
սանէ երբեմն՝ որպէս թէ իւրեանց կոչումն  
չիցէ յայ , այնու զի թեթև պատճառանօք  
ինչ յաջողեաց այն : Պատրանք են այդ  
դիւին՝ քոյոյ թշնամոյ , մախացելոյ ընդ  
վիճակն յոր գտանիս . ապա թէ ոչ սովո-  
րութիւն է ԱՅ 'ի կիր առնուլ զայնպիսի  
անցս առ վախճանն՝ զոր ինքն ընտրէ յիւր  
մեծագոյն փառս , և յառաւել բարին և 'ի  
շահ քո : Ո՛չ 'ի պատճառս իշոցն այնոցիկ  
վարէր ԱՅ . \* Միթէ զեղանց ինչ փոյթ է

90

այ : || ( ա . կորն . թ . 9 : ) ԱՅԼ կամի զի  
այսպիսի ճանապարհաւ հասցէ քեղ թա-  
գաւորել , որպէս Սաւուղայ . զի ծառայ-  
ելն այ՝ է թագաւորել :

Յետ այնորիկ՝ յորժամ Սամուել մար-  
դարէ գնաց յանձակոյս կողմանէ յանդիման-  
նել զ Սաւուղ ՚ի պատճառս անհնազան-  
դութեն՝ զոր գործեալն էր ոչ ննջելով զա-  
մաղէկ , ըստ որում ԱՅ հրամայեալ էր ,  
և յետ կշտամբելոյն՝ զմիկունս դարձու-  
ցեալ ՚ի բաց գնայր , Սաւուղ բուռն հա-  
րեալ կալաւ զկրկնոցէն Սամուելի , զի մի  
երթիցէ ՚ի բաց , այլ ը նմա աղօթեսցէ առ  
ԱՅ : Եւ ասէ գիրն ( ա . թադ . ժե . 27 . )  
թէ մնաց ՚ի ձեռին սաւուղայ կոտորակն  
կրկնոցին սամուելի ՚ի պատառմանէն : Ո  
ոչ համարիցի թէ այն պատառումն և բա-  
ժանիլ կոտորակին ՚ի կրկնոցէն Սամուելի  
բերումն էր դիպուածոյ , իբր զի սաւուղ  
քարշեաց զայն , և գուցէ հնոտի ևս էր :  
ԱՅԼ սակայն պատահեաց յառանձին  
տեսչութէն և ՚ի կարգմանէն ԱՅ , նշանա-  
կեալ այնու զմերժումն Սաւուղայ ՚ի թա-  
գաւորութէն վասն մեղաց իւրոց : Ուստի  
տեսեալ սամուելի զոր եղեն՝ ասաց . \* Պա-  
տառեաց Տի զմիագաւորութիդ ՚ի ձեռաց  
քոց յիսրայէլէ այսօր . և տացէ զդա ըն-  
կերի քում լաւագունի քան զքեղ : ||  
( ժե . 27 : )

՚ի նոյն յառաջին գիրս Թագաւորաց  
պատմի , թէ Սաւուղ պաշարեալ ունէր

միանդամ դՐաւիթ և զարս իւր՝ շուրջանակի, մինչ զի անյօյս լինելդաւիթի ապրեցուցանելը զանձն : Եւ ահա յայնմ անձկութեաւ պահու՝ հրեշտակ շուապաւ հասանէ առ Սաւուղ, ծանուցանելթէ փղտացիք մուեալ 'ի սահմանս իւր՝ աւար հարկանէին և աւերէին զամենայն ինչ . որովհարկ եղեւ սաւուղայ թողուլ զպաշարումնն , և ընթանալ 'ի կարեոր դործանդր , և այնպէս զերծաւ դաւիթ : Ահա ոչ չիպուածոյ եղեւ մուտ և արշաւանն փղտացւոց , այլ 'ի խորհրդոց ԱՅ ապրեցուցանել այնու զգաւիթ :

Յայլում նուագի նախարարք փղտացւոց հեռացուցին 'ի բանակէ իւրեանց զգաւիթ , բոնադատեալ զԱնքուս արքայ զի հրամայեսցէ նմա դառնալ 'ի տեղի իւր . թէպէտ և ինքն Անքուս մոադիւր տանէր զնա ընդ իւր , կարի վստահացեալ 'ի նա : \* Յաչս նախարարացն ոչ թուիս դու բարւոք : || (իթ . 6 : ) Կարծի թէ դիպուածովիցէ այն խորհուրդ նախարարացն . ոչ այդպէս , և ոչ վասն այնր պատճառի զոր նորայն խորհէին , այլ առանձին տեսչութեամբն ԱՅ : Վասն զի դարձ արարեալ Դաւիթի , ետես զի ամաղեկացիք այրեալ էին զսիկելակ քաղաք իւր , և 'ի զերութիւնարեալ էին զամենայն կանայս և զման կունս 'ի փոքուէ մինչև ցմեծ , այլև զկանայս խակ դաւիթի : Զկնի պնդեցաւ նոցադաւիթ , և կոտորեաց զնոսա , թափեալ

յինքն զամենայն աւարն և զգերին, ոչ  
պակասելով և ոչ միոյ ուրուք. զոր ոչ կա-  
րօղ էր առնել դաւիթ, եթէ նախարարք  
ոչ հեռացուցեալ էին զնա 'ի բանակէ  
իւրեանց : Ահա 'ի սոյն պատճառ կար-  
դեաց Ած զայն իրատ, թէպէտև նոքա  
զայլ դիտաւորութիւ ունէին :

Նաև 'ի պատմութեան Եսթերայ ակն  
յայտնի երեխ առանձին տեսչութին Այ  
'ի մանրամասն իրս : Ո՞րչափ տարօրինակ  
էին եղանակն 'ի կիր առեալք յայ առ 'ի  
աղատելոյ զհրէական ժողովուրդն յանո-  
զորմ հրամանէ Արտաշեսի արքայի : Որով  
ճանապարհաւ ընտրեաց զԵսթեր 'ի թա-  
գուհի, 'ի բաց հանելով զԱսթինէ . և 'ի  
հրէական ազգէ կամեցաւ լինել նմա, զի  
միջնորդ վասն հրէիցն լինիցի առ յապա :  
Կարծի դիպուածով իմն դիտացեալ  
Մուրգքէի զդաւադրութիւ ոմանց այլոց  
նիւթեալ ընդդէմ Արտաշիսի, և նորա  
յայտնել զայն, և արքայի անքուն լինել  
զդիշերն, և տալ ընթեռնուլ զմատեան  
յիշատակաց ժամանակի իւրոյ՝ զի սթա-  
փեսցի, և հանդիպիլ ընթերցուածոյն որ  
յաղադս դործոյն մուրդքէի : Այս ամե-  
նայն ոչ դիպուածովինչ անցանէին, այլ  
գերազանց խորհրդովք Այ, և առանձին  
տեսչութին, կամելով այսոքիւք նպաս-  
տիւք փրկել զժողովուրդ իւր : Զայս նա  
ինքն մուրդքէոս առաքեաց ազդ առնել  
Եսթերայ, որ ոչ իշխէր մտանել և խօսել

առ ալքայ, իբր զեւ չեր կոշեցեալ, ասէ .  
\* Եւ ո՞ իսկ գիտէ եթէ 'ի ժամանակի  
յայսիկ թագաւորեցեր . || (Դ. 14.) ասել  
կամի . ո՞ գիտէ՝ վասն այն թագաւորեցեր  
յայսմ ժամանակի , զի կարիցես ձեռն  
տալ յառաջնկայ վտանգիս :

Բաղում են այլեւս այսպիսի օրինակք 'ի  
ոք Գիրս , և յեկեղեցական պատմութիս ,  
որով խրատիմք՝ Այ ընծայել զամենայն  
պատահմունս , և յանձն առնուլ զնոյնս  
իբրև 'ի ձեռանէ այ եկեալս 'ի մեծադոյն  
բարի և 'ի շահ մեր : Պատմի 'ի գիրս Տե-  
ղեկութեց սբյն Կղեմայ գործ ինչ յարմար  
'ի մեր առաջարկութի : Սիմոն մոդ յան  
դիմանեալ լինէր 'ի սբյն Պետրոսէ . և 'ի  
հռովմ նբն Բառնաբաս դարձուցեալ էր  
'ի հաւատոս ղկղեմէս , որոյ գնացեալ առ  
նբն Պետրոս , ծանոյց նմա զդարձումն իւր,  
և խնդրէր մարզել 'ի բանս հաւատոյ . ասէ  
նմա նբն Պետրոս . 'ի դէպ ժամու հասեր .  
վասն զի սահմանեալ է առ վաղիւ վիճել  
ինձ հրապարակաւ ընդ սիմոնի մոդի . անդ  
տեսանիցես զմեղ , և լուիցես զոր կամիս :  
Եւ 'ի ժամուն մտին երկու աշակերտք առ  
նբն Պետրոս և ասեն . Սիմոն առաքեաց  
ասել՝ թէ գործ ինչ 'ի վերայ հասեալ ,  
յապաղէ վիճաբանութիւնն այլեւս երիս  
աւուրս . ընդ որ հաճեցաւ և նբն Պետրոս .  
բայց տեսեալ զի կղեմէս տիսրեցաւ յոյժ ,  
ասէ ցնա . զի՞ է քեզ որդեակ , զի տիսուր  
տեսանեմ զքեղ : Ետ պատասխանի կղեմէս .

գիտեած հայր , զի կարի տրումեցայ ընդյան  
պաղումն վիճաբանուեն , որում ցանկայի  
առ վաղիւն լինելոյ : 'Ի փոքր դիպուածոյ  
աստի պատճառս առեալ նբն Պետրոս ,  
արար նմա բանս երկար ասելով . Գիտա-  
ցիր որդեակ , զի հեթանոսաց է՝ 'ի ըաջո-  
ղել իրացն ըստ իւրեանց կամի՝ վրդովիլ  
սաստիկ . բայց մեք որք գիտակ եմք թէ Ած  
առաջնորդէ և տնտեսէ զամենայն , պար-  
տիմք կալ 'ի միսիթարութիւն մեծ և 'ի խա-  
ղաղութիւն . և գիտեած որդեանկ իմ , զի յա-  
ռաւել բարի քեղ եղեւ այս . վասն զի եթէ  
արդ լեալ էր վիճաբանութիւն , ոչ բարւոք  
խմանայիր դու , բայց յետ աւուրց լաւ ևս  
խմանայցես . զի յայս միջոց ժամանակի  
հրահանգեցից դքեղ , և յետոյ առաւել  
հասու լինիցիս , և առնիցես պտուղ  
առատ :

**ԱՅԼ** կնքել կամրմ զքանս օրինակաւ  
ինչ 'ի մերոց աստի , զոր ունիմք 'ի վարս  
նբ հօրն իգնատիոսի , և պայծառ երեխ 'ի  
նմա ասացեալս մեր . այն է՝ յաղագս գնա-  
լոյ նբ հօրն Ֆրանչիսկոսի քսավլերեան յար-  
ևելեան հնդիկս . արդարե արժանի խորհե-  
լոյ են եղանակքն՝ որովք եղեւ գնալ առնս  
այ 'ի հնդիկս : 'Ի առյն առաքելուի անուա-  
նեաց նբ հայրն իգնատիոս զերկոսին հարս  
զ Ախմոն ռոտրիկվեց , և զՆիկողայոս պո-  
վատիկլիս : Առաջնն թէպէտե կրէր  
դտենդ քառօրեայ , եմուտ վաղվաղակի 'ի  
'ինաւ դէպ 'ի Փորդօկալ . և առ երկրորդն

զրեցաւ՝ դալ՝ ՚ի Կալապրիայէ՝ ՚ի հռովմ՝ .  
 որ և եկն, բայց տկարացեալ՝ ՚ի չքաւու-  
 րութէն, ՚ի վշտաց և յաշխատութեց ձաւ-  
 նապարհին, հիւանդագին և ցաւազնեալ  
 ՚ի միում ոտին . մինչ զի յորժամ եհաս ՚ի  
 հռովմ, և ղեսպանն Պետրոս Մասկարեք-  
 նաս ՚ի նմին ժամանակի պատրաստեալ էր  
 դառնալ՝ ՚ի Փորդօկալ, ոչ կարացեալ  
 սպասել առողջանալոյ նորա, բայց չկամե-  
 լով ևս մեկնիլ առանց այլոյ քարոզի ,  
 հարկ եղե փոխանակ հօրն Պովատիկլեայ  
 դնել զհայրն Ֆրանչիսկոս քսավէրեան՝ բա-  
 րերաշդիկ վիճակաւ . որ և ուղեկից եղե  
 վաղվաղակի ընդ Դեսպանին ՚ի Փորդօկալ:  
 Դիպուած իմն կարծի այն՝ զի ոչ նախ  
 որոշեալ Քսավէրեանն, այլ Պովատիկլիա,  
 ապա ՚ի պատճառս փութով ուղեկորութեն՝  
 տոեղին փոխանորդեաց Քսավէրեանն .  
 բայց ոչ այնպէս է, այլ՝ ՚ի մեծ խորհրդոցն  
 ԱՅ, որ սահմանեալ էր առնել զնա Առա-  
 քեալ գաւառացն այնոցիկ : Եւ այն դար-  
 ձեալ, զի հասեալ նոցա ՚ի Փորդօկալ,  
 և տեսեալ զըազմապատիկ պտուղն՝ զոր  
 առնէին, կամեցան արգելուլ զնոսա անդ.  
 մինչև որոշեցաւ միումն ՚ի նոցանէ անդէն  
 դադարել, և միւսումն անցանել ՚ի հըն-  
 դիկս : Եւ ահա միւսանդամ ընդ պատահ-  
 մամբ իմն անկանիլ գործառնութեն . այլ  
 առ ԱՅ չիք պատահումն. բայց հուսկ յե-  
 տոյ վիճակեցաւ Քսավէրեան հօրն անցա-  
 նել ՚ի հնդիկս . զի այն էին կամք այ, և

այնպէս սահմանեալ էր Տէրութիւնորա,  
իբր պիտանի առ ՚ի շահ հոգւոցն այնոցիկ՝  
և ՚ի մեծ փառս իւր : Ապաքէն դիցեն մար-  
դիկ ՚ի մլոս որ զինչ և կամին, և յառաջ  
վարեսցեն ընդ ճանապարհ զոր ախորժեն .  
այլ ԱՃ զնոյն զայն առնուցու գործի կա-  
տարելց զինորհուրդս իւր, և զի առնիցէ  
զայն՝ որ առաւել պատշաճ է քեզ, կամ  
այսմ և այնմ, միանդամայն մեծադոյն փա-  
ռաց իւրոց դիպող :

Արդ՝ այսոքիւք, և այլովք ևս նման տա-  
րացուցիւք՝ թէ ՚ի նը զրոց, և թէ յորոց  
հանապաղ տեսանեմք և զփորձ առնումք  
յայլս և ՚ի մեզ ինքեանս, պիտոյ է ջան  
դնել ՚ի հաստատել և ՚ի տպացուցանել ՚ի  
սրտի մերում զրդիականն ապաւինութիւն  
ազօթիւք և մոտածութիւն, և յայսմ կը թու-  
թե պարտիմք կալ անդադար, մինչեւ զգայ-  
ցեմք ՚ի սրտի զառաւել ընդելական և զրո-  
դիական վստահութիւն առ ԱՃ : Գիտեա  
ստուգիւ, զի որչափ մեծ ապաւինութիւն  
ընկենուս զբեղ ՚ի ձեռս այ, այնչափ ա-  
ռաւել անկասկած լինիցիս . և ընդ հա-  
կառակն՝ մինչեւ ժամանեալ քո յայս որ-  
դիական վստահութիւն, ոչ ունիցիս ընաւ  
զիսաղաղութիւն ճշմարիտ և զանդորրութիւն  
սրտի . զի առանց այնը՝ ամենայն ինչ խռո-  
վեսցէ զբեղ և լքուցցէ : Ապա մի այլևս  
յապաղեսցուք արկանել զմեզ բովանդակ  
՚ի ձեռս այ, և ՚ի նա վստահիւ . որպէս  
խրատէ նը առաքեալն Փետրոս . \*

Զամե-

նայն հոդս ձեր ընկեցէք 'ի նա . զլ նա է որ  
հոգայ վասն ձեր : || ( ա . պետ . ե . շ : )  
Այլև մարդարէն . ( Սաղմ . ծդ . 23 . )  
\* Ընկեա 'ի Տը դհոգս քո , և նա կերակրէ  
զբեղ : || Դաւ Տը , ցայնվայր սիրեցեր զիս ,  
մինչև ետուր զբեղ վասն իմ բոլորովին 'ի  
ձեռս անողորմ դահճաց՝ առնելընդ քեղ  
զինչ և կամլցին . որպէս և տաէ Ղուկ .  
( իդ . 25 . ) \* Եւ զ Յա մատնեաց կամաց  
նոցա : || Զբնչ մեծ իցէ՝ եթէ ես տաց զիս  
և արկից բովանդակ ոչ յանողորմ ձեռս ,  
այլ 'ի դորովականս՝ որպիսի են քոյդ . որնչ  
դի առնիցես ընդ իս որ ինչ քեղ հաճոյ է ,  
աներկրայ գոլով թէ այն լիցի ինձ լաւն և  
առաւել վայելքական : Յանձին կալցուք  
և մեք զայն դաշն՝ զոր Քն փրկիչ մեր արար  
ընդ սրբուհոյն Կատարինեայ սենացւոյ .  
որում բաղում գորովանս առնելով Տը , և  
պարզես , ընդ որս և զգերազանցն զայն  
եցոյց՝ երևել նմա յաւուր միում և ասել .  
\* Դաւստր , դու զինէն խորհեսջիր , և ես  
զքէն խորհեցայց հանապազ : || Ո' , դեղե .  
ցիկ է դաշնս , փոխանակութիւն մեծ իցէ այս վասն  
անձանց մերոց : Ահա զդաշն այսպիսի տռ .  
նէ Տը ընդ իւրաքանչիւր 'ի մէնչ . մոռա  
դու զբեղ . թող 'ի բաց զխորհուրդն քո .  
և որչափ տռաւել մոռանայցես զանձնդ՝  
առ 'ի յիշելոյ զան , և 'ի նա ապաւինելոյ ,  
նոյնչափ մեծ արասցէ զիւր ինամն 'ի վե .  
բայ քո : Արդ՝ ոչ առնուցու յանձն զիւ .

ըողական զայս և զահաւելու դաշն . որ և  
այն է եղեալն հարսին ընդ իւրումն փե-  
սայի , \* Ես եղբօրորդւոյ իմոյ , և առ իս  
դարձ նորա : || ( Երգ . է . 10 : )

### Գ Լ Ո Ւ Խ ԺԲ.

Ու է ո՞րչո՞վ օգտահար և հափաքեալ է յա-  
բել զազօննն ընդ իրնութե համակա-  
մութեան ընդ լուսուծոյ , և զիարդ  
պիտոյ է իջանել յիշ մանունս , մինչեւ  
ժամանել յերբորդ աստիճան համակա-  
մութե :

**Պ**ատմէ Յովհաննէս բուսպրոքիոս այր  
գիտնաւոր և բարեկրօն՝ յաղագս սրբասէր  
կուսի միոջ , թէ համարս տալով վասն աղօ-  
թից իւրոց՝ խոստովանահօր իւրում և  
հօրն հոգեսորի , որ և էր մեծ ծառայ Այ  
և աղօթական յոյժ , կամէր ուսանել ՚ի  
նմանէ , և ասէր թէ զկրթութի իւր յա-  
ղօթս առնէր ՚ի վերայ վարուց և չարչարա-  
նաց Քնի փրկչին մերոյ . յորմէ առնոյր  
պտուղ՝ ճանաշել զանձն և զախտս և զկիրս  
իւր , այլև ցաւ և կարեկցութի ընդ չար-  
չարանս Քնի : Ասաց խոստովանահայրն .  
արդարե բարի է այդ . բայց կարօղ է ոք  
առանց երեելի առաքինութեն ունել կա-

բեկցուի և աղէտս ընդ Քնի շարչարանան ,  
 երբ այն որ 'ի սիրոյ լոկոյ ոք՝ և 'ի բնաւոր  
 ըղձմանէն զոր ունի առ բարեկամն՝ կարե-  
 կից լինիցի վշտաց նորա : Եհարց կոյսն .  
 եթէ ոք լսյցէ դօրհանապաղ դմեղս իւր ,  
 իցէ՞ այս ճշմարիտ բարեպաշտութի : Ետ  
 պատասխանի խոստովանահայրն . և այդ  
 նոյնպէս բարի է , բայց ոչ գերազանց . քան .  
 զի երք զաղերք բնաբար իմն բերեն զգուանս  
 և զգժկամութի : Կրկին եհարց կոյսն .  
 եթէ իցէ՞ ճշմարիտ բարեպաշտութի խոր-  
 հել զպատիժս դժոխոց , և զփառս ալքայու-  
 թե : Ետ պատասխանի . և ոչ այդ է գեր-  
 ամբարձ և վսեմական ինչ . վասն զի բնու-  
 թին ինքնին զարհուրի և խորշի 'ի տաղտ-  
 կալեացն և 'ի ցաւեցուցչաց , և սիրէ և  
 խնդրէ զախորժականն և զփառաւորս .  
 մինչ զի եթէ առաջի նկարէին ինքեան  
 զքաղաք մի զուարձալի և բազմավայել , ա-  
 պաքէն ցանկայր և այնմ : Յայսպիսի բա-  
 նից գնաց սրբասէր կոյսն անմիսիթար և  
 նեղեալ , ոչ դիտելով յո՞ր իրս պարապե-  
 ցուցանել զիւր աղօթման՝ որ առաւել հա-  
 ճոյ իցէ Այ : Յետ սակաւուց երեւեցաւ  
 նմա մանուկ մի գեղեցիկ , որում պատմեաց  
 կոյսն զիլշտս իւր՝ իւր անփարատելիս իմն  
 կարծելով : Ասէ ցնա մանուկն . մի այդպէս  
 խօսիր . գոյ քել միսիթարիլ . երթ ասա  
 ցհայր . քո հոգեւոր : Բարեպաշտութիւնն  
 ճշմարիտ հաստատեալ կայ յուրանալ և  
 յարհամարհել զանձն , և նուիրիլ բովան-

դակ՚ի ձեռոս ԱՅ, յամենայն իրս՝ի տրա-  
մականսն՝ որպէս՝ի յաջողականս, պնդա-  
պէս յած միացեալ սիրովն, և լծորդեալ  
զիւր կամս ողջոյն ընդ կամաց ԱՅ յիրս  
ամենայն : Խնդալից եղեալ կուսին, չո-  
քաւ պատմեաց զայս հոգեոր հօր իւրում.  
որ և ետ պատասխանի . ահա այդ է խըն-  
դրելին, և՝ի դոյն ունիս պարապեցուցա-  
նել զաղօթս. վասն զի յայդմէ ճշմարիտ  
սէրն այ, յորմէ և մերն զարգանալ և կա-  
տարելութի :

Ասի և յաղաղս այլոյ ուրումն Արբու-  
հւոյ, թէ ուսոյց նմա ԱՃ յաճախ կրկնել  
զայն բան տէրունական աղօթիցն. \* Եղե-  
ցին կամք քո որպէս յերկինս և յերկրի : ||  
Եւ վասն սբյ կուսին Գետրուղայ պատմեն  
թէ շարժեալ առ՝ի յայ կրկնեաց երբեմն  
երեքհարիւր վաթսուն և հինգ անդամ  
զբանն Քնի . Ո՛չ իմ կամք, այլ քոյդ լոցի.  
և գիտաց թէ մեծապէս հաճոյ եղե այն  
ԱՅ : Ապա զհետ երթիցուք և մեք օրինա-  
կացս այսոցիկ,՝ի սոյն արկեալ՝ի կիր զա-  
զօթս մեր, և հանապաղորդեալք՝ի կրթու-  
թես յայսմիկ :

Բայց զի լաւ ևս յաջողեսցի այս և բա-  
ղում պտղով, երկու ինչ նախ ազդ տո-  
նել արժան է : Առաջին, թէ այս կրթու-  
թի հարկաւոր է առաւելապէս վասն ժա-  
մանակի ձախորդութեց, և՝ի հասանել  
գժուարին իրաց, և որ հակառակ են  
մարմնոյ մերում . վասն զի յայսպիսի դէպս

առաւել կարեոր է առաքինութին, և լաւ  
 ևս ցուցանի յայնժամ սէրն առ Ած։ Զոր  
 օրինակ, թադաւորն 'ի ժամանակի խաղա-  
 ղութեացանէ զիւրն բարերարութի առ  
 զօրականսն 'ի վարձատրելն և տալ պարդես-  
 նոցա, իսկ զօրականք 'ի ժամպատերազմի  
 ցուցանեն զիւրեանց սէր և զյարդ՝ մարտն-  
 չելով և մեռանելով վասն նորա : Սոյնպէս  
 թադաւորն երկնաւոր 'ի ժամանակի միսի-  
 թարութեաց և պարզեատրութեց տայ մեզ  
 ճանաչել որչափ սիրէ զմեզ . և մեք 'ի  
 վշտամբերութեաց առաւել՝ քան թէ 'ի բա-  
 րօրութեաց և 'ի միսիթարութեաց ցուցանեմք  
 որչափ սիրեմքն զնա : Վայելչաբար ասէ  
 հայրն Աւիլա վարդապետ, թէ գոհանալ  
 զնյ 'ի միսիթարութեաց ամենեցուն է . բայց  
 'ի վիշտս գոհանանալն և 'ի ձախորդութիւնս  
 սեպհական է բարեացն և կատարելոց, և  
 է սա երդաձայնութի ինչ ախորժալուր և  
 քաղցր 'ի լսելիս այ : 'ի ձախողական առա-  
 ւել արժէ միանգամ ասել, Գոհութիւն  
 Այ, կամ, Օրհնեալ է Ած, քան թէ 'ի  
 բարերախտութիսն հաղար գոհութիք և  
 օրհնութիք : Վ ասն այսորիկ ածային գիրն  
 դարդարսն օրինակէ 'ի կարկեհան՝ յասելն  
 Սիրաքայ. ( լը . 7 . ) \* Ակն կարկեհանի 'ի  
 դարդ ոսկւոյ . || քանզի այս քար ազնիւ՝ լոյս  
 տայ առաւել 'ի զիշերի քան 'ի տունջեան :  
 Սոյնպէս այր արդար, և ճշմարիտ ծա-  
 ռայն այ առաւել լուսափայլէ և ընտիր  
 հանդիսանայ 'ի նեղութիս և 'ի տառա-

պանս՝ քան՝ ի յաջողուածս : Այսու մասամբ գովէ նը գիրն զերանելին Տորիթ . Եբբ զի՝ ի թոյլ տալոյն այ՝ յետ այլոց բաղմաց տառապանաց կորուսեալ նորա և զտեսութին , ոչ տիրեցաւ ինչ հակառակ Այ , և ոչ նուազեաց իւիք յիւրմէ հաւատարմութէ և ՚ի հնազանդութէն . այլ եկաց անշարժ և աննուազելի , գոհացեալ զայ զամենայն աւուրս կենաց իւրոց՝ վասն կուրութեն , որպէս և վասն տեսութեան . զնոյն արար և Յովե երանելի ՚ի տառապանս իւր :

Արդ՝ յայս և մեղ ջանալ՝ ի նմանութի արժան է , ասէ նըն Օդոստինոս , \* Որպէս զի յամենայնի նոյն կայցես , եթէ՝ ի յաջողակս , և թէ՝ ի ձախողակս . || նոյնպէս լիք նելքեղ խնդամիտ և անթերի՝ ի ժամ ձախորդութեն , որպէս յաջողութեն . \* Իբրև զձեռնն , որ նոյն է՝ եթէ՝ ի թիզ տարածեցի , եթէ՝ ի բուռն ամիկոփեսցի : || Զեռնն տարածեալ թղաչափ , և կամ կծկեալ՝ ի բուռն՝ նոյն է . այսպէս և ծառային այ պարտ է նոյնօրինակ մնալ՝ ի ներքա հոգւոյն , թէ և արտաքուստ թուիցի նեղեալ և ցաւազին : Այլեւ յառաջնսն ասի զԱռկրատայ փիլիսոփայէ , թէ՝ յամենայն եկեալ հասեալ դիպուածս՝ որչափեղապատեհք և բաղմապիսիք էին՝ ինքն կայր մնայր նոյնպիսի . որպէս Կիկերոն ասէ : \* Սոսկրատէս ոչ ոք ետես զուարթազոյն , կամ տիրագոյն . ՚ի մեծի անհաւասարուե

բախտին եկաց նա հաւասար մինչև յելս  
կենաց : || Ապա ուրեմն ոչ մեծ ինչ իցէ ,  
եթէ մեք քրիստոնեայք և կրօնաւորք փոյթ  
յանձին ունիցիմք ժամանել յայն՝ յոր ժա-  
մանեաց այր հեթանոս :

Երկրորդն՝ զոր ազդ առնել ունիմք՝ այս  
է . ոչ բաւական է զհամակամութին ընդ  
ԱՅ ունել անորոշ հասարակաբար . զի  
այդ դիւրին իմն է . ո՞ւ է որ շասիցէ թէ  
կամիմ լնուլ զկամն այյամենայնի . բարիք  
և չարք օր ըստ օրէ ասեն ՚ի Հայրմերն ,  
եղիցին կամք քո , որպէս յերկինս և յեր-  
կրի : Աւելի քան զդոյն պահանջի աստա-  
նօր . և հարկ է մանր կրկտել , իջանելով  
յայն իրս մասնաւորս՝ յորոց վշտանալ մեզ  
մարթ է , եթէ պատահիցին . և չէ պարտ  
դադարել՝ մինչև դժուարութիքն ամենայն  
յաղթեսցին , և մինչև չմնալոյ այլ ևս իրեք՝  
որ արգել արկանիցէ միանալոյ մեղ և յա-  
րակցելոյ ընդ կամացն այ յամենայնի ,  
այլ զի խրախուսել կարիցեմք յոր ինչ  
միանգամ ընդդէմ մեղ ելանիցէ :

Բայց ոչ ընդ այս պիտոյ է շատանալ ,  
այլ ջանալ պարտիմք յառաջ անցանել  
առանց առնլոյ տեղի , մինչև զդայցեմք  
յանձինս զախորժումն և զերկրապատար  
ինդութի ընդ կատարումն ԱՅ կամացն ՚ի  
մեղ , թէպէտև վշտօք լինիցի , և ցաւօք , և  
արհամարհանօք , որ և է երրորդ աստիճան  
համակերպութե . վասն զի գոն յայսմ  
ղանաղան աստիճաննք՝ միքան զմի բարձրա-

գոյն և կատարեալ . զօրս վերածել մարթ  
 է յերիս զլաւորս , ըստ օրինակին՝ զօր  
 վարդապետքն ասեն յաղագս առաքինու-  
 թե Համբերուն : Առաջինն է , յորժամ  
 զվատացուցիչն հանդիպեալս ոչ ցանկայ  
 մարդ , ոչ սիրէ , այլ խորշի ևս . բայց կամի  
 առաւել յանձն առնուլ՝ քան թէ մեղս  
 ինչ գործելով փախչել յայնցանէ : Այս է  
 աստիճան ստորին , և ընդ հրամանաւ .  
 մինչ զի եթէ զդայցէ մարդ ցաւս և տրո-  
 մութի ընդ վերահաս շարիսն , և 'ի կալն  
 հիւանդ հառաջեսցէ , աղաղակեսցէ առ  
 սաստկութե ցաւոցն , կամ լայցէ զմահ  
 աղղականաց , այլ 'ի վերայ այսր ունել  
 կարող է զայս համակամութիւն առ Աֆ :

Երկրորդ աստիճանն է , յորժամ թէ  
 և ոչ ցանկայ մարդ չարեացն եկելոց , և  
 ոչ ընտրէ զայն , բայց 'ի դալ նոցաընդու-  
 նի և տանի յօժարակամ , իբր զի է կամք  
 և հաճոյք այ : Այս երկրորդ աստիճան  
 յաւելու յառաջինն զմուաղիւրութիւն  
 ինչ և զախորժումն առ վշտալիսն վ՛ սիրոյն  
 այ , և զի կամի տանել՝ ոչ սոսկաբար 'ի  
 պարտեաց հրամանին 'ի կրել , այլ զի և  
 կրելն առաւել հաճոյական է Այ : Առա-  
 ջին աստիճանն տանի համբերութիւն . երկ-  
 րորդն յաւելու զպատրաստ և զհեշտեաւ  
 տանելն : Խոկ երրորդ աստիճանն է՝ յոր-  
 ժամ ծառայն այ առ մեծի ածսիրութեն  
 ոչ մլայն ժուժկալէ և ընդունի կամակար  
 ըստապանս և զնեղացուցիչս առաքեալս

յայ , այլ ցանկայ այնց , և ինդայ առաւ-  
ւելապէս՝ ՚ի նոսա՝ ըստ այ կամացն դոլով .  
որպէս վասն Առաքելոցն ասէ նըն Ղու-  
կաս , թէ \* Գնային խնդրալով յերեսաց  
աստենին . զի վասն անուանն Տն արժանի  
եղեն անարգելոյ : || ( Գործ . Ե . 41 : ) Եւ  
նը առաքեալն Պօղոս ասէր . \* Լի եմ միտէ  
թարութէր , առաւելեալ եմ ուրախութէր  
յամենայն նեղուիս մեր : || ( բ . Կորն . Ե . 4 : )  
Եւ յաղագս այսր առ երրայեցիսն դրելով  
գովէ յասեն . \* Եւ զյափշտակութի ըն-  
չից ձերոց խնդութէր ընկալարուք . քանզի  
զիսէիք թէ լաւ ևս ստացուածս ունիք  
անձանց յերկինս , ուր կանն և մնան : || Ե . 14 :

Արդ՝ պարտ է և մեղ ջան դնել զի  
հասանիցեմք շնորհօք Տն ՚ի տանել խնդու-  
թէր և զուարթութէր զնեղութիս և զընդ-  
դիմակս որ ՚ի վերայ գան . ըստ որում և  
նը առաքեալն Յակոբոս ասէ յիւրում  
կաթողիկէին . \* Ամենայն ուրախութեան  
արժանի համարիջիք եղեարք , յորժամ ՚ի  
պէսպէս փորձութէն ՚ի մէջ անկանիցիք : ||  
( ա . 2 : ) Այնչափ մեծարդոյ և անուշակ  
լինելոց են մեղ կամքն այ և հաճոյք , զի  
սովաւ իբր համեմաւ քաղցրասցի մեղ ամե-  
նայն դառն : Համօրէն տառապանք և տրխ-  
րականք աշխարհի դառնայցեն մեղ ՚իքաղցր  
և ՚ի համեղ , այնդ լինելով կամաց և հա-  
ճոյից Այ : Այս իսկ է՝ զոր ասէ նըն Գրիւ-  
դոր մեծն . ( գիլք ՚ . բարոյ : ) \* Եթէ միտք  
առ Աձ ուղղեսցին ուժգին դիտաւորութ ,

զամենայն որ 'ի կեանս յայս դառն ինչ  
իցէ՝ քաղցը վարկանի . զամենայն զլշտա-  
ցուցիչ համարի հանգիստ . մահուամբ իսկ  
փոխադրիլ ըղձանայ . զի լւապատար կե-  
նացն ստացօղ լինել մարթասցի : ||

Արբուհին կատարինէ սենացի՝ 'ի բանսն  
զոր զիեաց յաղագս դերաստիման կատա-  
րելուն առն քրիստոնէի , ասէ թէ 'ի բաղ-  
մաց անտի ուսմանց՝ զոր ընկալաւ յիւրմէ  
խանդակաթ փեսայէն 'ի Քնէ , մի եր և  
այս՝ զի հաւատացեալն շննեսցէ իւր սե-  
նեակ ամուր՝ կամարաձե , և այն է կամքն  
ածսյին . 'ի նմա փակեալ կացցէ մնացէ  
հանապազ , մի բնաւ արտաքոյ ձգիցէ՝ մի  
զաշ , մի զոտս , մի զգեռն , այլ միշտ 'ի ներքս  
առ անձնացեալ իցէ , զօրէն մեղուի՝ յոր-  
ժամ 'ի փեթակի իւրում կայ , կամ մար-  
գարտի ծածկելոյ 'ի խեցւոջ իւրում . զի  
թէպէտե 'ի սկզբանն անձուկ երևեսցի սե-  
նեակն , բայց յետոյ ունիցի 'ի նմա ընդար-  
ձակութի , և առանց ելանելոյ անտի փո-  
խեսցի յօթեանսն մշտնջենաւորս . և 'ի սա-  
կաւ ժամանակի շահեսցի զայն՝ զոր արտա-  
քոյ այնր բազում ժամանակաւ չէ մարթ-  
'ի ձեռս բերել : Արդ՝ արասցուք և մեք  
սոյնպէս , և սոյն եղիցի մեր հանապաղորդ  
կրթութի , ըստ երդոց . թ . 16. \* Եղբօրոր-  
դին իմ ինձ , և ես նմա : || Յերկու յայս  
բանս ևեթ զոյ կրթութի վասն բոլոր կե-  
նաց . զորս և պարտիմբ կրել միշտ 'ի բերա-  
նի և 'ի սրտիւ

## Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ .

Յաղագս պապրասպահանութեն և համա-  
համութեն առ Ա. Տ , զոր էր օնաւորի  
ունել պարս է առ ՚ի գնալ և կալ  
յնը և իցէ էռդման աշխարհի՝ ուր  
հնապանդութին առաջեսցէ զնա :

Որպէս զի բաղմարդիւն մեզ առնիցեմք  
զկրթութի համակամութեն ընդ Ա. Տ , և  
զոր ասացաքն՝ ՚ի գործ արկանիցեմք , ժամ  
է ասել որոշաբար ինչ ինչ ՚ի գլխաւոր  
իրացն՝ յորս կրթել ունիմք զմեզ , և ապա  
անցցուք յայլ ընդհանուր բանս՝ ամենե-  
ցունց պատշաճեալս : Վասն որոյ սկիզբն  
արացուք արդ ՚ի մասնաւոր ինչ իրաց՝ որ  
կան ՚ի մեր Սահմանադրութիւնս . քանզի  
պահանջեն իրաւունք՝ զի կրօնաւորն յայնս  
ցուցանիցէ առաւելապէս զիւրն առաքի-  
նութի և զկրօնաւորութի . և կարօղ է իւ-  
րաքանչիւրոք յարմարել զայն ուսումն  
յայլ ևս նմանս՝ որ կան ՚ի կրօնի իւրում ,  
կամ ՚ի սեպհական կարգին :

Յեօթներորդ մասին Սահմանադրու-  
թեցն խօսելով նը Հայրն իգնատիոս յա-  
ղագս Առաքելուեց՝ որք են զլիսաւոր պա-  
րապումն Կարգիս մերում , ասէ թէ ան-  
ձինք Միաբանուեն պարտին լինել կազմ

առ՝ ի զնալ և բնակել յոր կողմն աշխարհի և իցէ՝ ուր առաքէ զնոսա հնազանդութին, թէ առ հաւատացեալս կամ առ անհաւասս, ՚ի հնդիկս, և թէ՝ ի մէջ հերետիկոսաց. և վասն այսր առնեն նոքա զըորրորդ Ուխտն հանդիսական առ ծայրագոյն Քահանայապետն, յանձն առեալք զպարտս գնալոյ մոտադիւր և կամակար առանց իրիք պատճառանաց՝ յամենայն կողմն աշխարհի ուր Արքութիւր առաքեացէ զնոսա, ոչ ինդրելով ինչ ժամանակաւոր՝ ոչ վասն ինքեանց, և ոչ վասն այլոյ, ոչ՝ ի սակս մանապարհի, և ոչ կալոյ ուրեք. այլ գնալ հետիոտս՝ կամ հեծեալ, դրամովք, կամ անարծաթ և մուրողաբար, որպէս և Արքութեն նորա հաճոյ թուեացի: Եւ ասէ անտանօր եթ հայրն իգնատիոս՝ թէ դիտաւորութիւն այսր ուխտի եղե, զի լաւ ևս յաջողեացէ առնել զկամն ԱՅ: Վասն զի առաջին Հարք Միաբանութեն դոլով՝ ի զանազան գաւառաց և ՚ի սահմանաց, և ոչ դիտելով նոցա՝ յորում կողման լինել հաճոյ իցէ ԱՅ, ՚ի մէջ անհաւատից՝ թէ հաւատացելոց, առ ՚ի զհետ երթալոյ ածային կամացն՝ արարին զայն ուխտ առ Փոխանորդն Քնի, զի նա ինքն բաժանեացէ ընդ աշխարհ՝ ուր և զիարդ համարիցի լինել յառաւել վառս ԱՅ: Բայց ասէ՝ կրօնաւորն Միաբանութեն ոչ պարտի միջամուխ լինել, կամ ջանալ օրինակաւ ինչ զի զնայցէ կամ կայցէ յայս տեղի՝ քան

յայլում, այլ մնալ զուգակշխու, թողարկուցեալ զկարգաւորութի անձինն ազատ ամենեին՝ ի ձեռս Մեծաւորի, որ վուսան ԱՆ առաջնորդէ նմա յառաւել ծառայութի և 'ի փառս իւր :

Այլ թէ քանի զուգակշխու և պատրաստականն լինել մեղ կամիցի որ Հայրն՝ առ ՚ի գնալոյ ընդ որ կողմն առաքեսցէ հնագանդութին, ընթեռնումք՝ ի վարս նորաթէ հայրն Դեկոս Լայնէղ ասաց առ նամիանդամ, ցանկայր գնալ՝ ի հնդիկս, և պատրապիլ՝ ի փրկութի խաւարեալ հեթանոսացն, որք կային՝ ի կորուստ առ նուազութեն մշակաց Աւետարանին : Ետ պատասխանի որ Հայրն . ես ոչ մի ինչ ցանկամ այդպիսի . և հարցեալ զպատճառէն՝ ասաց, վասն զի արարեալ մեր զուխտ հնագանդութեն առ ծայրագոյն Քահանայապետն, զի ըստ իւրոց կամաց առաքեսցէ զմեղ յոր և է կողմն՝ ի ծառայութի Տն, պատրտիմք մնալ անխափի՝ առանց միտելոյ յայս կոյս՝ կամ յայն . մանաւանդ թէ ասէ՝ եթէ զիս տեսանէի յօժարեալ քո պէս՝ առ գնալոյ՝ ի հնդիկս, փոյթ առնէի յօժարիլ՝ ի հակառակն կոյս, առ ՚ի զուանելոյ զհաւասարակութին զայն և զանմիտակողմն կայս՝ որ կարեռն է՝ ի ստանալ զկատարեալ հնազանդութի :

Սակայն այսու ոչ եթէ զբանկութիւն գնալոյ՝ ի հնդիկս՝ չար ինչ ասեմք լինել կամ անկատար, զի ոչ այդպիսի, այլ առա-

ւելքարի է և սուրբ . և է խակ դումելի՝  
առաջի առնել և յայտնել զայն Մեծաւո-  
րին , յորժամ տացէ Տիր . և սոյնպէս խօսի  
անդանօր նը հայրն իգնատիոս : Ուրախ  
լինել պարտ է մեծաւորաց՝ յորժամ հնա-  
զանդեալք նոցա յայտնեն զայսպիսի ցան-  
կութիւնս . քանզի սովորաբար նշան է  
այդ՝ կոչել զնոսա Այ ’ի նոյն գործ , որով  
ախորժաբար կատարին իբրդ : Բայց զայն  
ասացաք առ ’ի տեսանել և եթ զանդիմա-  
դարձ յօժարամտութիւնն՝ զոր նը հայրն  
պահանջէ ունել մեղ առ ’ի զնալ և կալ  
յամենայն կողմն . իբրև զի և ոչ յայնպիսի  
գործ տարժանաւոր , և ’ի մեծ պաշտօն Տն  
կարգեալ , կամի լինել մեղ ըղձակերտ .  
որպէս զի ըղձումն այնպիսի և ցանկութի  
առանձնաւոր մի իւկր բառնայցէ կամար-  
գելուցու զանդիմադարձ յօժարութիւնն՝  
զոր ունել պարտ է միշտ յոր և իցէ գործ ,  
և յոր և է կողմն՝ ուր հնազանդութիւնն  
առաքել կամիցի :

Այսամդէետ գան ինչ ինչ , որովք լաւ ևս  
իմանի ասացեալս : Առաջին , զի թէ ցան-  
կութին ’ի հնդիկս գնալոյ լինէր պատճառ  
ցանկացողին նուազիլ իւկր ’ի յօժարամր-  
տութէ առ այլ իրս՝ զոր հնազանդութինն  
կարգադրէ նմա , ոչ ևս լինէր բարի , այլ  
թերի : Եթէ այնչափ զօրանայր յիս ըղ-  
ձումն և ցանկուի գնալոյ ’ի հնդիկս կամ  
յայլ կողմն , մինչեւ անհանդիստ առնել  
զիս , և լինէր ինձ պատճառ չկալոյ հան-

գարտիկ աստ կամայլ ուրեք՝ ուր հնաղան,  
դութին լինել կամի . կամ թէ ոչ ’ի կա-  
մակարուց յանձն առնուի, և ոչ խնամով  
պարապէի ’ի պաշտամունս՝ յորում կամ  
'ի ժամուս, ակն եղեալ և սիրտ ’ի գործ  
այլ, ահա յայտ է թէ ցանկութիւնք  
այսորիկ ոչ բարիք էին, և ոչ յԱյ. վասն  
զի խափանիջք են այ կամացն, և Այ ան-  
մարթ է հակառակ անձինն հանդիսանալ.  
այն զի ցանկութիւնք ազդեալք ’ի հոդւոյն  
սը՝ ոչ բերեն ամբոխումն, այլ բաղում  
խաղաղութիւն և անդորրութիւն։ Եւ է  
այս մի ’ի նշանացն՝ զոր տան ուսուցիչք  
հոգեւոր կենաց առ ’ի ճանաչելոյ՝ թէ ազդ-  
մունքն և ցանկութիք իցեն արդեօք յԱյ,  
կամ՝ ոչ :

Երկրորդ հետեանք նախասացելոցն՝ այս  
է . զի որ ունիցի պատրաստութիւն ընդ-  
հանուր՝ կազմ և անխտիր գնալոյ յո՞ր և է  
կողմն, կամ գործելոյ զինչ և իցէ՝ ըստ  
կարգադրելոյ հնաղանդուեն, թէ և զգայ-  
ցէ զառանձնաւոր ցանկութի և բերումն՝ ի  
հնդիկս երթալոյ, կամյայլ հեռաւոր կող-  
մանս, զոր այլք ունին, ոչ է պարտ այն-  
պիսոյն դժուարիլ ընդ այս . զի ոչ եթէ  
վասն այսր թերի է իւրն վիճակ, այլ լա-  
ւագոյն ևս . քանզի այս է պատրաստու-  
թին՝ զոր նը Հայրն պահանջէ յամենայն  
անձանց Միաբանութեն, այսինքն է՝ չու-  
նել ’ի մեր կողմանէ ցանկութի և ըղձումն  
առանձին յայս ինչ առաւել՝ քան յայլ.

այլ կալմեղ իբր զմետ կշռոց՝ առանց հակելս յայս կամ յայն կողմն . և յայսպիս սեաց աստիքաղումք են , և թերես յոլովագոյն մասն : Խորհեր երբեմն նը հայրն իգնատիոս կարգել զհայր վարդապետն Կատալիս յառաքելուի ինչ . և կամեցաւ գիտել նախ թէ յինչ յօժարէր նա . զի ախորժաբար գործեսցէ . և հայրն Կատալիս գրեաց պատասխանի , ոչ յայլինչ յօժարի՝ բայց միայն յոչն յօժարիլ : Զայն զայս լաւագոյն համարի նը հայրն , և առաւել կատարեալ . և յիրաւի . վասն զի միւսն այն թուի կապեալ՝ ի մի ինչ և եթ . բայց այս իւրով անխտիր բերմամբն ընդգրիէ զամենայն՝ որ նմա հրամայեսցի , և կայ միօրինակ կազմ և նուիրական առ ամենայն : Եւ քանզի հայի Ած՝ ի սիրո և ՚ի կամ իւրաքանչիւրոց , փոխան գործոյ համարի զայն առաջի իւր , իբր այն թէ զամենայն ինչ կատարեալ էր արդեամբք :

Առ՝ ՚ի գլխաւորել զբացայայտուի այսոցիկ ասեմ , թէ ոչ ունել ուրուք զցանկուի ՚ի հնդիկս երթալոյ՝ եթէ ՚ի հեղգասրտութէ իցէ , կամ յանարութէ , և յանմեռ վարուց , կամզի վեհերոտի թողուլ դդիւրութիսն՝ զոր կարծէ ունել , կամ յուսայ գտանել աստանօր , և զի կրել կայ ծանր ծանր տառապանս՝ որք անտանօր հասանեն , ահա այս լինի անկատարութիւն , և անձնասիրութիւն : Բայց որ ոչ առ հեղգամտութէ հրաժարէ յայսմ ցանկութէ , և

ու կե պակասի նմա իղձ և արութիւն կրելոյ  
զայսոսիկ և զայլ մեծագոյն տառապանս  
առ սէրն Այ, և վասն փրկութե հոգւոց,  
այլ միայն զի ոչ դիտէ՛ թէ այն իցեն կամք  
այ, կամ թէ զայլ ինչ կամիցի ՚ի նմանէ  
Ած. բայց յիւրն կողմանէ այնչափ բարէցա  
ժար կայ յայս՝ և յայլ ամենայն զոր դիտի-  
ցէ ըստ այ կամացն լինել, մինչ զի եթէ  
առաքիցեն դինքն ՚ի հնդիկս, կմ յանդղիա,  
կամ յայլ ևս կողմն, դնայր այնպէս մտա-  
դիւր՝ որպէս եթէ ինքնին էր ցանկացեալ  
և խնդրեալ, և թերևս մտադիւրագոյն  
խկ, աներկեան գոլովթէ յայնմ ոչ զիւր  
կամ կատարէ, այլ պարզաբար զԱյն,  
ահա այս անշուշտ՝ կարի լաւագոյն է, և  
յաւէտ կատարեալ։ Ուստի զայսպիսի  
անխորաբար պատրաստեալսն՝ և մեծա-  
ւորքն իակ յօժարաբար առաքեն ՚ի հըն-  
դիկս։

Այլ արդ՝ դարձ արարեալ առ մեր  
զիսաւոր նիւթ, կամի ոք հայրն իդնա-  
տիոս՝ զի ունիցիսք ամենեքին զայն հաւա-  
սար նուիրումն կալոյ յօժարութիւ յայս  
կողմն, և յայս գաւառ՝ որպէս և յայլսն,  
մինչ զի և ոչ մարմնաւոր առողջութեանն  
պատճառ խախտել կարիցէ զհաւասար  
կամնն։ Ասէ նա յերրորդ մասին Սահ  
մանադրութեցն, թէ սեալհական է կոչ-  
ման մերում և կարդի՛ ընթանալընդ դա-  
նաղան կողմանս աշխարհի, և կալ ուրանօր  
ակնկալութիւ է առաւել ծառայութեան

Այ, և բազմադոյն նպաստից հոգւոց :  
 Սակայն եթէ փորձեալ ծանիցի թէ ող  
 քաղաքի ուրեք վնասակար իցէ ումեք, և  
 միշտ հիւանդագին կայցէ անտանօր, մե-  
 ծաւորին անկ է խորհել իցէ արդեօք դի-  
 պան առաքել զայնպիսին յայլ կողմն, ուր  
 առողջագոյն կեցեալ, կարօղ իցէ լաւ ևս  
 հպատակ կալ ծառայութեանն Այ և  
 հոգւոց : Բայց յաւելու, թէ ոչ արժան  
 է հիւանդին խնդրել զայն փոխադրութի,  
 և ոչ ցուցանել անդամ զյօժարութիւն  
 յայն, այլ թողացուցանել 'ի մեծաւորն  
 զամենայն դհոգսն : Ո՛չ փոքր ինչ է՝ այլ  
 բազում զոր այսու կամի 'ի մէնջ նը հայրն.  
 վասն զի մեծի հաւասարութե և մեռուց  
 ման պէտք են ումեք՝ առ ՚ի չխնդրելոյ, և  
 ոչ յօժարութի ցուցանելոյ 'ի տեղափոխն  
 լինել, թէ և անտանօր կայցէ յար յանա-  
 ռողջութեն : Այն զի՝ ուր յաղադս գնա-  
 լոյ 'ի հնդիկս, կամ 'ի քաղաքս հերետիկո-  
 սաց, հրաման տայ՝ որպէս ասէաքն, առա-  
 ջի առնել մեծաւորին զիւրն յօժարութի և  
 զցանկութի, յայսմ ոչ ներէ հայցել փո-  
 խադրութի, և ոչ զյօժարութի առ այն  
 ցուցանել . որ կարի առաւել է : Բայց  
 միայն տայ հրաման՝ զի թէ ոք զգայցէ  
 ղտկարութի, կարօղ լիցի յայտնել մեծա-  
 ւորին զանառողջութի իւր, և զանբաւա-  
 կանութին 'ի կատարումն պաշտամանցն .  
 և զայս 'ի կանոնաց ևս ունիմք աւանդեալ  
 մել : Ասկայն յետ ծանուցանելոյ զայն՝

շունի այլ ինչ առնել հնաղանդեալն .  
 այլ մեծաւորին է խորհել, արդեօք՝ ի կալ  
 այսմ պատճառի՝ իցէ պիտոյ այլուր առա-  
 քել զնա, ուր քաջառողջ գոլով առաւել  
 գործել կարիցէ . կամ թէ առաւելադոյն  
 փառք իցեն Այ կալ մնալ նմա անդէն ,  
 թէ և սակաւ գործիցէ , կամ ընաւ ան-  
 գործ իցէ : Այս հոգողութի ոչ է հպատա-  
 կին . իւրաքանչիւրոք յանձն լիցի յառաջ-  
 նորդութի մեծաւորի իւրոյ . որ վարէ փո-  
 խանակ Այ . և զայն համարեսցի լաւադոյն  
 և՝ ի մեծ ծառայութի Տն , զոր մեծաւորն  
 հրամանատրէ նմա : Քանիք՝ ի մարդկանէ  
 կան յայսոսիկ քաղաքս , և յայլ ևս անա-  
 ռողջ տեղիս՝ սակս գտանելոյն՝ ի նոսա զիւ-  
 րեանցն պարէն պաշտամամբ ինչ , կամ  
 արուեստիւ , կամ հասութիւ : Քանիք  
 ընդ ծով անցանեն , և գնան՝ ի հնդիկս՝ ի  
 հոռվմ , ի կոստանդնուպոլիս , սակս դոյզն  
 վաճառաց , եղեալք՝ ի վտանգի ոչ զառող-  
 ջութի միայն , այլև զկեանս : Ո՛չ մեծ ինչ  
 է ապա՝ եթէ մեք կրօնաւորք առնիցեմք  
 վասն Այ և վասն հնաղանդութե՛ զայն՝  
 զոր աշխարհիկք առնեն վասն դրամոյ : Եւ  
 եթէ քեղ ընդ միտս դայցէ , թէ այլուր  
 կարօր էիր առնել աւելի , և թէ ուր  
 կասդ , շարակեաց գոլով յառողջութեան  
 անկարանաս առնել ինչ , յուշ լիցի քեզ՝  
 զի տակաւին լաւ ևս է մնալ այդր ըստ  
 Այ կամացն անգործաբար , քան եթէ այ-  
 լուր քո կամաւ , թէ և առնէիր բաղում ,

և միաբանեա՛ զքեզ ընդ կամացն ԱՅ, որ  
զայս կամի ՚ի քէն այժմ սակս պատճա-  
ռին՝ զոր գիտէ ինքն, և չէ հարկ թէ զիւ-  
տասցես դու :

՚Ի ժամանակադիրս կարգի սբէյն Փրան-  
շիսկոսի պատմի յաղագս նը եղքօր Եղիւ-  
տիոսի, թէ երանելին Փրանշիսկոս տուել  
էր նմա հրաման՝ գնալ ուր և կամցի, և  
կալ ՚ի գաւառի և ՚ի մենաստանի՝ զոր  
առաւել ախորժէ, թողեալ զամենայն ՚ի  
նորա ընտրութին սակս մեծի առաքինու-  
թին և սրբութեանն : Այլ հազիւ չորից  
աւուրց լինելոյ այնը հրամանի, պակա-  
սեաց ՚ի նմա խաղաղութիւնն և հանդար-  
տութին առաջին, զգացեալ յանձին զպըլ-  
տորումն . վասն որոյ երթեալ առ նըն  
Փրանշիսկոս, աղաչեաց թախանձանք՝  
նշանակել նմա տեղի և մենաստան ուր  
կացցէ, և մի թողուլ զայն յիւր ընտրու-  
թին . յայտ առնելով թէ այնուիկ աղատ  
և արձակ հնաղանդութեամբն ոչ գտանէր  
հանդիստ անձին իւրում : Կրօնաւորք բա-  
րեկիրթք ոչ առնուն խաղաղուի և ախոր-  
ժումն ՚ի կատարման կամաց իւրեանց .  
ուստի ոչ ցանկան այս ինչ և այն իրաց,  
կամ տեղւոյ, այլ զի հնաղանդութիւնն  
ինքնին դնիցէ զնոսա ուր կամի, միամը-  
տեալք յանձինս՝ թէ այն են կամք ԱՅ,  
յորում միայնում գտանեն հանդիստ և  
ախորժումն :

Գ Լ Ո Ւ Խ ԺԴ Դ

Յ օ աղագո անդանապահութել և համակա-  
մութել ընդ Աստուծոյ, զոր ունել  
պարու և իր օնաւորին յորում և  
իշե պաշտաման և պարապման յոր  
հնապանդութին դնել էտիցի :

**Պ**արտ է մեղ զասացեալ անդանազու-  
նութին և զնուիրումն՝ յանձին բերել նաև  
յոր և իցէ պաշտօն և 'ի պարապումն եղել  
մեղ 'ի հնապանդութի : Ապաքէն տեսա-  
նեմք թէ որքանիք են, և որչափ պէսպէս  
պաշտամունք և դործառնուիք 'ի Կրօնի :  
Արդ՝ իւրաքանչիւրոք անցցէ խորհրդով  
ընդ մի մի յայնցանէ, մինչև կարիցէ միով  
գիտաւ նկատել զիւրաքանչիւր զնոսա :  
Ասէ նոր Հայրն իգնատիոս 'ի Սահմանա-  
դրութիս, զոր և 'ի կանոնան ունիմք . ըստ  
անարդ և ցածուն պաշտամանց՝ պիտոյ է  
կամակար լինել 'ի յանձնառութիւն՝ եթէ  
հրամայեսցի նմա առնել զայնս : Առ այս  
պիտի պաշտամունս առաւել կարեռ է

անդանաղանութիւն և նուիրումն 'ի պատ-  
ճառս ընդդիմութեն՝ զոր 'ի նոսա առնէ-  
ընութիւն։ Ուստի առաւել գործէ ոք 'ի  
ցոյցս մեծի առաքինութեն և կատարելու-  
թեն, եթէ յայսպիսիս լինիցի անձնամա-  
տոյց, քան թէ ընծայել զանձն յայլ վսե-  
մական և արգոյ պաշտամունս։ Զոր օրի-  
նակ եթէ ոք յօժարեալ մտանել 'ի ծա-  
ռայութիւն տեառն միոջ, կամիցի լինել նմա-  
սուրհանդակ կամ աւելածու զամենայն  
ժամանակ կենացն՝ եթէ պիտոյ իցէ, յայտ-  
է ապաքէն՝ զի մեծ ինչ առնէր, երևեալ  
մոտադիւրագոյն 'ի սպասահարկել քան թէ  
ասէր։ Տէր, ծառայեցից քեղ իբրև մա-  
տակարար, կամ հազարապետ տան։ քան-  
զի այս է խնդրել առաւել պատիւ, քան  
'ի ծառայութիւն ընծայիլ։ և այնչափ ևս  
գովելի լինել այն խոնարհ ընծայումն, որ-  
չափ վսեմագոյն պաշտամանց աջողակա-  
գոյն էր նուիրեալն 'ի խոնարհագոյնս։

Արդ՝ ըստ օրինակիս այսմ, եթէ անձնա-  
մատոյց լինիցիս առ Ած, ասել թէ Տէր,  
ծառայեցից քեղ 'ի պաշտօն Քարոզատուի,  
կամ Դասասաց Ածաբանի, յայդմ չառ-  
նես մեծ ինչ։ զի այդ պաշտամունք վսերիք  
և պատուականք՝ են 'ի ընէ ցանկալիք։  
փոքր է յայդմ ցանկութիւն ծառայելս Այ-  
բայց յորժամ 'ի պաշտամունս անարդս և  
խոտանս՝ դիմամարտս մարմնոյ և զդայուն-  
նուիրիս ծառայել 'ի տան Այ զամենայն  
կեանս, յայնժամ մեծապէս ցուցանես

զբաղձանս ծառայելոյ մեծվայելըութեանն  
ԱՅ, այս է առաւել հաճոյական և ար-  
դոյ . և այնչափ ևս , որչափ առաւելադու-  
նի վիճակեալ իցես աջողակուն առ պաշ-  
տամունս բարձրագոյնս : Այս բաւական  
էր առ ’ի ցանկանալոյ պաշտամանց անար-  
դաց և նուաստից , և յայնպիսիս ցանկ յօ-  
ժարամտիլ . մանաւանդ զի չկայ ’ի տանն  
ԱՅ խոտան ինչ : Այլև ’ի տան թագաւո-  
րին ասի թէ չկը պաշտօն անարդ . զի ծա-  
ռայել թագաւորի որով և իցէ պաշտա-  
մամբ՝ մեծ համարեալ է . որչափ ևս մեծ  
դրելի է ծառայելն ԱՅ , որ է թագաւո-  
րել :

Սուրբն Բարսեղ առ ’ի յօժարեցուցա-  
նել զմեղ ’ի պաշտամունս անարդս և խո-  
նարհս՝ յանդիման առնէ զօրինակն Քնի ,  
զորմէ ընթեռնումք ’ի նբ Աւետարանին  
թէ պարապեաց յայնօրինակ պաշտամունս ,  
լուանալով զոտս աշակերտացն . և ոչ զայս  
միայն , այլև յերկար ծառայելով ամենանը  
Մօրն և նըյն Յովսենիսայ , լեալ նոցա հնա-  
զանդ յամենայնի զոր նմա հրամայէին :  
(Ղուկ . բ . 51 : ) Յերկոտասան ամաց  
անորի մինչև յերեսներորդն՝ զայս միայն  
պատմէ զնմանէ նբ Աւետարանն . ուր յի-  
րաւի զմոտաւ ածեն նբ վարդապետք՝ թէ  
կայր նմա ծառայել և օդնել ծնողացն ’ի  
բազումսպասաւորութիս անարդս և ցա-  
ծունս , մանաւանդ զի չքաւորք ևս էին :  
Ապա ուրեմն \* մի ծանրասցի առնելքրիս

տոննեայն՝ զոր Քնն արար, || ասէ նըն  
Օդոստինոս : Եթէ ոչ խորշեցաւ Որդին  
ԱՅ'ի խոտան սպասս պարապիլ վասն սի-  
րոյ մերոյ, մի և մեք խորշեսցուք յայնպի-  
սիսն պարապիլ առ սէր նորա, թէպէտ  
և ձգեսցի զամենայն ժամանակս կենաց :

Բայց առաւել՝ի մեր խնդիր մօտաւո-  
րեալ, մին 'ի պատճառաց և 'ի կարի հաւա-  
նելեացն՝ որ յորդորիչ է մեղ՝ի յանձնա-  
ռութի յօժարական որ և է դործոյ և պա-  
րապման կարդելոյ 'ի հնազանդութենէ,  
լինելոց է դնել՝ի մտի՛թէ այս են կամք  
ԱՅ. զի որպէս վերագոյն ասացաք, այսմ  
պարտ է լինել մեր հանապաղորդ միսիթա-  
րութի և հանգիստ 'ի բոլոր պարապմունս  
մեր, կալ 'ի լրումն կամացն ԱՅ. սոյն այս  
է՝ որ շատացուցանէ և հանգուցանէ զո-  
դի: Կամի Ած, զի զայս ինչ արարից ես  
այժմ. այս է կամք ԱՅ, չպիտի ցանկալ  
այլում. վասն զի չէ և չէ այլ լաւագոյն  
ինչ և բարձրագոյն քան զայ կամնն : Որք  
այսու օրինակաւ վարին, ոչ հոդան ընաւ  
թէ պատուիրեսցի նոցա այս ինչ քան թէ  
այլ, և ոչ զայն՝ թէ կարդեսցին 'ի պաշ-  
տօն արգոյ կամ անարդ. զի առ նոսա մի է  
ամենայինն :

Երանելին Հերոնիմոս պատմէ զօրինակ  
ինչ 'ի դէպ առ մեր խնդիր : Յայց ելեալ  
որբոց Միանձանց անապատի, ետես զոմն՝  
որոյ Մեծաւորն ցանկալով օգտի նորա,  
միանդամայն տալ օրինակ հնազանդութե-

այլոց մանկագունից, հրամայեալ էր նմա  
 տանել թիկամբք երկիցս յաւուրն զվեմ մի  
 մեծ երիւք մղոնիւք հեռի, ոչ յայլինչ պէտո  
 կամ յօդուտ՝ բայց զի ուսցի հնազանդիւ  
 և սպանանել զիւր զատումն . և էին ամք  
 ութ՝ յորմէ հետէ առնէր զայս : Եւ քանչ  
 զի առ այնոսիկ որ զարդ առաքինութե  
 հնազանդութե ոչ ճանաչեն, և ոչ' ի նորա  
 անխառն յստակութի մարդեալք են, գու  
 ցէ այն դործ՝ ամբարհաւաճ իմն մոտածու  
 թի կարծիւր խաղ ինչ մանկական, կամ  
 դատարկագործութի, հարցանէին ցնա,  
 թէ զիարդ յանձն առնոյք զայն հնազանն  
 գութի . և ես ինքն հարցի նմա՝ ասէ նքն  
 Հերոնիմոս, ցանկացեալ դիտել զոր ՚ի  
 հոգւո՞ն լինէին ազդմունք ՚ի դործել զայս:  
 Ետ պատասխանի միանձն . այնպէս մոտա  
 հաճոյ և զուարթ կամ ես ՚ի դործել զայս,  
 իբր առնել մեծագործութի ինչ կարեւոք  
 եթէ ինձ հրամայեալ էր : Այնչափ շա  
 հեցայ ես յայսմ պատասխանւոյ, ասէ նքն  
 Հերոնիմոս, մինչեւ նոյնժամայն սկիզբն  
 արարի միակեցական վարուց: Այսէ ահա  
 լինել միանձն, և կեալ իբրև կրօնաւոր .  
 ոչ յայլ ինչ հայել ըստ արտաքին կերպա  
 բանացն՝ բայց զի առնեմք զկամն և զհա  
 ճոյս Այ: Սոքա են որք առնեն պտուղ, և  
 ամեն մեծապէս յառաքինութե և ՚ի կա  
 տարելուն . վասն զի տածին միշտ յառնել  
 զկամն այ . տածին նաշհւով: \* Պարար  
 տութ ցորենոյ լոյց վեց: || (Սաղմ. ձիւէ. 14:)

Բայց ասիցէ ոք ցիս . իմանամ քաջ թէ  
 կատարելութի մեծ է առնել զկամն Այ ,  
 և թէ յորում և է իրթութեան ինձ հրա-  
 մայեցելոյ կարօղ եմ զածային կամն կա-  
 տարել . այլ կամէի պարապելով յայլ գործ  
 երևելի՝ 'ի նմա կատարել զկամն Այ :  
 Սակայն սխալէ այդ յառաջնումն անդ  
 սկզբան . վասն զի է ասել թէ կամիս զի ած  
 առնիցէ զկամն քո , և դու ոչ կամիս առ-  
 նել զայն . ոչ ինձ անկանի օրինադիր լի-  
 նել Այ , կամելով զի նա միախորհ լինիցի  
 յայն ինչ որ ինձ թուի , և զոր եսն կամէի .  
 այլ ինձ անկ է զշետ երթալ խորհըր-  
 դոցն Այ , և միաբանիլ յայն զոր յինէն  
 կամի : Գեղեցիկ ասէ նքն Օգոստինոս .  
 ( դիրք ժ . Խոստով . գլ . իղ . ) \* Ըստիր  
 սպաշտոնեայ քո է , որ ոչ այնչափ սպասէ  
 լսել 'ի քէն զոր ինքն կամի , այլ առաւել  
 զայն կամի , զոր 'ի քէն լսիցէ : || Եւ նը  
 հայրն Կեղոս ասէ . \* Մի աղօթեր քոց  
 կամացդ կատարիլ , այլ մանաւանդ որպէս  
 ուսարն աղօթեա , ասելով եղեցին կամք քո  
 ինեւ : || ( Վարք հոգ . եր . 268 )

'ի միտ առնուլ արժան է զայս մտածու-  
 թի՝ իբրև կարի օդտակար և հասարակ  
 վասն ամենայն վշտաց և դիպուածոց՝ որ  
 'ի վերայ գան : Ո՛չ մեք պարտիմք ընտրել  
 թէ յինչ իրս , և զիարդ ունիցիմք վշտա-  
 նալ , այլ Այ է առնել զայն : Ո՛չ դու  
 ընտրել ունիս զփորձուիմն կրելիս 'ի քէն .  
 և չունիս ասել , եթէ լինէր այլ փորձու-

թի, ոչինչ հոգայի, բայց այսմ տանել ոչ  
կարեմ: Եթէ տանջանք և վիշտք եկեալք  
հասեալք մեղ՝ լինէին ըստ մերում կամելոյ,  
ոչ ևս էին վիշտք և տանջանք. թէ արդարեւ  
հաճոյ լինել Այցանկաս, հայցել առ նա  
պարտխա՝ զի առաջնորդեացէ քեղ ուր ինքն  
դիտէ և կամի, և ոչ յօ դու կամիս: Եւ  
յորժամ առաքեացէ Տիր զանախորժելին քո,  
և զոր կրելն ծանրանաս, և դու յանձն  
առնուս, յայնժամ նմանօղ լինիցիս Քնի  
փրկչն մերում, որ ասէր. Ոչ իմ կամք,  
այլ քոյդ լիցի: Այս է անթերի համակա-  
մութի ընդ Այց, բոլորանուեր լինել նմա,  
զի արացէ ընդ մեղ որչափ, երբ, և որ-  
պէս կամիցի, ոչ 'ի բաց թողեալ ինչ, ոչ  
հակառակաբար 'ի մեր կողմանէ, և ա-  
ռանց իրս ինչ մեղ պահելոյ:

Պատմէ Պլոտիս յաղագս սբէյ կուսին  
Գեղրուտայ, թէ շարժեալ նորա 'ի դժոյ  
և 'ի կարեկցութենէ՝ աղացէր զԱծ վասն  
անձին ուրուք, զորմէ լուեալ էր՝ տրտն-  
ջել անժուժաբար ընդ ածառաք վիշտո  
ինչ, ընդ հիւանդութիս, կամ ընդ փոր-  
ձութիւնս՝ որ դժպատեհք երեւէին նմա:  
Բայց Տիր պատասխանի արար սբյ կուսին  
ասա ցմարդն այն՝ որոյ վասն աղացես,  
որովհետեւ չէ մարթ ստանալ գարբայու-  
թին երկնից անվիշտ և անցաւ, ընտրեացէ  
զայն՝ որ առաւել օգտակար թուի նմա.  
և երբ հասանէ այն, համբերութի կալցի:  
Յորոց բանիցն՝ և յեղանակէ խօսելոյ Տն

ծանեաւ նը կոյսն , թէ կարի վտանդաւոր  
անհամբերութի է՝ յորժամ մսրդ անձն  
ընտիր լինի վշտացն կրելեաց , համարեալ  
թէ առ ՚ի յայ առաքեցեալ վիշտք չեն  
պատշաճօղք առ իւրն փրկութի , և չկարէ  
ժուժալ այնոցիկ : Վ ասն զի արժան է իւ  
բարանչիւրում դնել ՚ի մտի և վառահանալ  
թէ զոր ՏԾ ԱՃ մեր առաքէ , այն է ինքեան  
պատշաճօղ . և այնպէս յանձն առնուլ  
համբերութի , միաբանեալ ՚ի նոյն ընդ  
կամացն ԱՅ : Արդ՝ որպէս ՚ի վիշտս և ՚ի  
փորձութիսն կրելիս ոչ քեղ անկանի առ  
նել ընտրութիւն , այլ իբր յայ ձեռանէն  
առնուլ՝ զոր նայն առաքէ , բարեմնեալ  
թէ այնք են քեղ առաւել անկաւորք ,  
սոյնպէս ոչ է քեղ ընտրել զպաշտօն կամ  
զսպասաւորութի զոր առնիցես . այլ ըն  
դունել որպէս ՚ի ձեռանէ ԱՅ զկարգեալն  
՚ի հնաղանդութէ , հաւանեալ յանձին  
թէ առաւել վայելքական քեղ այն իակ է :

Յաւելուն վարդապետք և զայլ մտածու  
թիւն կարի պիտանի հոգւոց , և ասեն թէ  
պարտ է մարդոյ այնպէս անձնանուէր լի  
նել ՚ի կամս ԱՅ , և այնչափ բարեյօս և  
ամբացեալ ՚ի նա , որ զի ցանկանայցէ չգիւ  
տել իակ թէ զինչ կամիցի ԱՃ առնել և  
կարդադրել վասն իւր : Զոր օրինակ , յոր-  
ժամ տանուտէր ոք՝ քաջահաւատ դոլով  
՚ի վերակացու տան իւրոյ , ոչ գիտէ ինչ  
զմնչից իւրոց , և ոչ թէ զինչ ՚ի տանն կայ-  
ցէ , ցոյցք են այս մեծի վստահութե . որ-

պէս Յովսէփի նահապետն ասէ՝ թէ ունէր  
զինքենէ Տէր նորա. \* Եթէ տէր իմ ոչ  
ճանաչէ ինչ ,ի տան իւրում վասն իմ , և  
զամբնայն ինչ ետ ՚ի ձեռս իմ: || (Ծննդ.  
լթ. 8:) Սոյն օրինակ զիւր զառ ՚ի յած  
վստահանալն ցուցանէ մարդ , յորժամ  
ոչ խնդրէ դիտել թէ զինչ ընդ նա առ  
նել ունի Ած: Կամ ես ՚ի ձեռս բարե-  
խնամն , այս ինձ բաւական է: \* ՚ի ձեռս  
քո է ժառանգութիւն իմ: || Այսու գոհ  
եմ ես , և անկասկած . չպիտի դիտել այլ  
ինչ :

Առ այնոսիկ՝ որք աշ դնեն ՚ի բարձրագահ  
տեղիս , ՚ի պաշտամունս կամ ՚ի գործառ  
նութիս , կարծեցեալք թէ առաւելագոյն  
պտուղ առնիցեն հոգւոց , և զմեծ ևս ծա-  
ռայութի առ Ած , ասեմթէ խարին յոյժ  
յոյժ համարելով զայդ լինել նախանձ ա-  
ռաւել ծառայութեն Այ , և հոգւոց մե-  
ծագունի բարւոյ : Ո՞չ այդպէս է . այլ է  
նախանձ պատուախնդրութեն , անձնայար-  
դութեն , և իւրոց առանձին զիւրութեց .  
և զի այն ինչ պաշտօն և գործառնութիւն  
առաւել պատուաւոր է , կամ առաւելըստ  
հաճոյս և ըստ հակամատութեն իւրեանց ,  
վասն այն ըղձանան ՚ի նոյն , ոոր և ցուցից  
քեզ յայտնապէս Եթէ յաշխարհի կայիր  
դու , կամ առանձնակ , թուի թէ ասել  
կարօղէիր . այս ինչ լաւադոյն է քան զայն ,  
և յառաւել շահ հոգւոց . ուստի թողուլ  
կամիմ զայս , և առնել զայն . իբր զի զամե-

նայն առնելչէ մարթ : Ասկայն 'ի վանական կան կարգի ոչ է թողուլ զլին վասն միւսոյն , զի հարկ է լինել և այսմ և այնմ . յայտ է՝ զի եթէ դու հարկանիցես զարածայնն , միւսն հարկանել ունի զթաւածայնն : Եւ եթէ խոնարհ իցեմ ես , պարտիմ կամիլ առաւել՝ զի այլ ոք կատարեացէ զպաշտօնն բարձր , հաւատացեալթէ լաւագոյն քան զիս առնիցէ , պտուղն մեծագոյն լինիցի , և վտանգ սնավառութեանն՝ սակաւ :

'Ի վերայ այսորիկ , և այլոց ևս սոյնպիս սեաց՝ կարի օգտակար է վարդապետութիւնը նը հօրն իգնատիոսի , զոր զնէ իբր հիմն վասն ընտրութեանց , և որոշէ երիս աստիճանս կամ եղանակս խոնարհութե , որոց երրորդն՝ և առաւել կատարեալն է , զի 'ի հանդիպել երկուց իրաց միօրինակ պատկանելոց առ 'ի փառս և 'ի ծառայութիւն ԱՅ , զայն ընտրեցից ես՝ որ ինձ յառաւել արհամարհանս իցէ և 'ի նուաստութիւն , լինել այսու յաւէտ նմանեալ Քնի փրկչին և Տն , որ զարհամարհն լինել կամեցաւ և զնուաստանալ վասն մեր : Կայ յայսմ և այլբարի մեծ . զի յիրս այսպիսիս սակաւ է շահ առանձնային . ոչ ունի մարդ պատճառս ինքնախնդիր լինելոյ այսպիսեօք . ոչ դոյ 'ի սոսա վտանգ ունայնասէր լինելոյ , որպէս դոյ 'ի վաեմ և 'ի պատուական իրս : 'Ի ցածուն պաշտամունս լինին կըթանք խոնարհութե և սիւ-

ըոյ միանգամայն . և նորօք ուժգինս պահ~  
պանի առաքինութիւն խոնարհութեան՝ իբր  
իւրովք յատուկ ներգործութեամբք . իսկ  
՚ի բարձրագոյնս և ՚ի վսեմականս՝ ՚ի կիր  
արկանի սէրն վտանգաւ խոնարհութե .  
և այս շատ էր մեզ՝ ոչ միայն չգանկալ  
այնց , այլ երկնչել ևս :

### Գ Լ Ո Ւ Խ ԺԵ .

Հաղաքս համակամութե ընդ Աստուծոյ ,  
զոր ունել պարտ է մշղ ըստ Բաշխման  
բնաւորական ձրեց և պարգևաց :

**Ա**րժան է իւրաքանչիւրութեք գոհ լիւ  
նել զոր ինչ ջնորհեալ է նմա ԱՃ՚ի ձրից  
բանաւորութե , հանճարոյ , ճարտարու-  
թե , և այլոց կատարելութեց պարզելոց  
յԱՅ . ոչ պիտոյ է ցաւագնիլ կամ տիսրիլ  
սակս չունելոյն այնչափ ճարտարութիւն  
կամ ձիրս՝ որչափ այլ ոք , կամ զի չէ ար-  
դոյ՝ որչափ նա : Այսմ խրասու կարօ-  
տեալ եմք ամենեքին . վասն զի թէ՛և հա-  
մարին ոմանք թէ զերաղանցեալք իցեն  
յիրս ինչ , բայց ունին միշտ զայլս դիմա-  
կշիռս , որք զնա ցածուցանեն , որով և հա-  
մակամութեա այսմ պէտս ունին : Վասն  
որոյ պիտոյ է մեզ կալ զդաստ և պա-  
տրաստական . զի է սովորութիւն դիւին ընդ

այս ճանապարհ յարձակիլ 'ի վերայ բաղւ  
մաց : Կաս դու յուսումնարանի , և տե-  
սանես՝ զի քո աշակերտակից յառաջէ 'ի  
յաջողակութե՛ և 'ի հանձար , ձեռնարկէ  
և լուծանէ քաջութե՛ . գուցէ նախանձուկ  
իմն շարժեացի 'ի քեղ . որ թէպէտե ոչ  
տայցէ զարիլ ընդ բարիս եղօրքո , որ է  
տիրապէս մեղք նախանձու , բայց տեսանե-  
լով զի դասակիցք քո երադեն իւրեանցն  
ուշիմութե՛ , և դու յետնիս , անժաման  
դտեալ նոցա , և կորադլուխ , վասն այսր  
տիսրութի կրես և թախիծ , և կաս 'ի միջի  
այլոցն իբր ամօթերես . յորմէ հասանէ-  
քեղ լքումն , վհատութի , և փորձութի  
թողուլ 'ի բաց զուսումն , և երբեմն զկրօ-  
նաւորութի ևս : Այս փորձութի արար  
զումանս դասալիք 'ի կրօնէն . զի ոչ պնդա-  
պէս հիմնացեալ էին 'ի խոնարհութեան :  
Կամէր այն ոք վերամբառնալ , և 'ի բոլո-  
րից միջի լինել նշանաւոր , մինչե հոչակ  
արձակել ընդ ամենայն դաւառն թէ նա-  
է քաջուսումն քան զուսումնակիցն հա-  
մայն : Սակայն խոտորնակի կատարելով  
երազոցն , այնչափ վատասրտի , մինչե  
պատճառս առեալ զիւին , առաջի զնէ  
նմա թէ չկարէ զերծանիլ յամօթոյ անտի  
և 'ի տիսրութին՝ բայց լքանելով զկրօնա-  
ւորութին : Ոչ նոր է այս փորձութիւն ,  
այլ վաղժամանակեայ :

Պատմի 'ի ժամանակագիրս կարգի սբյն  
Դոմինիկոսի օրինակ ինչ յարմարաւոր

ասացելոցս , յաղագս մեծին Ապերտի ,  
որ վարդապետ էր սքյան թռովմայի Ազուի  
նացւոյ : Այս Ալպերոտ ՚ի մանկութէ ան-  
տի պաշտօնասէր էր յոյժ առ փառաւո-  
րեալ Կոյսն Տիրուհի , և զօր ամենայն կա-  
տարէր ՚ի պատիւ նորա աղօթս , որոյ բա-  
րեխօսութք եմուտ ՚ի կարգ սքյան Դոմինի-  
կոսի ամաց վեշտասանից . և ասի անտա-  
նօր՝ թէ փոքրիմաց էր պատանին , մանա-  
ւանդ թանձրամիտ իսկ և վատառու յուս-  
մունս . և զի բաղումք յաշակերտակցացն  
սրամիտք էին , այնչափ հարկանէր ՚ի սիրոտ ,  
մինչև փորձութիւ սաստիկ բռնացեալ ՚ի  
նա , արկ ՚ի վտանգ՝ և ՚ի պատրաստի ան-  
գամ մերկանալոյ դպեմն : Մինչդեռ յայս  
յուղմունս խորհրդոց էր , օդնութիւնն  
սքանչելի ընկալաւ ՚ի տեսլեան : Կայր ՚ի  
քուն գիշերոյ , և թուէր նմա կանգնել  
սանդուղս ՚ի պարիսպ վանացն՝ և ելանել  
դնալ ՚ի բաց . այն ինչ եղեալ զոտոս ՚ի սան-  
դուղս անդր , ետես ՚ի գաղաթանն չըրս  
տիկնայս մեծարոյս , որոց մին երևէր լի-  
նել տիրուհի այլոցն : Իբրև մօտ եհաս առ  
նոսա , կալաւ զնա մի ՚ի տիկնայն , և ըն-  
կէց ՚ի վայր , արգելեալ չելանել ՚ի վա-  
նացն . իսկ նա պնդեալ կամէր վերելակել  
դարձեալ , և երկրորդ տիկինն մղեաց զնա  
՚ի վայր՝ որպէս առաջինն : Երրորդ ան-  
գամ կամեցաւ ելանել , և տիկինն երրորդ  
եհարց նմա՝ թէ էր վասն մեկնիլ կամէր ՚ի  
վանացն . և նա ետ պատասխանի պատկա-

ռեալ դիմօք . Տիկին կամիմ 'ի բաց գնալ ,  
զի տեսանեմ զայլ ընկերակիցս իմ յա-  
ռաջել յուսումն իմաստասիրութեան , և  
ես զուր վաստակիմ . ամօթն զոր վասն  
այսր կրեմ , ստիպէ զիս թողուլ զկրօնա-  
ւորութիւն : Յայնժամ ասէ ցնա տի-  
կինն . այն տիրուհի զոր տեսանես դու ,  
ցուցեալ մատամբ զորրորդն , նաև է Մայրն  
Այլ և Թագուհին երկնից , և երեքին մեք  
նորա աղախնայք եմք . 'ի նաև ապըսպարեա  
զքեղ , և մեք օգնեմք քեղ աղաշել զնա  
զի միջնորդեսցէ առ սիրելի Որդեակն իւր,  
տալքեղ հանձար դիւրընկալ առ 'ի կա-  
րօղ լինելոյ յառաջել յուսումնս : Զայն  
լուեալ Ալպերտի՛ լցաւ ինդութեամբ . և  
ածեալ 'ի տիկնոջէն առ փառաւորեալ  
կոյսն , և գթասիրաբար ընկալեալ 'ի նմա-  
նէ հարցաւ թէ զի՞նչ ցանկայր և խնդրէր:  
Ետ պատասխանի Ալպերտ . ցանկամ ու-  
սանել զիմաստասիրութիւն , զոր ընթեռ-  
նում և ոչ խմանամ : Ասէ ցնա Թագուհին  
երկնից , կալ հանդարտիկ և պարապիլ  
ուսմանն . զի հասանէ նմա լինել այր  
երեելի յայնմ գիտութե : Այլ զի գի-  
տասցես ասէ թէ յինէն տուեալ է այն ,  
և ոչ 'ի քումմէ հանձարոյ , կամ 'ի յաջո-  
ղակութէ , աւուրբք յառաջ քան զվախ-  
ճան քո՝ յուսուցանելն անդ հրապարա-  
կաւ մոռանայցես որչափ ինչ գիտացեալ  
իցես : Այսու տեսլեամբ միիթարեալ Ալ-  
պերտի , յայնմ օրէ այնչափ յառաջեաց

յուսումն ոչ միայն խմաստասիրութեան ,  
այլև Ածաբանութե և նը Գրոց , որչափ  
մկայեն մատեանքն զրով աւանդեալք . և  
երիւք ամօք նախ քան զվախճան իւր՝ մինչ  
դեռ դաս ասէր 'ի Կողոնիա , բարձաւյու-  
շոյ յիշատակաց նորա բովանդակ որ ինչ  
մակացութեց էր ծանօթութի . և եկաց  
մնաց իբր այն թէ 'ի կեանս իւր ուսեալ  
ընաւ չէր : Եւ դուցէ դիպաւ այս 'ի պա-  
տիժ փոքու համակամութեանն առ Ած  
յայն ձիրս և յաջողակութեան՝ զոր Այ  
շնորհեալ էր նմա : Յայնժամ յիշելով Աւ  
պերսի զտեսիլն որ եղե առ նա՝ մինչ ելա-  
նել կամեր 'ի վանացն , պատմեաց յատենի  
անդ առ ունկնդիրսն որ ինչ անցեալ էր  
ընդ նա . և հրաժարեալ 'ի նոցանէ՝  
առանձնացաւ 'ի վանս իւր , պարապեալ  
գլխովին յաջօթս և 'ի խոկմունս :

Ապա զի մի և մեղ հասանիցէ յայս-  
պիսի լինել վտանգս , պիտոյ է կալ զգոյշ  
և պատրաստեալ . իսկ պատրաստութիւն  
կարեռ 'ի սոյն՝ լինիցի բազում խոնար-  
հութին : Վասն զի 'ի պակասութէ սորա  
յառաջ զայ ընդդիմութին ամենայն , ոչ  
կարացեալ քո հանդուրժել թէ համարի-  
ցիս յետինն ուսանողաց : Ուստի ելթէ  
մարդիկն գան ասել քեզ՝ ոչ զարդանաս  
դու յուսմունս . տես ահա ընկերք քո՝  
Ածաբանք են , և ապա Վարդապետք ,  
Քարոզատուք . յայսմ բազում խոնարհու-  
թին պէտք են քեզ , և բազում համակա-

մութեն առ ԱՅ : Զնոյն պէտս ունիցիս  
յետ աւարտելոյ ուսմանց , յորժամյառ  
նէ 'ի քեղ փորձուի , այնու զի չես 'ի չափ  
այլոց . զի չունիս ձիրս քարուելոյ , հան-  
դիսանալոյ , կենցաղավարելոյ՝ որպէս ու-  
նի միւսն , և ոչ զի յանձն լիցին քեղ գոր-  
ծառնութիք , և ոչ զի լինիցիս 'ի համարի:  
Զնոյն ասել կայ և վասն նոցա՝ որք 'ի  
կարդ ուսումնականաց ոչ են . որոց գան-  
խորհուրդք և փորձութիւնք . երանի թէ  
ասելով լինէի զրոց աշակերտ , կամ Քա-  
հանայ , կամ քաջ գիտնական , առ 'ի կա-  
րելոյ օգուտ մատուցանել հոգւոց : Մարթ-  
է երբեմն այնչափ նեղել գքեղ փորձու-  
թեանն , մինչեւ 'ի վտանգ արկանել զկո-  
չումնգ , այլև զոգւոյ փրկութի , որպէս  
դիպաւ ոմանց :

Այս վարդապետութի՝ հանրական է ,  
և կարէ այր իւրաքանչյւուր յանկել յանձն  
ըստ վիճակի իւրում : Ուստի կարեոր է  
զի ամենեքին 'ի համակամութի ընդ ԱՅ  
քաջակիրթք իցեն , շատանալով իւրաքան-  
չյւուր ընդ ձիրս տուեալս յԱՅ , և ընդ վի-  
ճակն յոր կարդեալն է . և ոչ կամիցի լի-  
նել առաւել քան զոր է ըստ կամելոյն  
ԱՅ : Երանելի նըն Օգոստինոս 'ի վերայ  
քանից Ասղմոսերդուին . (ՃՇ. 36.)  
\* Խոնարհեցո՞ զսիրտ իմ 'ի վկայութիւնս  
քո , և մի յագահութի , || ասէ թէ այս  
եղեւ սկիբուն և արմատ ամենայն շարեաց  
մերոց . զի նախածնօղք մեր կամեցան լի-

նել առաւելքան զոր եղենն յԱՅ, ցան  
կացան աւելի ունել քան զառ՝ ի յայ  
տուեալն նոցա • վասն որոյ անկան՝ ի վի-  
ճակէն՝ յոր կային, և զոր ունէինն՝ կո-  
րուսին : Առաջի արար նոցա դեն զնայծն  
զայն, \* Լինիցիք իբրև զատուածո՝ ճա-  
նաչել զբարի և զըար : || (Ծննդ. է. 5.)  
Այսու պատրեաց զնոսա և կործանեաց •  
և զայս առաք ժառանգութի՝ ի նոցանէ,  
ունել ցանկութի ինչ ածանալոյ, և զան-  
միտ զրգուուն կամելոյ՝ զի առաւել իցենք  
քան զոր եմքն : Եւ զի այնու օրինակաւ  
կամագիւտ եղեւ դեն առ նախածնօղս մեր,  
հնարի նա մարտնչել և ընդ մեղ նովին  
արհեստիւ, թելադրելով մեղ ցանկանալ  
յառաւելն քան զոր Ած կամի լինել մեղ,  
և ոչշատանալընդ ձիրս պարդեեալս մեղ  
առ՝ ի նմանէ, և ոչ ընդ վիճակն՝ յորում  
կացուցեալ է զմեղ : Եւ սորին վասն ասէ՝  
սբն Օդոստինոս, թէ մարդարէն հայցէ  
յԱՅ. Տէր, տուր ինձ սիրտ անցանկասէր,  
և հաւատարիմ խնդրող քոց հաճոյից և  
կամացդ, այլ ոչ խմոց շահուց և դիւրու-  
թեց : Եւ ադահութի՝ ասէ, իմանի աս-  
տանօր ամենայն ազդ շահասիրութեն, և  
ոչ արծաթսիրութիւն միայն :

Արդ՝ զի յաջողեսցէ ունել առնենեցուն  
մեղ զայս անզանաղանութի և զդիւրամը-  
տութի, միաբանիլ ընդ ածային կամաց,  
և լինել հաճ ընդ ձիրս շնորհեալս մեղ՝ ի  
Տէ, և ընդ վիճակ կամընդ աստիճան՝ յո-

բում եղեալն է , բաւական է գիտել թէ  
 այս են կամք ԱՅ : \* Այլ զայս ամենայն  
 յաջողէ՝ ասէ սըն Պօղոս , մի և նոյն հոգի ,  
 և բաժանէ իւրաքանչիւր որպէս և կամլի : ||  
 (ա . Կորնթ . ժը . 11 : ) Անտանօր 'ի մէջ  
 առեալ ածէ Առաքեալն զնմանաբերութիւն  
 մարդկային մարմնոյ , զոր և մեք եղաք վեր-  
 բագոյն ըստ այլ բանի . և ասէ թէ որպէս  
 ԱՃ եղ զանդամն 'ի մարմնի զիւրաքանչիւր  
 ըստ որում կամեցաւ , և ոչ տրտնջեն ոտք  
 այնու զի չեն դլուխ , և ոչ ձեռքն՝ զի ոչ են  
 աչք , սոյնպէս արար և 'ի մարմնի եկեղեց-  
 ւոյ , և նոյն է 'ի մարմնի Կրօնին : Եղ ԱՃ  
 զիւրաքանչիւր 'ի տեղի և 'ի պաշտօն՝ յոր  
 ինքն հաճեցաւ . ոչ դիպուածով է այս ,  
 այլ առանձին խորհրդով և տեսչութեամբ  
 նորա : Վամն որոյ եթէ կամեցեալ է ԱՅ  
 լինելքեղ ոտն , ոչ են իրաւունք՝ զի դու-  
 դլուխ լինել կամլցիս . և թէ կամի ԱՃ  
 զի ձեռն իցես , ոչ իրաւացի է թէ աչա-  
 նալ կամլցիս : Ո'վ , քանի բարձունք և խո-  
 րինք են դատաստանք ԱՅ . ո խելամուտ  
 լինել կարիցէ . \* Զի ովլ է մարդ որ գիտի-  
 ցէ զնորհուրդս ԱՅ : || ( Դմաստ . թ . 15 : )  
 Ամենայն ինչ առ 'ի քէն կարգեալ է Տ'ր .  
 որով յամենայնի քեղ վայել է դովութիւն .  
 դու գիտես զոր ինչ իւրաքանչիւրում տալ  
 արժան է , և ոյր վասն ոմն ունիցի բա-  
 զում , և ոմն սակաւ . ոչ մեղ անկ է ըն-  
 տրել զայն : Զի գիտես դու 'որ անցք ընդ  
 քեղ անցանէին ' եթէ ունէիր զանձար

մծ և զյաջողակութիւն . զլի գիտես՝ թէ  
 յունելքո զճարտարութի՝ ի բեմբասացու-  
 թի , զսուռն բազմութի՝ ունկնդրողաց ,  
 զշոշակ և զվարկ , գուցէ ընդ այս ճանա-  
 պարհ ՚ի կօրուստ գնայիր , որպէս գնացին  
 այլք՝ ամբարտաւանեալք յանձինս և փա-  
 ռամոլեալք : Գիտնաւորքն ախորժեն լի-  
 նել երեւելի , ծանուցեալք և վարկուցեալք  
 իբր գիտունք , ասէ Թառվմաս գեսեացի :  
 Եթէ երկու խերեւէշ հանձարովդ զոր ու-  
 նիս , և երեք դանկ զրադիտութքդ , եթէ  
 միջակային տեղեկութքդ , և գուցէ քան  
 զմիջակայինն սակաւու , այնչափ սնափառ  
 ես և փբացեալ , մինչ համարիս զքեղ և  
 համեմատես , գուցէ և յառաջադաս առ-  
 նես քան զայլս , և ծանր թուի քեզ՝ զի ոչ  
 ընտրեցար յայս կամ յայն գործ . զի՞նչ  
 ապա ունէիր առնել՝ եթէ գերազանցութք-  
 էիր յայտուիկ . զի՞նչ , եթէ կային ՚ի քեզ  
 ձիրք գերազանցք և աննմանք : Թեք ծնա-  
 նին ՚ի մրջիւնս առ ՚ի վնաս նոցա . գուցէ  
 սոյնօրինակ ծնանէին և ՚ի քեզ : Արդարե-  
 եթէ աչս ունէաք , և ոչ աչանոցս , և ոչ  
 անձնակամ իղձս , մատուցանէաք ԱՅ գո-  
 հութիս անբաւ՝ յայն զի կարգեաց եղ  
 զմեզ ՚ի վիճակ ցածուն և ՚ի նուաստ , և  
 զի ետ մեղ ձիրս փոքրունս , և աջողակու-  
 թիւն սակաւ , ասելով առ Տի՛ թէ բարե-  
 բարութի մեծ համարիմ՝ չունել բազում  
 ինչ յորոց լինէր ինձ առ մարդիկ գովեստ  
 և պատիւ : Բարւոք ճանաչէին Առւրբք

զվտանգն մեծ՝ որ կայ յոլովակի յայտապիսի  
դերաղանց հանգամանս . ուստի ոչ միայն  
ցանկային յայնս , այլ դանդիտէին ևս 'ի  
վտանգէ ամբարհաւաճելոյ և կորնչելոյ :  
Այսու առաւել ևս բարեհաճոյացան առ-  
Ած , որ կամի՝ զի ծառայք իւր իցեն յա-  
ւէտ խոնարհք , քան մեծք :

Երանի՞ էր մեղ՝ ճանաչել անշուշտ , թէ  
ամենայն ինչ խաղ է՝ բաց 'ի կատարելոյ  
զկամս ԱՅ . երանի էր մեղ հաստատել զա-  
մենայն զմեր հաճոյս 'ի հաճոյսն ԱՅ :  
Եթէ մինդ դու առանց դպրութեն , և միւս  
դու՝ սակաւ դպրութեդդ առաւել հաճես  
զԱծ , առինչ միդ զզպրութիւն ինդրես ,  
և միւսդ աւելի դպրութի , յաջողակութի  
և ձիրս : Եթէ սակս պատճառաց ինչ ար-  
ժան էր քեզ հետամուտ լինել այսոցիկ ,  
լինելոց էր այն առ 'ի հաճել զԱծ , և լաւ  
ևս ծառայել նմա : Իսկ արդ եթէ առա-  
ւել պաշտի Ած քով անդպրութեդ , կամ  
միւսոյն չունելով զաւելի դպրութիւն և  
յաջողակութի , որպէս է իսկ հաւաստի ,  
ԱՅ այնպէս բաշխելովս , էր վասն ապա  
վշտագնիս դու . ընդէ՞ր առաւելել կամիս  
քան զոր Ած կամի , և զայն կամիս՝ որ  
քեզ ոչ վայել է թէ իցես : Ու ընդունելի  
եղեն ԱՅ մեծամեծ պատարագն՝ զոր  
Այտուղ մատուցանել կամեցաւ ԱՅ .  
վասն զի յայն վարէր ըստ իւրումն կամի .  
սոյնպէս և ոչ քո վերամբարձ ցանկութիդդ  
հաճոյականք լինիցին ԱՅ : Մեր օդուտ ,

և յառաջադիմութիւն և կատարելութիւն չէ  
և չէ հաստատեալ՝ ոչ՝ ի լինելն գիտնաւոր  
կամ Քարոզատու, ոչ յունել պատուա-  
կանութիւն և ձիրս, ոչ՝ ի պարապիլ ակա-  
նաւոր գործոց, այլ՝ ի կատարել զկամս  
ԱՅ, բարւոք համարս տալ զորմէ յանձ-  
նեալ և հաւատացեալ է՝ ի ձեռս մեր, և  
'ի կիր առնուլ արժանապէս զքանքարն  
աւանդեալ մեզ. ուստի յայս 'ի սոյն դնել  
պարտ է զաշ, և ոչ յայլս. զի այս է զոր  
կամի 'ի մէնջ ԱՅ:

Յարմարաւոր է յոյժ՝ ի բացայայտու-  
թիւրաց՝ նմանութիւն առեալ՝ ի Դերա-  
սանաց կամ 'ի կատակերգուաց. յորում  
վայելչութիւն և յաղթանակն ոչ չափի ըստ  
անձննն՝ զոր երևեցուցանեն, այլ ըստ բա-  
րիոք եղանակին և ըստ քաջադիպութենն՝  
որով իւրաքանչիւր նոցա խօսի, շարժի և  
յանդիման կացուցանէ: Այսն որոյ եթէ  
բարեվայելչաբար առնէ զիւրն գործ երևե-  
ցուցիչն շինականի ուրուք, քան զնա՝ որ  
զկայսր ոք ձեւացուցանէ, առաջինն այն  
առաւել համարեալ է և գովասանեալ՝ ի  
մերձակայից, և առաւելապէս հատուցումն  
ընկալեալ՝ ի գլխաւորաց: Ըստ սմին օրիւ  
նսկի, այն՝ զոր նկատէ ԱՅ և մեծ վարկա-  
նի 'ի մեզ յառաջիկայ կեանս, որ է ար-  
դարե բովանդակ երեսոյթ իմն և կատա-  
կերգութիւն արագավախճան, և երանի  
թէ չիցէ եղերերգութիւն, ոչ է անձնն՝ զոր  
երևեցուցանենք, ոմն զմեծաւորի, ոմն

զքարողչի, ոմն զաւանդապահի, ոմն զդըռանապանի, այլ եթէ իւրաքանչիւրոք դիսպողաբար վարեսցի ըստ անձինն զոր ՚ի դէմ, ածէ. վասն որոյ եթէ օգնիչն լաւ ևս կատարէ զիւր պաշտօն, և լաւ ևս յանդիման առնէ զիւր անձն, քան զոր քարողիչն կամ մեծաւորն առնեն զիւրեանցն, առաւել արգոյ լիցի այնպիսին առաջի ԱՅ, առաւել վարձատրեալ և պատուեալ: Ե՛ երբէք՝ զի գուցէ ոք երևեցուցանել զդէմն թագաւորի՝ ոչ էր յաջողակ. և երևեցուցանելով զծառայի, կամ զհօվուի, պատուեցաւ և տարաւ զյաղթանակն: Սոյն պէս և դու գուցէ չէիր գիտակ զքարողչի կամ զմեծաւորի կրել դէմն, այլ զխոստովանահօր լաւ ևս երևեցուցանես, կամ միւս այլ զօղնականի: Գիտէ ԱՃ ամենաբարւոք մասնաւորել զպարզես, և տալ իւրաքանչիւրում զդէմն՝ որ նմա անկէ. \* իւրաքանչիւր ըստ իւրում կարի: || (Մատթ. ին. 15:) Համեմատ գոյին և ուժոյ իւրաքանչիւրոց, ասէ նբ Աւետարանն, բաժանեաց Տին զքանքարս իւր: Վասն որոյ մի ոք ցանկասցի այլում դիմաց, կամ այլում քանքարոյ. այլ փոյթտարցի այր իւրաքանչիւր վայելքաբար տանել զդէմն՝ որ նմա տուեալ է. բարւոքապէս յարդել զքանքարն ընկալեալ, և տալ ընդ այնը համար արդար. զի այսուօրինակաւ առաւել հաճոյասցի ԱՅ, և մեծագոյն առնուցու վարձս:

## Գ Լ Ո Ւ Խ Ժ Զ .

Յաղագս համակայութեան ընդ Աստու-  
ծոյ՝ զոր պարագ է մշղ ունել՝ ի հի-  
ւանդութիւնս :

Որպէս առողջութիւն պարգև է Այ,  
նոյնպէս պարգև Այ է և հիւանդութիւն,  
զոր առաքէ Տը՝ ի փորձել զմեզ, ՚ի կշտամ  
բել և յուղութիւն ածել, և վասն այլ  
ևս բազում բարեաց և շահից, որ ՚ի հիւ-  
անդութէ անտի յոլովակի յառաջդան.  
զօր օրինակ, ճանաչել զմեր տկարութիւն,  
՚ի միտ առնուլ զմեր սնափառութիւն, հեռի  
կալ ՚ի սիրոյ երկրաւորաց և ՚ի զգայական  
ցանկութեց, նուաղել զոյժ և զանկարդ  
բերմունս մեծի թշնամոյս մերոյ, որ այն  
ինքն է մարմինն . և յուշ ածելթէ երկիրս  
ոչ է մեր հայրենիք, այլ իբր ինւան, և  
տեղի աքսորանաց մերոց, և այլ ևս այս  
պիսի օգուտոք : Վասն որոյ ասէ իմաս-  
տունն . \* Հիւանդութիւն ծանր՝ արթուն  
առնէ ՚ի քնոյ : || (Սիրաք. լա . 2:) ուստի  
այնպէս համակամ ընդ Այ պարտիմք լի-  
նել ՚ի հիւանդութեն, որպէս յառողջու-  
թեան, ընդունելով զայն իբրև ՚ի ծեռանէ  
Տն՝ յորժամ հաճոյ իցէ նմա առաքել  
մեզ : Ոմն ՚ի հարցն առաջնոց ասէր աշա-

կերտին իւրում. մի տրտմիր որդեակ՝ ընդ  
հիւանդութի, այլ գոհացիր վասն այնը  
զայ. վասն զի երկաթ գոլով քո, հրով  
սրբեացես ղժանդն. և ոսկի գոլովքո, հրով  
և փորձեացիս: (Այս է բան հօրն Սիաոյի:  
Վարք հրց. եր. 182:) Առաքինութիւն  
մեծ է, և ածպաշտութի մեծ՝ գոհանալ  
զԱՅ՝ ի հիւանդութե:

Պատմէ Սուրիոս ՚ի վարս սրբուհւոյն  
Քլարայի, թէ զքսանեութ ամկրեաց նա  
հիւանդութի ծանր, մեծ ունելով և զհամը  
բերութին, որ զի յայն բովանդակ ժամա-  
նակն ոչ լսելի եղեւ բնաւ տրտունջ ընդ  
ղժուարին տառապանսն, այլ յաւէտ գո-  
հանալ զՏէ: Իսկ ՚ի յետին հիւանդութեն  
մեծալէս վշտագնեալ, մինչ զի զաւուրս  
եօթնետասն չկարել առնուլ զոդեպահիկն,  
իբրև միսիթարէր զնա խոստովանահայր  
իւր Եղբայր Ռինալտոս, սրտապնդելով  
՚ի համբերել երկարատե այնմ մարտիրո-  
սութեն ղժուարին հիւանդութեցն, նա  
այսպէս արար պատասխանի: Յօրէ յորմէ  
ծանեսայ զշնորհա Տն մերոյ Յնի Քնի՝ միջ-  
նորդութք սբյ ծառային իւրոյ Փրանչիս-  
կոսի, ոչինչ հիւանդութի եղեւ ինձ խիստ,  
ոչինչ պատիմ՝ վշտագնիչ, ոչինչ ապաշ-  
խարութիւն՝ ծանր: ՚ի սոյն նիւթ՝ սքան-  
չելի են՝ և գերօրինակ ՚ի խրախոյս և ՚ի  
սփոփանս հիւանդաց՝ վարք Անդուինեայ  
կուսի. որոյ երեսուն և ուժ ամ կա-  
ցեալ անդադար յանհնարին և յանօ-

ըինակ ախտոց ցաւոց, ընդ երեսուն ամս  
չկարէր և ոչ կանգնիլ անդամյաղատին  
անկողնոյն, կամ զոտսն դնել՝ի գետնի .  
ուր այց առնէր նմա Տէ՛ մեծամեծ պար  
գեօք :

Բայց քանդի երեսութանան մեղ պատ-  
ճառք ինչ մասնաւորք՝ պատրուակաւ մե-  
ծագոյն բարւոյ, արգելուլ զմեղ յաղատ  
համակամութէն առ Ած, մատիցուք տալ  
պատասխանի առ՝ի լուծումն նոցա : Եւ  
նախ առաջին, ասել ունի ոք . յինէն կողմ  
մանէ չէ ինչ փոյթ թէ հիւանդ լինիցիմ,  
կամ առողջ. բայց ցաւ է ինձ այն՝ զի  
թուի տալ ծանրութի Միաբանութեան,  
և վիշտու մենաստանին : Պատասխանեմ .  
այդ է դատել զմեծաւորս և զվանականսն  
որպէս նուաղեալս յեղբայրսիրութենէ և  
'ի համակամութէ առ Ած : Նոքին իսկ  
մեծաւորք պարապին 'ի կատարելութիւն,  
և յընդգրկել զամենայն ինչ իբրև յԱյ  
ձեռանէն եկեալ, որով և միաբանիլ ընդ  
կամաց Այ. ուստի եթէ կամ է Այ, զի  
դու կայցես հիւանդագին, և նոքա զբա-  
զեցին 'ի խնամել և 'ի հանդուցանել  
զքեղ, զնոյն կամիցին և նոքա . և որպէս  
դու բառնապ զիսաչն տուեալ քեղ յԱյ,  
բարձեն և նոքա զբաժինն որ նոցա ան-  
կանի համակամութի մեծաւ ընդ Այ :

Այլ աօիցես . տեսանեմ յայտնի զսէրն  
մեծ՝ զոր յայսոսիկ 'ի կիր առնու Միաբա-  
նութին : Որ զիսն վշտագնէ, ոչ այլ ինչ

Ե բայց պտուղն զոր առնել կարէի ուսա-  
 նելով, քարողելով, կամ խոստովանեցու-  
 ցանելով, և պակասի այն՝ կալով հիւան-  
 դաղին։ 'Ի դէպ պատասխանէ այսմ՝ նըն  
 Օգոստինոս, թէ ոչ դիտեմք մեք՝ արդեօք  
 իցէ՞ լաւագոյն առնել զոր կամիմքն, թէ  
 թողուլ զայն 'ի բաց . ուստի մնայ մեզ  
 խորհել և 'ի կարգի դնել զերս ըստ չափու  
 կարողութե մերոյ . և ապա եթէ առնել  
 յաջողեսցէ ըստ օրինակին՝ զոր խորհե-  
 ցաքն, ոչ ընդ այն խնդալ պարտիմք՝ զի  
 կատարեցաւ խորհեցեալն 'ի մէնջ և կամե-  
 ցեալն, այլ զի հաճեցաւ Տը լինել այնմ  
 այսպէս։ Խակ եթէ ոչ 'ի գործ ելանիցէ զոր  
 խորհեցաքն և կարգադրեցաք, ոչ վասն այն  
 խոռվիլ պարտ է, և զիսաղաղութին կո-  
 րուսանել։ \* Իրաւացի ևս է, ասէ նըն  
 Օգոստինոս, զի մեք զնորա կամացն, քան  
 թէ նա մերումն զհետ երթիցէ։ || Եւ  
 կնքէ զբանն մեծահանձար վճռաւս։ \* Ո՛չ  
 ոք ճահողագոյնս տնտեսէ զոր առնելոց է,  
 բայց որ մտադիւր կայ ոչ առնել զոր  
 ածային իշխանութին արգելու, քան թէ  
 յորդորագոյն 'ի գործել զոր խորհի մտա-  
 ծութին մարդկային։ || ( Գիրք ժկ. յա-  
 զագս Երախայ. զլ. ժկ. ) Արդ՝ սովոր  
 օրինակաւ, և անդանաղան մտօք պար-  
 տիմք խորհիլ և կարգաւորել զոր ինչ կայ  
 մեզ առնել, այս է՝ կալով միշտ 'ի պա-  
 տրաստի միաբանիլ ընդ Այ կամացն,  
 եթէ ոչ 'ի դլուխ ելանիցէ խորհեցեալն։

Այսպէս ոչ լինիցի մեղ խռովիլ կամ  
տրտմիլ՝ յորժամ վասն հիւանդութեան  
կամ յայլ նմանօրինակ պատճառաց ոչ  
բաւիցեմք առնել զարդեալն մեր և զկար-  
գեալն, թէպէտե իցեն այնք կարի օգտա-  
բերք հոգւոց։ Վայելուչ իմն ասէ հայրն  
Ալիլա՝ զրելով առ հիւանդ քահանայ  
ոմն։ Մի հաշիւ առներ այնմ զոր գոր-  
ծէիրդ առողջ գոլով, այլ թէ որչափ հա-  
ճոյանաս Այ, գոհ լինելով ընդ հիւան-  
դութիդ։ Եւ եթէ խնդրես դու, որպէս  
հաւատամ, զկամն Այ պարզաբար, զի՞  
փոյթ է քեզ լինել յաւէտ առողջ քան  
հիւանդ, ուր ամենայն մեր բարի է կամքն  
Այ։

Սուրբ Յովհան ոսկեբերան ասէ, թէ  
առաւել շահեցաւ երանելին Յուր, և  
առաւել հաճոյացաւ Այ, ասելով, \* Որ-  
պէս Տն հաճոյ թուեցաւ, նոյնպէս և եղե.  
եղիցի անուն Տն օրհնեալ. || (ա. 22 : )  
համաձայնեալ այնու ընդ կամաց նորա  
յայն տառապանսն և 'ի կեղսն եկեալս  
յայ, քան թէ բազմապատիկ ողորմու-  
թեամբն և բարեգործութ՝ մինչ առողջն  
կայր և մեծատուն։ Այսպէս և դու քա-  
ջահաճոյ ևս լիցիս Այ համակամութե-  
ընդ նմա 'ի հիւանդանալ քում, քան թէ  
որչափ ինչ առնել կարօղ էիր յառողջու-  
թե։ Զնոյն ասէ և հոչսկելին նըն իռ-  
նավենդուրա. \* Կատարելագոյն է զընդ-  
զիմակսն տանել համբերութե, քան 'ի

բարեգործութիս քրտնավաստակ լինել : ||  
 Ո՛չ է Այ պէտս ինչ՝ ոչ յինէն և ոչ՝ ի քէն,  
 'ի գործել ղպտուզն զոր կամի յեկեղեցւոջ  
 խրում : \* Ասացի Տն , Տը իմ ես դու , և  
 բարիք իմ ինձ ՚ի քէն են : || (Աազմ. ժե. 2.)  
 Կամի նա այժմ քարողել քեղ հիւանդու-  
 թքն , և կամի ուսանել քեղ դհամբերու-  
 թի և զսոնարհութիւն : Յանձն արայած՝  
 առնել զոր առաւել պատշաճ դատի նա ,  
 և զոր դու ոչ դիտես . եթէ արժան էր մեղ  
 ըստ իրիք պատճառի ցանկալ առողջութեն  
 և ուժեղութեան , լինելոց էր այն առ ՚ի  
 պարապելոյ ՚ի ծառայութի Այ , և առա-  
 ւել հաճոյանալոյ նմա : Ապա ուրեմն եթէ  
 Տըն առաւել ծառայեալ համարի , և  
 ախորժէ առաւել՝ զի պարապիցիմ ՚ի հե-  
 ւանդանալ , և համբերութք կրել դվիշոս  
 հիւանդութեն , եղիցին կամք նորա . զի  
 այս է լաւն , և որ ինձ առաւել պատշաճի :  
 Թողացոյց Տը , զի նը Առաքեալն Պօղոս  
 քարողն հեթանոսաց՝ կայցէ բանտարգել  
 զամս երկուս . (Գործ . իդ . 27 .) և այս ՚ի  
 ժամանակի անդ՝ յորում բազում պէտս  
 ունէր Եկեղեցին նորածնեալ : Մի քեղ  
 ապա ծանր ինչ թուեսցի , եթէ արդելա-  
 կան ունիցի զքեղ Ած հիւանդութեամբ  
 զամիս երկու , կամ զսմս երկու , կամ  
 զամենայն կեանս՝ եթէ հաճոյ նմա իցէ .  
 ոչ ես դու այնչափ պիտանացու Եկեղեց-  
 ւոյն Այ , որչափ նըն Պօղոս էր առա-  
 քեալն :

Ոմանց ըսմբոնելոց՝ ի հիւանդութիւնս, կամ՝ ի տկարութիս և յանառողջ կիրս երկարատևս և անընդհատս, դայ խորհուրդ յոլովակի՝ թէ չկարեն զհետ երթալ հասարակաց կենաց, այլ՝ ի բաղում իրս ստիպին որոշել, ընդ որ ոչ հաճին, թուելով նոցա թէ յետնեալ մնան ՚ի կրօնաւորութենէ քան զայլ կրօնակիցն, կամ գէթէ կարեն այլք զայթակղիլ՝ տեսեալ զնոցա առանձին կեանս և զիսնամատարութիւնս. մանաւանդ զի ոչ երեխ երբեմն արտաքուստ ախտակրութի և կարիք ուրուք, բայց ԱՅ միայն, և հիւանդին է դիտելի՝ որշափ ինչ ցաւագնի. որով առանձնաւոր դարմանքն և թուլութիւնն առաւել իմն ընդ աչ հարկանին:

Առ որ պատասխանեմ, արդարե բարի է յոյժ այդ ակնածութի, և իրաւագատ մտածուի, և զայդ ունել՝ գովելի է: Բայց ոչ ունի խափանել զհամակամութին ընդ ԱՅ՝ ի հիւանդութեան, այլ յաւէտ երկ պատկել դարդիւնսն, ըստ միումն՝ միաբանելով բովանդակ ընդ կամացն ԱՅ յամենայն տկարութիս քո, այնու զի նա կամի կրել քեզ զայնս, և ըստ միւսումն՝ ունելով դիափառումն զհետ երթալ՝ ի քո կողմանէ Կարդին յամենայն կրթութիս հաւատուրիմ և զգուշաւոր պահպանութը. և զի ցաւագնիս դու ՚ի սրտի, ոչ առնելով դամենայն՝ զոր այլք առնեն: Ա ասն զի յայսմբաց յարդեանց անտի համբերութեամբ

տանելոյ հիւանդութեն՝ և համակամուբ, ունիս դու շահիլ և յերկրորդում՝ որչափ այլքն առողջք և բարեկեցիկք, և որք կատարեն ողջինկ զկրթութիւնս վանականս :

Սբն Օգոստինոս, 'ի բանն կը . յաղաղս Եղանակաց . խօսելով թէ պարտապան են ամենեքին ծոմապահել յայն նուիրեալ ժամանակս ընդ մահուչափ մեղօք, և դարձուցեալ ղբանն 'ի վերայ հիւանդի՝ որ պահել չէ կարօղ, ասէ . Այդպիսումն բաւական է չկարելն 'ի ծոմիկալ, և ուտելն սրտի վրշտանալով, և հառաջելով այնու զի այլքն ծոմապահենն, և ինքն անկարանայ : Զոր օրինակ, զինուոր քաջ թէ վիրաւորեալ ժողովի ընդ վրանաւ, առաւել ցաւէ՝ ընդ չկարել իւր մարտնչել, և նշանաւոր լինել 'ի ծառայութեն թաղաւորի իւրոյ, քան թէ ընդ ցաւս խոցուածոցն և ընդ խիստ դարմանս բժշկութենն : Այսպէս են իրքդ և առ բարի կրօնաւորս, որք հիւանդք գուլով, առաւել վշտանան՝ զի չկարեն դհասարակացն ունել կարդ, և լնուլ զվանական կրթութիս, քան թէ ընդ նոյն ինքն հիւանդութին : Բայց 'ի կնիք բանիս, ոչ այս պատճառ, և ոչ այլ՝ բառնալոց է 'ի մէնջ դհամակամութին առ Ած 'ի հիւանդութեն, այլ ընդունել զայն իրբե 'ի ձեռանէ նորա եկեալ, 'ի մեծագոյն փառս Տէրութեն նորա, և 'ի մեր առաւել բարի և 'ի շահ :

Երանելի նըն Հերոնիմոս պատմէ, թէ

ոմն ՚ի միանձանց աղաշեր զնը Ալբայն  
Յովհաննէս եղիպտացի՝ բժշկել զինքն ՚ի  
հիւանդուէ և ՚ի զժնդակ ջերմանէ որով  
ախտանայր։ Պատասխանի եռ նը հայրն .  
\* Կամիս մերժել ՚ի քէն զկարեսորն քեղ . զի  
որպէս մարմինք բորակաւ և այլ ևս նոյն  
պիսի օծմամբք մաքրին յաղոխ , սոյնպէս  
հոգիք մաքրագործին տապացմամբք և այ-  
լովք ևս վշտակրութէք։ || Մարմնական  
անմաքրութէք և աղտեղուիք ՚ի բաց սըր-  
բին օճառաւ , և սաստիկ մոխրաջրով . սոյն  
պէս և հոգիք՝ հիւանդութէք մաքրին , և  
տառապանօք։

### Գ Լ Ո Ւ Խ Ժ Է :

Ուե չե պարտ աղասպանիլ Աշ ՚ե բժիշկս  
էամ ՚ե դէղորայս , այլ ալ ծ . և  
զե պարտիմք մաբանիլ ընդ էամաց  
նորա՝ ոչ միայն ըստ հիւանդութեն ,  
այլն ըստ ամենայն իմք՝ որ պարտ  
հեն յայնմ :

**Օ** որ միանդամ յաղագո հիւանդու-  
թեն ասացաք , զնոյն է իմանալ վասն  
այլևս անցից հանդիպելոց ՚ի ժամ հիւան-  
դութեն։ Սըն բարսեղ աւանդէ ուսումն  
ինչ բարեպատեհ յոյժ՝ յորժամ հիւանդք

իցեմք։ Ասէ։ այնպէս վարիլ՝ ի բժիշկս և  
 'ի դեղս, որ մի յայնս ունիցիմք զամենայն  
 յոյս մեր։ զոր ոչ արարեալ Ասայի արքայի,  
 յանդիմանեցաւ՝ ի նը գրոց բանիւն։ \* 'ի  
 հիւանդանալն իւրում ոչ խնդրեաց դՏՌ,  
 այլ խնդրեաց բժիշկս։ ( բ. Մնաց . ժկ.  
 12. ) Ո՛չ յայս պարտ է վերադրել զամեն  
 նայն պատճառ բժշկութեն կամ ոչ բժշ-  
 կութեն յախտէ անտի . այլ յԱծ դնել  
 զբովանդակ յոյս մեր, որ երբեմն ապաքի-  
 նել կամի զմեղ միջնորդութք դեղոց, և  
 այլ երբեմն ոչ կամի . մինչ զի թէ պակա-  
 սիցի երբէք բժշկն, և կամդեղք, ոչ յայն  
 սակս անյուսանալ պիտի յառողջութէ ,  
 ասէ նըն Բարսեղ։ Քանզի որպէս 'ի նը  
 Աւետարանին ընթեռնումք, փրկիչ մեր  
 Քն մերթ կամքն ևեթ բժշկէր։ ըստ որում  
 զբորոտն բժշկեաց որ ասէր . \* Տէր, եթէ  
 կամի՞ս՝ կարօղ ես զիս սրբել. || ( Մատթ,  
 ը . 2. ) որում ետ պատասխանի . \* կա-  
 միմ, սրբեաց : || Իսկ մերթ բժշկէր՝ 'ի  
 զործ արկեալ իրս ինչ . որպէս յորժամ  
 զկաւ արար թքով, և օծ զաշ կուրին,  
 հրամայեալ նմա երթալ լուանալ յաւա-  
 զանին սելովմայ : Բայց այլ երբեմն թո-  
 զոյր զհիւանդան յիւրեանց ախտին, ոչ  
 կամեցեալ թէ ապաքինեսցին, թէ պէտե  
 զամենայն ինչ ծախեալ էին 'ի բժիշկս և  
 'ի դեղս : Սոյնպէս և այժմ, տայ Ած եր-  
 բեմն զառողջութիւն կամելովն ևեթ՝ առանց  
 բժշկի և դեղոց . երբեմն տայ նպաստիւք

դեղոց . բայց և երբեմն կոչելով իսկ և 'ի  
խորհուրդ ժողովելով բժշկս բաղումն , և 'ի  
կիր առեալ դեղս զօրաւորս , ոչ տայ Ած  
զառողջուի , զի խրատիցիմք այնու մի հաս-  
տատել զյոյս մեր 'ի նպաստու մարդկեղէնս ,  
այլ Ած միայն : Այլ զըս օրինակ արքայն  
Եզեկիա զիւրն առողջուի ոչ համարեցաւ  
պաղատտաց թզոյ՝ զըս ըստ խրատուն Եսա-  
յեայ եղ 'ի վերայ վերին . ( դ . Թագ . Ի . 7 . )  
այլ Այ , սոյնպէս և դու եթէ առողջա-  
նաս 'ի հիւանդութէ , մի բժշկաց տացես  
զայն , և մի դեղոցն , այլ Այ , որ նա միայն  
բժշկէ զամենայն հիւանդութիւնս մեր :  
\* Քանզի ոչ դեղք , և ոչ սպեղանիք բժշկե-  
ցին զնոսա , այլ քո Տէ՛ բանդ՝ որ զամե-  
նայն բժշկէ : || ( իմաստ . ժկ . 12 : ) Իսկ  
յորքամ ոչ դուանես զառողջութի , ոչ  
պարտիս ընդ բժիշկն կամ ընդ դեղս  
տրտնջել , այլ տակաւին Այ ընծայել  
զամենայն . որ չկամի զքո առողջանալ ,  
այլ զի կայցես հիւանդ :

Սոյնպէս եթէ բժիշկն ոչ ճանաչեալ  
իցէ զհիւանդուին , կամ սխալեալ ինչ իցէ  
'ի դարմանելն , որ յաճախ պատահէ առ  
ճարտար բժիշկս իսկ , և առ երեւելի ան-  
ձինս , պիտոյ է համարել զիքիպակն զայն  
իբր գործ և հետեւումն կամացն Այ , սոյն-  
պէս նաև զանհոգութի և զպակասութի  
հիւանդապահին : Վասն որոյ չպարտիս  
ասել թէ 'ի պատճառս այս կամ այն պա-  
կասունն գործեցելոյ՝ դարձ արար տենդն .

այլ զամենայնն առնուլ իրրեւ ԱՅՀ ձեռանէն հասեալ . և ասել , Տն կամք եղեն՝ զի Ծերմն զայրանայցէ , և պատահիցէ այս ինչ դիպուած : Քանզի աներկուանալի է թէ այն որ առ խնամատարս քո վըիպակ գործեցաւ , առ ԱՅ է կատարումն նորայն կամաց . իբր զի առ ԱՃ ոչ գոյ ինչ դեպուածոյ բերումն :

Կարծիցեն արդեօք , թէ թռչոտիլ ձնձղկացն , և ծրտելովն կուրացուցանել զերանելին Տոբիթ՝ դիպուածով լեալ իցէ : Ո՛չ այդպէս , այլ մեծաւ խորհրդով և առանձին նախախնամութեամբ ԱՅ առ ՚ի թողոյ մեղ օրինակ ՚ի նմա , որպէս և յերանելին Յոր . զոր և բնադիրն Տոբիթայ ասէ ըստ լատին ընթերցմանն , ( է . 12 . ժք . 13 ) թէ եթող ԱՃ գալ փորձութեն , զի յապա եկելոցն տացի օրինակ համբերութե . և զի հաճոյ էր ԱՅ , հարկ եղեւ փորձութքն քննել :

՚Ի Հարանց վարս պատմի յաղագս աբային Ստեփաննոսի , թէ գոլով հիւանդազին , կամեցաւ ընկեր նորա՝ կամ աշակերտն առնել Ծերմիկ ինչ , և կարծելով առնել անոյշ իւղով , արկ անդր իւղ կտաւատի՝ դառն , և մատոյց յուտել : Հայրն Ստեփաննոս առեալ զճաշակն՝ եկեր սակաւ , և լոեաց : Դարձեալ արար նմա ըստ նմին օրինակի , և ծերոյն ճաշակեալ և ոչ կամեցեալ ուտել , ասէր ընկերն . իեր հայր , զի բարի է , և առ ՚ի յօժաւ

րել զնա՝ ինքնին կամեցաւ ուտել. յայն ժամ զգացեալ զդառնութիւնն, ցաւադին վայեաց և ասէ. Ես սպանի զեղ: Եւ ասէ զնա ձերն. մի խոռովիր որդեակ իմ. զի եթէ ԱՅ կամեցեալ էր, ոչ սխալէիր գու 'ի կիր առնուլ զմի իւղն փոխան միւսոյն: Սոյն պատմութիւն է և 'ի հայ վարս Հարցն. (Երես 125.) ուր ասի՝ մեղըիւ քաղցրացուցանել կամելով աշակերտին, վըիպեաց յամանսն, և արկ ձէթ ժահահոտ: Ընթեռնումք յաղագս այլոց ևս Սրբոց բաղմաց, թէ կամաւորութք և համբերութք առնուին զդարմանս մատուցեալս, թէ պէտ և առ նոցա հիւանդութիւն ոչ այն չափ օգտակարք ինչ էին: Ապա սոյնպէս արժան է յանձն առնուլ և մեղ զվըիպանս, զանհոգութիս, և զհեղգութիւնս բժշկի, կամ հիւանդապահի, ոչ զմիոյն տրտնջել, և ոչ միւսոյն լինել մեղադիր:

Սոյն այս է որով 'ի յայտ գայ և հանդիսանայ առաքինութի առն կրօնաւորի. վասն որոյ շինութի մեծ առնէ կրօնաւոր հիւանդ, որ անընդդիմաբար և զուարթուք ընդունի զամենայն ինչ իբր եկեալ 'ի ձեռանէ ԱՅ, և թողու խնամել մեծաւորացն և հիւանդապահից, մօռացեալ և 'ի բաց եղեալ բնաւին զանձինն հոգողութի: Ասէ նըն բարսեղ. եթէ 'ի մեծաւորն հաւատացեր զհոդիքո, զիարդ զմարմինդ ոչ հաւատաս նմա: Եթէ 'ի նորա ձեռս աւանդեցեր զյաւիտենից փրկութիւնդ,

առ իմէ ոչ դնես և զժամանակաւորն։ Եւ  
զի կանոնք աղաստ կացուցանեն զմեղ՝ ՚ի  
հոգալոյ զմարմին մեր, և զայն պատուի-  
րեն իսկ, պարտիմք կարի մեծ համարել  
զայս, և ՚ի կիր առնուլ զայսպիսի օգտա-  
բեր աղատութի։ Եւ ՚ի ներհակէն, ոչ ՚ի  
շնութի է կրօնաւոր հիւանդ, յորժամ  
հոգս բաղում տանի անձինն, և թէ զինչ  
ունին տալ նմա, և որպէս տալ, և կամ  
թէ ծառայիցեն նմա անվըշպ. իսկ եթէ  
ոչ, դիտէ սաստիկս տրանջել և քրթմնջել։

՚ի դէպ իսկ ասէ հայրն կասիանոս։  
Մարմնոյ հիւանդութի ոչ եթէ խափան  
ինչ է մաքրութեան սրտի, այն զի նպաս-  
աէ, եթէ յանձին կացի որպէս պարտն է։  
Այլ զգայշ լեր, ասէ, զի մի հիւանդութի  
մարմնոյն անյանիցէ ՚ի հոգին։ Եթէ ոք  
հիւանդութեն պատճառանօք զիւր կամնն  
առնիցէ, և անհնաղանդեսցի, և ոչ անձ-  
նանուէր լինիցի, յայնժամ՝ ՚ի հոգի անդր  
անցանէ հիւանդութին։ և հոգեորն հի-  
ւանդութիւն առաւելքան զմարմնականն  
տառապեցուսցէ զմեծաւորն։

Ո՛չ արժան է ՚ի հիւանդանալ ուրուք՝  
թուլանալ յերեելոյ կրօնաւոր։ ոչ դնել  
՚ի մտի թէ չկայցէ այլ կանոն վասն իւր,  
և թէ կարէ ամենայնիւ հոգալ զիւրն  
առողջութի և զդիւրութիս, ՚ի մոռազօնս  
եղեալ զոր ինչ անկն է իւրումն յառաջա-  
զիմուն։ Հիւանդն, ասէ ոք հայրն իգնա-  
տիոս, ոչ սակաւ փոյթ ունելոց է ՚ի տալ

շինութի՞ 'ի ժամանակս հիւանդութեան ,  
 ցուցանելով բազում խոնարհութի և համ-  
 բերութի , քան թէ 'ի ժամանակ կատա-  
 րեալ առողջութեն : Եւ նը Ոսկեբերան 'ի  
 բանս Սաղմոսին . Ե . 13 . \* Տէր , որպէս  
 զինու հաճութիք քով պսակեցեր զմեղ . ||  
 խօսելով թէ զամենայն կեանս մեր յար 'ի  
 պատերազմի գոլով , պիտոյ է կալ միշտ 'ի  
 զէնս , ասէ . \* Եւ խօթացեալք , և առողջք .  
 քանզի 'ի հիւանդութեան՝ այսր սաստիկ  
 մարտի ժամանակ է , յորժամ ցաւք յա-  
 մենայն կողմանց խոռվեն զոգի , յորժամ  
 տրտմութին պաշարէ , յորժամ առընթեր  
 կայ սատանայ զրգուիչ՝ առ 'ի խօսելոյ բան  
 ինչ խիատ : || Յայտ է ապա , թէ այն է  
 ժամանակ 'ի կիր առնուլ և ցուցանել  
 զառաքինութի . մինչ զի Սենեքա իսկ ասաց  
 երբեմն , թէ այր քաջունի պատճառս 'ի  
 վար արկանել զքաջութիւն իւր ոչինչընդ-  
 հատ 'ի մահիմ՝ յորժամ ախտակրեալ է .  
 քան թէ 'ի կռութի՝ ընդ թշնամիսն մարտն-  
 չելով . քանզի առաւելագոյն մասն քաջու-  
 թեն է տանել վշտաց՝ քան 'ի դիմի հարկա-  
 նիլ : Այսպէս և իմաստունն ասէ .  
 \* Լաւ է այր երկայնամիտ քան զհզօր . . .  
 և որ յաղթէ բարկութեն , քան որ առնու-  
 ցու զքաղաք հզօր : || ( Առակ . ժկ . 52 : )

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ը :

Հասպատի որ ասացան՝ օբինակօք  
ոմամբ ։

Վ նթեռնումք յաղագս նըյ կուսին  
Գեղրուտայի, թէ երևեցաւ նմա երբեմն  
Ք՛ փրկիչ մեր, ունելով յաջոյ ձեռին  
զառողջութի, և յահեկին՝ զհիւանդուի,  
և ասէ ցկոյսն՝ ընտրել զօր կամիցի. իսկ  
նա ետ պատասխանի. Տէր, զօր եսն ցան-  
կամ՚ի բոլոր սրտէ՝ այս է, զի մի հայիցիս  
՚ի կամս իմ, այլ առնիցես յանձն իմ զայն՝  
որ լինիցի յառաւելադոյն փառս քա և 'ի  
հաճոյս :

Պատմի յաղագս առն միոյ ուխտաւորի  
առ նըն միովմաս կանթուարեցի, թէ  
ախտացեալ գոլով՝ չքաւ ՚ի գերեզմանն  
Աբեն խնդրելով միջնորդել առ Ած վասն  
առողջութե իւրոյ, զօր և ընկալաւ իսկ ։  
Դարձ արարեալ ՚ի քաղաք իւր առողջան-  
ձամք, մոտախորհ լինէր թէ առ ի՞նչ զա-  
ռողջութի կամեցաւ, եթէ արդարե հի-  
ւանդութին պիտանացու ևս էր առ իւրն  
փրկութի : Այնշափ հարկաւորեաց զնա  
այս մտածութի, մինչև գնացեալ անդրէն  
՚ի գերելմանն, աղաշեաց զԱբեն՝ հայցել  
վասն իւր յԱյ զայն՝ որ առաւել օդաս-

կար էր 'ի վրկութիւնը . և ԱՃ ետ նման  
վերսորին դիմուանդութիւն . որով եկաց այրն  
միսիթարեալ , ճանաչելով թէ այն էր ա-  
ռաւել անկաւոր ինքեան :

Սուրիս 'ի վարս սբէյն Բեղաստոսի  
Եպիսկոպոսի 'ի մէջ բերէ զօրինակ ինչ  
նման՝ վասն առն միոյ կուրի . որ յաւուր  
փոխադրութե՛ նշխարաց սբէյ Եպիսկոպո-  
սին՝ փափաքէր տեսանել զնը նշխարան , և  
վասն այսր ստանալ ևս զտեսութիւն : Ըն-  
կալաւ զայն 'ի Տէ՛ , և ետես զոր բազծայրն .  
բայց յետ տեսանելոյն՝ եկաց յաղօթս , զի  
եթէ տեսութիւն ոչ էր 'ի շահ հոգւոյ իւ-  
րոյ , անդրէն տացի կուրութիւն . և յետ  
աղօթիցն մնաց կոյր՝ որպէս յառաջն :

Պատմէ նըն Հերոնիմոս , թէ նը հայրն  
Անտօն կոչեցաւ 'ի սբէյն Աթանասէ աղեք-  
սանդրու հայրապետէն՝ ձեռնտու լինել  
նմա 'ի հերքումն և 'ի խլել հերձուածոցն՝  
որ զօրացեալ էին անտանօր . և Դիդիմոս  
այր գիտնաւոր՝ այլ աչօք կոյր՝ խօսեցաւ  
բազում ինչ 'ի նը զրոց ընդ երանելոյն  
Անտօնի . մինչև զարմանալ նը հօրն ընդ  
հանձար նորա և ընդ իմաստութիւն : Յետ  
այնպիսեաց բանից զրուցելոյ՝ եհարց նմա  
հայրն Անտօն , թէ տիսրիցի արդեօք ընդ  
կոյրն լինել . իսկ նա լուէր , պատասխա-  
նել ոչ իշխեալ առ ամօթոյն . բայց հար-  
ցեալ երկիցս և երիցս , խոստովան եղեւ  
բարեմտաբար՝ թէ արդարև զգայր տրտ-  
մութիւն : Յայնժամ ասէ ցնա նը հայրն .

դարմանամ զի այր հանճարեղ իրրե զքեզ՝  
տխրեսցի և ցաւագնեսցի, զի ոչ ունի զայն  
զոր Ճանճք ունին և մրջիւնք և օրդունք  
երկրի . և ոչ խնդայցէ յաւետ՝ զի զայն  
ունի զոր ունել արժանացան Սուրբքն և  
Առաքեալք : Այսու է տեսանել, ասէ սբն  
Հերոնիսու, թէ առաւել լաւ է ունել  
աշս հոգեկանս՝ քան մարմնականս :

'ի Պատմութեն կարգի սբյն Դումինի-  
կոսի պատմէ հայրն Ֆէրտինանոսոս կաս-  
թիլեան, թէ սբն Դումինիկոս ՚ի հռովմ  
այց առնէր կնող միում հիւանդի և վրշ-  
տագնելոյ , բայց ընտիր աղախնոյ ԱՅ,  
որ առանձնացեալ էր յաշտարակի միում  
՚ի դուռն սբյն Յոհաննու Լատերանոյ .  
և նը հայրն զնայր ստէպ խոստովանեցու-  
ցանել զնա , և հաղորդել զնք Խոր-  
հուրդն : Անուն նորա էր Պօնա . այսինքն  
բարի . և վարք նորա այնչափ զուգակից  
էին անուանն , զի և խրատէր զնա ԱՃ  
խնդութի ունել ՚ի վիշտս , և հանդիստ ՚ի  
մահուն : Կրէր նա ախտ ինչ զժնդակ ՚ի  
ստինսն , որ և քաղցկեղիւ ապականեալ  
էին և որդնալիցք , տանջումն՝ արդարե  
անրմբերելի ում և իցէ մարդոյ , բայց նա  
տանէր պատնշելի համբերութիւ և դոհու-  
թեամբ . և նըն Դումինիկոս տեսեալ զնա  
յանհուարին ախտին , և յանմեղկելի բեր-  
ումն առաքինութեն , հաճէր ընդ նա կարի  
յոյժ : Եւ եղև օր զի խոստովանեցուցեալ  
զնա և հաղորդեալ , կամեցաւ տեսանել

գնողկալին զայն և զարհութելի վէրն, զոր  
 և ընկալաւ բաղում՝ թախանձանօք : Յոր-  
 ժամ կինն Պօնա եթաց, և ոք հայրն ետես  
 զշարաւն, զճարակումն քաղցկեղին և զոր-  
 դունան, ախտակից եղե նմա . բայց առա-  
 ւել ցանկալի գնելով զայն վէրս՝ քան  
 զաշխարհի գանձս, ժտեաց՝ ի նմանէ տալ  
 զմի յորդանց անտի իբրեւ նշխար . իսկ ա-  
 ղախինն Այտալ ոչ կամեցաւ՝ մինչեւ բան  
 էառ՝ ի նմանէ դարձուցանել զայն առ  
 ինքն . վասն զի այնչափ հաճեալ էր նա  
 որդնակեր լինել կենդանւոյն, մինչ զի  
 յանկանիլ յորդանց անտի՝ ի գետին,  
 առեալ դնէր զայն՝ ի տեղի իւր: Արդ՝  
 յետ խոստմանն ետ զմի յորդանցն, որ  
 իսոշոր էր և թխագոյն . և անդէն՝ ի ձեռն  
 առնուլ զայն ոք հօրն, փոխեցաւ՝ ի մար-  
 դարիտ գեղեցիկ . ընդ որ զարմացեալ Եղ-  
 բարցն, ասէին ցՀայրն՝ մի դարձուցանել  
 անդրէն . իսկ հիւանդն ընդհակառակս  
 պահանջէր զորդնն ասելով, հատուցէք ինձ  
 զմարդարիտն իմ. և իբրեւ տուաւ, եղե  
 նոյնժամայն որդն որպէս յառաջն . և  
 կինն հանդոյց զայն՝ ի ստինս անդր, ուր  
 ծնեալ և մնեալ էր : Իսկ սբյն Դոմինի-  
 կոսի արարեալ աղօթս, և տուեալ կնոջն  
 զօրհնութի նշանաւ խաչին, ել մեկնեցաւ.  
 և իբրեւ ընդ սանդուղս աշտարակին իջա-  
 նէր, անկան շարաւացեալ սոինքն որ-  
 դամբէք հանդերձ, և առ սակաւ սակաւ  
 աճելով մոյն, յետ աւուրց բժշկեցաւ

կատարելապէս . և պատմէր ամենեցուն  
վշրաշալիսն՝ զոր գործէր Ած ձեռամբ ծա-  
ռային իւրոյ Դոմինիկոսի :

Կայ դարձեալ 'ի նորին պատմութեան ,  
թէ Ռէզինալտոս եղբայր խօսելով ընդ հօրն  
Դոմինիկոսի՝ առնուլ զաքեմ կարդի նորա ,  
և հաստատեալ իսկ առնել զայն , ախտա-  
ցաւ նա զտենդ հանապազրեայ , և ըստ  
դատելոյ բժշկաց՝ մահացու : Սբ Հայրն  
ջան բազում տանէր ընդ առողջութիւն  
նորա , անդադար աղօթէր առ Տիր կից ընդ  
ջերմոտին . և յօդնութի կոչէին զամենանք  
Տիրուհին բազում ուխտիւք և իննամով :  
Երկոցուն նոցա պարապելով 'ի սոյն հայ-  
ցուածս , եմուտ ՚ի սենեակ Ռէզինալտոսի  
թագուհին երկնից գերահրաշ երկնափայլ  
պայծառութք , առընթեր ունելով երկու  
կուսանս երջանիկս , որք կարծեալ էին  
սրբուհին Չէշիլիա , և սրբուհին Կատա-  
րինէ վկայուհիք . և մերձ եղեալ նոցա ՚ի  
մահիմ հիւանդին , Տիրուհին իբրև մայր  
բարեգորով մխիթարեաց զնա ասելով .  
զի՞նչ կամիս՝ զի արարէց քեզ . ահա եկի  
տեսանել զոր հայցեսդ , ասա՛ , և տացի  
քեզ : Ապշեցաւ Ռէզինալտոս ընդ երկնա-  
լոր տեսիլն , և տարակուսեալ զի՞նչ ար-  
ժան իցէ նմա առնել կամ ասել , մին ՚ի  
սրբուհեաց անտի մերձակայից Տիրամօրն  
անդէն վաղվաղակի աղատեաց զնա ՚ի  
վարանմանէն ասելով , եղբայր , մի այլ  
ինչ լսնդրեր , այլ խսպառ յանձն լեր ՚ի

ձեռս նորա , որ առաւել ևս դիտէ տալ  
քեզ , քան դու խնդրել : Ընկալաւ հի-  
ւանդն զիսրատն խոհական և զդուշաւոր ,  
և պատասխանի ետ առ նը Կոյսն . Տիրու-  
հի , ոչ խնդրեմ ինչ , չունիմ այլ կամն ,  
բայց զբոյդ . յայդ՝ և 'ի ձեռսքո թողում  
զիս : Յայնժամ նը Կոյսն ձգեալ զձեռս  
իւր , էառ 'ի ձիթոյ անտի՝ զոր աղախնայք  
իւր ունէին վասն այսր , և օծ զբէգինալ-  
տոս որպէս սովորութի է կատարել զվեր .  
ջին օծումն . և այնչափ ազդողական եղեւ  
շշափումն սրբազան ձեռացն այնոցիկ ,  
զի անդէն և անդ ազատ գտաւ ՚ի տենա  
դէն , և առողջացեալ , և զօրութի մար-  
մոյն նորոգեցաւ , որպէս թէ ոչ ընաւ էր  
ախտացեալ : Եւ որ առաւելն է՝ զոյդ ընդ  
գերագոյն այնմ շնորհի՝ եղեւ առ նա այլ  
ևս մեծ 'ի զօրութեան հոգւոյն , որպէս  
զի յայնմ ժամէ ոչ ևս կրել նմա յանձին  
շարժումն զգայական և անմաքուր զամե-  
նայն կեանս իւր , ոչ երբէք , և ոչ ուրեք ,  
և ոչ 'ի պատճառէ իմեքէ :

Գրեալ կայ յեկեղեցական պատմու-  
թե , թէ յամենեսին որք ծաղկեալ էին  
առ այնուժամանակաւ՝ գերահամբաւեալ  
էր իւնիամին ոմն , որոյ պարզե ընկա-  
լեալ առ յայ բժշկել զախտաժէտս՝ լոկ  
ձեռն դնելով , կամ սակաւ իւղով օծանե-  
լով և աղօթելով , ընդ այսր շնորհի բժշ-  
կելոյ զայլս՝ էառ և ինքն զծանր ախտ  
ջրգողութե . որով ուռուցեալ ոչ կարէք

Ելանել՝ ի սենեկէն՝ առանց ՚ի բաց հանելոյ զգուռնն . և եկաց նա այնպէս ՚ի սենեկին զամս ութ , մինչեւ վախճանեցաւ , նստեալ յամբոռ լայնանիստ . և անդ ապարինեաց հիւանդութիւնս բաղրւմս , անտրտունջ կալով և անտրտում ընդիւրն անառողջութի . և առ որս կարեկիցն լինէին նմա , միսիթարութի տուեալ ասէր , աղաչեցէք առ Ած վասն հոգւոյ իմոյ . և ընդ մարմնոյս մի ինչ հոգայք , որ և յառողջութեան ոչ էր ինձ ՚ի պէտս ինչ :

Պատմի ՚ի Հոգևոր Դաշտի յաղագս միայնակեցի մրոյ՝ կոչեցեալ Բերնաբէսս , որում դէպ եղեւ՝ զի զճանապարհայն միսեցաւ յոտս նորա մացառ փայտի , և ոչ կամեցաւ խլել զայն աւուրս ինչ , և ոչ զհարուածն դարմանել , զի ունիցի պատճառս ցաւադնելոյ վասն սիրոյն Այ . և սովոր էր ասել առ որս յայց ելանէին նմա . որչափ շարչարի և սպանանի մարդն արտաքին , նոյնչափ առաւել ներքինն կենդանանայ և զօրանայ :

Սուրիոս պատմէ ՚ի վարս սբյն Պախումէսսի յաղագս միայնակեցի ուրումն Զաքէսս անուն , որոյ ախտացեալ լուսնոտութէ , ոչ թողոյր բնաւ զլատութի սովորական ժուժկալութնն , որ էր հաց և աղ . և ոչ պակասէր յաղօթիցն՝ զոր առնէին այլ միանձունք , գնալով յառաւօտինն և յայլ ժամերդութիւնս . իսկ զայլ ժամանակն՝ որ յաւելանայր յաղօթից ,

սնցուցանէր 'ի գործել փսիաթս, զամ-  
 բիւղս և չուանս. և 'ի խստութէ խոտոցն՝  
 յորոց հիւսէր, խանդարեալ էին ձեռք  
 նորա և հերձոտեալք, մինչեւ արիւն իջա-  
 նէր անդադար 'ի հերձմանց անտի. բայց  
 նա գործէր առ չկալոյ դատարկ : 'Ի գի-  
 շերին յառաջ քան զննջել սովորութիւն  
 ունէր խոկալ բան ինչ 'ի նը գրոց, և խա-  
 չակնքեալ զանձն բովանդակ, հանգչէր  
 մինչ 'ի պաշտօն առաւոտուն . յոր կան-  
 խեալ որպէս ասացաք, կայր 'ի նմին և  
 յայլ աղօթս մինչ 'ի լուսանալ : Այսպէս  
 բաշխեալ էր զիւր ժամանակն երանելիս  
 այս ախտաժէտ . և սոյնպիսիք էին նորայն  
 զր ըստ օրէ կրթութիք : Դէպ եղեւ երբեմն՝  
 զի եկն առ նա միայնակեաց ոմն, և տե-  
 սեալ զձեռս նորա պատառոտեալմ՝ ասաց  
 օճանել ձիթով, զի մեղմանայցեն ցաւք  
 պատառուածոցն : Արար զայն Զաքէոս .  
 այլ փոխանակ մեղմանալոյ՝ ևս քան զես  
 ցաւքն զայրացան . և 'ի գնալ սբյն Պա-  
 խումէոսի տեսանել զնա, պատմեաց նմա  
 զոր արարն . և սբ հայրն ասաց, մի թէ  
 կարծէիր որդեակ՝ թէ Ած ոչ տեսանիցէ  
 զամենայն հիւանդութիւն մեր, կամ թէ  
 չկարիցէ բժշկել երբ նմա հաճոյ իցէ . և  
 յորժամ ոչ առնէ զայդ, այլ թողուցա-  
 ւագնիլ մեղ՝ ցորչափ կամիցի, յոյր սակս  
 կարծես առնել զայն՝ բայց զի զամենայն  
 հոգս անձանց 'ի նա ընկենուցումք, և 'ի  
 նա միայն հաստատիցեմք զյոյս մեր բու-

վանդակ . և զայն առնէ դարձեալ առ ՚ի  
բարին և յօգուտ հոգւոց մերոց , զի ու  
նիցի բազմացուցանել զհատուցումն և  
զվարձս յաւիտենից ընդ կարձատե վշ-  
տացս՝ զոր առաքէ մեղ : Զղջացաւ բանիւս  
Զաքէոս կարի յոյժ , և ասէ . թող ինձ  
հայր , և աղաշեա զԱՃ թողուլ զայս մեղս  
իմ փոքու ապաւինութեն և համակամու-  
թեն ընդ նմա , և զի առողջութեն ցանկա-  
ցայ : Գնաց հայրն Պախումէոս , և ՚ի վճա-  
րումն թեթևագունի այնը յանցման զամ-  
մի ողջոյն պահեաց պահս խիստս , մինչ  
երկօրեայ ևեթ ճաշակել , և զայն՝ սակաւ  
և արտասուելով : Եւ սովոր էր մեծն Պա-  
խումէոս պատմել զայս երեելի օրինակ  
միանձանց իւրոց , քաջալերեալ զնոսա  
յերկայնմուութիւ վշտաց , ՚ի յոյս առ ԱՃ ,  
և զի զգուշանայցեն ՚ի փոքունց յանց-  
մանց :

## Գ Լ Ո Ւ Խ Ժ Թ Ա

Յաղագս համակամութե առ լուսապուած ,  
զոր սւնել պարտ է մշշ 'ի մահու՝  
որպէս և 'ի չենդանութե :

Ա պժան է մեղ զհամակամութի ու  
նել առ Ած նաև 'ի մեռանել , որպէս  
առ 'ի կեալ : Արդարե մեռանելցն քան  
կարի դժուարին է 'ի բնէ . զի ըստ ասեւ  
լոյ Փիլիսոփոյին , \* Յամենայն իրս ոչնչ  
ահաւորագոյն քան զմահ , ոչնչ դառնաւ  
գոյն : || Սակայն առ մեղ կրօնաւորքս՝  
մեծագոյն մասամբ նուազեալ է այս  
դժուարութի , և զիւրեալ . վասն զի ար-  
դէն արարեալ եմք զկէս ճանապարհին , և  
գողցեա՝ զբոլորն : Նախ առաջին , մին 'ի  
պատճառաց անտի՝ որք դժուարին առնեն  
աշխարհիկ մարդկան զմեռանելն , որոց և  
ցաւեցուցիչ լինի ժամանել օրհասին , է  
թողուլ նոցա զմոխութիւնս , զպատիւ ,  
զլայելմունս , զզբանս , և զհեշտին վարս՝  
զօր յայս կեանս ունին , այլև թողուլն  
զբարեկամս , զազգականս , ոմն զկինն , ոմն  
զորդիս , որք յայնմ ժամու ոչ փոքր անձ  
կութի բերեն , մանաւանդ մինչ չե են  
եղեալք 'ի կարդի , և զլսաւորեալք : Ահա  
զայս ամենայն վաղու ևս թօթափեացյան

ձնէ կրօնաւորն . ուստի ոչ ևս տան նմա  
 անձկութի և ցաւս : Յորժամ ատամն չէ  
 պնդեալ 'ի միսն՝ այլ զատուցեալ 'ի լըն-  
 դաց անտի, դիւրաւ 'ի բաց խլի . բայց  
 եթէ խլել կամիցիս առանց բաժանելոյ 'ի  
 մսոյն, ցաւեացի քեղ սաստիկ : Այսպէս  
 կրօնաւորի այն ինչ զերծելոյ և զատուցե-  
 լոյ յամենայն կենցաղականացս՝ ոչ ցաւ է  
 թողուլ զայնս 'ի ժամ մահուն, ուր ինքն  
 կամաւորաբար եթող զայն՝ և բազմաշահ  
 վաստակօք 'ի մտանել իւրում 'ի կրօն, և  
 ոչ մնաց թողուլ զնոյնս 'ի պահու մա-  
 հուան . որպէս աշխարհականք՝ յորժամ  
 ունին թողուլ առ 'ի հարկէ, թէ և չկա-  
 միցին, և այն՝ բազում ցաւով, և յոլո-  
 վակի անմասն յարժանեաց . իբր զի առա-  
 ւել իրքն թողուն զստացիս իւրեանց, բան  
 թէ սոքա զիրս : Եւ այս է մի 'ի բազմա-  
 պատիկ պտղոցն թողոյ զաշխարհ, և մտա-  
 նելոյ 'ի կրօն : Եւ նբ Ոսկեբերանն վայել-  
 շաբար ծանուցանէ, ( Ճառ ժդ . յառաջին  
 Տիմոթ . ) թէ զիարդ աշխարհայնոցն յա-  
 րելոց 'ի ստացուածս, 'ի զբուանս, 'ի հեշ-  
 տին կեանս և 'ի փափկութիւ այս կենաց՝  
 յոյժ ցաւագին լինի մահն, ըստ խմասու-  
 նոյն ասելոյ . \* Ո՛վ մահ, որպէս զի դառն  
 է յիշատակ քո մարդոյ խաղաղացելոյ 'ի  
 վերայ ստացուածոց իւրոց : || ( Աիրաք .  
 խմ . 1 : ) Եթէ յիշատակ մահու անդամ  
 դառն է նոցա, զինչ ապա առնիցէ ժա-  
 մանել նորա : Եթէ մահ խոկացեալ՝

դառն է , Ճաշակեցեսոյն զի՞նչ լինիցի :  
 Բայց կրօնաւորի կանխաւ հրաժարելոյ  
 յայս ամենայն իրաց՝ դառն ոչ է մահն ,  
 այլ յաւէտ զուարթալի և ախորժական ,  
 Իրբե կատարած ամենայն վշտաց իւրոց .  
 և է նմա իրբե որ երթայ առնուլ զյաղը  
 թանակ և զտրիտուր ամենայնի՝ զոր ելիք  
 եթող վասն Այ :

Միւս ևս պատճառ ծանր՝ որ անձկուի  
 մեծ և ցաւս ներգործէ ՚ի ժամ մահու առ  
 աշխարհիկս , և ահաղին առնէ նց զմահն ,  
 է՝ ըստ ասացելումն սըյն Ամբոսիոսի ,  
 չար խիզձն , և պակասումն բարիոք պատ-  
 րաստութեան : Սակայն և այս չունի  
 տեղի առ կրօնաւորն , և ոչ ունել արժան  
 է . վասն զի կեանք նորա բուլանդակ՝ է  
 հանապազորդ պատրաստութիւն առ բար-  
 ոք մեռանել : Պատմեն յաղագս սրբա-  
 կրօն կրօնաւորի ուրումն , թէ յասել առ  
 նա բժշկին՝ զի պատրաստեսցի ՚ի մահ , ետ  
 պատասխանի , յորմէ հետէ զգեցայ զսքեմ ,  
 ոչ այլ ինչ արարի՝ բայց ՚ի մահ պատրաս-  
 տիլ : Այս է կրթութիւն կրօնաւորի . նոյն  
 ինքն վիճակ կրօնաւորական մարզէ զմեզ  
 յայն պատրաստութիւն զոր Քն փրկիչ մեր  
 կամի ունել առ իւրն գալուստ : \* Եղիւ  
 ցին գօտիք ձեր պնդեալ ընդ մէջս , և ճրա-  
 գունքը լուցեալք : || (Ղ ուկ . Ժ՛ . 35 : ) Ասէ  
 նըն Գրիգոր թէ պնդել զմէջս՝ նշանակէ  
 զողջախոհութիւն , և ճրագս վառեալս ունել  
 ՚ի ձեռին՝ նշանակէ զպարապումն բարեացն

գործոց . և այս երկու առաւելապէս հսմն-  
դիսացեալ երեխն՝ ի կրօնաւորական վի-  
ճակի . վասն որոյ կրօնաւոր բարեկիրթ-  
չունի պատճառ երկնչելոյ ՚ի մահուանէ :

\* Եւ է աստանօր նշանակել զասացեալն  
մեր այլուր , որ և անկաւոր է մերում  
առաջարկութես . այս է , զի բարիոք նշա-  
նացն ունելոյ զլսիղձ մաքուր , և լինելոյ ՚ի  
հաճոյս Այ՝ մի է կալ համակից յածային  
կամն նորա ըստ այնմ որ հայի ՚ի ժամ մա-  
հուն , և սպասել այնմ զուարթամիտ ,

որպէս որ սպասէ իւրումն փեսայի , առ-  
նել ընդ նմա զերկնային հարսանիսն .

\* Եւ դուք նմանողք մարդկան՝ որ ակնու-  
նիցին տն իւրեանց , թէ երբ դառնայցէ ՚ի  
հարսանեաց : || ( Ղուկ . ժք . 36 : ) Եւ

ընդ հակառակն , զարհուրիլ ուրուք ՚ի  
մահուանէ , և ոչ ունել զհամակամու-  
թիւնն զայն , ոչ է նշան բարի : Առ ՚ի բա-  
ցայտուել զայս՝ սովորութի է յառաջբե-

րել օրինակս յաքմարաւորս : Ո՛չ տեսա-  
նես ահա՝ որչափ խաղաղիկ գնայ ոչսար ՚ի  
սպանդանոց անզր , ոչ զեւրան բացեալ ,

ոչ հակառակեալ իւիք . օրինակ՝ զոր և  
դիրք սբք առնուն ՚ի Քն փրկիչ մեր .

\* Իբրև ոչխար ՚ի սպանդ վարեցաւ . ||

( Եսայ . ծդ . 7 : ) Սակայն անմաքուր կեն-  
դանին խոզն՝ քանի խանչէ , քանի դիմա-  
կալէ յորժամ զենուլ կամին : Արդ՝ այս  
խտիր է ընդ բարիսն նշանակեալս ոչսա-  
րաւ , և ընդ չարս և մաքմասէրս՝ որք

յանմաքուր կենդանին օրինակին : Այլ  
գատապարտեալ առ ՚ի մահ՝ քանիցա ան-  
գամ լսէ զբանալ բանտին, տիրի կարծե-  
լով թէ հանել կամին զնա արտաքս, և ՚ի  
կախարան տանել : Բայց անպարտն, և որ  
արդարացեալն է, ուրախ լինի յորժամ  
զբացումն լսէ, դիտելով զի գան ազատել  
զնա : Սոյնպէս շարագործ այր ՚ի լսել անդ  
զձայն փականաց մահու, յորժամ հիւան-  
դութին զնա ճնշէ, երկուցեալ կրէ ան-  
ձուկ մեծ և տաղնապ. վասն զի վերաւոր  
ունելով զիսիզմ մտացն, համարի թէ ՚ի  
դժոխական բոցսն գնալ ունի յաւիտեան:  
Բայց որոյ խիզմ մտացն է մաքուր, խնդայ  
առաւելապէս, ճանաչելով թէ յազատու-  
թի կոչի և ՚ի հանդիստ յաւիտենից : Ապա  
դործեացուք մեք զոր պարտիմքն՝ իբրև քաջ  
կրօնաւորք, և ոչ միայն անդիմազարձ ու-  
նիցիմք զշամակամութիւն առ Ած ՚ի ժամ  
մահու, այլ խնդայցեմք ևս, հայցելով  
յԱյ ընդ մարդարէին՝ հանել զմեղ ՚ի  
բանտիւ աստի : ( Սաղմ. Ճիւա . 8 : )

Սուրեն Գրիգորիոս ՚ի վերայ բանիցն  
Յովլեայ . ( Ե . 22 . ) \* ՚ի դազանաց վայ-  
բենեաց ոչ երկիցես, || ասէ . \* Քանզի առ  
արդարան՝ սկիորն հատուցման է վստա-  
հութիւն մտացն՝ որ յելմն լինի բազում  
անգամ : || Ունել ՚ի ժամ մահու զայն ու-  
բախութիւն, և զսաղաղութիւն, և զսղմէն  
հանդարտութիւն՝ սկիորն է ասէ՝ հատուց-  
մանն արդարոց . անդէն սկսանին ճաշա-

կել զշիթս խաղաղութեն՝ որ իբր դեմ  
յորդառատ և պարարտացուցիչ զեղուլ  
ունի ՚ի հոգիս նոցա վաղվաղակի . արդէն  
սկսանին առնուլ զճաշակ երանութեան  
իւրեանց : Եւ ընդ հակառակն , չարա-  
դործք երկիւղիւն և խայթուածովք զոր  
կրեն յայնմ ժամու , սկսանին ճաշակել  
դուանջանս իւրեանց և զդժոխս :

Վ ասն այսորիկ ցանկալն մահու և  
խնդալ ընդ այն՝ է նշան բարեդուշակ , և  
ասէ այսպէս նբ Յովհաննէս Կլիմաքոս .  
դովելի է յոյժ նա՝ որ սպասէ մահու զօր  
ամենայն . իսկ որ յամենայն ժամ փափաքէ  
այնմ , սուրբ է : Այլև նբն Ամբրոսիոս  
զովէ զայնոսիկ որոց ըղձալի է մեռանելն :  
Արդարն տեսանեմք , զի նբ Կահապետքն  
առաջինք ունէին զայս ցանկութի , կալով  
իբրև պանդուխտք և օտարք յերկրի , և ոչ  
ընակք . ըստ որում դրէ նբ Առաքեալն  
Պօղոս , և դեղեցիկ նշանակէ թէ \* Ո՛՛  
զայսպիսինն խօսին , յայտ առնեն եթէ դա-  
ւառ իմն խնդրեն : || ( Եբրայ . ժա . 14: )  
Այսու ցուցանէին՝ թէ ելանել ցան-  
կային յաքսորանաց աստի . և այս է ոյր  
վասն յոգւոց հանէր և արքայ մարդարէն .  
\* Վայ է ինձ , զի ընդ երկար եղեւ պան-  
դիստութի իմ : || ( Սաղմ . ՃԺԾ . 5: ) Իսկ  
արդ՝ եթէ այսպէս խօսէին և փափաքէին  
Կահապետքն այնոքիկ՝ մինչ դեռ փակեալ  
կայր դուռն երկնից , և ոչ էր նոցա փու-  
թով դնալ անդր , զինչ ապա այժմ , յոր-

Ժամ՝ դուռնն բացեալ կայ, և հոգի որ  
մաքրեալ իցէ՝ անդէն վաղվաղակի զնայ՝ Ե  
վայելել զԱծ:

## Գ Լ Ո Ւ Խ Ի .

Յաղագս պատճառաց ինչ և հաւանու-  
թեց՝ որովհ մարդ է մեզ շահնիալ  
օքինաւոր մահուան, և այն՝ գո-  
վութել :

Առ ՚ի կարօղ լինելոյ լաւ ևս և կա-  
տարելագոյնս միաբանել զմեղ ընդ կա-  
մացն Այ ՚ի մահուան, որպէս և ՚ի կեն-  
դանութե, կարդեսցուք աստանօր հաւա-  
նուիս ինչ կամ պատճառս՝ որոց վասն իցէ  
մարթ անձուկ ունել մեռանելոյ, որպէս  
զի ընտրեսցուք յայնցանէ զաւագոյնն :  
Առաջին պատճառ ցանկալի լինելոյ մա-  
հուն՝ է ազատանալն ՚ի վտաց անտի  
որովք վարակեալ են այս կեանք . զի ըստ  
իմաստնոյն ասելոյ, \* Առաջ լաւ է քան  
զկեանս դառնութե . || (Արաք. կ. 17: )  
Տեսանեսք ապաքէն՝ զի մարդիկ ուշարձի  
յոլվակի ցանկանան մահու, և զայն հայ-  
ցեն յԱյ . զոր և առանց մեղաց առնել  
կարօղ են . քանդի աստի, կենացս վիշտք  
այնքանիք են և այնպիսիք, մինչ զի օրէն է  
ցանկալ մահու առ ՚ի զերծանելոյ յայն-

ցանէ : Մի 'ի պատճառաց՝ զոր 'ի մէջ  
բերեն վարդապետք՝ թէ առ ի՞նչ վիշտս  
բազմապատիկս յաճախեաց Ած առ մար-  
դիկ, այն է՝ զի մի յարեսցին յաշխարհ, և  
մի զայս կեանս սիրեսցեն . այլ զսիրտ և  
զսէր իւրեանց ձգեսցեն 'ի հանդերձեալսն,  
և յայն փափաքեսցեն : Ուր \* ոչ սուգ, և  
ոչ աղաղակ, ոչ ցաւք, և ոչ աշխատանք ոչ  
ես գոյ : || (Յայտն. իա . կ : ) Ասէ նըն  
Օգոստինոս . Ած նր մեր իւրովն անբաւ-  
բարութ և ողորմութեն զառաջիկայ կեանս  
կարճատև լինել սահմանեաց՝ և արագա-  
վախճան . քանզի վշտալից է . իսկ դհան-  
դերձեալն որում սպասեմք, լինել մշտնջե-  
նաւոր . որպէս զի վիշտքն ձգեսցին սակաւ,  
իսկ վայելումն և հանդիստն իցէ յաւիտե-  
նական : Այլէ նըն Ամբրոսիոս ասէ .

\* Այս կեանք այնքան չարեօք է պատա-  
րուն, մինչև առ նորա համեմատութեամք՝  
մահն դարման է համարելի, և ոչ պատու-  
հաս : || Այնչափ վշտալից են կեանքս և լի  
չարեօք, զի թէ ոչ առ 'ի պատիժ տուեալ  
էր Այ զմահն, պարտ էր խնդրել զայն  
իբր ողորմութիւն և դարման՝ առ 'ի վախ-  
ճան լինելոյ չարեացն և տառապանաց :  
Ճշմարիտ է՝ թէ բաղում անգամ մարդիկ  
աշխարհի յանցանեն սակս անժուժութենն  
որով կրեն զվիշտս, և վասն եղանակին հայ-  
ցելոյ զմահ յայ, տրտնջանաց բանս խօսե-  
լով և անհամերութեն . սակայն եթէ խա-  
զաղական ոգւով զայն խնդրէին և հպա-

տակօրէն, ոչ լինէր 'ի մեղս, ասելով առ  
ՏՌ. Եթէ հաճոյ իցէ քեզ, հան զիս 'ի  
վշտաց աստի. որչափ ապրեցայ՝ բաւա-  
կան է:

Երկրորդ, մահու ցանկալ մարթ է կա-  
տարելագոյն ևս օրինակաւ՝ առ 'ի չտեսա-  
նելոյ զտառապանս եկեղեցւոյ, և զհանա-  
պազորդ անարդանսն՝ որ լինին ԱՅ: Այնմ  
ցանկալ տեսանեմք աւանիկ զմարդարէն  
Եզիա, որոյ հայեցեալ ընդ հալածանս  
Աքաբարու և Յեզաբելայ, 'ի քակտել  
զսեղանս, և 'ի կոտորել զամենայն մար-  
դարէս ԱՅ, և զի իւրում անձին ևս 'ի  
խնդիր էին առ 'ի սպանանել, վառեալ 'ի  
նախանձ փառացն ԱՅ, և անկարացեալ  
ելս դարմանի զտանել, գնայ մեկնի յանա-  
պատս, և նստեալ անդ ընդ ծառով միով,  
\* Խնդրեաց մահ անձին իւրոյ, և ասէ.  
շամտ է արդ տըր. առ զոգի իմ յինէն տէր.  
զի ոչ եմ ես լաւ քան զհարս իմ: || (դ. Թագ.  
Ժթ. 4:) Այլե քաջակորովն այն զօրավար  
ժողովրդեաննն ԱՅ: Յուղա Մակաբէ ասէր.  
\* Լաւ լիցի մեղ մեռանել 'ի պատերազմի,  
քան տեսանել զչարչարանս աղդի մերոյ  
և սրբութեցն մերոց: || (ա. Մակ. է. 59:)  
Եւ այսու քաջալերէր և խրախուսէը  
զիւրսն 'ի մարտնչել: Եւ յաղագս երա-  
նելոյ սըյն Օգոստինոսի ընթեռնումք 'ի  
վարս նորա, թէ յարձակեալ Վանդա-  
լոց 'ի Սպանիոյ յԱփրիկէ, քանդէին ա-  
ւերէին զամենայն, ոչ խնայեալ յայր և

'ի կին , ոչ յեկեղեցականս , և ոչ յաշխարհականս , ոչ 'ի տղայս , ոչ 'ի ծերս , և հասին 'ի քաղաքն Հիւռնոյ , որոյ ինքնն էր Եպիսկոպոս , և պաշարեցին զայն յամենայն կողմանց զօրքը բաղմօք : Տեսեալ սբյն Օդոստինոսի զանհնարին նեղութիւնսն , զեկեղեցիս առանց երիցանց , և զքաղաքն բնակչօք հանդերձ սպականեալս , ողբայր դառնապէս 'ի ծերութեն իւրում . և ժողովեալ զուխտ եկեղեցւոյն ասաց . Ազաւցի զՏէր ապրեցուցաննել զմեղ 'ի վտանգաց աստի , կամ տալ մեղ ժոյժ , կամ հանել զիս 'ի կենացս , առ 'ի չտեսաննելոյ զմեծամեծ չարխադ . և Տը պարզեեաց ինձ զյետինս զայս , Քանզի յերրորդ ամսեան պաշարմանն տկարացաւ երաննելին , և վախճանեցաւ : Զնոյնօրինակ դիսպուած ընթեռնումք յաղաքս նը հօրն իգնատիոսի 'ի վարս նորա : Այս է կատարելութիւն արանց Սրբոց , այնչափ տառապիլ ընդ վիշտս եկեղեցւոյ , և ընդ անարդանս գործեալս ընդդէմ մեծվայելութեանն Այ , մինչ զի ոչ կարացեալք հանդուրժել , փափաքեն մահու՝ զի մի չարեացն անհնարից տեսօղք լինիցին :

Ե՛ և այլ պատճառ բարեվայելուչ և մեծի կատարելութենցոյց՝ առ 'ի ցանկալ և հայցել յայ զմահ . և այն է , զի լինիցիմք այնուհետեւ աղատք և անկասկածք 'ի զայրացուցաննելոյ զնա : Վասն զի ստոյդ է թէ յայս կեանս գոլովմեր , չիք անկաս

կածուի , այլ կարեմք սահիլ 'ի մեղս մաշուչուչափս . և դիտեմք զի այլք առաւելեալք քան զմեղ , վիճակեալք մեծամեծ պարգևաց առ ԱՆՅ , և խկապէս Սուրբք , և Սուրբք զերազանց , աննկան : Այս է որ ահ մեծ արկանէ 'ի ծառայս Այ , և ոյր վասն ելանել ցանկան 'ի կենաց աստի : Առ 'ի շմեզանչելոյ՝ կարօղ է ոք ցանկալ թէ ծնեալ ոչ էր , և ոչ 'ի դոյ եկեալ . որչափ ես ցանկալ 'ի մեռանել . զի մեծագոյն շար է մեղք քան ոչն դոլ . և լաւագոյն էր ըլինել քան մեղանչել : \* Լաւ էր նմա՝ թէ չէր խոկ ծնեալ մարդն այն , || ասաց Քն փրկիչ մեր վասն նորա՝ որ զինքն վաճառելոց էր : (Մատթ . իջ . 24 : ) Եւ նքն Ամբոսիոս 'ի սոյն առաջարկութիւն բացայացեալ զւան Ժողովողին . ( դ . 2. 3. ) \* Եւ դումեցի ես զամենայն մեռեալն որ յառաջագոյն մեռան , քան զինդանին որ ցայժմ կենդանի իցեն : Եւ քան զնոսազերկոսին լաւ այն է որ չեսս իցէ լեալ : || ասէ այսպէս . \* Մեռեալն վերադրի քան զինդանին , զի դադարէ 'ի մեղանչելոյ . և քան զմեռեալն վերադրի չե ծնեալն , զի ոչ դիտաց մեղանչել : ||

Վասն այսորիկ օգտաւէտ կըթութիւն է յաճախ յաղօթան սովորիլ և ասել . Տի , մի թողուր զիս մեկնիլ 'ի քէն : Տէր , եթէ կայ ինձ յանցանել առ քեզ , բարձ զիս յաշխարհէ մինչ չե մեղուցեալ իցեմ . զի ոչ կամիմ կեանս՝ բայց 'ի ծառայել . քեզ .

և եթէ չունիմ ծառայել կենդանութես ,  
ոչ ևս կամիս : Կարի հաճոյական է ԱՅ  
կրթութիւնս այս , և մեղ բազմաշահ . զի  
կայ 'ի սմա կրթութի զղման , ատեղութե  
և գարշելոյ 'ի մեղաց . գոյ կրթութի խո-  
նարհութե , գոյ կրթութի սիրոյն ԱՅ ,  
գոյ հայցուած յառաւել հաճելեացն՝ զոք  
առնել կարօղ եմք յԱՅ :

Յաղագս սըյն Լուղովիկոսի արքային  
գաղղիոյ պատմեն , թէ դշխոյ մայր իւր  
Պիանքա թագուհի ասէր ցնա . Կամէի  
որդեակ իմ , տեսանել դքեզ մեռեալ առա-  
ջի աշաց իմոց , քան թէ մեղանչել քեղ մա-  
հուչափ : Այս փափաքումն , և այս օրհ-  
նութիւն զոր մայրն առնէր նմա , այնչափ  
հաճոյ եղեւ ԱՅ , զի ասի թէ ընդ բովան-  
դակ կեանս իւր ոչ մեղաւ նա մահուչափ :  
Զայսպիսի արդիւնս թերես արդեօք 'ի  
քեզ ևս արասցէ այս ցանկութիւն , և  
այս ինդրուած :

Եւ ևս , ոչ միայն առ խորշելոյ 'ի մա-  
հուչափ մեղաց , այլև 'ի ներելեաց անտի՝  
որ յաճախեալն են 'ի կեանս յայս , լաւ է  
փափաքել մահու : Վասն զի պարտ է ծա-  
ռային ԱՅ յորդորամիտ լինել առ 'ի մե-  
ռանել ոչ միայն յառաջ քան զմեղանչել  
մահուչափ , այլ նաև նախ քան զառտ  
ինչ ասել , որ ներելի մեղք են . և որ այսու  
պատճառաւ մեռանիցի , մարտիրօս է :  
Այս հաւաստի է , զի ապրելով մեր , բա-  
զում մեղս գործեմք ներելիս , ըստ այնմ .

\* Եօթն անգամ անկցի արդարն. || (Առակ.  
իդ. 16.) այսինքն է՝ բազում անգամ. և  
որչափ յերկար կեցցէ, նոյնչափ յաճախ  
անկանիցի : Եւ ծառայքն ԱՅ ոչ միայն  
վասն 'ի ներելեացն խորշելոյ ցանկան հրա-  
ժարել 'ի կենաց աստի, այլ զի ազատա-  
նալ ևս յօժարին 'ի բազում թերութեց  
և յանկատարութեց, 'ի փորձութեց և 'ի  
թշուառութեց՝ որոց զիործ առնումք դօր  
ամենայն : 'Ի դէպ իսկ ասէ երջանիկն այն  
թովմաս գեմբացի . Ո՞ Տէր, քանի վշտա-  
նամ յորժամ յաղօթս զերկնաւորան խոր-  
հելով, ընդառաջ ինձ լինի խուռն բաղ-  
մութի իրաց մարմնականաց . աւաղ, ո՞ր-  
պիսի ինչ են կեանքս, ուր ոչ պակասին  
բնաւ նեղութիւնք և թշուառութիւնք.  
ամենայն ինչ լի է որոգայթիւք և թշնա-  
մեօք. 'ի մեկնիլ միոյ նեղութե դայ միւսն .  
և մինչև դադարեալ մարտի միոյն, բա-  
զում այլք յանկարծ 'ի վերայ հասանեն :  
Զիա՞րդ սիրել մարմ իցէ զկեանս այսքա-  
նեօք դառնութեամբք լցեալ, ներքոյ ան-  
կեալ այնչափ պատահարաց և թշուա-  
ռութեանց . ո՞րպէս կեանս անուանել  
զայն՝ որ մահունս ծնանի բազումն, և  
ախտս ժանտս :

Գրեալ կայ յաղագս սրբուհւոյ ու-  
բումն՝ թէ ասել սովոր էր : Եթէ օրէն էր  
ընտրել ինչ մի, ոչ զայլ ընտրէի՝ բայց  
զմահ . վասն զի հոդին մնայ այնու աղա-  
տացեալ յամենայն երկիւղէ գործելոյ ինչ

խափանարար անխառն սիրոյ : Եւ դարձեալ, մեծ ևս կատարելութի թուի փափաքել ելից յայսց կենաց վասն խորշելոյ 'ի ներելի մեղաց, 'ի թերութեց և յան կատարութեց, քան վասն խորշելոյ 'ի մահուչափ մեղաց . վասն զի յայսմ թերես շարժեսցի ոք առաւել յերկիւզէ դժուոց, 'ի շահեկանութէ, և յիւրմէ առանձին սիրոյ, քան 'ի սիրոյն Այ: Բայց այնշափ սիրել զԱծ՝ մինչև մահու ցանկալ առ 'ի չգործելոյ մեղս ներելիս, պակասութիւն և անկատարութիւն, այս է դիտաւորութիւն ամենայստակ, և շափ մեծի կատարելութեան :

Սակայն ասել կարօղ է ոք. ցանկամ ես ապրել առ 'ի տալ վճարումն յանցանաց խմոց և թերութեց : Պատասխանեմ այսմ. եթէ երկայնակեսց լինելով, հատուցանէաք միշտ վասն անցելոց մեղանաց, և ոչնորս 'ի վերայ զնէաք, բարի էր բանդէ Բայց յորժամ ոչ միտյն չհատուցանես, ոյլ յաւելուս, և օրչափ յերկարես 'ի կեանս՝ առաւել համարս ունիս տալ Այ: ոչ բարւոք ասես . Կարի ուղղութ ասէ նընթեռնարդոս . \* Զի՞ այդչափ ցանկամք այսց կենաց, յորում որչափ առաւել կեանք, նոյնչափ յոլովս մեղանչեմք . որչափ բաղմօրեայ են կեանք, նոյնչափ բաղմաթիւ մեղանք : || Եւ նըն չերոնիմոս ասէ . զի՞նչ զանազանութիւն կարծես դու լ'նել ընդ երիտասարդ մեռեալն և ընդ

ծերն, բայց զի ծերն գնայ ծանրաբեռն  
մեղօք քան զերիտասարդն, և ունի բաղմա-  
դոյն համարս տալ Այ: Սոյնպէս և նըն  
թեռնարդոս առնէ յայսմընտրութի ինչ  
լաւագոյն, և ասէ զանձնէ բանս իւրուն  
խոնարհ ոգւով, զոր վասն մեր ասել կա-  
րեմք ճշմարտագոյն ևս: \* Կեալ ամառեմ,  
վասն զի դուն ինչ շահիմ. մեռանել երկն-  
շիմ, զի ոչ եմ պատրաստ: Վակայն ընտրեմ  
մեռանել, և յողորմութին Այ ապսպա-  
րել զիս և աւանդել, զի բարեգութ է և  
ողորմած, քան թէ իմով չարաչար վարուք  
զայլս դայթակղեցուցանել: || Այս է ահա  
ընտրութի գեղեցիկ: Ասէ հայրն Ավելա.  
մրպիսի և գտանէր ոք միջասահման պատ-  
րաստուք, արժան էր նմա՝ մահու առա-  
ւել ցանկալ, քան կենաց, 'ի պատճառս  
վտանդին՝ յորում կեայ մարդ, որ և իս-  
պառ դադարէ մահուամբ: \* Զի՞նչ է  
մահ, բայց թողումն մոլութեց, յարու-  
թի առաքինութեանց, || ասէ նըն Ամբո-  
սիոս:

Այս ամենայն պատճառք և հաւանու-  
թիք՝ են արդարե բարեդէպք առ 'ի փա-  
փաքելոյ մահու: Բայց որ գերագոյն կա-  
տարելութեն է, այն է զոր նը Առաքեալն  
Պողոս ունէր, տեսանել զՔ՛՛, զոր յան-  
շափա սիրէր. \* Զցանկան ելանել և ընդ  
քնի լինել առաւել լաւ համարիմ: ||  
(Փիլիպ. ա. 23: ) Զի՞նչ ասես՝ ածայինդ  
Պողէ. առ ինչ լուծանիլ 'ի մարմնոյ ցան-

կաս . միթէ 'ի վշտաց տեղի տալոյ աղա-  
գաւ , ոչ արդարեւ . այլ մանաւանդ  
\* Պարծխմք 'ի նեղութիւն : || (Հռովմ. ը. 38: )  
Եւ ընդէլ ապա . 'ի մեղաց փախչելոյ . և  
ոչ այդ . \* Քանզի հաստատեալ եմ եթէ  
ոչ մահ , և ոչ կեանք կարեն մեկնել զմեզ  
'ի սիրոյն Այ: || Քանզի հաստատեալ էր  
'ի շնորհս , և գիտէր զի չէ կորուսանելոց  
զայն . ուստի չունէր պատճառս երկնչելոյ  
ընդ այս : Խակ յօյր սակս ապա մահու  
փափաքես : Որպէս զի այժմէն ընդ Քնի  
գտանիցիւմ . ցանկայը 'ի լոկոյ սիրոյ . \* Զի  
խանդակաթ եմ ես սիրով : || (Երգ. Է. 5: )  
Էր նա հիւանդագին 'ի սիրոյ , և յոդոց  
ելանէր առ իւրն սիրելի . և ամենայն  
դոյզն յապազումն՝ երկար թուէր նմա ,  
հասանել 'ի վայելումն երեսաց նորա :

Սուրբն Բոնավենդուրա՝ երիս աստի-  
ճանս բաժանեալ սիրոյն Այ, Վերջին զայս  
դնէ : Առաջինն է՝ սիրել զԱծ 'ի վեր քան  
զամենայն , այնպէս սիրելով զաշխարհի  
իրքս , զի սակս և ոչ միոյ իրիք 'ի նոցանէ  
գործիցենք մեղս մահուչափ , կամ յանցա-  
նիցենք զպատուիրանաւ Այ . և այն է զոր  
Քն փրկիչ մեր ասաց առ պատանին՝ որ  
յաւետարանի . \* Եթէ կամիս 'ի կեանսն  
յաւիտենսականս մտանել , պահեա՛ զպա-  
տուիրանսն : || (Մատթ. Ժ. 17: ) Եր-  
կրորդ աստիճան սիրոյն է , ոչ շատ համա-  
րել զպահպանութիւն պատուիրանաց Այ,  
այլ յաւելուլ և զիսրատան : Այս սեպ-

հական է Արօնաւորաց, որը ոչ միայն բար-  
ւոյն հոգ տանին, այլև բարեգունին, և  
առաւել կատարելոյն ըստ ասացելումն  
սբյն Պօղոսի. \* Առ՝ի քննել ձեզ զլաւն,  
և թէ զինչ են կամքն Այ, բարին, հաճոյն  
և կատարեալն: || (Հռովմ. ժբ. 2: ) Եղ-  
րորդ աստիճանն սիրոյ՝ ասէ նբն Բոնավեն-  
դուրա, է \* Այնչափ ըղձմամբ բորբոքիլ  
առ Ած, զի առանց նորա չկարիցես կեալ: ||  
Սորին վասն ցանկայ լինել աղատ և ար-  
ձակեալ՝ ի բանտէ մարմնոյն՝ առ՝ի կալ  
ընդ Քնի. և կայ՝ ի փափաքման եշանելոյ  
յաքսորանաց աստի. և զի քակտեսցի  
անկցի այժմէն պարխապ մարմնոյս, որ  
անջրպետ կայ և խափանէ տեսանել զԱծ:  
Այսպիսեացս՝ ասէ, կեանքն անհամքե-  
րութի է, կամ լաւ ևս ասել,՝ ի տաղո-  
կութի է, իսկ մահն՝ ի ցանկութիւն վա-  
ռեալ :

Յաղաղս նբ հօրն իգնատիոսի ընթեռ-  
նումք՝ ի վարս նորա, թէ մեծաբորբոք  
ցանկայր ելանել՝ ի բանտէ մարմնոյն. և  
այնչափ հառաչք հոգի նորա գնալ հան-  
դիպել առ Ած, մինչև՝ ի յիշատակել  
զմահ իւր՝ ոչ կարէր արդելուլ զարտա-  
սուս՝ որ առ խնդութեն հոսէին յաշաց նո-  
րա: Բայց ասի անտանօր, թէ այսու տար-  
փանօք եռայր նա՝ ոչ այնչափ առ ստանա-  
լոյ ղծայրադոյն բարին վասն իւր, և հանդ-  
շել յայնմ երանաւէտ տեսութեան, քան  
թէ առաւել ևս առ՝ ի տեսանել զամէ.

ներանեան փառս մարդկութե Քնի, զոր  
սիրէրն դերազանցութե : Զորօրինակ, առ  
մեօք՝ բարեկամ՝ ոք խնդայ ընդ տեսանելն  
՚ի պատուի և ՚ի փառս զսիրեցեալն յիւրմէ  
կաթողին, սոյնպէս ցանկայր նր հայրն  
դտանիլ ընդ Քնի, մոռացեալ զիւր շահ  
և դշանգիստ՝ յանիստառն սիրոյ. ցանկայր  
կալ ՚ի ցնծութե և ՚ի տօնախմբել զիւրս  
Քնի, խնդակից նմա լինելով. և այս է  
վերամբարձ և կատարեալ ներգործութե  
սիրոյ՝ զոր առնել կարօղ եմք :

Այսու օրինակաւ ոչ ևս դառն լինիցի  
մեղ յիշատակ մահու, այլ յաւետ ախոր-  
ժանս և խնդութի մեղ բերիցէ : Անց խոր-  
հըրդով փոքր մի յառաջ, ածեալ զմուաւ-  
թէ յետ սակաւ աւուրց լինիցիս յերկինս,  
փայելել յայն զոր ակն ոչ ետես, և ունկն  
ոչ լուաւ, և ՚ի միտս մարդոյ ոչ անկանիլ  
մարթէ . և թէ ամենայն ինչ դառնայցէ  
քեղ ՚ի խնդութի և ՚ի բերկրանս : Ո՞ ոչ  
խնդայցէ ընդ վախճան առնուլ աքսորա-  
նաց և տառապանաց . ո՞ ոչ խնդայցէ ընդ  
հասանելն ՚ի ստացումն իւրոյ վերջին կա-  
տարածին՝ ոյր վասն ստեղծեալն է . ո՞ ոչ  
խնդայցէ մտանելով ընդ մահու ստաց-  
մամբ, ընդ որ մտանել ունիմք ՚ի ստա-  
ցուած երկնայինն ժառանգութե : \* ՚ի  
ժամանակի որպէս տացի քուն սիրելեաց  
իւրոյ . ժառանգութի առն որդիք են . ||  
( Սաղմ. Ճին. 5 : ) Ո՞չ է մտանել ՚ի ստա-  
ցումն բարեացն յաւիտենից՝ բայց միջնոր-

դաւ մահու . որպէս և խմաստունն ասէ՝  
առն արդարոյ յուսալ 'ի մահուն իւ-  
րում . \* Զի թէպէտ և յաջ մարդկան  
տանշեցան , այլ յոյս նոցա լի է անմա-  
հութք . || ( Խմաստ . դ . 4 : ) Սահն է  
միջնորդ և սանդուղք վերելից յերկինս . և  
այս է միակ սիոփումն յայժմու աքսորանս,  
ըստ Սաղմ . Ճ . 2 . \* Սաղմոս ասացից և  
'ի միտ առից , ճանապարհ ամբիծ մինչեւ  
եկեցի առիս : || Զոր այսպէս մեկնաբանէ-  
նբն Օգոստինոս . Տէր , ջանք իմ և ցան-  
կութի է պահպանել զիս ամբիծ յամե-  
նայն կեանս . և այսու հոգողութեամբ և  
փութով երդեցից միշտ , կցուրդ երդոցն  
եղեալ , Ե՞րբ բարձցին այս աքսորանք .  
Ե՞րբ դայցես առիս . Ե՞րբ ես ինքն եկից  
գոտանել գքեղ . \* Ե՞րբ եկից երեւցայց  
երեսացդ Այ : || ( Սաղմ . Խա . 3 : ) Ո՞վ ,  
քանի յամեաց այդ ժամ . ո՞վ , զիարդ մեծ  
ինձ հաճութի և խնդումն լինիցի 'ի լսելն  
թէ ահա մերձ է . \* Ուրախ եղէ ես ոյք  
ասէին ցիս , 'ի տուն Տն երթիցուք մեք :  
Համեսալ կային ոտք մեր առ դրունս քո  
երուսաղէմ : || ( Սաղմ . Ճիա . 1 . 2 : )  
Ահա համարիմ զնել զոտս անտանօր 'ի  
դասակցութի հրեշտակաց և այլոցն եր-  
ջանկաց , վայելել 'ի քեզ Տէր՝ յաւի-  
տեանս :

## Գ Ե Ս Ի Խ Ի Ա .

Հասպատի որ էնչ ասացաւ՝ օբխահօք  
ոմամբք :

**Պ**ատմէ Արմէոն մետափրաստէս՝ ի վարս  
սբյն Յովհաննու Ողորմածի հայրապետին  
աղեքսանդրու, թէ այր ոմն մեծատուն  
ունէր որդի մի կաթողին սիրելի . և զի  
պահեսցէ Տը զկեանս նորա և զառողջու-  
թի, աղաշեաց զնը հայրապետն՝ աղօթել  
վասն նորա, մատուցեալ բաղում գումար  
ոսկւոյ՝ բաշխել յողորմութիւն աղքատաց  
ըստ այսց իննդրուածոց : Արար նք հայրա-  
պետն, և 'ի կատարել աւուրց երեսնից՝ մե-  
ռաւ մանուկն: Հայր նորա՝ ի կսկիծ սաստիկ  
ըմբռնեցաւ, կարծեալ այնպէս թէ աղօթք  
և ողորմութին արարեալ վասն մանկանն՝  
ընդունայն եղեն : Ծանուցեալ սբյ հայ-  
րապետին զվիշտս առնն, աղօթիւք պաղա-  
տեցաւ առ Տը մսիթարել զնա : Լուաւ  
Տը աղօթիցն. և 'ի միում գիշերի հրեշտակ  
երկնից երեեալ առն այնմիկ, ասաց նմա՝  
գիտել զի աղօթքն մատուցեալք վասն որդ-  
ւոյ իւրոյ լսելի եղեն, և վասն այնր մա-  
նուկն կայ յերկինս կենդանի և անվտանգ .  
և զի օգուտ էր նմա մեռանել յայնմ ժա-  
մանակի, և մեռաւ իսկ՝ զի փրկեսցի . քան-

զի եթէ ապրեալ էր, ՚ի չարին մասին լիւնելոց էր, և անարժան վառացն Այ։ Յաւել ասել նմա. դիտեա զի ամենայն որ ինչ պատահէ ՚ի կեանս յայս, ոչ առանց արդար դատաստանաց Այ կատարի, թէ պէտե պատճառք դատաստանաց նորածածկեալք են առ մարդիկ. վասն այսորիկ ոչ արժան է մարդոյ համակիլ ՚ի տիրութիւն անպատշաճ, այլ համբերատար և ախորժ անձամբ ընդունել զոր տնտեսէ Ած։ Այսու երկնաւոր ազգմամբ միսիթարեցաւ հայր մեռելոյ մանկանն, և արիացաւ ՚ի ծառայել Այ։

՚ի պատմութեանն թեքայիդայ՝ պատմի շնորհ ինչ գերազանց զոր նըն Մաւրիտիոս վկայ՝ զօրագլուխ դնդին թեքայեցւոց արար աղնուական կնոջ միում իւր ուխտաւորի : Էր կնոջն որդի միամօր, և առ կանխաւ դաստիարակելոյ ՚ի բարեպաշտիկ վարս, ՚ի լրանալ տղայունն ընծայեաց զնամայրն ՚ի մենաստան սբյն Մաւրիտիոսի ընդ խնամարկութբ միանձանցն . որպէս էր սովորութի յայն ժամանակս, զոր և արարին ծնօղք Մաւրոսի և Պլակիդոսի, և այլես ազնուատոհմք հռովմայեցիք առ ժամանակօք սբյն Բենեդիկտոսի, և բաղում ամօք զկնի նոյնպէս արարին առ նըն Ժովկմաս Ագուինացի՝ եղեալ զնա ՚ի մենաստան լերինն կասինայ թէ՛ողորա մայր իւր և եղբարքն՝ Կոմմք Ագուինայ :

Ա՞դ՝ միածին որդի մեծուհւոյն վար-

ԺԵՂԱԸ 'Ի ՊԻՐՍ և 'Ի ՎԱՐՍ , և 'Ի ՎԱՆԱԿԱՆ  
 ՀՐԱՀԱՆԳՄ 'Ի ՄԵՆԱՍՏԱՆԻՆ յայնմիկ , և  
 ԱԿՍԵՎԼ ԽԱԿ ԷՐ ՔԱՂՋՐ ՃԱՅՆԻւ ԵՐԳԱԿԻց  
 ԱՆԵԼ ՄԻԱՆՃԱՆՑՆ 'Ի ՊԱՍԻ : ԱՅԼ 'Ի ՎԵՐԱՅ  
 ՀԱՍԵՎԼ ՆՄԱ ՉԵՐԹՆ՝ ԿԱՐՃԵՎՈՂ 'Ի ԿԵՆԱԳ :  
 ԶՈՔԱԸ ՄԱՅՐՆ ԱՆՄՄԻՒԺՄԱՐ յԵԿԵՂԵՑԻ . և  
 ԱՐՏԱՍՈՒԱԳ ՀԵՂԵՂԱԸ յՈՒՂԱՐԿԱՎՈՐԵԱԳ  
 ԳՄԵԱՆԵՎԼՆ 'Ի ՊԵՐԵՂՄԱՆ ԱՆԴՐ . ԲԱՅՋ ԱՊ-  
 ԹԵԹԵԱՆԱՎԼ ՄԱՅՐԱԿԱՆ ԿԱԿԾԱՆԱՑՆ ոչ  
 ԲԱւԱԿԱՆ ԷՐՆ ԱՐՏԱՍՈՒՔՆ յՈՐԴԱՀՈՍ , և  
 ոչ ՀԱՆԱՐ ԷՐ ԿԱՍԵԳՈՒՏԱՆԵԼ զնա 'Ի ՀԱՆԱ-  
 ՊԱՊՈՐ ՊՆԱԼՌ 'Ի ՊԵՐԵՂՄԱՆՆ՝ ողբալ ան-  
 շափ սդով . և զայն առնէր յաւէտ՝ յոր-  
 ժամ 'Ի ԿԱՏՈՐԵԼ ածային պաշտամանցն  
 յիշէր զիւրն զըկիլ 'Ի ԼՍԵԼՈՅ ՃԱՅՆԻ որդե-  
 կին իւրոյ : Յայս տիրագին սովորութիւն  
 ՀԱՆԱՊԱՊՈՐԵԿԱԼ մեծուհւոյն՝ ոչ միայն  
 'Ի ցերեկի յԵԿԵՂԵցւոջ , այլև զիշերի առ-  
 անին , ոչ կարէր առնուլ ՀԱՆՊԻՍՈՒ . և 'Ի  
 միում նուազի պարտասեալ նորա՝ նիր-  
 հեաց . և յանուրջս երևեցաւ նմա նք  
 Վկայն Մաւրիտիոս և ասէ : Զի՞ քեղ կին  
 դու զի՞ ողբաս անդադար զմահ որդւոյ քո ,  
 ոչ տալով վախճան արտասուացգ : Պա-  
 տասիսանի ետ կինն . ոչ բաւեսցեն ամենայն  
 աւուրք կենաց իմոց դադարեցուցանել  
 զողքա իմ . ցորչափ կենդանի եմ , լացից  
 միշտ զիմ միամօր որդեակ . ոչ լուեսցեն աչք  
 իմ 'Ի հոսելոյ արտօսր , մինչեւ մահն փակես-  
 ցէ զայնս , և մեկնեսցէ 'Ի մարմնոյ աստի  
 զանափոխելի զիմ ողի : Կրկնեաց առ նա նք

վկայն . ասեմք քեզ կի՞ն դու . մի ցաւադշնիր . մի այլ ողբար զորդեակդ մեռեալ . նա ոչ է մեռեալ , այլ կենդանի է . և կայ ընդ մեզ յուրախութեան՝ ի յաւիտենից կեանսն . և 'ի հաստատութի՛ ճշմարտութես կանխեա դու վաղիւ յառաւօտեան պաշտօնն , և լուիցես զձայն որդեկին քո կից ընդ միանձանցն՝ որք երգեն զպաշտօնն ածային . և զայդ ոչ վաղիւ միայն ունիցիս , այլ յամենայն նուազս յորժամ առաջիկայ գտանիցիս օրհնութեցն Այ յեւ կեղեցւո՞ւ . վասն որոյ դադարեաց , տուր կատարած քոյոց արտասուացդ , ունելով քո պատճառս մեծի խնդութե՛ քան տրտութե՛ : Զարթուցեալ կնոշն , մնայր ըզանսալով այգուն ժամու՝ առ 'ի ստուգեալ զիրսն , դոլով յերկբոյս՝ դուցէ երադինչ իցէ : 'Ի հասանել ժամուն մտեալ նորա յեկեղեցի , ծանեաւ յերգել անդ զկցուրդն՝ զանուշակ ձայն երջանիկ որդւոյն . և անկասկած եղեալ ընդ փառս նորա յերկինս՝ թօթափեաց յանձնէ զցաւմն բովանդակ . և յանչափս դոհսնայր զԱյ , վայելեալ զօր ամենայն 'ի քաղցրաւուր ձայն որդւոյն յածային պաշտօներդութե՛ եկեղեցւոյն : Այսու օրինակաւ միիթարեաց զնա Աֆ , և արար մեծատուն այսպիսի պարդեօք :

Պատմէ ոմն 'ի մատենադրաց՝ թէ ասպետի ուրումն ելեալ յորս , դիպաւ նմանէրէ մի , զորոյ զցես պնդեալ միայնիկ՝

առանց ծառայի, ուր այլք ցըռուեալ էին  
զհետ այլոց էրէոց, առ կարի յարձակ-  
մանն հեռացաւ յոյժ, և Եհաս յանտառ-  
ուրեք, յորում լսելի եղեւ նմա ձայն մար-  
դոյ ախորժալուր յոյժ։ Զարմացեալ նո-  
րա ընդ լուր այնպիսի ձայնի յանտառի  
անդ, և զի ոչ կարծէր թէ իցէ միումն  
յիւրոց ծառայից, կամ այլոյ ուրուք՝  
քաղաքացւոց, կամեցաւ դիտել զիրսն, և  
եմուտ 'ի ներբարդոյն կողմն անտառին. և  
ահա գտանէ զըորոտ ոմն զարհուրատե-  
սակ, և նողկալի անհնարին, որոյ մարմին  
ողջոյն ապականեալ էր, և ըստ ամենայն  
մասանց և անդամոց ծախեալ։ Տագնա-  
պեցաւ ասպետն ընդ տեսիլ այնպիսի,  
իբր յահի եղեալ. բայց զօրացուցեալ  
զանձն՝ մատեաւ ողջունեաց զըորոտն մար-  
դասիրաբար, և Եհարց նմա՝ եթէ դժւ էիր  
որ երգէիրդ, և ուստի այդպիսի ձայն  
քաղցրալուր։ Պատասխանի ետ բորոտն.  
այս Տէր, ես ինքն երգէի, և այս իմ բնա-  
ւոր ձայն է։ Եւ զիարդ ուրախ լինել կա-  
րիցես, ասէ ասպետն, վարակեալ այդքան  
ցաւօք։ Պատասխանի ետ ողորմելին։ Տէր  
իմ, ընդ ԱՃ և ընդ իս չիք այլ խորոց՝ բայց  
այս որմ կաւակերտ, այս մարմին իմ. 'ի  
քայլքայիլ սորա՝ և 'ի բաց բառնալ արդե-  
լանացս, երթայց 'ի վայելել զոեսիլ մեծ-  
վայելցութեն յաւիտենականի. և տեսա-  
նելով իմ թէ օր ըստ օրէ 'ի քակտիլ գնամ,  
ինդամ, և երգաձայնեմ անկարծելի զու-

արթամութք , մնալով բաժանելոյ ՚ի  
մարմնոյ աստի . զի ցորչափ ոչ զայս մեր-  
կանամ , չէ ինձ ժամանել ՚ի վայելումն  
կենդանի աղբերն ԱՅ , յորում գնան  
ուղիսք մշտնջենաբուխք , յաւիտենականք :

Սուրբն Կիպրիանոս պատմէ յաղագս  
Եպիսկոպոսի ուրումն , թէ ծանր խօժու-  
թք ինչ մերձեցեալ ՚ի մահ , տագնապեալ  
կայր , և հոգայր ընդ այն . և աղացէր  
զՃէր , յերկարել նմա զկեանսն : Երևե-  
ցաւ նմա հրեշտակ վայելչադիտակ և լու-  
սափայլ . և ասաց խստութք . \* Վշուա-  
նալ երկնչիք , ելանել ոչ կամիք . ես զի՞նչ  
արարից ձեղ : || յայտ արարեալ նմա՝ թէ  
անհաճոյ է ԱՅ հակառակել իւր առ փո-  
խումն ՚ի կենացս : Եւ ասէ նըն Կիպրիա-  
նոս , թէ հրեշտակն աղդեաց նմա զայն  
բանս , զի և նա ՚ի հոգէվարուեն ասիցէ ,  
և ուսուցանիցէ այլոց :

Պատմէ Սիմէոն մետափրաստէս , զոր և  
Սուրիոս յիշատակէ յաղագս սբյ աբ-  
բային թէողոսիու , թէ գիտելով նորա-  
որչափ օգտակար է յիշումն մահու , և կա-  
մեցեալ տալ այսու իւրոց աշակերտաց  
պատճառս յառաջադիմութեն , ետ բանալ  
զգերեղման մի , և շուրջ կացեալ անդ իւ-  
րովք աշակերտոք՝ ասաց . ահա բաց է գե-  
րեղմանն . ո՞ի ձէնջ առաջին լինի , որում  
առնիցեմք զմեռելաթաղն : Յայնժամ ոմն  
յաշակերտացն Բարսեղ անուն , որ և քա-  
հանայ էր և այր առաքինաղարդ , ուստի

և յորդորամիտ և կառլ առ 'ի ընտրելոյ զմահ զուարթութեամբ քաղմաւ, կալաւ զձեռանէ հօրն, և 'ի ծունկս իջեալ ասաց օրհնեա զիս հայր, ևս եղեց առաջին, կատարել յիմ վերայ զհանգստեան պաշտօնն : Հաճեցաւ Աբբայն ոք ընդ խնդիր նորա . և հրամայեաց անդէն կատարել նմա կենդանւոյն զամենայն պաշտամունս՝ զոր սովորութի էր առնել վախճանելոցն յառաջնումն աւուր, յերրորդումն, յին ներորդումն, և յայլ ևս աւուրս որ լինին մինչև 'ի լրումն քառասնից աւուրց : Եւ ահա զարմանալիք . զի յաւարտիլ պաշտամանցն 'ի լրման աւուրց քառասնից, մինչ միանձն բարսեղ կայր առողջ, առանց ջերման, առանց ցաւոց գլխոյ, կամ այլ ինչ տկարութե, իբր 'ի քաղցր քնոյ ըմբռնեալ փոխեցաւ առ Տ՛ր, առնուլ զյաղթանակ իւրոցն առաքինութեանց, այլև յառաջամիտ զուարթութենն՝ որով ցանկացաւ լինել ընդ Քնի : Եւ զի ծանիցի՝ որչափ հաճելի Այ էր յօժարամութին՝ որով երջանիկն այն միանձն ելանելոյ 'ի կենացս ցանկացաւ, զհետ առաջին սքանչելեացն եղել միւս ևս : Ասէ Սիմեոն մետափրաստէս, թէ զաւուրս քառասուն զկնի մահուան նորա՝ տեսանէր զնա աբբայն Թէողօսիոս, զի յամենայն օր դայր 'ի ժամերդուի երեկոյեան, և երդէր 'ի դասի ընդ այլոց աշակերտացն . իսկ այլք ոչ տեսանէին զնա, և ոչ զերդելն լսէին՝ բաց

՚ի միովէ և եթ՝ այր նշանաւոր առաքինու։  
թէ կոչեցեալ Ատտիս։ որ լսէր զերդելն,  
այլ զնա ոչ տեսանէր։ Որոյ երթեալ առ  
աբբայն թահոդոսիս՝ ասէ։ Հայր, եթէ ոչ  
լսես զերդակցիլն մեզ եղքօր մերոյ Բարս  
զի։ Պատասխանի ետ Աբբայն, և լսեմ.  
և տեսանեմ զնա։ և եթէ կամիս, տաց և  
քեզ տեսանել զնա։ Ճողովեալ նոցայա  
ւուրն երկրորդի ՚ի պաշտօն գասուն, ետես  
Աբբայն զերանելին Բարսեղ՝ զի երգակ-  
ցէր այլոցն ըատ սովորութե՛, և մատամբ  
եցոյց զնա Ատտիսի, աղօթելով հանդերձ  
առ Ած՝ բանալ զաջս միանձինն առ ՚ի  
կարելոյ տեսանել։ Եւ ահա տեսեալ նո-  
րա և ճանաչեալ, ընթացաւ վազվաղակի  
խնդալից՝ ընդգրկել զնա։ այլ ոչ կարաց  
ունել, զի անդէն եղեւ աներեսյժ, ասե-  
լով յստակ ձայնիւ ՚ի լուր ամենեցուն,  
կոսցէք մնացէք խաղաղութե՛։ կամ Ո'զջ  
լերուք ՚ի Տը հարք և եղքարք իմ։ այլ ոչ  
ևս տեսանիցէք զիս։

՚ի ժամանակադիրս կարգի սբէյն Օդոստիւ  
նոսի պատմի յաղագս սբէյն Կոլոմպանոսի  
փոքու՝ որ էր աղգական և աշակերտ սբէյ  
Աբբային Կոլոմպանոսի, թէ ըմբռնեալ  
նորա ՚ի տենդ սաստիկ, և մերձ ՚ի մահ  
հասեալ, և զի մեծայուսութե՛ իսկ ցան-  
կայր մեռանելոյ, երեեցաւ նմա երիտա-  
սարդ մի լուսաղգեաց, և ասէ։ զիտացիք  
զի աղօթք Աբբային քո, և արտասուք  
զոր հեղու վասն առողջութեան քոյ, ար-

դեղուն զելս քո 'ի կենաց այտի: Յայնժամ  
երանելին այն գանգատ կալաւ սիրողա-  
բար առ Աբբայն իւր, և ասէր լալով.  
ղի բռնադատես կեալ ինձ զտրտմալից զայս  
կեանս, և արգելուս դնալ առ մշտնջենա-  
ւորն: Այսու դադարեաց Աբբայն 'ի լա-  
լոյն և յաղօթելոյն, և 'ի ժողովել կրօնա-  
ւորացն ընկալեալ նորա զնք խորհուրդս,  
և ողջունեալ զամենեսին, հանգեաւ 'ի  
Տէր:

Սուրբն Ամբրոսիոս զըոյց առնէ զժողո-  
վըդոց թրակիոյ, թէ 'ի ծնանել մարդ-  
կանն՝ լային. իսկ 'ի մեռանելն՝ առնէին  
տօն մեծ. թուէր նոցա, և յիրաւի իսկ՝  
ասէ նք վարդապետն, թէ որ գային յայս  
աշխարհ ողբալի և բաղմավլոց, արդարե-  
լալոյ արժանի են. իսկ յորժամ զերծա-  
նէին յայսց աքսորանաց, արդարացի էր  
տօն ցնծութեն կատարել, զի 'ի բաղմապա-  
տիկ թշուառութեց աղատանան: Արդ  
եթէ նոքա հեթանոսք և կո.ապարիշոք՝  
առնէին զայս, անծանօթք դոլով փառացն  
յոր մեքն յուսամք, զի՞նչ ինչ արժան է  
մեզ խորհել և առնել, որք լուսաւորեալ  
հաւատով դիտեմք ղըարիսն յորոց 'ի վայե-  
լումն գնան վախճանեալքն 'ի Տէ: Վասն  
որոյ մեծիմաստ խորհրդով ասաց ժողո-  
վողն. (Է. 2.) \* Բարի է օր մահուան  
իւրոյ՝ քան դօր ծննդեան իւրոյ: ||

Ասէ նքն Հերոնիմոս. այսր աղադաւ  
Քն փրկիչ մեր յորժամ դնալ կամէր յաշ-

Հասրհէ աստի առ Հայր իւր , ասաց աշաւ  
կերտացն՝ որք տրտմեալք էին . \* Եթէ սիւ  
ըէիք զիս , ապա ուրախ լեալ էր ձեր՝ [թէ  
և առ հայր երթամ : ] ( Յով. ժդ . 28:)  
Եւ այսմ հակառակ , յորժամ զՊաղարոս  
յարուցանել կամեցաւ , արտասուեաց :  
Ո՛չ եթէ զի մեռեալ էր՝ ելաց զնա , ասէ  
նըն Հերոնիմոս , վասնզի փութով կենաւ  
գործելոց էր զնա . այլ ելաց՝ զի Պաղարոս  
զառնալ ունէր յայս ողորմելի կեանս .  
Հայր՝ զի մեծապէս յիւրմէ սիրեցեալն  
մտանելոց էր անդրէն 'ի տառապանս  
աքսորանացս այսմ :

## Գ Լ Ո Ւ Խ Ի Բ .

ՀՅաղոգս համակամուե ընդ Աստուծոյ՝  
զոր ունել պարտ է մէջ 'ի հասաւ  
բահաց վեշտս և 'ի նշուառու-  
թիս որք հասանէն :

Ա միայն 'ի վիշտս և 'ի պատահարս  
առանձինս կամ մասնաւորս արժան է  
ունել մեզ զհամակամութիւն առ ԱՃ ,  
այլև որ հասարակաց են վիշտք և թշուա-  
ռութիք սովոր , պատերազմաց , հիւանդու-  
թեց , մարդարմահու , ժանտախտի , և նոյն  
պիսեաց , զորս առուաքէ Տը 'ի վերայ հաւա-  
տացելոց : Վասն այսր պիտոյ է ածել

զմոտաւ, թէ արդարեւ ըստ միոյ կողման  
ցաւագնիմք ընդ թշուառութիքս և ընդ  
պատուհապս, և մեղ անհաճոյ է վնաս և  
տառապանք եղբարց մերոց, ըստ որում և  
իրաւունքն պահանջեն . սակայն ըստ այլ  
կողման մոտածեալ զայնոսիկ իրբեւ 'ի կա-  
մաց ԱՅ, և կարգեալս 'ի նորին արդար  
գատաստանացն, հանել յայնցանէ բա-  
րիս և արդիւնս 'ի մնձագոյն փառս իւր՝  
զոր ինքն գիտէ, կարօղ ենք 'ի նոսին միա-  
բանիկ ընդ ամենանը ածային կամացն,  
յար և նման այնոմ զոր տեսանեմք յայր  
Դատաւոր՝ 'ի գատապարտելն զոք առ 'ի  
մսհ. զի սա թէպէտե ըստ միոյ մասին  
զժկամակի ընդ մեռանել մարդոյն, և կրէ  
զայս ըստ ընաւոր կարեկցութե՛, կամ զի  
բարեկամ իւր է, բայց ըստ այլ մասին  
տայ զդատակնիքն, և կամի զի մեռցի նա,  
վասն զի այնպէս վայել է հասարակաց  
բարւոյ Տէրութեանն :

Ազպէն թէեւ ճշմարիտ իցէ, թէ չլք  
ԱՅ եղեալ մեղ պարտս առ 'ի միաբանիկ  
ընդ կամաց նորա յամենայն իրս յայսո-  
սիկ, կամելով զնոյնս և ախորժելով 'ի  
սրտէ . այլ շատ համարեցաւ՝ զի տանի-  
ցիմք համբերութեամք, ոչ ընդդիմանալով  
ածային արդարութենն, և ոչ քրթմնջելով.  
սակայն ասեն ածաբանք և ոք վարդապետք  
թէ մեծ ևս կատարելուի է, և արժանիք,  
և առաւել անթերի նուիրումն, եթէ  
մարդ ոչ միայն համբերութե՛ տանիցի զայ-

նոսիկ, այլև ախորժեսցէ և հաճեսցի իբրև  
կամք և հաճոյք Այ, և հրաման ածային  
արդարութեն, և որք արբանեկեն՝ի մե-  
ծագոյն փառս նորա : Այսպէս առնեն  
փառաւորեալքն յերկինս, որք յամենայ-  
նի միաբան են ընդ կամացն Այ, որպէս  
ասէ սբն թռվմաս, և բացայայտէ նբն  
Անսելմոս այսու նմանութ, թէ յերկինային  
փառս՝ կամք մեր և Աստուծոյն այնպէս  
միաբան լինիցին, որպէս են աստ երկու  
աջը միոյ մարմնոյ, որոց մին չկարէ նկա-  
տել ինչ առանց նկատելոյ միւսոյն . որոյ  
վասն թէպէտ և երկու աջը տեսանի, այլ  
երևեալն մի ինչ է : Ապա զոր օրինակ,  
սուրբք ամենայն յերկինս միաբանին յա-  
մենայնի ընդ կամս Այ, այնու զի յամե-  
նայնի տեսանեն դշրաման արդարութեան  
նորա, և զկատարած մեծագոյն փառացն,  
առ որ ուղղեալ վերաբերին, սոյնպէս կա-  
տարելութի մեծ է՝ եմք և մեք նմանողը  
լինիցիմք յայսմ երանելեացն յերկինս,  
ցանկացեալք զի եղիցին կամք Այ յերկրի,  
որպէս լինի յերկինս : Կամիլ զայն զոր  
Ած կամի, և սակս նորին պատճառի և  
դիտման՝ որոց վասն կամի Ած, այդ ոչ  
բնաւ արտաքոյ մեծաց բարեաց է :

Պատմէ Պոսիդոնիոս ՚ի վարս սբյն  
Օգոստինոսի, թէ ՚ի պաշարել վանդալաց  
զքաղաքն Հիբոնայ՝ ուր էր վիճակ նորա,  
տեսեալ զանհնարին քանդմունս և զկոտո-  
թած, միսիթարիւրնա ասացուածով իմաստ-

նոյուրումն . \* Ո՞չ մեծ համարեսցի այր՝ որ  
մեծ ինչ կարծէ զանկումն վայտից և քա-  
րանց , և զմեռանել մահկանացուաց : ||  
Առաւելագոյն իրաւամբք պարտ է միսի-  
թարիլ և մեղ , ածեալ զմտաւ թէ այս  
ամենայն ՚ի ձեռանէն Այդ գան , և այս են  
կամք նորա . և թէ առ մեղ դաղտնի  
իցէ պատճառն՝ ոյր վասն առաքէ զայս  
վիշտս և զթշուառութիւնս , սակայն ոչ  
բնաւ անիրաւ է : Դատաստանք Այդ խո-  
րինք են , անյայտք , անդունդք անյատակ .  
որպէս մարդարէն ասէ . \* Իրաւունք քո  
որպէս խորք բաղում : || ( Սաղմ . լե . 7 : )  
Ո՞չ արժան է մեղ հետազօտել զնոյնս մե-  
րով ծանծաղ , փանաքիմաց՝ թերատես  
մտօք , և յանդգնութիւն մեծ էր այդ : \* Զի-  
հվ գիտաց զմտս Տն . կամ ով խորհրդա-  
կից եղեւ նմա : || ( Հռովմ . ժա . 34 : )  
Վասն որոյ պարտիմք խոնարհութե պա-  
տուել զնոյնս , և հաւատալ թէ յանբաւ  
խմաստութէ անտի ոչ է , և ոչ մարթ է  
լինել՝ բայց միայն յոյժ բարի , և այնպէս  
բարի՝ զի կատարած նորա իցէ առաւելա-  
գոյն բարին և օգուտն մեր :

՚ի վերայ այսը հիման պարտ է մեղ  
գնալ հանապաղ , վստահ գոլով յանբաւ  
բարութիւն Այդ և յողորմութիւն՝ թէ ոչ  
առաքէր կամ թողացուցանէր զայնպիսի  
շարիս և տառապանս , թէ ոչ հանել ու  
նէր յայնցանէ բարիս մեծամեծս : Կամի  
ԱՃ ընդ այս ճանապարհ առաջնորդել

բաղմաց յերկինս, որք ընդ այլ ճանաւ  
պարհ գնային 'ի կորուստ : Քանիք կան՝  
որք վշտօք այսպիսեօք դառնան սրտիւք առ  
Ած, և ճշմարիտ ապաշաւանօք մեղացն  
վախճանեալք՝ ապրին, որ գուցէ առանց  
այնր դատապարտք լինէին : Վ ասն այսու  
րիկ որ թուին պատուհաս և հարուած,  
ողորմութի է և բարերարութի մեծ :

Յերկրորդ զիրս Մակաբայեցւոց՝ 'ի  
ճառ արկեալ մատենադրին զսարժափիեւ  
լին զայն և զանողորմ հալածումն ամբաւ  
ըիշտ արքային Անտիոքայ, և զարիւնչեւ  
զութիւնն անխտիր դործեալ ծերոյ և տը-  
դայոյ, կանանց և կուսանաց, և թէ զիարդ  
յաւարի առ և պղծեաց զտաճարն, և  
զայլ ևս դարշութիս որ լինէին անդանօր  
'ի հրամանէ Արքային, յաւելու ասել .

\* Այլ ես աղաւեմ զամենեսեան որ զգիր-  
սրդ յակն արկանիցէք, մի ինչ վասն աղ-  
դին խղճիցէք, և զվիշտս զայս ամենայն առ  
սատակման տոհմին համարիցիք . այլ 'ի  
խրատ աղջին մերոյ : || ( կ. 12 : ) Սուրբն  
Գրիգորիոս 'ի սոյն առաջարկութի վայեւ-  
լուչ ասէ . Տղրուկն ծծէ զարիւն հիւան-  
դին, և ջան իւր է՝ յագենալ արեամբն,  
և թէ էր հնար՝ ըմպել զրովանդակն : Բայց  
բժշկին կամք են՝ 'ի բաց հանել տղրկաւն  
զարիւնն յոռի, և առողջութի հայթայ-  
թել հիւանդին : Արդ՝ սոյն այս է՝ զոր կա-  
մի Ած վշտօքն և նեղութք՝ զոր մեզն առա-  
քէ : Եւ զոր օրինակ անմիտ լինէր հի-

ւանդն՝ եթէ չմողոյր հանել զարիւնն յու-  
ռի, հայեցեալ առաւել՝ ի ջանս տղբկին՝  
քան՝ ի կամս բժշկին, սոյնպէս և մեք յա-  
մենայն վիշտս եկեալս՝ եթէ՝ ի մարդկանէ  
իցէ, եթէ յայլոց ստեղծուածոց, ոչ  
պարտիմք՝ ի նոսա հայել, այլ յամենին  
մաստ բժիշկն ԱՃ. վասն զի ամենեքին նո-  
քա արբանեկեն ԱՃ իբրե տղըուկք և  
նպաստք դատարկելոյ զարիւնն վատթար,  
և զկատարեալն առողջութի գործել մեղ:  
Ուստի արժան է մեղ դնել՝ ի մոխ և հա-  
ւատալ թէ դամենայն ինչ առաքէ մեղ  
ԱՃ յառաւելադոյն բարին մեր և յօ-  
դուտ: Բայց թէ չկայր ևս այլ պատճառ՝  
քան թէ կամէր ՏՅՌ պատուհասել զմեղ  
յայսմ՝ ի կեանս՝ իբրե զրդիս, և ոչ՝ ի  
հանդերձեալն թողուլ զպատուհասն,  
էր և այդ շնորհ և բարերարութիւն միծ  
յոյժ:

Յաղագս սրբուհւոյն Կատարինեայ ԱԵ-  
նացւոյ պատմի, թէ՝ ի վշտի գոլով նորա  
սաստիկ յաղագս բարուրանաց ինչ նիւ-  
թելոց զնմանէ հակառակ համեստութեն,  
երեւեցաւ նմա Քն փրկիչ մեր, և ունէր  
յաջոյ ձեռին պսակ ոսկի՝ զարդարեալ՝ ի  
գոհարաց և յականց պատուականաց, և  
՚ի ձախումն ունէր պսակ այլ՝ միշանիւթ.  
և ասէ ցնա. Գիտեաւ դուստր սիրելի,  
հարկ է քեղ պսակիլ երկուք այս պսակօք  
յայլեայլ նուագա և ՚ի ժամանակս. վասն  
որոյ ընտրեա՛ զոր կամիս վաղվաղակի, կամ

պսակիլ յառաջիկոյ կեանսդ փշեղինաւս  
այսու, և միւսն այլ պատուական պա-  
հեացի քեղ՝ի հանդերձեալսն, որ յաւի-  
տեան մնասցէ . և կամ տացի քեղ՝ի  
կեանսդ պսակն պատուական, և փշեղինս  
այս պահեացի վասն հանդերձելոցն : Իսկ  
նր կուսանն ետ պատասխանի . Տէ՞ր, բա-  
զում ժամանակը են՝ զի հրաժարեցի ես՝ի  
կամաց իմոց՝ առ ՚ի հետեւելոյ քոյումդ.  
ուստի ոչ ինձ անկանի ընտրել . բայց եթէ  
քեղ կամք են լսել պատասխանի, ասեմ,  
ես յառաջիկայ կեանքս ընտրեմ միշտ լի-  
նել զուգակիր քոց նր շարչարանաց, և  
առ սէր քո յանձն առնում տանջանս ՚ի  
սփոփանս իմ : Զայս ասացեալ, առ ՚ի ձե-  
ռանէ փրկչին զպսակն փշեայ, և եղ զայն  
՚ի դլուխ իւր՝ պնդեալ սաստիկ զօրութք,  
մինչև փուշքն ծակոտեցին զգլուխն շուր-  
ջանակի . և յայնմ ժամէ կրեաց նա ցաւ  
աղդոյ ՚ի դլուխ իւր զաւուրս բազումն ՚ի  
խայթուածոյ փշոցն :

## Գ Լ Ո Ւ Խ Ի Գ .

Յաղագս Եղանակի ինչ՝ որով մէծապէս  
զօրանամք պահել բարիոյ և համա-  
կամութեամբ առ Ած զբանապահնա  
առանձին և հանրահանս՝ զոր Տ՛  
առարքէ մէջ, այն է՝ ճանաշել զմեց  
մէր և զղջանալ:

Պասարակաց վարդապետութիւն է սբց  
Հարցն, լինել Այսովորութիւն զի արկանէ  
՚ի մեզ տառապանս և պատուհասս հան-  
րականս՝ յոլովակի սակա մեղաց դործեցե-  
լոց, որպէս յայտէ յածային զրոց յաճախ  
բանիւք. ըստ այնմ Դիան. կ. 28: \* Ճշմար-  
տութ և յիրաւի ածեր զայս ամենայն վասն  
մեղաց մերոց. զի մեղաք և անօրինեցաք  
յապատամբ լինելն ՚ի քէն, և առաւել մե-  
ղաք յամենայնի. և պատուիրանաց քոց  
մեք ոչ անսացաք . . . և զամենայն զոր ա-  
րարեր մեղ, արդար դատաստանաւ արա-  
րեր: || Ապաքէն տեսանենք՝ զի պատուհա-  
սէր Ած զժողովուրդ իւր, մատնեալ զնա  
՚ի ձեռս թշնամնաց իւրոց՝ յորժամյան-  
ցանէր. և փրկէր զնա՝ յորժամընդ մեղսն  
զշացեալ ապաշխարէր և դառնայր առ  
Ած: Վասն այսորիկ Աքիովը զօրագլուխ  
և իշխան որդւոցն Ամմոնայ իրազեկ առ-

նելով դՀողոփեռնէս՝ թէ զիարդ պաշտպա.  
նէր Ած ժողովրդեան խրայէլի, և զիարդ  
պատուհասէր զնա՝ ի ստունդանելն, ասէր  
նմա՝ մի դիմել՝ ի վերայ նորա, մինչև զիւ-  
տասցէ թէ իցէ՞ նայանցուցեալ առ Ած.  
զի այնուհետեւ կարօղ էր առձեռն ունել-  
զյաղթութին. ապա թէ ոչ, մի ձեռնար-  
կել՝ ի դործն. զի ոչ յաջողէր նմա, և ոչ  
այլ ինչ ունէր՝ ի ձեռս բերել բայց խայ-  
տառականս և ամօթ. քանզի Ած տայր  
պատերազմ վոխանակ ժողովրդեանն, առ  
որ ոչ ումեք կար է զիմակալել։ (Յուդիլժ.  
ե. 5: )

Զայն զայս մեկնաբար ակնարկեն նը  
վարդապետք՝ ի բանս Քնի տն մերոյ, զոր  
առ երեսուն և ութամեայ ախտաժէտն  
առ պրոբատիկէ աւազանին ասաց յետ  
բժկելոյն. \* Ահաւադիկ ողջացար, մի ևս  
մեղանչեր, զի մի չար ևս ինչ լինեցի քեզ։ ||  
( Յով. ե. 14: ) Ապա ըստ բանիս՝ մի ՚ի  
նպաստից անտի որ՝ ի հասարակաց կմբ յա-  
ռանձնական վիշտու կարի օգնեն մեզ՝ ի միա-  
բանիլ ընդ Այ կամացն, և բազմաւ համ-  
բերուք կտանել այնց, լիցի այն՝ զի դարձ-  
ցուք՝ ի մեզ ինքեանս, ածել զմուաւ զմեղս  
մեր, և թէ որչափ արժանիք եղաք այն-  
պիսում պատուհասի. զի այսու օրինակաւ  
ամենայն ձախողակ որ պատահիցի՝ դիւ-  
բատար լինիցի մեզ, և զայն փոքր համա-  
րիցիմք առ այնու որ արժանահաս էր ըստ  
մեղաց մերոց :

Աբն Բեռնարդոս, և սբն Գրիգորիոս  
գեղեցիկ խօսին յաղագս այսր բանի : Ասէ  
նըն Բեռնարդոս . \* Եթէ յանցանքն ՚ի  
ներքս ՚ի սրտի լուսվ ձաննաշնցին , արդարե  
սակաւ կամ ոչինչ լինիցի արտաքին պատ-  
ժոյն զգացումն : Որպէս երանելին Դաւիթ-  
ու ցաւէր ընդ արհամարհանս ծառային  
թշնամանողի , յիշելով զանարդանս որդ-  
ւոյն հալածողի : || ըստ որում ասէր .  
\* Ահաւասիկ որդի խմ որ ելեալ է յորո-  
վայնէ իմմէ՝ խնդրէ զանձն իմ . որչափ ևս  
որդին յեմինայ : || ( բ . Թագ . ժկ . 11 : )  
Եւ նըն Գրիգորիոս ՚ի բանսն ( Յոքայ .  
ժա . 6 . ) \* Եւ ապա գիտացես թէ ար-  
ժանի ըստ որոց մեղարն՝ անց ընդ քեզ ՚ի  
տեառնէ . || բացայայտէ զայս բարեյարմար  
նմանութք իմն : Զո՞ր օրինակ, ցաւագարն  
տեսեալ յանձն զպալար ինչ զայրացեալ,  
կամ զմիս թարախեալ , յանձն լինի կա-  
մաւ ՚ի ձեռու վիրաբուժի , բանալ և կըտ-  
րատել ուր՝ և զիարդ պատշաճ թուի . և  
որչափ զայրացեալ իցէ խոցն և ժահրավից,  
այնչափ յօժարակամ ժուժայ երկաթոյն  
և խարանին : Սոյնապէս յորժամ տեսանէ  
ոք իսկապէս զիսոցն և զախտն ՚ի մեղաց  
անտի ներգործեալ ՚ի հոգի իւր, մտադիւր  
ընդունի զիսարան վշտաց , և մեռուցման ,  
և նուաստութեն , որով կամի Ած ապաքի-  
նել զիսոցն , և մաքրել զշարաւն : \* Քան-  
զի ցաւ հարուածոցն նուազի , յորժամ  
յանցանքն ձաննաշնցին , || ասէ նըն Ամբո-

սիոս : Եւ դու եթէ յակամայս տանիս  
մեռուցման և վշտաց՝ որ քեզն մատուցա-  
նին, յայն սակա է՝ զի զախտակրութիւն  
մեղացդ ոչ ճանալես, ոչ տեսանես զա-  
բաւն որ ՚ի ներքս ուստի չկարես ժուժալ  
խարմանն և հատանօղ երկաթոյն :

Առք սրբակրօնք և ծշմարիտ ծառայք  
Այ ոչ միայն կամաւորաբար յանձն առ-  
նուին զայսպիսիս, այլև ցանկային և հայ-  
ցէին խեկ յԱյ : 'Ի սոյն յարմարի ասելն  
Յորբայ (Ղ. 8. 9.) \* Զի եթէ տացէ և  
եկեցեն յիս խնդրուածք իմ. և դյոյս իմ  
տացէ տղի : Ակսաւ տղ խոցոտեղ զիս . բայց  
իսպառ մի սպանցէ զիս : || Եւ մարգարէն  
Դաւիթ ասէ . \* Փորձեա զիս Տը, և քննեաւ-  
Ես ՚ի տանջանս պատրաստ եմ: Բարի է  
ինձ զի խոնարհ արարեր զիս : || ( Սաղմ. Է.  
25. լէ. 17. զի : Ճժը. 71. ) Այնչափ ցանկա-  
լի էր ծառայից Այ պատուհասիլ առ ՚ի  
նմանէ և նուաստանալ ՚ի կեանս յայս,  
մինչ զի ըստ սբյն Գրիգորի ասելոյն՝ ա-  
ռաւեղ տրտմութիւն էր նոցա, յորժամ  
հայեցեալ ՚ի մեղս խրեանց տեսանէին զի  
Ած ոչ պատուհասէր զնոսա . քան զի կաս-  
կածեալ երկնչէին՝ գուցէ յապաղել կամի  
զպատուհասն ՚ի հանդերձեալսն, ուր խըս-  
տագոյն լինիցի : Յայս առցես զոր յաւե-  
լու Յոր երանելի . \* Ակսաւ խոցոտեղ զիս .  
բայց իսպառ մի սպանցէ . || իբր ասել .  
առ ոմանս թողացուցանէ Ած յայս կեանս,  
առ ՚ի պատուհասելոյ զնոսա ՚ի հանդել \*

ձելումն յաւիտեանս . և զի սկսաւ նա  
խոցուտել զիս աստանօր , և պատուհասել  
իբրև հայր դժած , ունիմ յոյս թէ թու-  
ղուցու ինձ յապայսն , և 'ի յաւիտենից  
մահուանէն ապրեցուացէ . վասն որոյ ոչ  
տրտնջամ , ոչ քրթ մնշեմ վասն հարուա-  
ծոցս . այլ 'ի միսիթ արութին ինձ լինիցին :  
Զայս և նըն Օգոստինոս աղօթէր . \* Ա'սա  
կիդեա , աստ կտրեա , աստ մի իւկի խնայեր  
յիս , զի յաւիտեան խնայեացես :

Առ տգիտութեն և կուրութեն մերոյ պա-  
տահէ՝ զի կարի դառնապէս զիծանիմք 'ի  
վշտաց մարմնականաց , իսկ 'ի հողեկանացն՝  
սակաւ յոյժ : Ո՛չ այնչափ վիշտքն ցաւե-  
. ցուցիչ լինելոց են մեզ , որշափ մեղքն :  
Եթէ ծանուցեալ էր մեր և 'ի կշիռ ար-  
կեալ զծանրութիւն մերոցն յանցանաց ,  
փոքր թուէր մեզ ամենայն պատուհաս .  
և ասէաք զՅոբայն . ( լկ . 27 . ) \* Ո՛չ ար-  
ժանի ըստ որոց մեղայն՝ պատժեաց զիս :  
Ասացուած՝ զոր արժան էր 'ի սրտի ունել  
արձանադրեալ միշտ , և ստէպ յեղեղել  
բերանսով : Ամենայն զոր 'ի կեանս լիցի մեղ-  
կրել , ոչինչ է առ արժանապարտութիւնն  
միոյ ևեթ մեղաց : \* Ու ըստ մեղաց մերոց  
արար մեղ Տիր , և ոչ ըստ անօրէնութեան  
մերում հատոյց մեզ : || ( Սաղմ . Ճ՛ք . 10 : )  
Որոք ածէ զմուաւ թէ անարգեաց զմեծ-  
վայելըութին Այ , որով պարտաւոր գտաւ  
կալ յաւիտեան 'ի դժոխս , զօր արհամար-  
հանս , զոր թշնամանս , զոր ցածութի ոչ

յանձն առնուցու՝ առ ՚ի հատուցումն և  
՚ի վըեժ այնշափ և այնպիսի անարդանաց  
առ ԱՅ. \* Թերեւս տեսցէ Տը զտաւապանս  
իմ, և հատուցէ ինձ բարիս փոխանակ  
անիծից նորա յաւուր յայսմիկ : || ( բ.  
Թագ. ժղ. 12 : ) Զայս ասէր Դաւիթ  
՚ի նախատել զնա Սեմեայ դառն անիծա-  
բանութիք : Թայլ տուք նմա, ասասցէ որ-  
շափ չարախօսելն կարէ զինէն, անարդես-  
ցէ, թշնամանեսցէ, զի թերեւս ՚ի հատու-  
ցումն մեղաց իմոց հաճեացի առնուլ, և  
արասցէ ինձ ողորմութի, որ լիցի ինձ եր-  
ջանկութի մեծ : Այսու օրինակաւ պար-  
տիմք և մեր յանձն առնուլ դարհամար-  
հանս և զիլիշտս վերահասս : Եկեցեն աղէ-  
վաղվաղակի . թերեւս հաճեացի Տը վճա-  
րումն համարել զայն մերոց մեղաց . և  
եղլիցի այդ ՚ի մեծ երջանկութի . յորժամ  
զոր ՚ի տրտնջիւն ծախեմք և ՚ի խորշումն  
վշուաց, ծախիցեմք դարձուցանել հակա-  
ռակ մեղ ինքեանց . և այսու առնիցեմք  
կարի հաճոյական ինչ Այ, և մեր իբքս ՚ի  
լաւագոյնսն յարմարեսցին :

Զայս նպաստ յաճախակի ՚ի կիր առ-  
նուին Սըքն ՚ի նմանօրինակ դիպուածս .  
և այնպէս ՚ի սոյն մարզեալ էին, մինչև ըն-  
թեռնումք զոմանց, որպէս զսրբուհւոյն  
Կատարինեայ Սենացւոյ և զայլոց, թէ  
զիլիշտս և զչարուածս ածառաքս ՚ի վերայ  
հաւատացելոց վերադրէին մեղաց և թե-  
րութեց իւրեանց, և ասէին՝ ես եմ պատ-

Ճառ այսոցիկ պատերազմաց . մեղք իմ են  
պատճառք ժանտամահու, և տառապա-  
նացս հասելոյ առ ՚ի յայ, համարելով թէ  
մեղք իւրեանց արժանի էին այնմ, և ա-  
ռաւելագունին ևս :

Յաւելումք առ ՚ի հաստատութի այսմ,  
թէ բաղում անգամ սակս մեղաց միոյ  
ուրուք պատուհասէ Ած զժողովուրդն  
ողջոյն : Որպէս վասն մեղաց Դաւթի ա-  
ռաքեաց Ած զմահ ընդ ամենայն ժողո-  
վուրդն իսրայէլի, և ըստ ասելոյ գրոյն՝  
մեռան յերիս աւուրս եօթանասուն հա-  
ղար արանց : ( բ . Թագ . ինք . 15 : ) Այլ  
եթէ ասիցես, Դաւիթ գոլով թագաւոր,  
առ ՚ի մեղս գլխոյն՝ պատուհասէ Ած  
զժողովուրդն : Ահա վասն մեղաց Աբա-  
բայ՝ որ սոսկական ոք էր, և գողացեալ  
էր իրս ինչ յերիքով, պատժեաց Ած զժո-  
ղովուրդն ողջոյն . զի երեք հաղարք զօրա-  
ւորք ՚ի բանակէն թիկունս դարձուցին ՚ի  
թշնամեաց սակս այնը մեղաց ՚ի փախուստ  
աճապարեալք : ( Յես . Է . կ . 21 : ) Այս-  
պէս ոչ միայն առ մեղս Առաջնորդին, այլ  
և մարդոյ սոսկականի սովոր է Ած պա-  
տուհասել զայլս : ՚ի սոյն միտս բոցայայ-  
տեն վարդապետք զաճախակի ասացեալն  
նք զրոց, թէ պատժէ Ած զմեղս հարցն  
յորդիս մինչև յերրորդ և ՚ի չորրորդ ազդէ  
( Ելք . ի . 5 : ) Արդարե մեղք հօրն՝ ասէ,  
մի անցանիցէ յորդի, և ոչ որդւոյն առ  
հայրն : \* Անձն որ մեղիցէ նոյն և մեոցի -

և որդի զհօք մեղս մի առցէ, և մի հայր  
առցէ զանիրաւութիւնս որդւոյ իւրոյ : ||  
( Եղիկիէլ . ժը . 20 : ) Սակայն ըստ պատ-  
ժականութեն՝ սովոր է Ած պատուհա-  
սել երբեմն զայս ոք վասն մեղաց այլոյ . և  
այսպէս գուցէ վասն մեղաց իմոց , և վասն  
քոյոցն՝ պատուհասիցէ Ած դտունն համօ-  
րէն և զբովանդակ կրօնն :

Ապա ուրեմն կալցուք հանապաղ առա-  
ջի աշաց՝ և զայս մտածութի՛, և զհաճու-  
թին Այ , որով դիւրին լիցի միաբանել  
զմեղընդ կամացն Այ յամենայն տառա-  
պանս՝ զոր առաքէ մեղ , և ասիցեմք ընդ  
Հեղեայ քահանայի . \* Տը որ ինչ բարի է  
առաջի իւր՝ ինքն արասցէ . || ( ա . Թուագ .  
դ . 18 : ) Եւ ընդ սբց Մակաբէացւոց .  
( ա . Մակաբ . դ . 60 . ) \* Որպէս և իցեն  
կամք Տն յերկինս , այնպէս և կատարես-  
ցին : || Կա է տէր , իշխան և հրամանա-  
տար իրաց ամենայնի . որպէս նմա հաճոյ  
իցէ , և որպէս նա հրամանատրէ , այնպէս  
և լիցի . ասել ընդ Դաւթի մարգարէի .  
\* Լուռ եղէ և ոչքացի զերան իմ , զի դու  
արարեր : || ( Սաղմ . լը . 10 : ) Ոչ տրտն-  
ջեցի Տը ընդ վիշտոսն առաքեալս ՚ի քէն ,  
այլ իբր համբ՝ ըռեցի , և տարայ այնոցիկ  
համբերութե բազմաւ , և համակամու-  
թե , զի դիտեմ թէ դու առաքես : Այս մեր  
հանապաղորդ միմիթարութիւն լինելոց է  
յամենայնի . Ած կամի զայն . Ած զայն  
հրամայէ . Ած է որ առաքէ . աղէ , եկես-

ցէ վաղվաղակի : Ոչ պիտոյ է այլ պատճառ առ ՚ի տանելոյ լրջմուռթեամբ զամենայն ինչ :

\* ՚Ի վերայ բանից սաղմոսին . ( իւ . 6 . )  
 \* Որ սիրելին է որպէս որդիս միեղջերուի , ||  
 յայտ առնեն վարդապետք , թէ Ած ՚ի  
 միեղջերու օրինակի . զի այն կենդանի ու-  
 նի զեղջիւր ՚ի վայր քան զաչա . որով ուր  
 հարկանէն՝ քաջ տեսանէ . և ոչ է իբրև  
 դցուլ , որ զեղջիւրս ունելով ՚ի բարձրն  
 կոյս , չտեսանէ ուր խեթկէն : Եւ դար-  
 ձեալ , միեղջերու՝ եղջերաւն որով հար-  
 կանէ , բժշկէ ևս : Սոյնպէս առնէ Ած ,  
 որով իւկի հարկանէ , նովին բժշկէ :

Այնչափ հաճոյական է Այ այս հա-  
 մակամութի , և խոնարհ յանձնառութի  
 պատուհասին , մինչ զի երբեմն նոյն խոկ  
 լինի պատճառ հաշտելոյն Այ և ամփո-  
 փելոյ զպատուհասելն : Ճառադրի յեկեղե-  
 ցական պատմութիս յաղագս Ատտիղայ  
 արքայի Ունկարաց կամ մաճառաց , որ  
 յաւեր դարձոյց գաւառոս բազումն , մինչեւ  
 կոչել Արհաւիրք աշխարհի , և հարուած  
 Այ , թէ մերձեցեալ նորա ՚ի քաղաքն  
 Տրոյա՝ որ ՚ի Համբայն դաղղիոյ , եպիսկո-  
 պոս քաղաքին նըն Լուապոս ել ընդառաջ  
 նորա հայրապետական զգեատուք՝ հանդերձ  
 ուխտիւ եկեղեցւոյն , և ասաց ցԱտտիղաս .  
 Ո՞վ ես դու , որ խոռվես զերկիր և ապա-  
 կանես : Ետ նա պատասխանի . ես եմ հա-  
 րուած Այ : Յայն ժամ նը եպիսկոպոսն

Ետ բանալ առաջի նորա զդրունսն՝ ասեւ  
լով. Բարի է գալուստ հարուածոյն ԱՅ։  
Մտին ապա զօրքն՝ ՚ի քաղաք անդր, բայց  
ԱՅ հարեալ զնոսա կուրուք, անցին զնա-  
ցին առանց վնասելոյ իւիք։ Էր արդարե-  
Ատտիղաս՝ հարուած ԱՅ, այլ ոչ կամե-  
ցաւ՝ լինել նմա հարուած առ այնոսիկ՝ որք  
ընդունէին զնա իբրև հարուած իւր՝ յան-  
ձնառութեք մեծաւ։

### Գ Լ Ո Ւ Խ Ի Դ Ի Վ .

Յաղագս համականութեան առ ԱՅ՝ զոր  
պարու է ունել մեղ՝ ՚ի շամասութե-  
ն՝ ՚ի պրամութե որ յաղօթս, և ըն-  
չնչ իմանամք անուամբքս՝ շամա-  
ռութեն և պրամութե։

**Պ**արու և արժան է մեղ յարիլ՝ ՚ի կամն  
ԱՅ ոչ միայն յիրսն արտաքինս՝ ՚ի բնա-  
կանս և ՚ի մարդկայինս, այլ և յայնս՝ որք  
թուին բաղմաց լինել՝ ՚ի սրբութեն մասին՝  
յանկալ՝ ՚ի նոյնս առաւելապէս, այս է՝ ՚ի  
բարիսն հոգեորականս և գերքնականս,  
որպէս՝ յածային միսիթարութիս, յառա-  
քինութիս իսկ, ՚ի նոյն իսկ պարգևի աղօ-  
թից, ՚ի խաղաղութեն և հանդարտութեն  
հոգւոյ, և յայլես հոգեկան առաւելու,

**Թիւնս :** Այլ հարցանիցէ ոք ցիս . միթէ  
 սպրդիցի յիրս այդպիսիս կամք յատուկ ,  
 և անկարգ սէր անձին , մինչ զի հարկ իցէ  
 շափ գնել նաև յայդպիսի իրս : Ասեմ , այս  
 արդարեւ , և 'ի գոյն իսկ տեսանիցի՝ որչափ  
 է զժնէութիւ անձնասիրութեն , որ և ոչ  
 յայն ամենաբարի իրս խղճէ 'ի ներքս խառ  
 նել զիւրն ապիրատութիւ : Ապաքէն բարի  
 են միսիթարութիւք և ախորժմանք հոգեւ  
 որք . զի նոքք զիւրաբար 'ի բաց լքանէ  
 հոգին , և ատէ զամենայն հաճոյս և զա  
 խորժակս իրաց երկրաւորաց , որ են իբր  
 խայծ և մնունդ մոլուեց . և քաջալերեալ  
 գորանայ թեթելնթաց լինել 'ի ծառայու  
 թեն Այ , ըստ ասացելոյ Մարգարէին .  
 \* ԶՃանապարհս պատուիրանաց քոց ըն-  
 թացայ , զի անդորր արարեր սրտի իմոյ : ||  
 ( Սաղմ. ՃՃԸ . 31 : ) Հոգեւորական խըն-  
 դութիւն և միսիթարութիւ ընդարձակիւ  
 սիրտն , որպէս տրոտմութիւն կծկի . և ատէ  
 մարգարէն Դաւիթ , թէ յարկանել Այ  
 'ի նման միսիթարութիս , նոքին լինէին նմա  
 իրը և թեք , և տային ընթանալ և թոշել  
 ընդ Ճանապարհ առաքինութեան և պա-  
 տուիրանաց իւրոց : Կպաստեն կարի յոյժ  
 միսիթարութիւն հոգեւորք առ արհամար-  
 հել ևս մարդոյ զիւր կաման , յաղթել իւ-  
 րոցն յօժարութեց , սպանանել զմարմին  
 իւր , և բառնալ քաջութեամբ զիսաչ և  
 զվիշտոս՝ որ 'ի վերայ դան : Ուստի յաճա-  
 խակի առաքէ Ած միսիթարութիս և ըղձ

մունս առ օյնոսիկ՝ որոց ունի ապա տալ  
վեշտու և նեղութիւն, զի նոքօք պատրաստես  
ցին յարմարեալք՝ ի տանել վշտացն ար-  
ժանապէս և շահեկանութեք. ըստ որում  
տեսանենք՝ զի Ք՛ փրկիչ մեր մխիթարել  
կամեցաւ զիւր աշակերտոն ՚ի լեառն թա-  
բօր հրաշափառ Այլակերպութեն, զի մի  
յետ այնր խոռվեսցին՝ տեսեալք զնա ՚ի  
շարչարիլ և մեռանել ՚ի խաչի:

Արդ՝ այսպէս տեսանենք, զի և առ նո-  
րամարզս պարզեցէ Ած սովորաբար մխի-  
թարութիւնս հոգեւորս, զի յորդորեսցին  
արիաբար թողուլ զերկրաւոր հաճոյս  
վասն երկնաւորացն. և յետ կապելոյն  
զնոսա սիրով իւրով, տեսեալ թէ ար-  
մատք առաքինութեն պնդեցան ՚ի նոսա,  
սովոր է կրթել զնոսա ցամաքութեք ինչ,  
որպէս զի առաւելագոյն շահս ձգեսցեն  
յանձինս զառաքինութեն խոնարհութեան  
և համբերութեն, և արդիւնասցի ՚ի նոսա  
աճումն շնորհաց և փառաց, ծառայելով  
Այ սոսկաբար առանց մխիթարութեանց:  
Եւ այսիսկ է պատճառն, ոյր վասն ոմանք  
՚ի սկզբան կրօնաւորելոյ իւրեանց, և  
թերեւս արտաքոյ իսկ մինչ ցանկայինն  
մուանել անդր, զգային յանձին մխիթա-  
րութիւն և ըղձանս հոգեւոր՝ առաւելքան  
յետ մտանելոյն: Վարէր ընդ նոսա Ած  
ըստ պատշաճի հասակին, ջամբելով նոցա  
կաթն տղայոց, առ ՚ի խլել զնոսա և հա-  
տանել ՚ի պտեանց աշխարհէր, և տալ նոցա

զգուանս և տաղտուկ առ աշխարհային  
իրս: Իսկ յետ այնը քանդի կարօղ են ուտել  
դժաց կեղեռվ, տայ նոցա Ած զկերակուր  
՚ի չափ հասելոց: Սակա այսոցիկ, և այլոց  
այսպիսի պատճառաց՝ սովոր է Տիր շնոր-  
հել նոցա միսիթարութիւնս և ախորժանս  
հոգեկանս. ուստի հոգեոր վարդապետք  
առհասարակ խրատ տան՝ ՚ի ժամանակի  
միսիթարութե պատրաստ կալ ժամանակի  
փորձութե. որպէս և ՚ի ժամ խաղաղու-  
թեան լինին պատրաստութիք և նախահո-  
գութիք վասն պատերազմի. զի միսիթա-  
րութիքն իբր հսկումն իմն համարին փոր-  
ձութեց և նեղութեց:

Արդարե ըղձանք հոգեորք՝ բարի են  
յոյժ և օդտաւէտ, եթէ գիտիցեմք բարւոք  
՚ի կիր առնուլ. վասն որոյ ՚ի շնորհել Այ  
զայնս՝ ընդունել պարտիմք շնորհակալու  
ոգւով: Սակայն եթէ ոք զկայ առնոյր ՚ի  
միսիթարութիս անդ, և ցանկայր նոցին՝  
լոկ սակս իւրոյ հաճութեն և ախորժա-  
նաց և զուարձութեն եղելոյ ՚ի յոգւոջ,  
այդ լինէր ախտ և անձնասիրութիւն ան-  
կարդ. զօր օրինակ ՚ի պիտոյականս կենաց՝  
յուտելն, յըմպել, ՚ի ննջել և յայլս  
յորժամ ոք զհեշտանալն դնիցէ վախճան  
գործոց այսոցիկ, յանցանք են. սոյնպէս  
յորժամ յաղօթս անդ իբր վախճան ունի-  
ցի ոք զախորժանսն և զմիսիթարութիւնս,  
լինիցի ախտ հոգեկան որկորաժետութե:  
Ոչ արժան է ցանկալ այսոցիկ՝ և ըն-

դունել սակա մերոյ հաճութե և ախորժ-  
ման, այլ զի նպաստ լինին հասանելոյ ՚ի  
վախճանն՝ զորմէ ասացաք : Որպէս հե-  
ւանդ՝ որ նողկայ ՚ի պիտոյական կերակրոյ,  
այլ ՚ի գտանելն ՚ի նմա զհամեղութի ինչ  
ուրախ լինի, ոչ վասն համոյն՝ զոր ոչ գրէ  
ինչ, այլ զի զարթուցանէ զախորժակն  
առ ՚ի կարօղ լինելոյ ուտել և պահպա-  
նել զկեանս : Սոյնպէս ծառային ԱՅ ոչ  
է պարտ խնդրել զհոգեկան մխիթարութին  
առ ՚ի դադարելոյ ՚ի նմա, այլ զի այնու-  
երկնաւոր կազդուրմամբն արիանայ հո-  
գին և զօրանայ վաստակել ՚ի շաւիզս ա-  
ռաքինութե, և ՚ի նմին պինդ կալ : Այ-  
սու օրինակաւ ոչ խնդրին բերկրանքն  
վասն բերկրանաց, այլ վասն առաւելա-  
գոյն փառացն ԱՅ, և զի վերաբերին ՚ի  
մեծագոյն պատիւ նորա և ՚ի դովեստ :

Սակայն աւելի ինչ ասացից, իբր զի  
թէ և ցանկանայցէ ոք հոգեոր մխիթա-  
րութեանցս ըստ ասացեալ օրինակիդ, և  
վասն վախճանին՝ զոր ասացաք, որք և  
ածահաճոյ են և բարիք, սակայն հնար է  
թէ տակաւին յայնպիսի ցանկութիւնս  
գտանիցի աւելազանցութի ինչ, և խառ-  
նուրդ անկարգ անձնասիրութե, որպէս  
եթէ ցանկայ մոլեգնաբար, և անժոյժ  
տարիմամբ և նեղսրտութիք. մինչ զի եթէ  
պակասիցին նմա, ոչ մնայ հանդարտ, և  
ոչ խոնարհեալ ՚ի կամս ԱՅ, այլ առա-  
ւել անհանդիստ, տրտնջոտ, և դժուարա-

Հաճ։ Այս է տուփումն և ցանկասիրութիւն  
հոգեսոր անկարգ։ զի ոչ է արժան մարդոյ  
այնչափ անձկանօք և տարադէպ յարել  
յախորժանս և 'ի մխիթարութիւն հոգեսորս,  
մինչև այնու դրդուիլ խաղաղութեան և  
անդորրամութեն նորա; և համակամու-  
թեն առ Ած, յորժամ ոչ հաճի նա շնոր-  
հել զնոյնս։ Վ ասն զի կարի յոյժ լաւ են  
կամքն Այ քան զայս ամենայն։ և առա-  
ւել յօդուտ է գոհ լինել և միակամյայն  
զոր կամի Տբ։

Չոր ասեմն յաղագս ախորժմանց և  
մխիթարութեց հոգեկանաց, ինանամ և  
զպարդեկ աղօթից, և զպատրաստութեն  
զոր առ 'ի նոյն ցանկամք ունել, այլ և  
զսաղաղութենէ և զներքին հանգստենէ  
հոգւոյ, և զայլոց ևս հոգեսոր առաւելու-  
թեց։ Վ ասն զի գոյ և 'ի սոցա ցանկունն  
'ի ներքս մոտանել անկարգ տուփման և ցան-  
կասիրութեն, յորժամ անձկանօք և նեղ-  
սրտութեք լինին ցանկացեալ. մինչև թէ  
ոչ 'ի ձեռս բերիցէ որում ցանկայրն, 'ի  
տրտունջ մոտաբերէ, դժուարահաճ կայ,  
անմիաբան 'ի կամն Այ։ Վ ասն որոյ աս-  
տանօք՝ ախորժմունս և մխիթարութիւնս  
հոգեսորս իմանամք ոչ միայն զզգալի ե-  
ռանդն և զախորժ և զմխիթարութիւն, այլ  
զնոյն զիսկն և զպարդե աղօթից, զմուա-  
նելն 'ի նոյն և կալ մնալ այնու անդորրա-  
նօք և հանգստեամք զոր կամիմք։ Մանա-  
ւանդ զայսմանէ խօսեսցուք այժմ առա-

վելապէս , ցուցանելով թէ զիարդ միա-  
 բանիլ պարտիմք յայսմ ընդ կամացն Այ-  
 և մի մղիլ մեղ կամ շարժիլ յաւելորդ  
 ըղձմանէ և 'ի նեղարտութէ : Առ զգալի  
 հաճոյս և միսիթարութիս և եռացմունս՝  
 դիւրաւ ոք արդեօք հրաժեշտ տայցէ , եթէ  
 շնորհեսցի նմա այն ինչ որ բուն խսկն է  
 աղօթից , և զգայցէ յանձին զաղօթիցն  
 արդիւնս . զի գիտեն ամենեքին՝ թէ չեն  
 հաստատեալ աղօթքն յայսոսիկ ախոր-  
 ժանս , յայս եռացմունս , և 'ի խանդա-  
 ղատանս . վասն որոյ եթէ պակասիցեն  
 այսոքիկ , փոքր առաքինութի խնդրի առ  
 'ի համբերել : Բայց յորժամ ոք երթայ  
 յաղօթս , և կայ 'ի նմին իբր քար անզգայ,  
 և այնպիսի սաստիկ երաշտիւ կամցամա-  
 քութք , մինչեւ կարծել թէ չիք նմա մուտ  
 'ի նոյն , այլ թէ ծածկեալ իցէ 'ի նմանէ  
 Ած , և եկեալ հասեալ 'ի վերայ նորա  
 անկիծանացն՝ զոր սպառնայր Ած ժողովը-  
 գեան իւրում . \* Արարից ձեղ զերկինս  
 երկաթի , և զերկիր ձեր իբրև պղնձի : ||  
 (Ղետ . իդ . 19 .) յայսմ արդարև մեծի  
 առաքինութե պէտք են , և առաւել քա-  
 ջութե : Այնալիսեաց թուի թէ երկինք  
 լեալ են նոցա երկաթի , և երկիր՝ պղնձի .  
 իբր զի ոչ ցողէ առ նոսա և ոչ շիթ մի  
 առ 'ի կակղելոյ զսիրտ նոցա , և տալ  
 պտուղ՝ որով կաղզուրեսցին , այլ կան  
 միշտ յանպաղութե և յերաշտի : Եւ ոչ  
 'ի ցամաքութե միայն , այլև կըեն երբեմն

ղայնպիսի բազմայոյդ ցրումն խորհրդոց ,  
և այն՝ վատթարաց և աղտեղեաց , մինչեւ  
գողցես՝ դաշլ նոցա յաղօթս ոչ յայլ  
պէտս՝ բայց առ ՚ի փորձիլ և տառապիլ  
աղդի ազգի փորձութքք : Աղէ եկ ասա  
դու այնպիսեաց , զի խոկայցեն յայնժամ  
զմահուանէ , կամ զբն խաչելեալ , որ և  
է դարման քաջադէպ : Բայց ասիցեն  
ցքեղ , թէ զայդ և ես գիտեմ . եթէ առ  
նել զայս կարողանայի , զինչ այլ պակա-  
սէր ինձ : Յայնպիսի սահման դտանի ոք  
երբեմն յաղօթսն , զի և ոչ խորհիլ անդամ  
զայդ կարօղ է . կամ թէպէտ և խորհես-  
ցի , և ջանայցէ յուշ ածել , ոչ իւիք շար-  
ժէ զնա , ոչ զխորհուրդն հաւաքէ , և ոչ  
մի ինչ աղդումն առնէ ՚ի նմա : Այս է  
ահա՝ զոր աստանօր կոչեմք տրտմութիւն ,  
ցամաքութիւն և լքումն հոգեոր . և ՚ի սմին  
ևս հարկ է մեզ զհամակամութիւն ունել  
առ Ած :

Մի է այս ՚ի կարեոր հրահանգաց ան-  
տի . վասն զի մեծ տրտունջ է և մեծ պա-  
տերազմ զոր կրեն պարապեալքն յաղօթս .  
զի ամենեքին հեծեն և լան՝ յորժամ յայս  
վլիճակ դտանին : Սոքա այսպիսիք լսեն ա-  
պաքէն մեծացուցանել զաղօթս և գովել  
զայն , և թէ ըստ ընթացից՝ որով զնան  
աղօթքն , զնայ և մարդ զօրն ողջոյն և զա-  
մենայն զկեանս իւր , և թէ այս է մի յերեւ-  
լի նպաստից՝ զոր ունիմք ՚ի յառաջադի-  
մութիւն մերոց անձանց , այլ և ընկերացն :

Բայց և ընդ հակառակն՝ տեսեալ զի ըստ  
 իւրեանց կարծելոյ զուրկ են 'ի ճշմարիտ  
 աղօթականութէ՛, ընդ այս կրեն տադ-  
 նապ մեծ, և թուի նոցա թէ լքեալ իցէ  
 զնոսա ԱՃ և 'ի մոռացօնս արկեալ. երկն-  
 չն՝ գուցէ անկեալ իցեն յԱՆ բարեկա-  
 մութէն, և 'ի թշնամութէ նորա լինել.  
 կարծելով ոչ դուանել առ նա մուտս կամ  
 ընդունելութի՛: ԱՃ առ այդպիսիս փոր-  
 ձութին, տեսեալ զի այլք ոմանք 'ի սա-  
 կաւ աւուրս զարգանսոն յաղօթսն իբր  
 անաշխատաբար, և ինքեանք վաստակեալք  
 և խորտակեալք՝ ոչ մի ինչ շահին: Ասոի  
 ծնանին առ նոսա փորձութիք այլ ևս չա-  
 բաչարք. այն է, գանգատել մերթ զՏնէ՝  
 զի այնպէս վարի ընդ նոսա. յօժարիլ 'ի  
 բաց թողուլ զաղօթիցն կրթութի՛, իբր  
 ոչ անկաւոր ինքեանց, որովհետեւ ոչ առ-  
 նեն բարւոք: Այսորիկ ամենայն սաստկա-  
 նան, և յանձննս նոցա առաւելու դըժ-  
 կամակութիւնն, յորժամ սատանայ 'ի  
 միտս արկանէ նոցա թէ ամենայնի պատ-  
 ճառ ինքեանք իսկ են, և առ մեզս իւրեանց  
 այնպէս վարի ընդ նոսա ԱՃ: Որովհեան  
 ոմանք կարի անմիտիթարք, և ելանեն յա-  
 ղօթից անտի իբրև 'ի տանջանաց՝ վշտա-  
 ցեալք, տիրագինք, անհանդուրժելիք ան-  
 ձանց, և որոց ընդ նոսա կենցաղին: Մա-  
 տիցուք այսուհետեւ պատասխանի առնել,  
 և 'ի բաց վարատել շնորհօք Տն զփորձու-  
 թիս զայս և ղտրտնջիւն:

## Գ Լ Ո Ւ Խ Ի Ե .

Լ ուծումն պրառնջանաց նոյս՝ որդ յաղօթև  
իրեն զյամարտութեն և զբրամութեն :

¶ սկիբըն բանիս՝ իմ ոչ են կամք  
ասել, թէ յորժամ լինի ումեք առ ԱՅ  
այցելութիւն սիովիչ, չիցէ արժան նմա ու  
րախանալ. զի յայտ իսկ է թէ անմարժ  
է արգելուլ զուրախութիւն յորժամ առ  
ձեռն է սիրեցեալն։ Եւ ոչ զայն ասեմ, թէ  
՚ի հեռանալն ԱՅ, յորժամ խրատէ զնա  
ցամաքութիւն և փորձութիւնք, մի ընդ այն  
դժկամակեսցի. ուր գիտեմ և ես՝ թէ չէ  
հնար անցաւ լինել յայսմ։ Նա ինքն փր  
կիւ մեր Քն ցաւագնեցաւ ընդ թողա  
նալն ԱՅ հօրէ իւրմէ՝ յորժամ ՚ի խաշին  
կախեալ ասաց. \* Ած իմ, Ած իմ, ըն  
դէր թողեր զիս։ || (Մատ. իէ. 46.)  
Այլ զոր խնդրեմն այս է, զի գիտիցեմք  
քաղել պտուղ ՚ի վշտաց աստի, և ՚ի փոր  
ձանացս, որով ստէպ փորձէ Ած զըն  
տրեալս իւր. և զի ոդւով արուել ընթաս  
ցուք միաբան ընդ կամացն ԱՅ ասելով.  
\* Բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս  
դու։ || (Մատ. իհ. 39.) Մանաւանդ  
զի սրբութիւն և կատարելութիւն ոչ է սահ  
մանեալ ՚ի միսիթարութիւն, և ՚ի կատա  
րել աղօթս վերամբարձս, և ոչ այսուիկ

չափի յառաջադիմութե՞ն մեր և կատարեց  
 լութիւնն , այլ 'ի ճշմարիտ սէրն ԱՅ ,  
 որ ոչ եթէ հաստատի յիրս յայսոսիկ ,  
 այլ 'ի ճշմարիտն միաւորութեան և 'ի  
 համակամութեան ընդ ԱՅ յամենայն  
 իրս , 'ի դառինս և 'ի քաղցունս , յընդ  
 զիմակն և յաջողակս . այնպէս զի  
 պարտիմք միապէս յԱՅ ձեռանէն ընդու-  
 նել զիսաշ և զլքումն հոգեոր , որպէս զպար-  
 գես և զմխիթարուիս , շնորհս մատուցա-  
 նելով նմա վասն երկուցն ևս : Եթէ կա-  
 միս կալ ինձ 'ի խաւարի , ասէ Թուլմաս  
 գեմբացի , եղիցիս օրհնեալ . եթէ կամիս 'ի  
 լսս կալ ինձ , եղիցիս օրհնեալ . եթէ  
 միխիթարել զիս կամիցիս , եղիցիս օրհ-  
 նեալ . և թէ վշտագնել զիս կամիցիս , եղի-  
 ցիս օրհնեալ : Եւ սոյնպէս խրատէ նը  
 Առաքեալն Պօղոս . \* Յամենայնի գոհա-  
 ցարուք , զի այս են կամք ԱՅ քնիւ յնիւ 'ի  
 ձեղ : || (ա . Թաւաղ . ե . 18 :) Ապա եթէ  
 այս են կամք ԱՅ , իմ իմլք այլ ցանկալ  
 մնայ մեղ : Եթէ ուղղէ նա զկեանս իմ  
 ընդ այս ճանապարհ խաւարին և դժուա-  
 րակոխ , ոչ է ինձ խնդրել զայլ լուսա-  
 ւոր և դիւրագնալի : Կամի ԱՃ՝ զի այն  
 ոք զնայցէ ընդ ճանապարհ զոր տեսանի-  
 ցէ և ախորժեացէ , իսկ ես զնայցեմ ընդ  
 այս անապատ՝ առանց միխիթարութե . և  
 ես ոչ փոխէի զայս զիմ անապտղութիւն ընդ  
 բեղնաւորութե նորա : Այսպէս խօսին  
 ոքք միանդամ բացին զաշս առ ճշմարտու-

թէն, և սովորմբ միսիթարին : 'Ի դէպ ասէ  
հայրն Ավելա . երանի թէ բանայր Տէր  
զաշ մեր, զիարդ պայծառ քան զարեւու  
լոյս տեսանէաք, թէ ամենայն որ ինչ  
յերկրի և որ յերկինս՝ կարի անարդ են  
առ 'ի ցանկալոյ նոցա և զմայելելոյ, եթէ  
բարձի 'ի նոցանէ կամքն ԱՅ . և չկայ  
ինչ որչափ և դուզնաքեայ իցէ կամդառն,  
որ յարակցեալ ընդ ածային կամացն՝  
ըլնիցի մեծարդոյ : Ապաքէն անհամեմատ  
լաւ է՝ կալ 'ի վիշտու և 'ի դառնութիս, 'ի  
ցամսքութե և 'ի փորձութիս, եթէ այն  
պէս կամի ԱՅ, քան յամենայն ախոր-  
ժանս, 'ի միսիթարութիս և 'ի վերահայե-  
ցութիս, եթէ յայնցանէ 'ի բացեայ են  
կամքն ածային :

ԱՅԼ ասիցէ ոք ցիս . եթէ գիտէի թէ  
այն են կամք ՏՆ, և 'ի նոյն հաճի առա-  
ւել, զիւրաւ էր ինձ լինել համակամ, և  
մնայի անդորրամիտ, թէ զամենայն  
կեանս իմ այնպէս անցուցանէի . վամն զի  
իմանամ քաջ թէ ոչ դոյ այլ ինչ ցանկա-  
լի՝ քան հաճել և քաղցրացուցանել զԱՅ,  
և ոչ յայլ պէտս արարաւ մեր կեանքս :  
Սա՛ այն թուի ինձ թէ ԱՅ ինքնին կամէր  
զի լաւ ևս աղօժեցից, առաւել հաւաք-  
մամբ խորհրդոց և մտաղբութք, և թէ  
ես ինքն ջանայի յայս . և որ զիան վշշ-  
տագնէ, այն իսկ է՝ զի կարծեմ իմով յան-  
ցանօք և առ դաղջութես՝ ոչ առնելով որ-  
շափ յիսն է, կամ յաղօթս ցնդեալ և ցա-

մաք, ոչ կարելով սկիզբն առնել աղօթիցն. մինչ զի եթէ անկասկած էի՝ թէ առնեմ որշափի՝ ի կարի խմում է, և չկայրիմ յանցանք, ոչ ևս տառապէի բնաւ :

Բարիոք առաջի եղաւ այս դանգատ, և ոչ մնայ այլ ինչ ասել. քանզի յայսմհամառօտեալ կան ամենայն պատճառք այնոցիկ՝ որք յայսպիսի տրտնջանս վարանին : Վ ասն որոյ եթէ դիպողաբար լուծանիցեմք զայս, մեծ ինչ առնեմք. իբր զի հասարակաց է այս տրտունջ և սովորական. և չեղև ոք նաև յերևելեաց սրբոց և յարանց կատարելոց՝ որ չիցէ կրեալ երբեմն զայս ցամաքութիւն և զլքումն հոգեոր: Զայդ ընթեռնումք՝ ի վերայ սըյն Փրանչիսկոսի, և սրբուհոյն Կատարինեայ սենացւոյ, թէպէտև կարի գդուեալք էին և հովանաւորեալք յԱՆՅ: Այլև ոք հայրն Անտօն որ գերազանցեալն էր յաղօթս, մինչև զիշերոյն կարճ թուիլ նմա, և առ արեղակն դժուարէր իբր կանուխ ծագեալ, լինէր երբեմն այնպէս իմն նեղեալ և խոտմեալ՝ ի չար և ՚ի տաղնապիչ խորհրդոց, մինչև բարձրաձայն աղաղակել առ Ած ասելով. Տէր, կամիմ՝ ի բարիսն լինել, և ոչ թողուն խորհուրդք իմ: Զայս և նըն ինոնարդոս աւաղէր. \* Ցամաքեցաւ սիրտ իմ. մածաւ որպէս կաթն, եղև որպէս երկիր անջրդի, և ոչ յարտասուս կարեմ լուծանիլ. այսքան է սրտիս խատութիւն: Ոչ քաղցրանայ սաղմոս. ոչ

ընթեռնուն տայ ախորժ . ոչ աղօթելն  
բերկրեցուցանէ . զսովորական խոկմունս  
ոչ գտաննեմ : Ուր այն արքեցութի հոդ-  
ւոյն . ուր մտացն պայծառութի և խաղա-  
ղութի և խնդութի 'ի հողի նը :

Յայտնի է ապա՝ զի վասն ամենեցուն  
կարեոր է այս վարդապետուի , և վատահ  
եմ 'ի Տը հաճել զամենեսին , և սկիզբն աս-  
տի իսկ արասցուք : Ընդունիմ և ես , թէ  
յանցանէք ձեր են պատճառ ցնդելոյ մտացն  
և ցամաքութե ձերոյ , և չկարելոյն պատ-  
րաստիլ յաղօթս . և բարւոք իսկ առնէք  
կարծել և հաւանել և ասել , թէ սակա  
անցելոց մեղացն ձերոց , վասն ձերոց այժ-  
մու յանցմանց և անհոդութեց՝ կամի Տը  
պատուհասել զձեզ , ոչ տալով ձեզ մուտ  
յաղօթս , և չկարելով ունել ձեզ զժողո-  
ղութեալ խորհուրդս , զհանգիստ և զգաս-  
տութիւն . զի չքք այդմ արժանի , այլ  
անարժան իսկ էք : Սակայն ոչ ուղիղ զհետ  
դայ այսմ , թէ տրտնջել կարիցէք . այլ  
ընդհակառակն զհետ բերել թէ մեծ և ս  
համակառութի առ Ած ունել արժան է  
յայսմ : Կամիցիք արդեօք յայտնապէս  
տեսանել զայս . \* 'ի բերանոյ քումմէ դա-  
տեցայց զքեղ . || 'ի ձերմէ բերանոյ , 'ի ձե-  
րոց բանից արարից դատաստան : Ոչ ահա  
ձանաշէք դուք և խոստովանիք , թէ յան-  
ցելոց մեղաց՝ և յայժմու յանցմանց և  
հեղզութեց՝ մեծաց պատժոց արժանի էք  
առ . յայ : Այս արդարե . բազում ան-

գամ՝ արժանի դժոխոց եղէ . և ոչ մի ինչ  
պատիժ մեծ համարելի է առիս . այլ ՚ի  
դժութի է ամենայնն՝ առ այնու որում  
արժանապարտ էի . և եթէ կամի Ած տալ  
ինձ պատուհաս այսու կենօքս, զայդ ընտ-  
րեմ իբր առանձին բարերարութի . զի  
վարկանիմ զայն իբր առհաւատչեայ՝ թէ  
զմեղս իմթողեալ է Ած, և ոչ ՚ի հանդեր-  
ձեալսն պատուհասել կամի, աստանօք  
պատժելովն :

**Այդ շատ է**, չպիտի այլ . ընդ այդ գոհ  
եմ ես . սակայն մի բանիւ լոկով վճարես-  
ցին իրքդ, այլ ՚ի գործ անդր մատիցուք :  
**Այս է** պատիժն՝ զոր կամի Ած կրել ձեզ  
այժմ վն մեղաց ձերոց . այս տիսրութիք,  
այս դառնութիք, այս ցնդմունք, այս ցա-  
մաքութի, այս լքումն հոգեսոր, այս փո-  
խադրիլ երկնից յերկաթ, և երկրի ՚ի  
պղինձ, այս ամփոփիլ և թաքչել Այ, և  
ոչ գոտանելն ձեր մուտ յաղօժս : **Այսու**  
պատուհասել կամի Ած զձեղ այժմ, և  
սրբել զձեր յանցանս : **Ոչ** արդեօք թուի-  
ցի ձեղ, թէ մեղք ձեր անցեալք, և յանց-  
մունք և հեղգութիք այժմեանք՝ յիրաւի  
արժանիք այսմ պատուհասի իցեն : **Այս**,  
ամենայն իրօք . և արդ ասեմ, թէ կարի  
փոքր է առ այն՝ որում արժանաւորիմ . և  
է արդարութիք և ողորմութիք լցեալ : **Ար-**  
դարութիք, զի բազում անգամ փակելով  
իմ առ Ած զդուռն սրտի իմոյ, և եղեալ  
խուլ ՚ի բաղխել նորա սրբարար ազդ-

մամբքն , և յոլովակի ընդդեմ ևս այնոցի կացեալ , արդարացի իմն է՝ զի և նա խուլ եղիցի այժմ՝ ի կարդալ իմում , և ոչ տայցէ պատասխանի . և ոչ զդուռնն բանալ ինձ կամիցի , այլ ընդդեմ փակիցէ : Ամենարդար է պատիժս , բայց և կարի նուաղառ իս , ուստի և լցեալ ողորմութք . վասն զի առաւել մեծագունին էի արժանաւոր : Ապա ուրեմն լերուք միաբան ընդ կամն ԱՅ յայսմ պատժի , և ընդունեցարուք զայն գոհութք . իբրզի ողորմութք պատուհասէ զձեղ , և ոչ ըստ ձերոց արժանեաց : Ոչ ապաքէն ասէք , թէ արժանի դժոխոց էիք . և զիարդ ապա իշխէք հայցել յԱՅ միսիթարութիս , և ախորժմունս յաղօթսն . և ունել յայնմ յօժարութի և ընտանութի առ ԱՅ , զիսաղաղուի , զանդորր և զհանգիստ՝ որ սիրական որգւոց է և զգուեցելոց . և զիարդ՝ ի տրտունջ բերիլ համարձակիք՝ յորժամ հակառակն լինի . ոչ տեսանեք՝ զի յանդգնութիւն մեծ է այդ , և ամբարհաւաճութիւն ծանր . գոհ կացվիք ընդ այն , զի պահէ զձեղ ԱՅ՝ ի տան իւրում , և հաճի կալ առաջի նորա . և զայս զբեսջիք ճանաչել պարզե . և բարերարութի մեծ յոյժ : Եթէ կայը մեր խոնարհութի՝ ի սրտի , ոչ իշխէաք շարժել զլեզու և զբերան՝ ի քրթմնջել , որպէս զիարդ և վարել ընդ մեղ ՏՅ , որով և այս փորձութի դադարէր զիւրաւ :

## Գ Լ Ո Ւ Խ Ի Զ .

Օ խարդ մարդ էցէ գոխարին յընտիր  
և յօգտակար աղօլս զցամաշու-  
թիւն , զպրամութես և զբառ-  
նութիւննն :

Ա չ միայն դադարելոց է 'ի մեղ այս  
տրտունջ , այլ և ջան զնել պարտ է քա-  
ղել պտուղ 'ի ցամաքութեց , 'ի տիրու-  
թեց և 'ի դառնութեանց , փոխարկեալ  
զնոյնս յաղօթս ընտիրս : 'ի սոյն նպաստա-  
ւորեսցէ զառաջինն այն՝ զոր ասացաք 'ի  
խօսելն զԱղօթից . այս ինքն է , յորժամ  
գտանիցիմք յայսպիսում սահմանի՝ ասել  
առ Ած . Տէ՛ր , այս անցք իբրև պատճա-  
ռաւորեալ յիմոց յանցանաց՝ արդարե  
անհաճոյ են ինձ կարի յոյժ , և ցաւիմ ընդ  
յանցումն՝ զոր յայսմ ունիցիմ . բայց իբրև  
կամք քո , և պատիժ արժանահաս իմոցս  
մեղաց , ընդունիմ զայն մոտադիւր կամօք:  
Եւ ոչ այժմ միայն , կամ առ սակաւ մի  
ժամանակ , այլ զամենայն կեանս իմ՝  
թէև բաղմատեակ լինիցի՝ նուիրիմ յայս  
խաչ , ամենապատրաստ 'ի բառնալ զայն  
շնորհակալութիւն հանդերձ :

Այս համբերութիւն և խոնարհութիւն,  
այս ընծայումն և միաբանութիւն 'ի կամս

Այ 'ի միշտու յայսոսիկ՝ առաւել հաճոյա-  
 կան են մեծվայելքութեն Այ, քան զորտն-  
 ջանս և զանպէտ տաղնապսն յաղազս  
 չունելոյն մուտ յաղօթս, կամ զի կայ ոք  
 անդ 'ի ծուփս խորհրդաց եւ ցնդմամբք :  
 Ասացէք ինձ, զիա՞րդ թուի ձեղ . որ առա-  
 ւել հաճելի է հօր և մօր . այն որդի, որ  
 գոհ է զոր ինչ և տայցեն նմա, թէ այն  
 որ ոչ շատանայ իւիք, այլ միշտ քրթմնջէ,  
 և գանգատէ, սակաւ համարելով զոր ինչ  
 և տացի, որպէս թէ պարտ էր տալ զա-  
 ւելին, և զլաւագոյն ինչ . յայտ է թէ ա-  
 ռաջինն լինի հաճելի : Արդ՝ այսպէս են  
 իրքն առ Ած . որդի համբերօղ և լոին,  
 որ զօհ է և միաբան 'ի կամ երկնաւոր  
 հօրն՝ ըստ ամենայնի զոր առաքիցէ նմա,  
 թէպէտ խխատ և ընդդիմակ, թէպէտ ոսկը  
 կարծր և անմիս, ահա սա է 'ի հաճոյս  
 Այ, յոր ախորժէ Ած, քան զայն որ ան-  
 գոհն է, որ յար 'ի տրտունջ և 'ի քրթմն-  
 ջիւն մտաբերէ, զի ոչ ունի, զի ոչ տան  
 նմա : Այլ սասա ցիս . որ ոք լաւագոյն  
 գործէ, և մ շարժէ առաւել 'ի կարեկցու-  
 թի և 'ի գթութի առ 'ի գտանելոյ զողոր-  
 մութի, աղքամտն՝ որ տրտնջայ զի ոչ արագ  
 պատասխանեն նմա, կամ թէ չուն ինչ,  
 թէ աղքատն՝ որ երկայնմտութք դեգերի  
 առ դրան մեծատանն, լուռք և անտըր-  
 տունջ, որոյ բաղիսեալ զդուռնն, և զիսե-  
 լով թէ լուան 'ի ներքուստ, մնայ սպասե-  
 լով 'ի ցուրտ և յանձրեի, ոչ կրկնէ

զբաղվսումն , և ոչ 'ի գանգատել յօժարի .  
և տէր տանն դիտէ թէ կայ նա սպասեալ  
խոնարհաբար և համբերութեամբ : Այս  
յայտ իսկ է՝ թէ յետինս այս շարժէ 'ի  
դժարկութի . իսկ միւսն աղքատ հպարտ՝  
առաւել ձանձրութի տայ , և 'ի ցասումն  
դրգոէ : Առդ՝ սոյնպէս դատեալ են իբրդ  
և ընդ Այ :

Եւ զի լաւ ևս ծանիցի յարդ և պտուղ  
այսր աղօթից , և որչափ հաճելի առ Ած  
իցէ , հարցանեմ : Զի՞նչ լաւագոյն աղօթն  
կարէ ոք առնել , կամ քաղել անտի առաւ  
ւելագոյն պտուղ , քան զբագում համ-  
բերութի 'ի վիշտս , քան զմեծ համակա-  
մութի առ Ած , և քան զառաւել սէր նո-  
րա . զի՞նչ այլ խնդրեմք յաղօթս մեր՝ բայց  
զսոյն զայս : Ապա յորժամ արկանէ 'ի  
քեզ Տէ՛ ցամաքութի . և փորձութիւն յա-  
ղօթն , միաբանեաց ընդ կամաց նորա  
յայդմ վշտի և 'ի հոգևոր լքման , և արաս-  
ցես զմեծ ննրգործութի համբերութե և  
սիրոյն Այ , զոր առնել կարէիր : Ասա-  
ցեալ իսկ է , և կարի յիրաւի , թէ սէրն  
ձանաշն 'ի կրել և 'ի վշտանալն յաղագս  
սիրելոյն . և որչափ վիշտքն իցեն սաստիկ ,  
նոյնչափ առաւելապէս ցուցանի սէրն :  
Առդ՝ սոքին իսկ են սաստիկ վիշտք , և  
ձանըագոյն խաչք և Ճնշմունք ծառայիցն  
Այ , ընդ որս առաւելապէս ցաւագնին  
արք հոգևորք , քան զվիշտս մարմնականս՝  
որ Դիպին յինչս , յառողջութի , և յայլ ժա-

մանակեան բարիս, ողք և չեն 'ի համարի առ համեմատութե առաջնոցն։ Վ ասն որոյ եթէ ոք հասանիցէ 'ի մեծ համակամութի առ Ած յայսպիսի վիշտ, նմանեալ Քնի փրկչին մերոյ յայն հողեորթողացմանն՝ զոր 'ի խաչին կրեաց, և յանձն առցէ զհոգեկան խաչս զայս ընդ ամենայն կեանսն՝ 'ի հաճիլ Տն տալ զայն, և այս առ 'ի կատարել միայն զհաճոյս ԱՅ, ասեմ թէ այս է ազօթք զերամբարձ և ամենաշահ, և գործ վսեմ կատարելութե . և այնչափ, զի ոմանք զայսպիսիսդ կոչեն՝ Մարտիրոս զերազանցս։

Հարցանեմ դարձեալ . զի՞նչ խնդրես դու առնել յաղօթման՝ բայց ժողովել քեր խոնարհութիւն և զանձինդ ճանաչումն . քանիցս անդամ խնդրեցեր ԱՆՅ զի տայցէ ճանաչել՝ ո՞ իցես դու : Ահա լուաւ Ած ազօթից քոց . և կամի զի ծանիցես զքեղ այսու օրինակաւ : Ոմանք զճանաչումն անձին հաստատեն՝ 'ի սաստիկ ցաւիլ վասն մեղաց իւրեանց, և յորդ արտասուս վասն նոցա հեղուլ : Բայց խաբին . զի այդ ԱՅ է, և ոչ քո : Անելդ իրբքար, այս ես դու, և եթէ Ած ոչ հարկանիցէ զքարն, ոչ ելանիցէ անտի ջուր և մեղք : Յայս հաստատեալ կայ ճանաչելն զանձինդ, սկիզբն բիւրապատիկ բարեաց . և զայս լիաձեռն ունիցիս, յորժամ կայցես 'ի սահմանին որ ասացաւ . և եթէ զայս հանցես յաղօթից անտի, ոլտղաւէտ եղեւ քեղ այն :

## Գ Լ Ո Ւ Խ Ի Ե .

Յաղագս այլոց պատճառաց սրբվէ ու  
նիմէ մոհթարել և մաքանիլ՝ ի համա  
Աստուծոյ՝ ի լինել յամաքութե ,  
որդոմութեան և դառնութեան յու<sup>ղօթու :</sup>

Ա պաքէն բարւոք է խորհեղ մեղ , թէ  
վիշտք հասանեն մեղ՝ ի մեղաց մերոց . զի  
այսպէս լիցի մեղ ևս քան զես ամացել և  
խոնարհիլ : Սակայն է և կարեռը գիտել  
թէ ոչ միշտ են պատուհաս մեղաց մերոց ,  
այլ բարձր տնտեսութիւն և խնամարկութիւն  
Տն . որ բաժանէ զպարգևս խւր՝ որպէս և  
կամի . և ոչ վայելուչ է՝ թէ ամենայն  
մարմինն իցէ աջք , կամ ոտք , կամ ձեռք ,  
կամ գլուխ . այլ զի լինիցին յեկեղեցւոջ  
իւրում անդամք պէսպէս . ուստի ոչ՝ ի  
դէպ է թէ ամենեցունց շնորհեսցի այն  
աղօթք առանձին և գերազանց՝ զորմէ ա-  
սացաք՝ ի ճառս Աղօթից : Ո՛չ հարկ է թէ  
տացի այդ . վասն զի չ'ք այդմ արժանիք .  
վասն զի թէպէտ զայդ ոչ շահին , այլ ա-  
ռաւել ևս շահեսցին այլով օրինակաւ , և  
եղիցի մեծ ևս շնորհ Այ տալ նոցա զայն  
քան զայս : Եղեն բաղրումք՝ ի մեծամեծ

Արբոց, զորոց չդիտեմք՝ ընկալեալ էին ար-  
դեօք զայսոսիկ ձիրս. և եթէ ընկալան ևս,  
ասէին ընդ սըյն Պօղոսի՝ թէ ոչ մեծ ինչ  
համարին, և ոչ յայդ պարծին, այլ ՚ի  
բառնալ զիսաշն Քնի: \* Այլ ինձ քաւ-  
լցի պարծել՝ բայց միայն ՚ի խան Տն մե-  
րոյ Յնի Քնի: || (Գաղ. կ. 14:) Հայրն  
Ավիլա ասէ յաղաղս այսր ինչ մի կարի  
սփոփական, այս է՛ թէ զոմանս թողու-  
Ած անմիտթարս զբաղում ամս, և երբեմն  
զամենայն կեանս. և ինձ թուի՞ ասէ, թէ  
վիճակ սոցա լաւագոյն է, եթէ կայցէ ՚ի  
նոսա հաւատ առ ՚ի չախալելոյ, այլև  
համբերութի և արիութի առ ՚ի տանելոյ  
այսպիսում զժուարին պքսորանաց: Եթէ  
ոք քաջահաւան էր՝ թէ արդարե այս վի-  
ճակ լաւագոյն է վասն իւր, հեշտեաւ  
միաբանէր ընդ կամացն Այ:

Սուրբքն և ուսուցիք հոգեոր կենաց  
յառաջ բերեն բաղում պատճառս առ ՚ի  
բացայայտել և ցուցանել՝ թէ վասն այն-  
պիսեաց ոմանց լաւագոյն և առաւել  
պատշաճ է այս վիճակ. բայց ՚ի ժամուս  
ասասցուք զիին ևեթ ՚ի զլիսաւորացն, զոր  
և յիշատակեն նըն Օգոստինոս, նըն Հե-  
րոնիմոս, և նըն Գրիգոր, և առհասարակ  
ամենեքին որք ճառեն յաղաղս այսր նիւ-  
թոյ: Եւ է, զի ոչ ամենեցուն է պահպա-  
նել զիսնարհութի ՚ի մեջ բարձր հայեցո-  
ղութեն. զի ահա հազիւ կաթի միոյ ընդ  
աչս քամելց, անդէն հոգեորս զմեղ լեաւ

կարծեմք, և արս աղօթանուէրս . և հաւա-  
 սարիլ խնդրեմք, գուցէ և նախամեծար  
 լինել քան զայլս : Թռուի թէ ինքնին ոք ա-  
 ռաքեալն Պօղոս կարօտացաւ դիմակշուռ-  
 թեն ինչ առ ՚ի ոչ ամբարհաւաճելոյ այս-  
 պիսի իրօք : \* Եւ զի մի առաւելութեամբ  
 յայտնութեցն հպարտացայց, տուաւ ինձ  
 խայթ մարմնոյ հրեշտակ սատան կռփել  
 զիս : || ( բ . Կոր . ժբ . 7 : ) Զի մի ասէ՝  
 յափշտակիլն մինչ յերրորդ երկինս, և մե-  
 ծամեծ յայտնութիք ընկալեալք ամբառ-  
 նայցեն զնա ՚ի հպարտութի, թոյլ ետ  
 Ած գալ ՚ի վերայ նորա փորձութեան,  
 որով խոնարհեացի, և ծանիցէ զիւր տկա-  
 րուի : Վասն այսորիկ թէև ճանապարհն  
 այն բարձրագոյն թուի, այլ այս առաւել  
 անվտանգ է . և ամենիմաստն Ած որ ամե-  
 նեցուն առաջնորդէ ՚ի մի վախճան, որ  
 ինքն իսկ է, տանի զիւրաքանչիւր ընդ ճա-  
 նապարհ զոր դատի լինել նոցա ճահողա-  
 դոյն : Եթէ առեալ էր քո զքաղում ե-  
 ռանդն ՚ի սկզբան աղօթից, գուցէ փոխա-  
 նակ լինելոյ խոնարհ և յառաջադէմ լի-  
 նէիր հպարտ և ամբարհաւաճ : Իսկ չու-  
 նելով զայն, մնաս խոնարհեալ և պատ-  
 կառեալ, համարելով զքեղ ամենեցունց  
 ստորին . ուստի լաւ ևս ճանապարհ վասն  
 քո՝ այս է , և առաւել անվտանդ, թէպէտ  
 և ոչ ճանաչեցես դու : \* Ո՛չ գիտէք զինչ  
 խնդրէք . || ( Մատ . ի . 22 : ) ոչ գիտէք  
 զինչ հայցէք, իմ իմիք ցանկայք :

Աբն Գրիգորիոս յայն բանս Յովեայ .  
 ( թ . 11 . ) \* Եթէ վերասցի քան զլա , ոչ  
 տեսից . և եթէ անցցէ առ ինե , և ոչ այն-  
 պէս գիտացից , || աւանդէ զվարդապետու-  
 թի ինչ դիպաւոր մերումն բանի : Այն-  
 շափ կուրացաւ ասէ՝ մարդ սակս մեղացն ,  
 զի ոչ ճանաչէ՝ երբ մերձենայ առ Ած , և  
 երբ հեռանայ 'ի նմանէ . այն զի՝ յոլովակի  
 որ թուին թէ պարզե այ իցէ , և այնուիկ  
 նպաստիւք լինի մերձենալ առ նա , դառ-  
 նայ 'ի բարկութի , և պատճառք լինի հե-  
 ռանալոյ : Եւ բազում այն է՝ զի բարկու-  
 թիւն կարծի , և թէ Ած հեռանայ և 'ի  
 մոռացօնս լինի նմա , սակայն է պարզե ,  
 և պատճառք ոչ հեռանալոյ : Զի՞՞ ոք է՝  
 որոյ տեսեալ յանձն զաղօթս և զհայեցո-  
 զութիւն վերամբարձս , և զբազմապատիկ  
 գգուանս և շնորհս առ 'ի յայ , ոչ կարծի-  
 ցէ թէ առաւել հուպ մերձենայ առ Ած :  
 Եւ սակայն բազում անգամ այնու նպաս-  
 տիւք բերի մարդ յամբարտաւանել և յանձ-  
 նապաստան լինել . և սատանայ կործանէ-  
 ղնա նույին ճանապարհաւ , որով կարծէր  
 նա վերանալ և հպագոյն առ Ած մատչել :  
 Եւ ընդ հակառակս , յոլովակի տեսեալ  
 ուրուք զանձնն անմիսիթար , վշտացեալ ,  
 'ի փորձութիւն ծանունս , պատերազմեալ  
 յանպարկեցո խորհրդոց , 'ի հայհոյակա-  
 նաց , և յորոց ընդդէմ հաւատոյ , դնէ 'ի  
 մտի թէ սրտմտութիւն այ է 'ի վերայ իւր ,  
 որ և լքանէ զլնքն և 'ի բաց դնայ : Բայց

յայնմ ժամու առաւել մօտ է նմա Ած .  
քանզի այսու խոնարհի առաւել, ճանաչ  
գիւրն տկարութիւ և զանհասուատութիւ ,  
վշատի յանձնէ , առ Ած դիմէ ըշտապաւ  
և արիաբար , 'ի նա ամրացուցանէ զամե  
նայն յոյս իւր , և ջան դնէ մի բնաւ մեկ  
նիւ 'ի նմանէ : Ապա ուրեմն լաւագոյն ոչ  
այն է՝ զոր դուդ կարծես , այլ այն ճանա  
պարհ է՝ ընդ որ կամի առաջնորդել քեղ  
Տիր . զայս հաւանեցն անձինդ լինել լաւա  
գոյն , և քեղ առաւել պատշաճող :

Եւ դարձեալ , դոյն իսկ դառնանալ քո ,  
և անձկութիւ և ցաւ զոր յանձին զգաս  
յաղագս կարծելոյ քո՝ թէ ոչ ըստ որում  
պարտն է՝ արժանապէս կատարես զա  
դօթսդ , լիցի քեղ միւս ևս պատճառ միւն  
թարութեն . զի է առաձին շնորհ Տն , և  
նշանակ թէ սիրես զնա : Վասն զի ոչ դոյ  
ցաւ առանց սիրոյ ինչ . ոչ է մարթ դժուա  
րիւ . քեղ առ այն՝ զի ոչ բարւոք ծառայես  
նմա , առանց յառաջադրութեւ և կամաց  
բարւոք ծառայելոյ . ուստի այդ տհաճու  
թիւն և ցաւ ծնանի 'ի սիրոյն այ , և 'ի  
բաղձանաց լաւ ևս ծառայելոյ նմին :  
Եթէ քո չէր ինչ հոդ ընդ թերի ծա  
ռայելդ , կւամ ընդ խանդարել զաղօթսդ ,  
կամ ընդ զեղծանիւդ յայլ գործս , նշան  
չար էր այդ . այլ զի կրես դժուարութիւ  
և ցաւս՝ կարծելով ոչ բարւոք առնել ,  
նշանն է բարի : Վասն որոյ դադարեաց  
'ի դժգւարութենէ և 'ի ցաւոց , գիտելով

թէ այդ իրեւ պատիմ՝ է կամք այ . և  
միաբանեաց ընդ այնում, շնորհս ևս մա-  
տուցանելով նմա , զի տայ քեզ զցան-  
կութի հաճեցուցանելոյ զնա գործովքդ ,  
թէպէտ և թուին քեզ տկարք :

Եւ ևս , թէպէտ և յաղօթել քում ոչ  
այլ ինչ առնիցեա՝ բայց կալ անդ առ ոտս  
արքայական ածային մեծվայելցութեն ,  
այդու ծառայութի յոյժ մատուցանես  
ԱՅ: Որպէս տեսանեմք յաշխարհի աստ ,  
զի վսեմութի մեծ է երկրաւոր թագաւո-  
րաց և իշխանաց՝ եթէ մեծամեծք արքու-  
նեացն երթիցեն օր ըստ օրէ յապարանսն ,  
և անդ յանդիման լինիցին առ 'ի մեծա-  
րանս : \* Երանեալ է այր որ լուիցէ ինձ ....  
տքնիցի առ դրունս իմ հանապազ , և պա-  
հիցէ զսեամս մտից իմոց : || (Առակ. ը. 34: )  
Հայեցեալ 'ի փառս մեծվայելցութեն այ ,  
'ի նուաստութի մերոյ վիճակի , և 'ի մե-  
ծութի գործոյն՝ յոր պարապիմք , վայելցա-  
կան իսկ է՝ զի ստէպ կայցեմք սպասեալք  
առ զուրս երկնային պալատանն . յորժամ  
բանայցէ քեզ , գոհացօղ լեր . և եթէ ոչ ,  
խոնարհեաց՝ ճանաշելով թէ այնում արժա-  
նի ոչ ես , և այսու օրինակաւ աղօթք քո  
լինիցին միշտ բարի յոյժ և օդտաւէտ :  
Արդ՝ զայս ամենայն և զայլս սոյնպիսիս  
պարտիմք 'ի կիր առնուլ առ 'ի միաբանե-  
լոյ ընդ կամն ԱՅ 'ի դառնութիս յայսո-  
սիկ և 'ի հոգեոր լքման , ընդունելով զա-  
մենայն շնորհակալու կամք , և ասել .

Ո՞ղջ լեր դառնութիւն ամենադառն , լ ամենայն շնորհօք :

### Գ Լ Ո Ւ Խ Ի Ը .

«Պատրանչ մեծ էն , և գործութիւն ծանր՝  
’ի բաց լուղութ զաղօթս , յորժամ  
ըստ ասացելումս ցամացեալ գուանի  
հարդ :

**Ա**սացելոցն ցայավայր դիետ դայ , թէ  
խաբէութիւն մեծ և ծանր փորձութիւն է ,  
յորժամտեսեալ ուրուք զանձն ’ի սահմա-  
նի ցամաքութե՛ , խորհի լքանել զաղօթսն ,  
կամ ոչ ժուժկալէ՝ ’ի նմա , կարծելով թէ  
առնէ և ոչինչ , այլ յաւետ ժամավաճառ  
լինի : Փորձութիւն է այս , որով հրապու-  
րեաց սատանայ թողուլ զկրթութիւն ա-  
ղօթից՝ ոչ միայն բազմաց աշխարհակա-  
նաց , այլև յոլովից կրօնաւորաց . և եթէ  
ոչ յաջողէ նմա խսպառ խափանել զաղօթս  
նոցա , հնարի՝ զի մի յօժարամիտք լիցին  
յայն , և մի այնչափ պարապեսցին՝ որչափ  
կարօգ էին : Բազումք սկսանին տալ զան-  
ձինս յաղօթս . և ցորչափ խաղաղութիւն է  
և եռանդն , հանապազորդեն ’ի նոյն կա-  
մակար . բայց ’ի հասանել ժամու ցա-  
մաքութ և թափառման խորհրդոց , թուի  
նոցա՝ թէ այն ոչ ես է աղօթք , այլ նոր  
յանցուած ինչ . իբր զի կան առաջի ԱՅ

Թափառեալք խորհրդով, և սակաւ յարդանօք: Այսպէս առ սակաւ սակաւ թողանան յաղօթից, համարելով թէ մեծ և ծառայութիւն ընծայեն Այ պարապեալ յայլ կրթուիս և 'ի գործս, քան թէ կալ յաղօթս անպտուղ:

Տեսեալ 'ի նոսա սատանայի զայսպիսի մեղկութի, պատճառս առնու և փութայ արկանել 'ի նոսա յոյզ խորհրդոց և փորձութիս յաղօթմն, որպէս զի համարեացին 'ի զուր վատնել զժամանակն . և տայ նոցա առ փոքր փոքր թողուլ 'ի բաց զաղօթս խսպառ, ընդ նմին և զառաքինութին, և երբեմն այլես 'ի յոռեգոյնսն յառաջել . և դիտեմք ապաքէն, զի աստի սկիղըն էառ կործանումն բազմաց: \* Են բարեկամք սիրոյ ժամանակի. բայց յաւուր բարկութե ոչինչ են, || ասէ խմաստունն Ահրաք. կ. 8: Վայելել յԱձ այնպիսի է, զի չիք որ զայն շկամիցի. բայց վշտանալ վասն նորա, աշխատիլ և կրել՝ այս է նշան ճշմարիտ սիրոյ: Յորժամ յաղօթս գոյ միսիթարութիւն և եռանդն, ոչ մեծինչ է ժուժկալել և յամենալ 'ի նոյն ժամն բաղումն . զի մարթ է լինել թէ առնիցես զայն սակս քոյոց ախորժմանց . և է իսկ նշան առնելոյ վասն այնք՝ յորժամ 'ի պակասել միսիթարութեն՝ լինիս անժուժկալ: 'ի տալ Այ դառնութիս, տիրութիս, ցամաքութի և խորհրդոց ցըումն, յայնժամ փորձին ստոյդ բարեկամքն, և

ծառայըն հաւատարիմք ճանաչեն , զի ոչ  
զանձանց օգուտ խնդրեն , այլ սոսկաբար  
զկամն և ղճաճոյս Այ . ուստի պարտ է  
մեղ հանապաղորդել յայնժամ խոնարհու-  
թք և երկայնմտութք , կացեալ յայնմ  
զբովանդակ ժամանակն սահմանեալ , նա  
առաւել ես , որպէս խրատէ նը հայրն  
իգնատիոս , յաղթել այսու փորձութեն ,  
և հանդիսանալ քաջա և անմեղկելիս ընդ-  
դէմ սատանայի :

Պատմէ հայրն Պալատի , թէ մինչ կայրն  
՚ի տեսութի ածայնոց՝ փակեալ ՚ի սենե-  
կին , եկն ՚ի նա ծանր փորձութի ցամա-  
քութե , և տագնապ խորհրդոց . և ասէին  
նմա միտք իւր՝ թողուլ զկրթութին , զի  
անօգուտ էր նմա : Գնացեալ նորա առ  
նըն Մակար աղեքսանդրացի , պատմեաց  
նմա զփորձութին , հարցանելով խրատ և  
դարման : Պատասխանի ետ նը հայրն .  
յորժամ այդ խորհուրդք ասիցեն քեղ , ՚ի  
բաց գնա , զի անգործ կաս , ասանոցա ,  
վասն Քնի պահեմ զորմն սենեկիս այսո-  
րիկ : Ասել կամէր թէ ժուժկալել պարտ  
է , շատացեալ առնել զայն բարեպարիշտ  
դործ առ սէրն Քնի , թէպէտե ոչ քաղեցէ-  
զայլ պտուղ՝ բայց զայս միայն : Այս է  
պատասխանի բարեդէպ՝ յորժամ հասա-  
նիցէ այս փորձութի . վասն զի դլխաւոր  
վախճանն՝ զոր ինդրել ունիմք յայսմ  
սուրբ կրթութեան , և դիտաւորութիւնն  
որով պարտիմք ՚ի դոյն պարապիլ , ոչ եթէ

մեր հաճոյքն են, այլ առնել զգործ բարի և սուրբ՝ առ ՚ի հաճել զԱծ, և հատուցանել նմա դոյզն ինչ ՚ի բազմաց անտի՝ զոր պարտիմք նմին՝ թէ զի ինքնին արժանի է, և եթէ սակս անհամար բարերարութեցն՝ զոր ՚ի ձեռանէ նորա ընկալաք. և զի նա կամի և հաճեալ իսկ է՝ զի կացից մնացից աստ, թէ և թուիցի՝ անգործ անցուցանել, ընդ այս հաճեալ եմ և ես :

Պատմի յաղագս երանուհոյն կատարինեայ սենացւոյ, թէ եղե նմա կալ զաւուրս բազումն առանց հոգեորական մխիթարութե, ոչ զգացեալ յանձն զսովօրական եռանդն, և ՚ի վերայ այսր վշտացեալ ևս յոյժ ՚ի շար խորհրդոց գարշելեաց անհամեստից, զոր չեր հնար թօթափելյանձնէ : Սակայն ոչ վասն այսր թողոյր զաղօթսն . այլ որչափ կարօղ էր՝ ժուժկալէր ՚ի նոյն մեծաշան, և այսպէս ասէր ցանձն իւր : Ո՞ դու ամենանուաստ մեղաւոր, արժանի ոչ ես մխիթարութեան իմիք . և զիարդ, ոչ շատ է այն քեզ՝ զի ոչ ՚ի դատապարտութիւն արկար, թէ և լինէր քեզ զամենայն կեանս քո կրել զայս խաւար և զտագնապս . այս ծշմարիտ է՝ զի դու ոչ ընտրեցեր ծառայել ԱՆ սակս մխիթարութիւն գուանելոյ ՚ի նմանէ յայս կեանս, այլ վայելել ՚ի նմա յաւիտեան յերկինս . հապա զօրացիր, և կատարեալ զքո կրթութիս, պինդ կացեալ ՚ի հաւատարմութետեառն քո :

Եւ արդ՝ նմանեսցուք օրինակացս այսուցիկ, և յանձին կալցուք զբանս թուվմայի գեմբացւոյ : Համարիմ Տէք, փոխան մխիթարութե՛ զկամաւ յանձնառութին լինելոյ զուրկի ՚ի մարդկային մխիթարութե՛ . և եթէ քոյդ մխիթարութի ինձ պակասիցի, կամք քո, և արդար քո փորձելոցի փոխանակ գերազանց մխիթարութեան : Եթէ յայս չափ հասանիցեմք, զի կամք և հաճոյք ԱՅ լինիցին բովանդակ մեր հաճոյք, մինչև զըկումն իսկ յամենայն մխիթարութե՛ լիցի ախտժումն մեր՝ սակա լինելոյն կամք և հաճոյք ԱՅ, յայնժամ ձշմարիտ եղիցի մերս հաճութի, և այն պիսի՞ զոր ոչ մի ինչ բառնալ կարօղ է ՚ի մէնջ :

## Գ Լ Ո Ւ Խ Ի Թ Ա

Հասպատի ասացէալս օրինակօք ինչ :

**Պ**րեալ կայ ՚ի ժամանակաղիրս կարգի սըյն Դոմինիկոսի, թէ մի ոմն յառաջնոց միաբանից կարգին՝ յետ կալոյ զամն բաղումն ՚ի կրօնի անդ գովելի վարուք և պարզմտութե՛, ոչ զդայր յանձին մխիթարութի ինչ, կամ ախորժանս ՚ի վանական կրթուիսն, ոչ ՚ի մտածելն, ոչ յաղօթել, ոչ յընթերցմունս : Այլ քանզի լսէր

պատմել վասն պարզեացն և հոգեկան  
ազդմանց՝ զոր այլոց առներ Ած, կար-  
ճամուեալ՝ 'ի դիշերի միում աղօթելով  
յանդիման խաչին, և դառն արտասուե-  
լով ասաց զայսպիսի բանս անպատեհս :  
Տէր, ես հաւատայի միշտ թէ բարութք և  
հեղութք անցանես քան զամենայն արա-  
րածս . և ահաւասիկ ծառայեցի քեղ բա-  
զում ամն, տարայ վասն քո սաստիկ նե-  
ղութեց, և ախորժաբար նուիրեցայ քեղ  
միայնում . Եթէ զըորրորդ մասն ժամանա-  
կին քեղ ծառայելոյս պաշտեալ էի զըըու-  
նաւոր զոմն, արդարե ցուցեալ էր ինձ  
մարդասիրութե ինչ նշանակ՝ գէթ բարե-  
բար բանիւ, կամ զուարթութք դիմաց և  
ծաղու : Իսկ դու Տէր, ոչ մի դգուանս  
ինձ արարեր, և ոչ զդոյզն պարզե՝ զոր այ-  
լոցն սովոր ես առնել, ընկալայ 'ի քէն .  
դու ինքն քաղցրուի գոլով, առիս դժնեայ  
ես քան զըազում ըռնաւորս : Զի՞նչ է այս  
Տէր, առիմբ այդպէս գնաս ընդ իս :

Մինչ յայս կայր նա, լուաւ յանկար-  
ծակի դղըդիւն սաստիկ յոյժ, իբր այն թէ  
եկեղեցին ողջոյն 'ի վայր հոսիցի . և 'ի  
դատարկ կողմանս լսելի լիներ աղաղակ  
զարհուրելի՝ իբր հազարաւոր շանց կատա-  
ղելոց 'ի քանդումն յատակին և առաս-  
տաղաց . ընդ որ ահաբեկեալ և 'ի դոդ-  
ման եղեալ, դարձաւ տեսանել զի՞նչ այն  
իցէ . և ահա առ թիկամբք նորա կայր  
զարհուրատեսակ զաղըազէմ կերպարան

զիւական . որոյ գաւաղան երկաթի ու  
նելով՝ի ձեռին՝ Եհար շարաջար զմարմին  
նորա , և տապաստ ընկեց յերկիր , մինչ  
կալ նմա անյարիր . բայց ջանացաւ գնալ  
ընդ քարշ՝ի սեղանն որ մերձ կայր , և ոչ  
այլ խլբախիլ կարէր առ ցաւոցն , որպէս  
թէ՝ի սաստիկ հարուածոց անտի խախա-  
տեալ էին ոսկերքն առ հասարակ : Իբրև  
յարեան եղբարքն ասել զառաջին ժամն ,  
գտին զնա իբր մեռեալ , ոչ դիտելով  
զպատճառ այնպիսի անկարծ և մահաբեր  
պատահմանն . բարձին տարան զնա՝ի հի-  
ւանդանոցն , ուր կացեալ շաբաթս երիս  
դառնակսկիծ ցաւօք , այնպիսի հոտ նե-  
խոյ բուրէր զաղիր և զարշեցուցիչ , ոլի կրօ-  
նաւորքն չկարէին բնաւ մտանել անդր  
առ՝ի դարմանել զնա՝ առանց խցանելոյ  
զոնդունս , և առանց այլոց հնարից : Յետ  
այնր դօրացեալ նորա փոքր մի , մինչև կա-  
րող լինել յոտին կալոյ , կամեցաւ բժշկիլ  
յիւրմէ խելայեղ յանդնութենէն և՝ի  
հպարտութէ . և զնացեալ՝ի տեղին ուր  
զյանցումն գործեաց , անտանօր ինդրէր  
զգարմանն՝ կացեալ յաղօթս արտասուա-  
լիցս խոնարհութք կարի տարօրինակ քան  
զառաջինն . խոստովանէր զյանցանս իւր ,  
անարժան զանձն ճանաչէր բարւոյ իմլիք ,  
և առաւել պատժոց պարտական : Իակ  
Տէր սփոփեաց զնա երկնառաք ձայնիւ , որ  
ասէր . Եթէ միմիթարութիւնս խնդրես և  
ախորժանս , պարտ է քեզ խոնարհ լինել ,

Ճանաշել գրոյդ ցածութիւն, և դնել 'ի մտի  
թէ անարդ ես քան զկաւ, և արհամարհ  
քան զորդն՝ զօր կոխես ընդ ոտիւք: Այ-  
սու յերկիւղի ըմբռնեալ նորա, եղեւ  
յայնմ հետէ կրօնաւոր ընտրեալ:

Յաղագս նը հօրն իդնատիոսի ընթեռ-  
նումք միւս ևս օրինակ այլանման յոյժ:  
Պատմի 'ի վարս նորա, թէ ածեալ զմուաւ  
զիւր թերութիւն և ողբալով, ցանկայր զի  
առ 'ի պատիժ բառնայցէ Տի՛ 'ի նմանէ  
զպարգև միիթարութեն. որպէսզի այսու  
սանձելով, մեծաջան ևս և զգուշաւոր ըն-  
թանայցէ 'ի ծառայութեն նորա: Սակայն  
այնչափ մեծ էր առ նա դժութիւն Այ, և  
յաճախ քաղցրութիւն նորհաց նորա, մինչ  
զի որչափ ինքն պակասէր առաջի Այ, և  
ցանկայր պատիժս լուծանելոյ, նոյնչափ  
բարեխնամ առ նա լինէր Ած, և յորդա-  
գոյն զեղմամբ սփուէր 'ի վերայ նորա  
զգանձս անբաւ առատաձեռնութեանն:  
Ուստի ասէր, կարծեմ չկը ոք յաշխարհի՝  
յորում ընթացակից իցեն երկու այս, որ  
պէս յիս. այսինքն է, մեծապէս պակա-  
սել առ Ած, և ընդունել 'ի ձեռաց նորա  
անդադար շնորհա՝ այսքան, և այսպիսի:

Պատմէ Պլոսիոս յաղագս ծառայի ու-  
րումն Այ, որում առնէր Տի՛ պարգևս՝ մե-  
ծամեծ լուսաւորութէք, և մասնաւորելով  
նմա յաղօթմն իրս զարմանազան. իսկ նա  
վասն առաւել խոնարհութեն՝ ցանկա-  
լով և ևս հաճոյ լինել Այ, աղաշեաց առ

նա՝ զի թէ այնպէս կամ իցէ՝ բարձցէ յիւրմէ զընորհն զայն : Լսելի եղեն ազօթքն, և եբարձ Ած՚ի նմանէ զպարդեն ընդ հինգ ամս, թողեալ զնա՚ի կիրս բարձ մաց փորձութեց, դառնութեց և տագնա պի : Եւ մինչ կայր երբեմն՝ ի դառն ողբս, երևեցան երկու հրեշտակը, և միսիթարել կամէին զնա . որոց պատասխանի ետ, միսիթարութի ես ոչ խնդրեմ. քանզի առ իմ միսիթարութիւն շատ է ինձ զի կամք Այ յիս կատարեսցին :

Նախքն Պլոսիոս պատմէ՝ թէ Քե փըր կիչ մեր ասաց առ սրբուհին Պրիմիոս . Դուստր, զի՞նչ է որ գքեզն խոռովի՛, և արկանէ՝ ի վիշտս : Ետ պատասխանի, քանզի վշտանամ՝ ի նանիր և՝ ի չար խորհրդոց, որոր չկարել՝ ի բաց . և զի տագնա պէ զիս ահազին դատաստան քո : Յայն ժամասէ ցնա Տիր . արդար և իրաւ է այդ . զի որպէս դու զուարձանայիր յունայնութիս աշխարհի հակառակ կամաց իմոց, նոյնպէս այժմ նեղեսցեն գքեղ խորհուրդք աղջի աղջի և թիւքք՝ հակառակ կամաց քոց : Իսկ յիմոց դատաստանաց երկնչել պարտիս չտփով և ընտրութի՛, միշտ ապաւինեալ պնդապէս յիս, որ Ած քո եմ. և զիտեա հաւաստի, զի խորհուրդք չարք որոց ընդդէմ դնէ մարդ. և մերժէ, մաքրականք են և պսակ հոգւոյ : Եթէ արդելու զայնս չկարես, տար համբերութի՛, և հակառակ կաց նոցա կամք . և թէպէտ

և հաւանութիւն ոչ տայցես նոցա, երկիր  
տակաւին, մի արդեօք ծնանիցի ՚ի քեզ  
հպարտութիւն, և անկանիցիս .քանզի որ  
միանգամյոտին կայ, ԱՅ շնորհաց միայն  
կայ յակաստանի :

Ասէ Տաւերոս, զոր և Պլոսիոս յա-  
ռաջ բերէ, թէ բազումք նեղասրտեալք ՚ի  
վշտաց ինչ՝սովոր Են ասել ցիս . Հայր, տագ-  
նապեալ եմ, ոչ յաջող են իրքս . զի նե-  
ղեալ եմ ՚ի զանազան վշտաց և ՚ի թախ-  
ծանաց : Իսկ ես տամ պատասխանի առ-  
խօսողն զայսպիսիս . մանաւանդ թէ բա-  
րեղէպ են իրքդ, և մեծ շնորհ է քեզ այդ:  
Ասեն, ոչ Տէր, այլ կարծեմ զի դիպի ինձ  
այս վասն մեղաց իմոց : Եւ ես երկրորդեմ.  
Եթէ առ մեղս քո դիպի այդ, և եթէ ոչ,  
հաւատուա թէ զայդ խաչ ետ քեզ ԱՃ, և  
զոհացեալ զնմանէ՝ տար, և խապառ ՚ի նա  
ապըսպարեցիր : Ասեն զարձեալ . ահա  
նուազիմ ՚ի սրտի առ մեծի ցամաքութեն  
և մթագնութեան . և ես ասեմ. Ո՛րդեակ  
սիրելի, տար համբերութք . և եղեցի քեզ  
այդ մեծ ևս շնորհ, քան թէ ունէիր բա-  
զում և սաստիկ եռանդն զգալի :

Յաղագս մեծի ուրումն ծառայի ԱՅ  
պատմեն՝ թէ այսպէս ասէր . այս քառա-  
սուն ամք են՝ զի ծառայեմ Տն, և պարա-  
պիմ յաղօթս . և ոչ ընկալայ բնաւ ախոր-  
ժանս և միսիթարութիւնս . բայց յաւուր  
յորութիւն մեծ ՚ի մարզս առաքինութեանց .

բայց երբ թուլանամ յաղօթս , այնչափ  
լուծեալ զանձն գոտանեմ , մինչ շկարել  
ձեռն շարժել 'ի դործ ինչ բարի :

## Գ Լ Ո Ւ Խ Լ .

Յաղագս համակամութե առ ԱՌ զբ  
ունել պարտ է մշկ ըստ բաշխման  
այլոց առաջինութեց և պարգևաց  
գերբնականաց :

**Ա**րպես համակամ առ ԱՌ պարտիմք  
լինել՝ զիարդ և վարեսցի ընդ մեղ յաղօթս,  
նոյնպես համակամութի պահանջի ըստ  
վարելոյ նորա յայլ առաքինութիս և 'ի  
պարգևս իւր, և յայլ ամենայն հոգեռորա-  
կան գերակայ ձիրս : Արդարե ամենաբար-  
ւոք իմն է ցանկութիւն ըուրից առաքի-  
նուեց , տարփուլ 'ի նոյնս , և 'ի ստացումն  
ջանալ : Սակայն այնպիսի ցանկալ ար-  
ժան է 'ի լաւագոյնս , յաճումն և յառա-  
ջադիմութիւն առաքինութեն , զի կալցուք  
զիսաղաղութի եթէ երբէք չժամանիցենք  
յոր ցանկամբն , և միաբան կայցեմք ընդ  
կամնն ԱՐ , այնու ևեթ շատացեալք :

**Ե**թէ ոչ կամի ԱՌ չնորհելքել զողջա-  
խոհութի հրեշտակային , այլ կամի կրել  
քեղ փորձութիւնս ծանունս , լաւ ևս է-  
քեղ երկայնամոել , և հանգչել 'ի կամն

Այս յայնմ փորձութե՛ և 'ի վշտի, քան թէ  
 անհանգիստ լինել, և ցաւազնիլ ընդ  
 գուրկէ լինել քո 'ի հրեշտակական մաքրու-  
 թէ : Եթէ չկամի տալ քեղ Ած խոնար-  
 հութիւն խորին՝ իբր սբյն Փրանչիսկոսի,  
 կամ այնչափ հեղութիւն, որչափ Մովսեսի և  
 Դաւթի, և ոչ համբերութիւն այնչափ՝ որ-  
 չափ Յովեայ . այլ կամի կրել քեղ շարժ-  
 մունս և իղձս հակառակս, լաւ է ամա-  
 շել, խոնարհիլ, և առնուլ նիւթ անար-  
 գելս զքեղ . այլ ոչ է բարի աղմկիլ և  
 բերիլ 'ի տրտունջ և յանձկութիւն, իբրև  
 զի ոչ առնէ զքեղ Ած համբերօղ՝ որբան  
 Յովեն էր, և ոչ խոնարհ որչափ Փրանչիս-  
 կոս : Պիտոյ է՝ զի և յայսպիսիս գրաւի-  
 ցիմք 'ի կամս Այ . ապա թէ ոչ խաղա-  
 ղութիւն ոչ ևս ունիցիմք : Վայելչապէս  
 ասէ հայրն Ավելա . ոչ կարծեմթէ լեալ  
 իցէ յաշնարհի Սուրբ ոք՝ որոյ չիցէ ցան-  
 կացեալ լինել լաւագոյն քան զոր էրն .  
 բայց այս ոչ խափանէր զնոցայն խաղա-  
 ղութիւն . զի ոչ եթէ այնմ ցանկային յա-  
 ռանձին ցանկասիրութէ, որ չասէ բնաւ-  
 շատ . այլ ցանկային վասն Այ, ընդ որոյ  
 տնտեսութիւն հաճեալ էին, թէպէտե սա-  
 կաւ տուեալ էր նոցա, զայն համարելով  
 ճշմարիտ ածսիրութիւն, զի առաւել հա-  
 ճեսցին ընդ այն՝ զոր Ած տայ նոցա, քան  
 ցանկալ առաւելագունին . թէ և անձնա-  
 սիրութին պատճառէ՝ թէ ցանկայ սակա-  
 մեծապէս ծառայելոյ Այ :

ԱՅԼ ասիցէ ոք ցիս . այնպէս իմն թուի  
ասել բանիցդ , թէ ոչ պիտոյ իցէ մեղ  
եռանդուն լինել և ցանկացօղյաւելումն  
առաքինութեն և լաւութեն , այլ թողուլ  
զամենայն յԱծ , եթէ ըստ հոգւոյ իցէ , և  
եթէ ըստ մարմնոյ . և այսպէս տացի մեղ  
պատճառ գաղջութեն և հեղգութեան ,  
լինել անփոյթ դլսովն 'ի յառաջադի-  
մութիւն :

Արժան է բարւոք կշռել զայս մտա-  
ծութիւն , զի է կարեոր յոյժ . և առար-  
կուածդ այնու իսկ դիպոլ է , զի յայդ  
մանէ միայն գոյ կասկածել յայս ինդիր :  
Չիք վարդապետութի՞ որչափ և ուղա-  
դատ իցէ , զոր չիցէ մարթ ումեք վարել  
խոտորնակի , եթէ ոչ որպէս արժանն է  
'ի գործ մատուցանիցէ : Այսպէս լինիցի  
և յայսմ թէ ըստ աղօթիցն իմասցի , և  
թէ ըստ այլոց առաքինութեց և հոգեկան  
պարզեաց . վասն որոյ հարկ է քաջ բացա-  
տրել զայն և 'ի միտ առնուլ : Ոչ ասեմ  
ես , թէ չիցէ մեղ ցանկալի յառաջել օր  
ըստ օրէ 'ի սրբութի , և 'ի հետեւումն լա-  
ւագունին ճգնիլ , լինել մեղ յորդորամիտ  
և եռանդուն . ուր յայդ իսկ եկեալ եմք  
'ի կրօնաւորութիւն . և եթէ զանց այսմ  
առնիցեմք , ոչ լինիմք կրօնաւոր ընտիր :

ԱՅԼ ասեմ , թէ զորօրինակ յիրս մար-  
մնականս պարտին մարդիկ լինել փոյթք ,  
այլ ոչ բազմահոգ և տենջացօղք , զոր և  
ըստ ասելոյ վարդապետաց՝ արդել Ք

վրկիչ մեր յայն բանս աւետարանին ,  
 \* Ասեմ ձեղ , մի հոգայք վասն ոգւոց ձե-  
 րոց՝ թէ զինչ ուտիցէք , և մի վասն մար-  
 մաց ձերօց՝ թէ զինչ ազանիցիք : || (Մատ.  
 Ղ. 25:) Յանդիմանէ զաւելորդ հոգո-  
 ղութին , զանձկութին , և զտենջ այնպի-  
 ւեաց իրաց . իսկ զպատշաճ դարման և  
 պինամնն կարեորս ոչ եթէ բառնայ , այլ  
 հրամայէ ևս , զոր և կարգեաց առ ՚ի պա-  
 տիթ ասելովն , \* Վրտամբք երեսաց քոց  
 կերիցես զհաց քո : || (Ծննդ . կ. 19:) Պիտոյ է ՚ի կիր առնուլ մարդկան զիւ-  
 րեանցն աշխատութի և զնան՝ առ ՚ի հայ-  
 թայթելոյ զկերակուրն . և այլազգաբար  
 շարժիլն՝ էր փորձել զԱծ : Եւ ահա սոյն  
 պիսի է նաև յիրս հոգեորականս , և ՚ի  
 շանս առաքինութեց և պարզեաց Այ :  
 Մեղ արժան է լինել ժրաջան և անվե-  
 հեր ՚ի նոյն , բայց ոչ այնպէս՝ զի բարձցի  
 խաղաղութի մեր և միակամութիւնն ընդ  
 Այ : Արա դու որ ինչ ՚ի քեզն է . բայց  
 եթէ տեսանես չունել որչափկամէիրդ , մի  
 վասն այսր յանհամբերութի կործանիր ,  
 որ չար ևս է քան զբուն պակասեալն :

Այսպէս արասցես նաև ՚ի կարծելքո՝  
 թէ պակասութի այնր զօր կամէիր , յա-  
 ռաջ գայ ՚ի քումմէ հեղզութէ . որ այս է  
 բազմաց տիսրութեն պատճառք : Դիր ջան  
 առնել ըստ քում կարիզամենայն խնամա-  
 և եթէ ոչ զամենայնն արարեալ պակասի-  
 ցէս իւիք , մի վասն այդը երկնչիր , մի

արտաքեկիր . զի այսպիսի եմք ամենեքին .  
մարդ ես , և ոչ հրեշտակ , տկար , և ոչ  
ընդ Սուրբս դասեալ , և ԱՃ ճանաշէ տի-  
րապէս զմեր տկարութիւնի և զթշուառու-  
թիւն : \* Զի նա գիտաց զստեղծուածս մեր . ||  
( Սաղմ . Ճ՛ք . 14 . ) Ու կամի թէ վհատի-  
ցիմք վասն այսր . այլ զի ապաշաւիցեմք , և  
խոնարհիցիմք , և անդէն յառնիցեմք 'ի  
վեր՝ հայցելով 'ի Տէ առաւել զօրութիւն ,  
և հոգ տանել զի կացցուք հաճք և հա-  
ւանք ներքոյ և արտաքոյ . զի լաւ ես է թէ  
վաղվաղակի կանդնեսցիս զուարթութիւն ,  
որ կրկին զօրացուցանէ 'ի ծառայել ԱՅ ,  
քան թէ կարծելով ողբալ զթերութիւնդ  
վասն ԱՅ , անհամոյ նմին լինիցիս՝ կաղ  
'ի կաղ ծառայելով նմա սրտիւ , և յա-  
ճախելով յանկմունս , և այլովք ես ան-  
կարգութիւնք՝ որ իբր ոստք բնաւորեալ են  
բուսանել 'ի վհատութէ :

Միակ երկիւղալի կայ յայսմ վտանգն ,  
զոր վերադոյն նշանակեցաք , այն է՝ զի մի  
սպրդեսցի 'ի մեզ թուլութիւն , և ձեռն  
թափ լինիցիմք առնել որ ինչ մերն է ,  
պատճառելով թէ ԱՅ է տալ ինձ , ամե-  
նայն ինչ 'ի նորա ձեռանէն իջանէ . ես  
այսչափ ինչ կարօղ եմ : Յայսմ վտանգէ  
պարտ է մեզ զզուշանալ նաև 'ի զի-  
պուած աղօթից , զի մի և անտանօր 'ի ներքս  
անկանիցի հեղդութիւն նովին պատրուա-  
կաւ : ԱՅ վակեալ զայս դուռն կորստա-  
կան , և առնելովքո որչափ 'ի կարի քում

է, առաւել ընդունելի է ԱՅ համբերութին և խոնարհութին՝ ի տկարութիւնս անդ, քան զաւելորդ անձկութիւնսն և տիսրութիս՝ զոր ոմանք կրեն, կարծեալ նոցա թէ ոչ զարգանան յառաքինութիս և ՚ի կատարելութե, կամ շկարեն ջերմանալ յաղօժմ որչափ կամէին։ Վ ամս զի աղօժիցն պարզե և կատարելութի՝ ոչ ստացանի տիսրութքը, կամ բռնամարտութք, այլ ԱՅ է տալ ում կամի, որպէս կամի, յորժամ կամի։ Եւ այն դարձեալ հաւաստի է, թէ ոչ ամենեքին որ յերկինս գնալ ունին՝ համահաւասարք լինելոց են։

Ոչ արժան է մեզ յուսակտուր լինել այնու զի չեմք ՚ի լաւադունից անտի, գուցէ և ոչ ՚ի միջակայնոց։ այլ պարտիմք խոնարհիլ ՚ի կամս ԱՅ յամենայն իրս, և գոհանալ զնմանէ վասն յուսոյն՝ զոր եռ մեզ ՚ի փրկիլ ողորմութեամբ իւրով։ Եւ եթէ ոչ ժամանիցեմք աղատանալ խոպառ ՚ի թերութեց, շնորհ կալցուք ընդ այն՝ զի ետ ճանաշել զմեր թերութիս։ և թէ և ոչ երթ այցեմք յերկինս բարձրագոյն առաքինութեամբք, որպէս ոմանք դնան, շատասցուք գնալ անդը ճանաշմամբ և ապաշխարութեամբ մեղաց մերոց, որպէս գնան այլք բաղմագոյնք։ Ասէ նըն Հերոնիմոս։ նուիրեսցեն այլք ՚ի տաճար Տն իւրաքանչիւր ըստ իւրում կարողութե, ոմն ոսկի, ոմն արծաթ, և քարինս

պատուականս , ոմն մետաքս , ծիրանիս ,  
դիպակս . ինձ շատ է ընծայել 'ի տաճա-  
րին մորթս այծից և ոչսարաց : Ապա  
սոյնպէս այլք մատուցեն Այ զիւրեանց  
առաքինութիւն և զվաստակս վաեմականս ,  
գերազանցս , և զբարձրադիտակ հայեցո-  
ղութիւն . իսկ ինձ բաւական է մատուցա-  
նել նմին զիմ անարգութիւն , ճանաշելով և  
խոստովանելով թէ մեղաւոր եմ , անկա-  
տար , և վատթար . և յանդիման մեծվայ-  
ելութե նորա կալ իբր աղքատ և կարօ-  
տեալ : Եւ է յօգուտ մեղ խնդալ ընդ  
այս 'ի սրտէ , և գոհանալ զԱյ , զի մի ար-  
դեօք իբր յապաշնորհաց բարձցէ 'ի մէնջ  
և զայն՝ զոր շնորհեալն է :

Այ բոնավենդուրա , Գերսոն և այլք  
յաւելուն միւս ևս մոածութիւն , որով  
լաւ ևս հաստատի ասացեալս . և ասենթէ  
բազումք առաւել ծառայեն Այ չունե-  
լով զառաքինութիւն և զմտաց զգաստութիւն ,  
այլ ցանկալով 'ի նոյնս , քան եթէ ու-  
նէին : Վասն զի այնպէս մնան 'ի խոնար-  
հութե , և լինին 'ի փոյթ և 'ի ջանս յա-  
ռաջել յընթացսն և հասանել , և յայն  
սակս ստէպ կարդան առ Ած . իսկ եթէ  
ունէին , դուցէ ամբարտաւանէին , կամ  
անհոգացեալ թուլանային 'ի ծառայու-  
թեն Այ , թուելով նոցա թէ ունին զոր  
պիտոյն է , և ոչ խրախուսէին 'ի վաս-  
տակս առաւելագունին : Զայս ասացի ,  
զի արասցուք որչափ մեր կարն է , և ջա-

նասցուք՝ ի փոյթ կատարելուն. և յայն-  
ժամ շատասցուք ընդ այն զոր տայ մեղ  
ՏԵՐ, ոչ տրտմեալք և վշտացեալք ընդ այն  
զոր անկարանամք ստանալ, և ոչ՝ ի մեր  
ձեռս է։ Վ ասն զի՞ ըստ քաջադէպ ասա-  
ցածոյ հօր Ավելայի, ոչ այլ ինչ էր այդ՝  
բայց վշտանալ զի՞ ոչ տուան մեղ թեք  
առ օդաթռիչ լինելոյ։

## Գ Լ Ո Ւ Խ ԼԱ.

Յաղագս համաէամունեան ընդ լուսա-  
ծոյ՝ զոր ունել պարտիմ ՚ի բարիս  
գտնացաց։

Դամակամն լինել առ ԱՅ պարտա-  
պան եմք ոչ միայն՝ ի բարիսն՝ որ շնորհաց  
են, այլև՝ ի բարիս որ փառացն։ Ճշմա-  
րիտ ծառային ԱՅ անկ է՝ այնպէս մեկ-  
նեալ լինել յանձին շահից ևս և յայսո-  
սիկ իրս, մինչև խնդալ պարտի առաւել  
զի լնուցուն կամքն ԱՅ, քան թէ յաջո-  
ղել իւրումն օդտի։ Այս կատարելութի-  
մեծ է յոյժ, որպէս թուվմաս գեմրացի  
ասէ, ոչ խնդրել մարդոյ զիւր օգուտ՝ ոչ  
փոքու, ոչ մեծաւ, ոչ՝ ի ժամանակեայքս,  
և ոչ՝ ի յաւիտենականսն. և տայ զպատ-  
ճառն. վասն զի ասէ՝ կամք քո ՏԵՐ, և սէր  
պատուոյ քո ունին գերազանցել քան

զիրս ամենայն . և առաւել ընդ այս միսիւ  
թարիլ արժան է և հանգչել , քան ընդ  
համօրէն բարերարութիւն ընկալեալս , և  
որ լինելն կարեն :

Այս է յագուրդ և խնդութիւն Երանե-  
լեացն : Առաւել զուարձանան Սուրբքն  
յերկինս ընդ կատարումն կամացն Այ ,  
քան ընդ մեծութիւն փառաց իւրեանց .  
Այծ փոխակերպեալ նոցա , և յօդեալք 'ի  
կամս նորա , զփառան զոր ունին , զմիճակն  
գեղեցիկ որ անկաւ նոցա , ոչ այնչափ կա-  
մին սակս օդտին՝ որ անտի ծագէ ինքեանց ,  
և ոչ սակս ախորժմանն՝ զոր առնուն ,  
քան թէ զի Ած ինքն ախորժէ , և զի այն  
է կամքն ածային : Սորին վասն իւրաքան-  
չեւր նոցա այնպէս հած և խնդամիտ է  
շափովն զոր ունի , զի ոչ յառաւելն ձկտի ,  
և ոչ զարանայ թէ այլ ոք զառաւելագոյնն  
վայելիցէ : Վասն զի 'ի տեսանել ուրուք  
զած , այնպէս ածակերպ լինի , մինչզի թո-  
ղեալ զկամիլն որպէս ինքն , սկսանի կամիլ  
որպէս Ած . և զի տեսանէ թէ այն են  
ախորժանք և հաճոյք Այ , նոյն լինին և  
իւր ախորժմունք : Զսոյն կատարելութիւն  
տեսանեմք արտափայլեալ 'ի մեծամեծսն  
'ի Սբց , 'ի Մովսէս ոմն , 'ի Պօղոս ոմն , որք  
սակս հոգւոց փրկուե՞ , և յառաւելագոյն  
փառս Այ մոռացան գոզցես և անտես ա-  
րարին ղեափհական փառս իւրեանց : Մով-  
սէս ասէր առ Ած : \* Եթէ թողուս նոցա  
զմեղս իւրեանց , [թող] . ապա թէ ոչ ջրն .

շեա և զիս 'ի դպրութենէ քումմէ յոր  
գրեցեր : || ( Ելք . Ալք . 31 : ) իսկ նըն Պօ-  
ղոս , \* Ուխտիւք ինդրէի ես ինքնին նզով  
լինել 'ի Քնէ վասն եղբարց և ազգակա-  
նաց իմոց : || ( Հոռովմ . Իժ . 3 : ) Յորմէ ու-  
սաւ ապա և նըն Մարտինոս և այլք 'ի  
Սբէ , ասել . Եթէ տակաւին պիտանացու  
իցեմ ժողովրդեան քում , ոչ հրաժարեմ  
յաշխատութենէ : Սոքա յետին դասէին  
դիւրեանցն հանդիստ , կամակար հրաժա-  
րեալք 'ի փառաց անտի որ առաջի կայր  
նոցա , և դարձեալ անձնամատոյց լինէին  
'ի վաստակս , յառաւել ծառայութիւն և  
'ի փառս ԱՅ : Այս է առնել զկամս ԱՅ  
յերկրի աստ , որպէս առնի յերկինս . զի  
մոռացեալ զմեր զամենայն շահս , հաստա-  
տիցեմք զբովանդակ հաճութիւն մեր 'ի  
կատարումն կամացն այ , զեր 'ի վերոյ հա-  
մարեալ և մեծագրեալ զհաճոյս այ քան  
զբնաւ օգուտ մեր , և քան զժառանգել  
երկնից և երկրի :

Է աստանօր քաջ 'ի միտ առնուլ զկա-  
տարելութին՝ զոր պահանջէ կրթութիւնն  
համակամութե ընդ ԱՅ : Եթէ պարտ և  
արժան է անտես առնել զբարիսն հո-  
գեորս՝ և զյաւիտենականս անդամ , և զնոյն  
ինքն զփառս երկնային , ակն եղեալ 'ի հա-  
ճոյս և 'ի կամս ԱՅ , զի՞նչ մնայ առնել  
առ մարդկային շահեկանութիւնս և առ  
կարծիս : Գոյ իմանալ դարձեալ , որչափ  
տարակաց է 'ի կատարելութէ աստի՝ նա

որ դժուարի միաբանիլ՝ ի կամ ԱՅ յայն  
 իրս՝ զոր կանխաւ ասէաք. այս է՝ ՚ի լի-  
 նեն յայսմ տեղւոջ կամ յայլում, յայս  
 պաշտօն կամ յայլում, ՚ի լինել առողջ  
 կամ հիւանդ, ՚ի լինել արհամարհեալ  
 կամ մեծարոյ: Մեր բանք են՝ թէ մեծ  
 համարել արժան է զկամն և զհաճոյս ԱՅ,  
 քան որշափ ինչ գերազանցութիք իցեն ՚ի  
 բարիսն հոգեռըականս՝ ևս և յաւիտենա-  
 կանս. իսկ դու ակնկառոյց կաս ՚ի ստո-  
 րինքս յայսոսիկ, որք առ այլովքն՝ աղքե-  
 ղէնք են: Այնմ որ այնպիսի ցանկայ հա-  
 ճոյից այ և լրման կամաց նորա, մինչեւ  
 տեղի տայ յօժարուք յիւրոց փառացն,  
 և հաճի ընդ յետին տեղի՝ ոչ յաշխա-  
 տութէ խորշելով, կամ ՚ի գործելոյ զմե-  
 ծամեծս, այլ միայն զի առաւել խնդրէ  
 զհաճոյս այ, այնմ ասեմ զիւրաւ ևս յա-  
 ջողեն այլն ամենայն նախասացեալք. իբր  
 զի հրաժարէ նա յայնմ ծայրագոյն բաժ-  
 նէ՝ յորմէ հրաժարեն կարէ, յաղագս  
 սիրոյն ԱՅ: Այս է գերագոյնն այն՝ յորմէ  
 կարիցէ ոք տեղի տալ, առ ՚ի համակամ  
 ընդ ԱՅ լինելոյ: Եթէ ԱՅ կամք իցեն  
 մեռանել ինձ վաղվազակի, և ունել  
 նուազ փառս, զայս կամիմն ես առաւել՝  
 քան մեռանել յետ քսանից և երեսնից  
 ամաց, թէ և կայր ինձ ունել յայնժամ  
 մեծագոյն փառս: Եւ ընդհակառակն,  
 թէպէտ և անկասկած էի ընդ ժառանգու-  
 թի փառաց՝ մեռանելով այժմ, եթէ կա-

միցի Ած մնալ ինձ ամս բազումն 'ի բան-  
տի ասու և յաքսորանս , առաւել զայս կա-  
միմ , քան արագել 'ի փառս : Վ ամս զի  
հաճոյք այ և լրումն նորայն կամաց՝ են իմ  
հաճոյք , և իմ փառք : \* Դո՛ւ փառք իմ ,  
և բարձրացուցիչ դլխոյ իմոյ : || ( Սաղմ .  
դ . 4 : )

'Ի դէպ այսմ օրինակ ինչ գերազանց  
պատմի յաղագս նը հօրն իղնատիոսի :  
Կայր նա յաւուր միում ընդ հօրն Լայ-  
նեղեայ և ընդ այլոց , և եհարց ըստ բե-  
րելց խօսիցն ցհայրն Լայնէզ . զիարդ թուի  
քեզ առնել՝ եթէ Ած առաջի դնէր քեզ  
զայս ընտրութի . եթէ կամիս դու մեռա-  
նել առժամայն , հանից զքեզ 'ի բանտէ  
այտի մարմնոյդ , և տաց քեզ զյաւիտենից  
փառսն : Բայց եթէ կամիս կեալ այլես ,  
ոչ անկասկած առնեմ զքեզ յայն որ ընդ  
քեզ անցանիցէ , ընդ դիպուածովլ լինի-  
ցիս . եթէ կեցցես ժուժկալեալ յառաքի-  
նութե , տաց քեզ զվարձն . բայց պա-  
կասեալ քո յարդարագործութէ , դատե-  
ցայց զքեզ որպէս և գտանիցեմ : Արդ՝  
եթէ Տի ասէր քեզ զայս , իսկ դու յու-  
սայիր թէ կալով այլ ևս ժամանակ մի 'ի  
կեանս՝ ունէիր առնել մեծ ինչ ծառայու-  
թի մեծվայելութե նորա , զո՞ր յայսցանէ  
ընտրէիր , զի՞նչ պատասխանի առնէիր :  
Ետ պատասխանի հայրն Լայնէզ . խոստո-  
վանիմ Յարդութե քում , զի ընտրէի մեկ-  
նիւ վաղվաղակի առ վայելելց զԱծ , և

յապահովել զիրկութի իմ, աղատացեալ  
 'ի վտանգաց յայսպիառւմ կարևոր գոր-  
 ծառնութե : Ասաց յայնժամ նը Հայրն .  
 Ես արդարե ոչ այդպէս առնէի, այլ եթէ  
 համարէի մնալով'ի կեանս՝ մեծի խմիք ծա-  
 ռայութե : Տն լինել գործօնեայ, աղաչէի,  
 զնա՝ թողուլ զիս 'ի կեանս, մինչեւ կատա-  
 րէի զայն ծառայութի, 'ի նա կառուցեալ  
 զաշս՝ և ոչ յիս, առանց հայելոյ 'ի վտանգ,  
 կամ 'ի ստուգութի իմ: Ու համարէր նը  
 Հայրն թէ յերկբայս մնայցէ իւրն փրկու-  
 թի, այլ առաւել ևս հաստատեալ լինէր  
 և բազմաշահ, յԱծ վստահանալով՝ յորոյ  
 'ի ծառայութի յամենայր աստանօր : Վ ամն  
 զի ո՞ք այն թագաւոր կամ իշխան աշխար-  
 հի, որոյ պարգե մեծ առաջի արարեալ  
 միում 'ի ծառայիցն, և նորա ոչ կամելով  
 առժամայն յանձն առնուլ, զի կարօղ լի-  
 ցի նախ երևելի ինչ ծառայութի հարկա-  
 նել նմա, ոչ պարտ համարիցի պահել,  
 և առաւելուլ իսկ՝ զպարգեն առ ծառայ  
 այնպիսի . իբր զի նա առ սէր իշխանին  
 յետս եկաց, և վասն առաւել ծառայելոյ:  
 Իսկ արդ՝ եթէ զայս առնեն մարդիկ՝ որք  
 յոլովակի անձանազօղք են և ապաշնորհք,  
 զինչ ակնկալի իցէ յԱյ, որ կանխէ առ  
 մեզ շնորհօքն, և առնէ բարիս մեծա-  
 մեծս . զիարդ մարթէ երկնչել՝ թէ անտե-  
 սեալ թողուցու անկանիլ մեզ, որք զմեր  
 երանութին և զկայելել 'ի նմա՝ յետադա-  
 սել յանձն առաք վասն նորա . անմարիթ

է այդպիսի ինչ կարծել կամ երկնչել  
յայնպիսոյ Տեառնէ :

### Գ Լ Ո Ւ Խ ԼԲ.

Յաղագս համակամութե և դաւորութե ,  
և հատարեալ սիրոյն առ Ա սպուտն ,  
և զիարդ մարզի պարս է մէջ յայս  
իբրութեան :

Որպէս զի լաւ ևս 'ի միտ առնուցումք  
զկատարելութին , և զգերազանցութիւն՝  
որ գանձեալ կայ 'ի կրթութեան համա-  
կամութեանն ընդ Այ , և զի դիտասցուք՝  
ցոր վայր ժամանել կարենմք նովաւ , առ 'ի  
բովանդակումն առաջիկայ ճառիս՝ ասաւ  
ցուք ինչ ինչ յաղագս բարձր կրթութե  
սիրոյն Այ , զոր աւանդեն Սուրբքն , և  
վարժիչք հոգեոր կենաց . որ և կարի ան-  
կաւոր թուի տեղւոյս . որովհետեւ մի յե-  
րեելի ներդործութեց սիրոյ , ըստ ասացե-  
լումն սբյն Դիոննեսիոսի արիսպագուոյ ,  
է 'ի մի յօդել զկամս սիրելեաց . և իմանի  
ասել , թէ ունին զմի զնոյն կամիլ և չկա-  
միլ : Ուստի որչափ ոք միացեալ և համա-  
կամ է ընդ Այ , նոյնչափ մեծագոյն սէր  
առ նա ունիցի . և անզրագարձեալ , որ-  
չափ մեծագոյն իցէ սէրն , նոյնչափ առա-  
ւել միացեալ և միակամ ընդ Այ լինիցի

այնպիսին : Բացայացոտագոյն ևս զայն  
ասել, պիտոյ է յերկինս վերաբերիլ խո-  
հրդով, և տեսանել զիարդ կան անտանօր  
երանեալք, սիրելով զԱծ, և 'ի կամս նորա  
յարելով, միով կամօք և միով կամողու-  
թե՛ ընդ նմա . զի որչափ հուպ մատչիմք  
յայս, նոյնչափ կատարեալ լիցի կրթու-  
թիւն մեր :

ՄԵծ առաքեալն և աւետարանիչ նըն  
Յովշաննէս ասէ յառաջին կաթուղիկէ  
թղթին ( է. 2 . ) թէ տեսութին այ զե-  
րանելիսն առնէ ածանմանս . \* Զի յոր-  
ժամ նա յայտնեսցի, նման նմա լինելոց  
եմք . զի տեսանելոց եմք զնա որպէս և էն: ||  
Վասն զի անդէն 'ի տեսանել նոցա զԱծ,  
այնպէս միանան և փոխարկին 'ի նա , զի  
լինի նոցա մի կամք և մի կամիլ ընդ նմա :  
Արդ՝ տեսցուք վայր մի, որ իցէ կամիլ և  
կամք և սէր ԱՅ . զի ըստ նմին տեսանել  
կարիցեմք՝ որ է երանելեացն կամիլ և  
կամք , յորմէ և խմաստասիրել՝ որ լինե-  
լոց է և մեր կամելն , սէրն , և կամքն կա-  
տարեալ: Կամիլ ԱՅ , և կամքն և սէրն  
ծայրագոյն և ամենակար՝ է առ բուն իւ-  
րական փառքն , և առ իւրն էութի ծայ-  
րագոյնս կատարեալ և փառաւորեալ :  
Եւ ահա սոյն այս է և երանելեացն կա-  
միլ , կամք և սէր . մինչ զի սէր Արբոց և  
Երանելեաց՝ է սէր և կամիլ , որով սիրեն  
և կամին յամենայն դօրութե՛ իւրեանց՝ զի  
Ած իցէ այն որ է , և իցէ յինքեան այն:

շափ բարի, այնշափ փառաւորեալ, և այն-  
շափ պատուոյ արժանի, որչափ իսկ է. և  
զի տեսանեն յԱծ զամենայն որում ցան-  
կան. ներգործի առ նօսա պտուղ հոգւոյն  
սրյ՝ զոր առ աքեալ ասէ : \* Իսկ պտուղ  
հոգւոյն՝ խնդութիւն : || (Գաղատ . Ե . 12:)  
այն է խնդութիւն անձառելի՝ տեսանել զի  
զոր յանշափս սիրեն, լի և պատարուն է  
բարեօք և մեծութիւն ինքնաբար :

Այնուիկ որ առ մեօք տեսանի, կարո-  
ղանամբ հետաքննել ինչ զածային զայնմ  
խնդութիւն՝ զոր երանեալըն կրեն յանձինս  
Հայեաց՝ քանի մեծ խնդութիւն է որդւոյ բա-  
րեխրատի, յորժամ տեսանիցէ զիւր զբաղ-  
մասիրելին հայր՝ մեծապատիւ լեալ և փա-  
րելի ամենեցուն, իմաստուն, ճոխ, հզօր,  
պատուական և սիրելի Առքային . Են են  
արդարե որդիք բարեսէրք, որք ունին ա-  
սել թէ չիք ինչ զուգահաւասար խնդու-  
թեն՝ զոր խնդան ՚ի տեսանելն զհայրն իւ-  
րեանց յայնքան մեծարանս : Արդ՝ եթէ  
առ մեղ այսշափ մեծ է խնդութիւնս, ուր  
սէրն է կարի անզօր, և բարիքն՝ անարդա-  
գոյնք, որպիսի եղիցի Արբոցն խնդութիւն  
՚ի տեսանել անդ զՃշմարիտ Տէր իւրեանց,  
զԱրարիշ և զՃայր երկնաւոր, յոր և փո-  
խակերպեալն են սիրով, տեսանել ասեմ  
զնա ծայրացեալ բարութիւն և սրբութիւն,  
ամենագեղեցիկ, յանբաւս կարօղ՝ մինչեւ  
կամելով նորա և եթ ամենայն ինչ ունի  
զգոլն և զվայելչութիւն, և առանց նորա ոչ

և տերև մի ծառոյ շարժիլ կարօղ է։ Ուստի ասաց նքն Պօղոս, [թէ այնպիսի մեծ է այս խնդութի, զի ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ։ և ոչ՝ ի սիրտ մարդոյ գոյ անկանիլ։ Սա է գետն արդաւանդաբեր՝ զոր նքն Յովհաննէս ետես՝ ի Յայտնութեանն։ (իբ. 1. ) Ելեալ յաթուոյն Այ և գառինն, որ զուարթացուցանէր զքաղաքն այ. յորմէ ըմպեն Երանեալք յերկինս, և արբեցեալք սիրով երգեն զանլուելի Ալելուն՝ զոր նքն Յովհաննէս ասէ, փառաւորելով և օրհնելով զԱծ. \* Ալելուիա, զի թագաւորեաց Ած ամենակալ։ Խնդամք և տամք փառս նմա։ || (ժթ. 6. 7. ) Կան զուարթացեալք, և տօնախմբեն ընդմեծութի փառացն այ, խնդակից նմա լինելով մեծապէս ցնծութէ։ \* Օրհնութի և փառք և խմատութի և գոհութիւն և պատիւ և զօրութի և շնորհք տն այ մերոյ յաւիտեանս յաւիտենից. ամէն։ || (է. 1 2.)

Այս է ահա առ ած սէր Արբոցն յերկինս, և այս միաւորութի և համակամութի զոր ունին առ Ած, խօսելով ըստ փոքրիմաց մտաց մերոց։ Ապա սոյն է՝ զոր և մեք յերկրի աստ ունիմք նկարադրել յանձինս ըստ տանելոյ մեր. որպէս զի կատարեսցին կամք այ յերկրի, որպէս լինին յերկինս. \* Զգոյշ լեր, որպէս ցուցաւ քեզ օրինակ՝ ի լերինն՝ արասցես. || (Ելք. ին. 40. ) ասաց Ած առ Մովսէս՝ յորժամ հրամայեաց նմա առնել զիսո.

ըանն։ Այսպէս և մեղ առնել արժան է զամենայն շորինակի այնք՝ որ լինի՝ ի բարձրագաղաթն լերին անդ փառաց։ ուստի պարտիսք սիրել և կամել զայն՝ զոր Երանեալքն յերկինս սիրեն և կամին, և զոր նա ինքն Ած սիրէ և կամի։ որ է բուն իսկ նորա փառքն, նորայն էութիւն ամենակատար և գերափառ։

Այլ զի լաւ ևս կարիցէ այր իւրաքանչիւր՝ ի գործ արկանել զայս, դիցուք համառօտ խրատ կրթութես։ Յորժամ կաս յաղօթս, խորհեաց զանսահմանելի գոյն Այ, զյաւիտենականութիւն նորա, զամենակարութիւն, զանբաւ զնորա զիմաստութիւն, զգեղեցկութիւն, զփառսն և զերանութիւն։ և զարթող զկամս քո՝ ի ինդալ,՝ ի բերկրիւ, յախորժել և ՚ի քաղցրանալ՝ զի Ած է որ ինչ էն, և զի Ած է։ զի ինքնաբար ունի զգոյն, և զանսահման բարին։ զի ոչ ումեք ունի պէտս, այլ ամենայնք նմին կարօտին։ զի ամենաղօր է, և բարի և սուրբ և ամենափառ, որչափ է ինքնին։ այսպէս և յայլ կատարելութիւն և ՚ի բարիս անչափս՝ որ են յԱծ։

Այս է՝ ըստ ասելոյ սբեյն Թոռվմայի և ածաբանից՝ զերագոյն և առաւել կատարեալ ներգործութիւն ածսիրութեն, որով և առաւել բարձր և զերաղանց կրթութիւն համակամութեն առ ած։ Վասն զի չէ և չէ առաւել մեծ և կատարեալ սէր այ քան զայն՝ որով ինքն Ած բերի առ ինքն,

առ իւր փառսն , և առ իւր ամենակատար  
և հրաշափառ իսկութի . և ոչ մարթի լի-  
նել կամք լաւագոյն քան զայս : Վ ասն  
որոյ այնշափ լաւ և կատարելագոյն լինիցի  
մեր մեր , որչափ համանման լինիցի սիրոյն՝  
որով Ած սիրէ զինքն . և նոյնչափ մեծա-  
գոյն և կատարեալ եղիցի միաւորութիւն  
մեր և համակամութիւն ընդ այ : Եւ  
դարձեալ , ըստ ասելոյ իմաստասիրաց՝  
սիրել զոք՝ է կամիլ և ցանկալ նմա բա-  
րի . որում զիետ գայ՝ զի որչափ առաւել  
բարիս ըղձանամք ումիք , այնշափ առա-  
ւելապէս սիրեմք զնա : Արդ՝ բարին մեծա-  
գոյն զոր ցանկալ կարեմք այ , է այն զոր  
ունի , այսինքն է՝ գոլն անսահման , բարու-  
թիւն նորա , իմաստութի , ամենազօրու-  
թի և փառքն անսահման :

'Ի սիրել մեր զարարած ոք , ոչ միայն  
ախորժենք զբարին զոր ունի , այլ կարեմք  
ցանկալ նմա և զայլ ինչ բարի՝ զոր դեռ  
չունի նա . զի ստեղծուածոց մարթ է  
աճումն առնուլ : Բայց առ Ած անմարթ-  
է ցանկալ նմին զբարի՝ զոր նա չունիցի ,  
բովանդակ անսահման գոլովնորա . որով  
ոչ մարթ է ունել յինքեան մեծ ևս կա-  
րողութի , մեծ ևս փառս , մեծ ևս իմաս-  
տութի , մեծ ևս բարութի քան զայն՝ զոր  
ունի : Ուստի ինդան մեր , բերկրիլն ,  
հաճիլն , ախորժելն՝ զի Ած ունի զնոյն բա-  
րիս , և զի է որչափ և էն՝ բարի , ճոխ , հզօր ,  
անսահման , և փառաւորեալ , է մեծա-

գոյն բարին՝ զոր կարեմք ըղձանալ նմա ,  
որով և սէրն մեծադոյն՝ զոր առնա ունել  
մարթ իցէ :

Ապա ուրեմն , որպէս Առւրբքն յերկինս  
և ամենանը Մարդկութիւն Քնի փրկչին  
մերոյ , և փառաւորեալ Կոյս թադուհին  
մեր , և համօրէն Հրեշտակաց դասակար-  
գութիք զուարձանան՝ 'ի տեսանելն զԱծ ,  
զամենադեղեցիկն , զդերածայրեալն բա-  
րեօք . և այնչափ մեծ է խնդութիւնն և  
հրձուանքն եղեալ 'ի նոսա , մինչ զի հա-  
ճոյք նոցա են առատանալ 'ի գովեստ այն-  
պիսոյ Տեառն , և ոչ յագենան 'ի գովե-  
լոյ և յօրհնելոյ յաւիտեան , ըստ մարդա-  
րէին ասելոյ . \* Երանի ամենեցուն որ  
բնակեալ են 'ի տան տեառն . յաւիտեանս  
յաւիտենից օրհնեցեն զքեղ : || ( Ապմ .  
Ճի . 5: ) Այսպէս և մեղ արժան է լծոր-  
դել զսիրոս , և զմեր ձայնս ամբառնալ  
ը երկնաւորացն . որպէս և եկեղեցի նբ ու-  
սուցանէ յաղօթս Պատարագին . \* Ընոր-  
հեաց մեղ ընդ երկնայինսն պարել զհո-  
դեղէն պարս , և ընդ սերովեէմն և ընդ  
քերովեէս միաձայն սրբասացութե յօրի-  
նել նուազս , և համարձակակապէս գոշելով  
աղաղակել և ասել . Աբ , Աբ , Աբ , տէր  
զօրութեց , լի են երկինք և երկիր փառօք  
քո : ||

Պարտ է մեղ հանապաղ , կամ որչափ  
յաճախ կարօղ իցեմք՝ պարապել 'ի գո-  
վուի և 'ի փառատրութի Այ , խնդալ և

և բերկրիլ ընդ բարին , ընդ փառան և ընդ  
տէրութին զոր ունի . և խնդակից ընդ  
նման լինել . և այսու օրինակաւ զնմանու-  
թի ինչ բերիցեմք յերկրի աստ առ Երա-  
նելիւն , և առ նա ինքն Ած , տանելով  
յանձինս զևս վսեմական սէրն , և զյաւէտ  
կատարեալ համակամութին առ Ած , որ-  
չափ մարթ է ունել :

### Գ Լ Ո Ւ Խ Լ Գ .

Ուշտ յաճախ աւանդեն մէջ Գերք սբ  
պէրթութիւն զայս :

**Յ**աճախ աւանդելով , և ստէպ 'ի դէմն  
բերելով ածային գրոց զկրթութիւն զայս ,  
կայ քաջ ձանաշել մեղ զյարդ նորա և  
զգերազանցութի , և թէ որչափ հաճոյա-  
կան իցէ այ . և միանգամայն նիւթ առ-  
նուցումք աստի առ 'ի կրթելոյ զմեղ , և  
'ի նոյն կանխել : Աբքայ Դաւիթ յամե-  
նայն բանս սաղմոսացն յայս կրթուի հրա-  
ւիրէ զմեղ ասելով . \* Ուրախ լերուք և  
ցնծացէք արդարք 'ի տոր . պարծեցարուք  
ամենեքեան ոյք ուղիղ էք սրտիւք : || ( լա .  
11: ) \* Ցնծացէք արդարք 'ի տոր : || ( լի . 1: )

Այս է աղօթք՝ յորում առանց հայցե-  
լու խնդրէք , և ած լսէ ցանկութեան սրտի  
ձերոյ . վասն զի կարի հաճոյական է այս

նմա : Եւ նը առաքեալն Պօղոս զրելով  
 առ Փիլիպեցիս ասէ . \* Ուրախ լերուք՝ ՚ի  
 տր յամենայն ժամ . || և համարելով իմն  
 թէ ոչ բաւական է միանդամ ևեթ ասել  
 զլրատս, վերստին առնու . \* Դարձեալ  
 ասեմ, ուրախ լերուք : || ( դ . 4: ) Այս  
 այն ցնծութիւն է՝ զոր յանձին կրեաց ամե-  
 նանք Կոյսն, ասելով յերգս իւր . \* Ցնծա-  
 ցաւ հոգի իմ յԱծ փրկիչ իմ : || Եւ նա  
 ինքն Ք՛ փրկիչ մեր զսոյն խնդութիւն և  
 զուարժութիւն եցոյց յասելն ըստ աւե-  
 տարանին . \* Ցնծացաւ հոգւովն սրբով : ||  
 ( Ղուկ . Ժ . 21 : ) Իսկ մարգարէն Դա-  
 ւիթ վկայէ թէ այնչափ մեծ խնդութիւն  
 յանձն իւր ընդունէր, խորհելով քանի  
 մեծ է բարութիւն և փառքն Այ, և որչափ  
 արժան է խնդալ ամենեցուն ընդ անբաւ  
 բարութիւնորա, մինչև յառատութէ ան-  
 տի հոսէր խնդութիւնն ՚ի սիրտ նորա, և  
 զմարմինն անդամ բորբոքէր ՚ի սէրն Այ .  
 ասելով . \* Սիրտ իմ և մարմին իմ ցնծաս-  
 ցեն առ Ած կենդանի : || ( Սաղմ . ձկ . 5: )  
 Եւ այլուր ասէ . \* Այս անձն իմ ցնծաս-  
 ցէ ՚ի տր . ուրախ եղեցի ՚ի փրկութեն նո-  
 րա . և ամենայն ոսկերք իմ ասասցեն .  
 Տէր ո՞ նմանի քեզ : || ( Լդ . 10: )  
 Եւ զի այսչափ ածային և երկնային է  
 այս սէր, նմին իրի և Եկեղեցի առաջ-  
 նորդեալ ՚ի հոգւոյն սբէյ՝ յաճախ յեկե-  
 ղեցական պաշտամունս ՚ի կիր առնու  
 զայսպիսի բանս, որպէս և զայն . Սաղ .

Աղ. 1. \* Եկայք ցնծասցուք՝ ի տըր . աղազակեսցուք առ ած փրկիչ մեր : Կանխսեցուք առաջի նորա խոստովանութեամբ . սաղմոսիւք աղազակեսցուք առ նա : Ած մեծ է . թագաւոր մեծ՝ ի վերայ ամենայն երկրի : Նորա է ծով . || և այլն : Սակա այսր պատճառի և՝ ի նոյն խորհուրդ՝ յաւարտ ամենայն սաղմոսաց յարէ եկեղեցի զֆառք հօրն : Մոյն է և մոտանելն յուրա խութի տն , զոր Ք՛ ասաց յառակ ծառայիցն : ( Մատթ . ին , 22 : ) Այս է բաժանորդ լինել անսահման խնդութեանն ԱՅ , և կալ համազուարձ ընդ նմին իսկ ԱՅ յաղագս անսահման փառաց իւրոց , գեղեցկութեն , և մեծութե :

Առ յաւէտ ևս յօժարելոյ մեղ՝ ի սոյն կրթութի , և ջան դնել հանապաղ յայս խնդութի , կարի զօրաւոր է զմոտաւ ածել թէ որչափ բարի է Ած , որչափ գեղեցիկ , որչափ փառաւորեալ : Նախնքն է այս ամենայն գերաստիձան չափով , մինչև լոկ տեսանելն՝ երանելիս առնէ զտեսօղսն . և ելթէ մատնեալքն՝ ի դժոխս տեսանել կարող էին զԱծ , գաղարէր՝ ի նոսա ամենայն պատիժ , և դժոխքն փոխադրէին նոցա՝ ի դրախտ : Նախնքն Ք՛ ասէ . \* Այս են յաւիտենական կերանք , զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Ած : || ( Յովհ . ժէ . 3 : ) Այս է որ զսուրբսն երանացուցանէ՝ ոչ զմի օր , և ոչ զմի ամ , այլ յաւիտեան . և ոչ բնաւ յագեսցին՝ ի տեսանելոյ զԱծ ,

այլ միշտ նոր է նոցայն խնդութիւն, ըստ  
ասելոյ սբյն Յովհաննու ՚ի Յայտն . (ժկ. 3.)  
\* Եւ երգէին զերդս նորս : ||

Թուի ապաքէն, թէ այսու բացայայ-  
տեալ ճանաչիցի անբաւ բարութիւն, վայել-  
չութիւն և կատարելութիւն Այ. սակայն  
գոյ և զառաւելն յաւելուլ : Այնչափ դե-  
ղեցիկ է Ած և փառաւորեալ, զի նա ինքն  
Ած է երանելի զիւր ինքն տեսանելով :  
Փառք և երանութիւն Այ է տեսանել՝ և սի-  
րել զանձն իւր : Տես արդ՝ եթէ չունի-  
ցինք իրաւունս խնդրաւ և բերկրիւլ ընդ  
բարութիւն, ընդ վայելչութիւն, և ընդ փառա-  
այսչափ մեծահրաշ, որ ուրախ առնէ զբո-  
վանդակ Քաղաքն Այ, և զերկնաբաղա-  
քացիսն համբուն երջանկացուցանէ . և  
նա ինքն Ած իւրովն իսկ ճանաչելով և սի-  
րելով երանելի է :

### Գ Լ Ո Ւ Խ Լ Դ.

Օ էտրդ Տարին է ընդարձակէլ մէջ 'է  
իր լուսելու անս յայսմ :

**Ա**նիմք մեք նաև մարդկապէս իմն վա-  
րիւլ յայսմ կրթութեան, ՚ի կիր արկեալ  
զսէրս զայս առ ամենանը Մարդկութիւն  
Քնի Տե մերոյ, ածեալ զմտաւ զնորայն  
գերազոյն արժանաւորութիւն և զկատա-

բեղութիւն, հաճելով և քաղցրանալով՝ ի  
 նոյն, ցնծութե՛ տօնս կատարելով այնու՝  
 զի երրերգելի Մարդկութիւն Քնի կայ վե-  
 րառեալ և յօդեալ ընդ ածայնոյ Անձին,  
 լի և պատարուն շնորհօք և փառօք, դոր-  
 ծարան ածութե՛ն եղեալ առ ՚ի կատարե-  
 լոյ մեծամեծո՞ զարբարարութիւն . և զփա-  
 ռաւորութիւն համօրէն ընտրելոց, և զա-  
 մենայն պարգևս և զնորհս գերբնականս՝  
 որք մասնաւորին առ մարդիկ : Խնդալ և  
 ցնծալ միանգամայն ընդ այնոր ամենայնի՞  
 որ անկն է ՚ի կատարելութիւն և ՚ի փառս  
 ամենահրաշ Հոգւոյ և գերամաքուր Մար-  
 մեոյ Քնի փրկչին մերոյ, յայս պարապեալ  
 կաթողին սիրով և հրձուանօք, ըստ օրի-  
 նակին՝ զոր նը վարդապետքն խորհրդածեն  
 յաղագս ամենանը թագուհւոյն հրեշտա-  
 կաց, թէ զիարդ ցնծացաւ յաւուր յա-  
 րութե՛ ՚ի տեսանել զիւրն Որդեակ ցան-  
 կալի՝ այնպէս յաղթանակեալ և փառա-  
 ւոր, ոչինչ ընդհատ զոր վասն Յակոբայ  
 նահապետի պատմէ ածային դիրն, թէ ՚ի  
 լսել անդ զՅովսեփիայ որդւոյ իւրմէ լինել  
 կենդանի, և տիրել ամենայն երկրին ե-  
 ղիպտացւոց, այնչափ ցնծացաւ՝ մինչև  
 արծարծիլ ոգւոյ նորա և ասել . մեծ է-  
 ինձ, եթէ որդի իմ Յովսէփի կենդանի իցէ-  
 նչ այլ կամիմ՝ բայց տեսանել զնա . և մե-  
 ռայց այսու սրտիւ զուարծացելով :

Զսոյն զայս կրթութիւն մարթ է ՚ի կիր  
 առնուլ ՚ի վերայ փառաւորութե՛ ամենե-

բանեան Կուսի Տիրուհւոյս մերոյ , և այս  
լոց Սրբոց . և է պաշտօն դովելի՝ 'ի տօնս  
նոցա պարապեցուցանել յայս կրթութի  
զմասն ինչ աղօթիցն : Վ ասն զի այս լինիցի  
գործ մեծի յարգութե՛ զօր առնել նոցա  
կարօղ եմք . իբր զի առաւելագոյն սէր առ  
նոսա ընծայելի՝ է կամիլ և ցանկալ նո-  
ցա զմեծագոյն բարին՝ զոր ունիլ կարեն ,  
և խնդալ ընդ մեծ փառս նոցա , և կալ  
խնդակից նոցին . որպէս և Եկեղեցի զոյն  
կրթութի առաջի առնէ 'ի տօնախմբու-  
թիս Աբեց , և 'ի պաշտամունս . ըստ որում  
երգէ և 'ի փոխման Տիրամօրն . \* Այսօր  
յուսապատար խնդութե՛ և յաւէժաբար  
հնչմամբ նուազեմք քեղ հողեղէնքս ընդ  
հրաբուն սեռիցն , տօնախմբելով զիշա-  
տակ կուսի աղախնոյ և մօր քո : Այսօր  
և մանկունք եկեղեցւոյ ուրախութե՛ տօ-  
նեն յերկրի զփռխումն Կուսին յերտսա-  
ղէմ քաղաքն վերին : ||

Կայ և միւս ևս բարի և օգուտ մեծ 'ի  
պաշտամանս յայսմ առ Առւրբսն , և մա-  
նաւանդ առ ամենանք Մարդկութիւն  
Քնի Տն մերոյ . և այս է , զի սովոմբ ա-  
ռաջնորդի մարդ բարձրանալ առ սակաւ  
սակաւ և մոտանել 'ի զերագոյն կրթու-  
թիս Ածութեն : Քանզի որպէս Քն ինք-  
նին ասէ , նաև է ճանապարհ և դուռն  
մոտանելոյ առ Հայր : Կաև 'ի կրթութես  
յայսմ 'ի կիր արկեալ առ ած իբր Ած-  
դոն իւրն աստիճանք . և կարօղ եմք մարդ-

կօրէնս իմն վարիլ և յայսմ, զլիջանելովլ' ի  
ստորայինքս : Զի թէն ճշմարիտ է թէ-  
անսահման դոլով Այ, անաձեղին է յին-  
քեան, որով չկարեմք ցանկալ նմա բարի-  
ինչ զոր չունիցի, սակայն մարթ է մեծա-  
նալ նմա արտաքուստ 'ի ստեղծուածքս,  
լինելով առաւել ճանաչեալ, առաւել  
սիրեցեալ, առաւել փառաւորեալ յեղե-  
լոցս. և ահա զայս սէր 'ի կիր առնուլ  
կարօղ եմք, ըղձանալով Այ զայս բարի  
արտաքին :

Վասն որոյ խոկալով հոգւոյն յաղօթս  
թէ քանի արժանաւոր է Աչ սիրոյ և ծա-  
ռայութե արարածոց, ունիմք ըղձանալ  
զի ամենայն ոդի ստեղծեալ կամ ստեղծա-  
նելին զնա ծանիցէ, զնա սիրեցէ, և զնա  
փառաւորեցէ յամենայնի : Ո՞ Տէր, ո՞  
տայր դառնալ ամենայն անհաւատից և  
մեղաւորաց աշխարհի . և ոչ ոք զքեղ ա-  
նարդէր, այլ ամենեքին հնազանդէին, և  
քեղ լինէին պաշտօնատարք այժմ և յա-  
ւէրժ : \* Սուրբ Եղիցի անուն քո : Ամե-  
նայն երկիր երկիր պազցեն քեղ . սաղմոս  
ասասցեն քեզ . և սաղմոս ասասցեն անու-  
ան քում : || (Սաղմ. կե. 4 : ) Եւ աստա-  
նօր ունիմք անցանել խորհրդով ընդ բաղւ-  
մապատիկ եղանակս ծառայութեց և մե-  
ծարանաց՝ զոր արարածք կարեն ընծայել  
Այ, և 'ի նոյնս ցանկալ : Զհետ այսր  
իջանել ապա իւրաքանչիւրում 'ի ցանկալ  
և 'ի ջանալ կատարման կամացն Այ յայն

գործ օր ինքեան անկանի . վոյթ տարեալ  
առնել միշտ զայն ամենայն՝ զոր ճանաշէ  
ընել ըստ կամաց այ , և 'ի մեծ փառս նո-  
րա . ըստ որում Քն փրկիչ մեր ասէր վասն  
իւր . \* Զի ես զհաճոյս նորա առնեմ հա-  
նապաղ : || ( Յով . ը . 29 : ) Քանդի որ-  
պէս աւետարանիչն ասէ նբն Յովհաննէս ,  
\* Որ ասիցէ թէ ծանեայ զնա , և զպա-  
տուիրանս նորա ոչ պահիցէ , սօւտ է , և  
Ճշմարտութի 'ի նմա ոչ գոյ : || Եւ զլնչ  
ապա . \* Իսկ որ պահէ զբան նորա , ար-  
գարե 'ի նմա է կատարեալ սէրն Այ : ||  
( ա . Յով . ը . 4 : )

Արդարե առ 'ի սիրել զլնչ , և զան-  
թերի համակամութի առ նա ունել չէ  
բաւական թէ քաղցրացի մարդ ընդ բա-  
րիս այ , և ցանկանացէ զի արարածք ա-  
մենայն զնա սիրեացեն և փառաւորեացեն .  
այլ պիտոյ է՝ զի ինդն իսկ անձնատուր  
լինիցի համակ 'ի լրումն կամացն այ : Եւ  
այս է սէրն այն՝ զոր 'ի կիր առնու հոգին ,  
յորժամ յաղօթս անդ հաստատէ իւր ա-  
ռաջադրութիս , և Ճշմարիտ բաղձանս  
կատարելոյ զկամն այ յայս ինչ և յայն  
գործ , և յամենայն որ և դիպիցի . և այս  
է կրթութիւնն՝ զոր յաղօթս կատարեմք  
սովորաբար :

Ասացելովքս բացաք առաջի դաշտ ըն-  
դարձակ , որպէս զի յաղօթել մեր կարի-  
ցեմք պարապիլ յերկար 'ի սոյն կրթու-  
թի . զորոյ զմեծ պիտանութիւն և զկա-

տարելութիւն բացայայտեցաք։ Ոչ այլ ինչ  
մնայ՝ բայց ձեռն՝ ի գործ արկանել, և յեր-  
կրի աստ զփորձ առնուլ ներգործութեցն,  
զորս ունիմք ապա կատարել յերկինս յա-  
ւերժաբար, մեծաշահ արդեամբք և առա-  
ւելութեա։ Աստանօր է արծարծել՝ ի մեզ  
հրոյ սիրոյն Այդ, բայց վառումնն, և բար-  
ձրութիւն և կատարելութիւնորա լինիցի  
յերկնաւորն երուսաղէմ, որ փառքն է  
յաւիտենից։

Շատ յորդուածի և սապարչի գրոց :

Երկրածին մարդ անկայուն  
բերեալ 'ի թերս բաղդի .  
Ընդ փորձ անցի՝ շարին բարւոյն  
իբր յեւեհծս 'ի դաղթի :

Ուր ճոխութիւն՝ և ուր պատիւ ,  
կամ հակառակըն շարժին .  
հոլովեցայ որպէս յանիւ ,  
և ոչ միով կալ յոտին :

Զի՞քեղ անձն իմ, զի՞տագնապիս  
ասեմ 'ի ծուփս աշխարհի .  
թէ ոչ յանշարժ 'ի սիւն կապիս ,  
զիարդ քո սիրտ խաղաղի :

Հաւատոյ զաշդ 'ի վեր կառո ,  
ահա Ած իմ տեսուչ .  
որ ինչ դմնեայ՝ որ ինչ արգոյ ,  
նորին կամաց վայելուչ :

Եթէ գըրովք , թէ 'ի փորձոյ ,  
զայդ գիտացի անկասկած .  
յաղքատ գոյից զայս գըրածոյ  
թողում արձան ընկերաց :



# ՅԱԽՅԱԿ

ԳԱՅԻՆ ՇԱԽՅԱՀԵՐՊՈՆՑԵԱՆ :



ԳԼ. Ա.	Ըստաջարկութիւն երկուց գլխաւոր հիմնաց :	9
ԳԼ. Բ.	Առաւել բացայայտի երկ- րորդ հիմն :	17
ԳԼ. Գ.	Յաղագս մեծամեծ բարեաց և շահից՝ որք գանձեալ կան 'ի համակամութե ընդ Աստուծոյ :	24
ԳԼ. Դ.	Կատարեալ համակամութիւն ընդ Աստուծոյ՝ է միակ երջոն- կութե յերկրի աստ :	30
ԳԼ. Ե.	Հանդիմու սրտի յԱԾ միայն գտանի, և որոք յայլ իրս խնդրի- ցէ զայն, չէ կարօղ ունել զհան- գիստ ճշմարիտ :	38
ԳԼ. Զ.	Բացայայտի այլով ևս օրիւ- նակաւ՝ զիարդ համաձայնին ընդ կամացն Աստուծոյ դործէ զհա- ճութիւն սրտի :	47
ԳԼ. Է.	Յաղագս այլոց բարեաց և սպասկարութեց՝ որք կան 'ի հա- մակամութե ընդ Աստուծոյ :	55
ԳԼ. Ը.	Հաստատի օրինակօք ինչ որ- չափ հաճոյ իցէ Աստուծոյ կրթու- թե համակերպութե կամաց նորա, և կատարելութիւն մեծ որ 'ի նմա :	61

274

ԳԼ. Թ. • Յաղագս իրաց ինչ ողք հեշ  
տին և քաղցր գործեն մեզ զկր-  
թութեն համակերպութեն ընդ կա-  
մացն Աստուծոյ :

65

ԳԼ. Ժ. • Յաղագս հայրական և մասնա-  
ւոր Կախախնամութեն Աստուծոյ առ  
մեզ, և յաղագս որդիական ապաւի-  
նութեն զոր ունել պարտիմք առնա :

72

ԳԼ. ԺԱ. • Յաղագս տեղեաց ինչ և  
օրինակաց նր գրոց՝ որովք օդնիմք  
ստանալ զայս մտերմութեն և զոր-  
դիական վստահութեն առ ԱՃ :

82

ԳԼ. ԺԲ. • Թէ որչափ օդտակար և  
կատարեալ է յարել զաղօթսն ընդ  
կրթութեն համակամութեան ընդ  
Աստուծոյ . և զիարդ պիտոյ է  
իջանել յիրս մանունս, մինչև ժա-  
մանել յերրորդ աստիճան համա-  
կամութեան :

98

ԳԼ. ԺԳ. • Յաղագս պատրաստակա-  
նութեն և համակամութեն առ ԱՃ,  
զոր կրօնաւորի ունել պարտ է առ  
'ի գնալ և կաք յոր և իցէ կողման  
աշխարհի՝ ուր հնազանդութիւնն  
առաքեսցէ զնա :

107

ԳԼ. ԺԴ. • Յաղագս անզանազանու-  
թեն և համակամութեն ընդ Աստու-  
ծոյ, զոր ունել պարտ է կրօնա-  
ւորին յորում և իցէ պաշտաման  
և պարապման՝ յոր հնազանդութիւնն  
գնել կամիցի :

127

ԳԼ. ԺԵ. • Յաղագս համակամութեն  
ընդ Աստուծոյ, զոր ունել պարտ  
է մեզ ըստ բաշխման բնաւորական  
ձրից և պարգևաց :

127

- ԳԼ. ԺԶ. Յաղագս համակամութեն  
ընդ Աստուծոյ՝ զոր պարտ է մեզ  
ունել 'ի հիւանդութիւնս : 139
- ԳԼ. ԺԷ. Թէ չէ պարտ ապաստա-  
նիւ մեզ 'ի բժիշկս կամ 'ի գեղո-  
րոյս, այլ յԱծ . և զի պարտիմք  
միարանիւ ընդ կամաց նորա՝ ոչ  
միայն ըստ հիւանդութեն, այլև ըստ  
ամենայն իմեք՝ որ պատահեն յայնմ : 147
- ԳԼ. ԺԸ. Հաստատի որ ասացաւն՝  
օրինակօք ոմամբք : 154
- ԳԼ. ԺԹ. Յաղագս համակամութեն  
առ Ած, զոր ունել պարտ է մեզ  
'ի մահու՝ որպես և 'ի կենդանութեն : 163
- ԳԼ. Ի. Յաղագս պատճառաց ինչ և  
հաւանութեց՝ որովք մարթ է մեզ  
ցանկալ օրինաւոր մահուան, և  
այն՝ գովութիք : 169
- ԳԼ. ԻԱ. Հաստատի որ ինչ ասա-  
ցաւ՝ օրինակօք ոմամբք : 183
- ԳԼ. ԻԲ. Յաղագս համակամութեն  
ընդ Աստուծոյ՝ զոր ունել պարտ  
է մեզ 'ի հասարակաց վիշտս և 'ի  
թշուառութիս որք հասանեն : 191
- ԳԼ. ԻԳ. Յաղագս եղանակի ինչ՝  
որով մեծապէս զօրանամք տանել  
բարիոք և համակամութեամբ առ  
Ած զտառապանս առանձինս և  
հանրականս՝ զոր Տիր առաքէ մեզ,  
այն է՝ ճանաչել զմեզս մեր և  
զզանալ : 198
- ԳԼ. ԻԴ. Յաղագս համակամութեն  
առ Ած զոր պարտ է ունել մեզ 'ի  
ցամաքութեն և 'ի տրտամութեն որ  
յազօթս . և թէ զինչ իմանամք

276

անուամբքս՝ ցամաքութեն և տրտ-  
մութիւն :

201

ԳԼ. ԻԵ. Լուծումն տրտնջանաց նո-  
ցա՝ որք յազօթս կրեն զցամա-  
քութեն և զտրտմութեն :

216

ԳԼ. ԻԶ. Զիանդ մարթ իցէ փո-  
խարկել յընտիր և յօգտակար  
աղօթս՝ զցամաքութիւն, և զտր-  
մութիս և զդառնութիւնն :

223

ԳԼ. ԻԵ. Յաղագս այլոց պատճա-  
ռաց որովք ունիմք մխիթարիւ և  
միաբանիւ ՚ի կամս Աստուծոյ ՚ի  
լինել ցամաքութեն, տրտմութեան  
և գառնութեան յազօթս :

227

ԳԼ. ԻԸ. Պատրանք մեծ են և փոր-  
ձութեն ծանր՝ ՚ի բաց թողուլ զա-  
զօթս, յորժամ ըստ ասացելումն  
ցամաքեալ գոտանի մարդ :

233

ԳԼ. ԻԺ. Հաստատի ասացեալս օրի-  
նակօք ինչ :

237

ԳԼ. Լ. Յաղագս համակամութեն առ-  
ԱՃ, զոր ունել պարտ է մեղ ըստ  
բաշխման այլոց առաքինութեց և  
պարգևաց գերբնականաց :

245

ԳԼ. ԱԱ. Յաղագս համակամութեն  
ընդ Աստուծոյ՝ զոր ունել պար-  
տիմք ՚ի բարիս փառաց :

150

ԳԼ. ԼԲ. Յաղագս համակամութեն  
և միաւորութեան, և կատարեալ  
սիրոյն առ ԱՃ, և զիանդ մարդիւ  
պարտ է մեղ յայսմ կրթութեն :

255

ԳԼ. ԼԳ. Որչափ յաճախ աւանդեն  
մեղ Գիրք նը զկրթութես զայս :

163

ԳԼ. ԼԴ. Զիանդ մարթ է ընդար-  
ձակիւ մեղ ՚ի կրթութես յայսմ :

266







